



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԱՆԴՐԱՆԻԿ

Որդիներ կան, որոնք ազգի անունից
են ներկայանում, եւ որդիներ՝ որոնց
անունով ազգն է ներկայանում:

ԼՆՏԱՆԻՔԸ ԵՎ ՄԻՋԱՎԱՅՐԸ

ՀԱՅԴՈՒԿՆ ՈՒ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏԸ

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՄՈՋՄՈՒՆՔՆԵՐԸ

ԱՌԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՐԿՈՂՆԵՐ

ԱՆՁՆ ՈՒ ՊԱՏԳԱՄԸ





(Սկիզբը երկրորդ պրակտս)

ANDRANIK

There are sons, who represent in the name of the nation, and there are sons, in whose names the nation is represented.

FAMILY AND THE ENVIRONMENT

HAIDUK (GUERRILLA) AND HAIDUK'S CHIEF

COMMANDER AND THE WARS

POLITICAL STRUGGLE AND

POLITICAL CONVICTIONS

OBJECTIONS AND OBJECTORS

PERSON AND COMMANDMENT

10 ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ, ՋԱԼԱԼՕՂԻ,
ԴԻԼԻՋԱՆ

Էրզրումյան ողբերգության պատճառը Անդրամիկը համարել է գազմակերպվածության բացակայությունը, ավանդական հայրենասիրության նվազումն ու խումասի ծավալմանը զուգընթաց դավաճանության սողոսկումը:

Երբ մտել են Սարիղամիշ, Նազարբեկովի առջև խնդիր է դրել, որ միջոցներ ձեռք առնվեն այնտեղ եղած պահեստների ապրանքները պահպանելու եւ այդ նպատակով Ալեքսանդրապոլ փոխադրելու համար: Նազարբեկովը հակառակ կարծիք է հայտնել, գտնելով, որ Սարիղամիշը չպետք է հանձնել: Ալեքսպոլում, առաջնորդարանում պատկած օրերին, այժմ էլ այստեղից է պարենի պաշարները քաղաքից հանելու, Լոռի փոխադրելու հարց բարձրացնում: Ով գիտե, հուսահատությունն է նրան թելադրում, թե՛ հաստատ համոզմունքը: Թուրքերին լավ գիտեր, չէր հավատում, թե նրանք պայմանագրին հավատարիմ կգտնվեն եւ չեն դրժի: Համենայն դեպս, երբ Սարիղամիշի պահեստները դատարկելու առաջարկ էր անում, թուրքերը դեռ Սարիղամիշը չէին գրավել, իսկ երբ Ալեքսպոլից էր պարենամթերքը տեղափախելու հարց դնում, Սարիղամիշն արդեն գրավված էր, եւ նույն բախտին կարող էր արժանանալ նաեւ Կարսը:

YEREVAN *Haiastan*

Ալեքսանդրի Թիֆլիս տեղափոխվելուց հետո են, ինչպես երեսուց վերջ բերված գործությունից, Անդրանիկին վերստին գործի հրավիրել ու գործառնա կազմակերպելու առաջարկի գործնական քայլեր արվել: Այն օրերն են եղել, երբ Թիֆլիսում պատրաստ կանգնած էր թուրքական բանակի կազմից վերցված հայ գեղիներից ձեռավորված վաշտը, որը գրագործություններում Սիբիրյան էր կոչվում: Այդպես էր, անունը Սիբիրյան էր, բայց կազմը հայեր, թուրքական կողմից իրենց գործառնա կոնվոկների բերումով գերի ընկած, Իրկուտսկ արքայական հայ զինվորներ: Դեռ հեռվից էին նամակ գրել նրանք, Անդրանիկի զինվոր դառնալու ցանկություն հայտնել: Հեռվում էլ վաշտը խմորվել էր եւ այնտեղ ու Թիֆլիսում գումարվելուց հետո մարզվել ռուս հրամանատարների կողմից: Վաշտը կանոնավորապես մարզել էին ռուս հրամանատարները: Վերցնելով այդ վաշտը եւ իր մտի ութ հարյուր արեւմտահայ զինվորներին, Անդրանիկն ապրիլի 1-ին գրեց ճանապարհով եւ Ալեքսանդր: Նույն օրը Ազգային խորհրդի զգուշական հեռագիրն է ուղարկվել Ալեքսանդր՝ Նազարբեկովին: Այն գրել է Դաշնակցության հեղինակավոր դեմքերից Տիգրան Բեկզադյանը, որը կորպուսի հրամանատարին խորհուրդներ է տալիս, որոնք պարզ են դարձնում կորպուսի դերի հետ կապված՝ ժամանակին հրապարակման չենթակա հետեւյալ մի քանի ճշմարտությունները:

Անդրանիկն այդ գործառնա կազմել է Նազարբեկովի, որպես կորպուսի հրամանատարի, թույլտվությամբ: Այդ պատճառով է, որ Ազգային խորհուրդը թեւեւ դեմ լինելով գործառնա ուղարկելուն, արգելք չի հարուցել դրա դեմ: Միաժամանակ Նազարբեկովին զգուշացվել է, որ պատշաճ չէ Ազգային խորհրդի վստահությունն Անդրանիկի նկատմամբ, ցանկալի համարելով, որ նա գործառնաին այնպիսի մի խնդիր առաջարկի եւ այնպիսի հեռավոր մի վայր ուղարկի, «որպեսզի նրա գործողությունները վնասակար ազդեցություն չունենան»... կորպուսի մարտական խնդիրների կատարման վրա: Միաժամանակ դիվիզիայի վաշտերից մեկն էլ, որ Սիբիրյան էր կոչվում, նարտականաբար է գտնվում, որ Նազարբեկովը վերցնի իր անմիջական տրամադրության տակ, այսինքն պահի առանձնահատուկ հսկողության ներքո: Մեծ նշանակություն տալով այս զգուշացումներին, հեռագրում անհրաժեշտ է համարվում, որ Նազարբեկովն Անդրանիկին նշված ցուցումները տա հենց Ալեքսանդրապոլի կայարանում, նրա տեղ հասնելուն պես¹:

Դժվար է հիմա ասել, թե Նազարբեկովը հեռագիրը ստացել,

կայարան եկել է, թե՛ ոչ, խորհուրդները այնտեղ է տվել, թե մի ուրիշ տեղ, մի բան, սակայն, պարզ է, որ իսկապես Անդրանիկն իր գործառնաով մյուսներից, այսպես ասած, անջատվել, առանձնացվել, թշնամու հարձակման գլխավոր ուղղությունից մի կողմ գտնվող գծի վրա է ուղարկվել: Ուզում էր, թե չէր ուզում դա Նազարբեկովը, հասնելուն դեպքս նա հնազանդ էր Ազգային խորհրդին ու հոժարապես ի վերուստ տրված հանձնարարականների նկատմամբ:

Եթե նույն էր Նազարբեկովը, ապա ուրիշ չէր նաեւ Անդրանիկը: Գարձյալ իրեն հատուկ նվիրվածությամբ ու մեծ եռանդով է նա ձեռնամուխ եղել նոր գործառնա կազմավորմանը: Եվ վերջին փուլի գործը գլուխ է բերել բառացիորեն մի քանի օրում: Չորամասի զինվորներն արագ կերպով գումարվում են այդ մի քանի օրվա ընթացքում, բոլորն էլ՝ կամովին: Թիֆլիսում սկսված կամավորների հոսքը շարունակվում է Ալեքսանդրում: Գալիս միանում է միշտ անբաժան Սմբատն իր խմբով: Գալիս են թե բոլորովին նորաստեղծ, թե մինչ այդ կոնվոկներին մասնակցած տղաներից կազմված խմբեր: Եկել էր հրամանատարը, ուրիշ որտեղ պետք է լինեին զինվորները: Ոչ ստույգ տվյալներով, այլ, ըստ հուշերի, ձեռավորվելով կամեցողներից ընտրելու կարգով, զորքի թիվն անցնում է երկու հազարից¹:

Պետք է որ ուռճացված չլինի այս թիվը: Ուսումնասիրվող նյութերում կա նաեւ այն մասին, որ մարտի 10-ին Թիֆլիսից Ալեքսանդրապոլ Անդրանիկին հայտնվել է, որ Օդեսայից Թիֆլիս են հասել «հին կամավորներից» «մոտ 1000 տղայք... իրենց զենքերով ու շորերով», եւ նրանք բոլորը սպասում են իր հրամանին²: Հազարը մեծ թիվ է: Նրանք կարող էին լինել ոչ միայն կամավորական ջոկատի զինվորներ, այլեւ ֆիդայական կոնվոկների ընկերներ... Ապրիլի 7-ին Իգդիրից են նրան գրել. «Հանուն տանջված եւ հալածված ժողովրդի ազատության, մեր սրտերը խոնարհված է եւ խոնարհվելու է Ձերդ հրամանների առաջ»³: Նույն օրը հին հայրուկ տղաներից երկուսը այսպիսի նամակ են նրան հղել. «Մենք պարտավոր ենք լսելու եւ կատարելու Ձերդ բարձր հրամանները, որ մինչեւ հիմա այ մեզ եւ ընդհանուր գործի համար սրբություն է եղած»: Հավանաբար ապրիլի առաջին այդ օրերին դիվիզիայի կազմավորման համար հրապարակային զորակոչեր են եղել ու փոխապալմանավորվածություն: Նույն ապրիլի 7-ին Կարսից են գրում Անդրանիկին. «Նարսում Ձեր դիվիզիայի անվան շուրջ հավաքված է 250 ձիավոր եւ 400 հետեակ, որից

1 ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 370, ց. 2, գ. 1, թթ. 1—10 (Հարություն ճապալանի հուշերը):
2 Ն. տ.: 3 Ն. տ.:

բացի էլ կան մշտնի Մուրադի 400 հետևակ զինվորները... որոնք
ասել են՝ մենք գեներալ Անդրանիկից բացի ուրիշի չենք ուզում
ճանաչել...»։ 1918-ի ապրիլի 6-ի թվակիր փաստաթղթում նշվում
է, որ կարսում էլ ենթասարայական դպրոց է եղել։ Անդրանիկի
նախաձեռնությամբ է բացված եղել եւ նրա հետապնդած նպատակին
ծառայել։ Հավանաբար կարճատե նասրեթացներ են եղել։ Մանա-
վանդ որ շուտով պարզվել է, որ դպրոցի համար բավարար թվով ու-
սուցիչներ էլ չկան։ Խմբավել է դժգոհություն։ Դպրոցի սաները մինչեւ
իսկ իրենց անբավականությունն են հաղորդել Անդրանիկին²։

Անկախ այդ բոլորից, այնու սովորելու համար օրեր էլ չէին
մնացել։ Թշնամին առաջ էր շարժվում։ Գիտեին ռազմի գործը, թե
ոչ, երիտասարդները գալիս էին թե՛ առանց ռազմական ուսուցման
եւ թե՛ առանց կանչագրեր ստանալու, կանչողը հայրենիքն էր։ Եվ
հրամանատարն էլ սովորական Անդրանիկը չէր, այլ գեներալ Անդ-
րանիկը։

Ռուսաց թագի տակ հայերը գեներալներ ունեցել էին եւ այն էլ
պանծալի զորավարներ. Մադաթով, Բեհրություն, Լազարեւ, Տեր-Ղու-
կասով, Լոռիս-Մելիքով, բոլորն էլ հայրենակիցներ եւ հայ գեներալ-
ներ, բայց, ցավոք սրտի, ո՛չ հայոց գեներալներ։ Գուցե նաեւ այն է
պատճառը եղել, որ նրանց ազգանվան «յանը» «ով» էր դարձված,
որպեսզի հանկարծ մեկը նրանց հայ ու հայոց գեներալ չկարծեր։
Ինչպե՛ս կարելի էր՝ հայից հայոց գեներալ։ Անդրանիկը միակն էր ու
միաժամանակ առաջինը, որը ե՛ւ հայ գեներալ էր, ե՛ւ լիովին հայոց
գեներալ։ Նա գեներալ Անդրանիկն էր անունով, այլ ոչ գեներալը՝
ըստ ազգանվան, որի բնորոշիչ վերջամաս «յանը» նույնպես դժվար
չէր լինի «ով» դարձնել, բայց, բարեբախտաբար, բանը դրան չէր
հասել։ Ռուսական հրամանատարության փաստաթղթերում անվան
դեմ արդեն սկսվել էր ոտնձգությունը. շատերում Անդրանիկ գրելու
փոխարեն «Անդրոնիկ» էին գրում, հրամանատարներն էլ բանավոր-
րում առանց ներողություն խնդրելու, որ աղճատում են, նույն ձեռով
«Անդրոնիկ» էին հորջորջում։ Եթե բանը ազգանունը աղճատելուն էլ
հասներ, վստահ ենք, որ նրա կյանքի մի էջն էլ պայտեմական այս
սրբությանը տեղ կանգնելու կոնվն էր լինելու, թեեւ մնացած բոլոր
պատմածը, վերջին հաշվով, նաեւ այդ «տեղ կանգնելն» էր։

Բայց կար նաեւ ուրիշ մի տեղ կանգնել։ Եվ դա Անդրանիկի
կյանքի հետեւորդության պատմության այս էջն էր ու դրան հաջորդող
նոր փուլը։ Անդրանիկի շուրջը, Ապահովության խորհրդի ցանկու-

թյամբ ու նախաձեռնությամբ եւ Անդրանիկի իսկ, ինչպես տեսնում
ենք, ոչ անտարբեր մասնակցությամբ ձեւավորվող նոր ռազմական
միավորին այս անգամ վիճակված էր կոչել Հայկական առանձին
հարվածող զորամաս։ Անդրանիկն էր հրամանատարը։ Այս պահից ի
վեր, մինչեւ 1919-ի ապրիլը ներառյալ, Անդրանիկի կյանքի պատ-
մությունը այդ զորամասի պատմության բաղկացուցիչ մասն է, ինչ-
պես որ զորամասի պատմությունը Անդրանիկի կենսապատմության
տվյալ գլխի հիմքն է ու որոշիչը։ Երկուստեք է։ Այդ ամբողջը
դարձյալ օրագրության ձեռով գրի է առնված, այս անգամ հրամա-
նատարի թիկնապահ եւ քարտուղար Եղիշե Քաջունու գրչով։ Եվ դա
առանձնապես արժեքավոր է իր հավաստիությամբ նրանով, որ
գրվել եւ լույս է տեսել ոչ միայն իր իսկ՝ Անդրանիկի կյանքի օրոք
(1921 թ.), այլ նրա «անմիջական հսկողության տակ»¹։

Ըստ այդմ, զորամասի կազմավորումն ավարտելու օրը համարվում
է 1918-ի ապրիլի 10-ը, վայրը՝ Ալեքսանդրապոլը։ Ինչպես երկրա-
պահ դիվիզիան, սա եւս հայկական կորպուսի բաղկացուցիչ էր եւ
սկզբնափուլում հրամանատար Նազարբեկովին ենթակա։ Առաջին
պահին զորամասի խնդիրն է համարվում Ալեքսանդրապոլ-Ախալքա-
լաք խճուղու պահպանությունը։ Այդ խնդիրը հանձնարարելով զորա-
մասին, սկզբից էլ հայտնի էր, որ դրա համար քանիցս ավելի ուժեր
կպահանջվեն։ Բավական երկար էր Ալեքսալից մինչեւ Ախալքալաք
ձգվող տարածությունը, որի մի ծայրից մյուսը զինվորներին ցրելը
կշխտեր զորամասը, եւ նրա համար հեշտ չէր լինի գործել որպես
միասնական հարվածող ուժ²։

Նազարբեկովը գիտեր ե՛ւ օրվա խնդիրները, ե՛ւ կարող էր նաեւ
կռահել, թե գործողություններն ի՛նչ ուղղություններով կարող էին
զարգանալ, որտե՛ղ վճռական ու ոչ վճռական դեր խաղալ։ Հիշելով
վերը նշված զգուշողականը, նա Անդրանիկին մոտ քերելու եւ
հակառակորդի գերակշիռ ուժերի սպասվելիք կենտրոնացման զծի
վրա կանգնեցնելու փոխարեն, ծայրանկյուն մի տեղամաս է տալիս,
որտեղ նա դրվում է յուրատեսակ ինքնավար դրության մեջ եւ
գործում իր կողմնորոշմամբ ու տեղանքի թելադրությամբ։

Նազարբեկովը, զինվորի դերը խորապես գիտակցող զորավարը,
այս դեպքում, կամա թե ակամա, առաջնությունը տեղին է տալիս։
Մինչդեռ Անդրանիկը, տեղի հետ հաշտ թե անհաշտ, ինչպես միշտ՝
դերի մասին էր մտածում։ Կորպուսի հրամանատարության հանձնա-

1 Ժեներալ Անդրանիկ. Հայկական առանձին հարվածող զորամասը, Պոսթոն,
1921 թ. (այսուհետեւ՝ «...հարվածող զորամասը»), էջ 5—6։ 2 Ն. տ. էջ 12։

ութայնքս ան լծվում է Հայաստանի Աշխարհային շրջանների՝ Ախալքալաքի եւ Ախալցխայի կողմերը թուրքերի հնարավոր ներխուժումը կանգնեցնելու գործին: Անմիջապես տեղափոխվում է Ադրաբա մեծ գյուղը, այնտեղ եւ մերձակա գյուղերում տեղաբաշխում իր զինվորներին, որոնք սահմանը հսկելու հետ մեկտեղ, զբաղվում էին նաեւ գորավարժությամբ: Այսպես, շուրջ քսան օր, ըստ որում ամբողջ այդ ժամանակամիջոցում գտնվելով ոչ տառացիորեն նույն կետում եւ ոչ էլ զբաղված լինելով միեւնույն խնդրով: Ապրիլի 13-ին, ի փոփոխումն ապրիլի 5-ի իր կարգադրության, Նազարբեկովը, թողնելով նույն ուղղության վրա, Անդրանիկին առաջադրանք է տալիս իր գործամասով գնալ դեպի Խանչալի գյուղ լիճը, մնալ այնտեղ, պահպանելով լիակատար հանգիստ իրավիճակ Ախալքալաքի գավառի հարավային մասում եւ հետեւել այն գործողություններին, որոնք կատարվում են Կարսի մարզի սահմանից դուրս: Նազարբեկովն Անդրանիկի ուղարկությունը հրավիրում է հատկապես Ախալքալաքի եւ Ալեքսանդրապոլի միջեւ անվտանգությունն պահելու վրա: Դրա համար անհրաժեշտ է համարվում Ախալքալաքից մինչև Գյուլիի Բուլաղ տանող ճանապարհի վրա պահակակետեր հաստատել:

Գյուլիի Բուլաղը Ալեքսանդրապոլի աջ թեւում էր, նույն այն շարքում, որտեղ արեւմուտքից, թուրքերի հնարավոր հարձակման ճանապարհին գտնվող Օրթաքիլիսա եւ Ղազանչի գյուղերն էին: Նախապես ենթադրվել է, որ թուրքերը չեն անցնելու քաղաքի արեւմտյան կողմով հոսող Ախուրյան գետը: Այդպես սահմանված է եղել 1918-ի մարտի 3-ին հրետտ քաղաքում Գերմանիայի եւ նրա դաշնակից տերությունների՝ Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի եւ Բուլղարիայի հետ Ռուսաստանի ստորագրած չարաքաստիկ պայմանագրով:

Նոր Ռուսաստանի նոր կառավարությունը տվյալ դեպքում հայկական հողերի հետ նույն կերպ էր վարվում, ինչպես որ ցարերն ու նրանց կառավարությունը. ամեն անգամ, թուրքերի հետ իրենց պատերազմն ավարտելուց հետո. հաղթում էին՝ աշխատում էին Կարսը պահել սահմանի այս, ռուսաստանյան, կողմում, պարտվում էին՝ հանձնում էին թուրքերին: Կարսն ու հարակից հողերն էին պատասխան տվողը: 1914—18-ին Ռուսաստանը հաղթող կողմ էր, պետք է որ առնվազն Կարսն իր մարզով մնար, եթե Արեւմտյան Հայաստանի գրավված հողերը միավորելու պահանջ չէր դրվում: Բայց այս անգամ ուրիշ կերպ եղավ: Խորհրդային Ռուսաստանի ղեկավար Լենինը գտնում էր, որ երկիրը հյուծված է, ի վիճակի չէ պատերազմը

1 ՀՀ ԴԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, թ. 14:

շարունակելու, բանակը հոգնած է՝ կռվել չի ուզում: Իսկ հեղափոխության դիրքերը պետք էր ամրապնդել, պետք էր հաստատուն դարձնել իշխանության գլուխ անցած նոր կառավարության՝ Ժողկոմխորհի դրությունը: Արտաքին ճնշման դեմ կանգնելու միակ միջոցը համարվում էր զիջումների քաղաքականությունը: Արտաքին ճնշողները որպես Բաղյակ դաշինք միավորված պետություններն էին՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Թուրքիան եւ Բուլղարիան: Պահանջողներին հյուսիսում շուայրբեն զիջվում էին սահմանակից սեծազանգված տարածքներ: Հարավում՝ Թուրքիայի հետ Կովկասյան սահմանում, ուրիշ ոչինչ որ չլիներ, Կարսը, նրա հետ Արդահանը, կար ու կար: Բայց դա այս անգամ արվում է ցարի հանձնելու ձեւից բոլորովին տարբեր եղանակով: Նախ հռչակվում է ռուսական զորքի կողմից գրավված Արեւմտյան Հայաստանի բնակչության ինքնորոշման իրավունքը, նա՛ պետք է որոշեր իր ցանկացած պետական իշխանության ձեւը, տնօրիներ իր հարցերը: Միաժամանակ Ռուսաստանը պարտավորվում է գրավված մարզերից, որոնք հիմնականում հայաբնակ էին եւ հայկական, դուրս բերել ռուսական զորքերը, որոնք, ի դեպ, հիմնականում արդեն դուրս էին բերված: Բայց, անհա, մարտի 3-ին պայմանագիրն ստորագրելիս, Արեւմտյան Հայաստանի մասին ոչ մի խոսք չստեղծեց քաղաքացի, Կարսն ու Արդահանն էլ էին զիջվում Թուրքիային: Եվ այդ այն դեպքում, երբ դրանք ռուսաստանյան տիրապետության տակ գտնվող հողեր էին, իսկ Ռուսաստանն էլ դաշնակիցն էր Անտանտի տերությունների, որոնք հաղթող կողմ էին եւ նրանցից մեկնումեկի կողմից պարտվողին հողեր զիջելու մասին պատերազմն ավարտելուց հետո որեւէ խոսք չէր կարող լինել: Բայց հիմա Ռուսաստանն այլևս առաջվանը չէր, նա խորհրդային էր, որի կառավարությունը ընտրել էր կյանքի սոցիալիստական ուղին եւ իր կապերը խզել պատերազմ մղող Անգլիայից ու Ֆրանսիայից, իսկ հրետտի պայմանագիրն էլ, հետեւապես, նրանցից անջատ էր, սեպարատ: Սեպարատ պայմանագիրը պետք է վերջ դներ պատերազմին, եւ Ժողկոմխորհն էլ պետք է ձեռնամուխ լիներ իր տիրապետությունը ամրապնդելու, երկրում նոր քաղաքականություն ծավալելու գործին: Մեջտեղը տուժում էր հայ ժողովուրդը: Թուրքիայի ձեռքերն ազատ էին արձակված: Ռուսական հին բանակն էլ չկար:

Պայմանագիրը կնքվելուց հետո Թուրքիայի համար այն դառնում է պարզապես առաջ շարժվելու եւ գրավելու սովորական մի անցաթուղթ՝ երբ ուզենար եւ ինչքան ուզենար: Այնպես որ թուրքերը պայմանագիրը ազատորեն խախտել են, եւ Կարսը գրավելուց հետո

նրանց գորքերը անցել են թե՛ Ախուրյանը, թե՛ մյուս բնագծերը եւ մայիսի 15-ին հայտնվել Ալեքսյոյի պատերի տակ, որտեղ մղված երեքժամյա կռիւից հետո, ինչպէս գրում է Անդրանիկը, կանոնաւոր հայկական գորքը քաղաքը հանձնել է եւ նահանջել դեպի Ղարաքիլիսա քաղաքը: Անդրանիկը, այդ բոլորին անտեղյակ, իր խաղաղ հանգրվանում հանկարծակի հայտնվել է թուրքական գորքին դեմ հանդիման... «Իմ վրա եկող թուրքական գործաւսի հետ 3 օր կռիվ ունեցա, առանց մեր գործաւսերեն ոչ մեկուն հետ կապ ունենալու», — այսպէս գրել է Անդրանիկը, առանց հրամանատար Նազարբեկովի անունը տալու, անպայման համոզված, որ գործաւսերի միջեւ կապի խզումը տաղանդավոր գորավարի ոչ գիտելիքներին էր համընկնում, ոչ էլ նրա հարուստ մարտավարական փորձին: Դրանից Անդրանիկի գորքը կարող էր պաշարվել, որպիսի հնարավորությունից թշնամուն գրկել են նրա արագաշարժությունն ու հակահարձակումները¹:

Օրագրողը վկայում է, որ Ալեքսյոյի հետ վերջին կապը եղել է հենց քաղաքի վրա թուրքերի վճռական հարձակման պահին, երբ ամեն ինչ այլեւս ուշ էր, եւ մինչեւ քաղաքը հանձնելը՝ ընդամենը ժամերի հաշիվ: Նազարբեկովը հրահանգել է. «Թուրքերը հարձակվեցին Ալեքսյոյի վրա, զարկիր կողքից»: Սա օրագրողի բառերն են: Մինչդեռ պահպանվել է Նազարբեկովի 1918-ի մայիսի 15-ի ցերեկվա ժամը 12-ի գրությունը «Գեներալ Անդրանիկին»: Նա պարզ ու որոշ գրում է, որ թուրքերը առանց հայտնելու, նույն այդ օրը ժամը 7-ին հարձակման են անցել: Վաղ առավոտից էլ սկսվել են կռիվները: Թուրքերը անմիջապէս վերջնագիր են ներկայացրել, քաղաքը անհապաղ մաքրելու եւ մինչեւ 25 կիլոմետր ետ քաշվելու պահանջով: Միաժամանակ նրանք խնդիր են դրել, որ երկաթուղու ամբողջ շարժական մասը, Ալեքսյոյից մինչեւ Ջուլֆա, դրվի իրենց տրամադրության տակ՝ անգլիացիների դեմ օգտագործելու նպատակով: Ելնելով այս ամենից, Նազարբեկովը, այնուամենայնիվ կատարելով հրամանատարի իր պարտքը, Անդրանիկին մարտական առաջադրանք է տալիս՝ Ախուրյանի ափին գտնվող իր գործաւսի առանձին ստորաբաժանումներով դիրք գրավել հարձակվող թշնամու համապատասխան թելում եւ գործել ինչպէս որ կթելադրեն դեպքերը, օգնություն ցույց տալով Ալեքսյոյի գործաւսին: Ընթերցել է Անդրանիկը այս փաստաթուղթը եւ վրան գրել. «Թուրքերը ուլթիմաթում կուտան Նազարբեկովին»²: Այս է, որ օրագրողը ասում է. «զարկիր կողքից»:

Հրահանգների գորավոր թնդումները հեռվից անգամ լսելի են եղել:

1 ԸԸ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 40ա, թ. 101: 2 ԸԸ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 2:

Դա տեսել է ընդամենը երեք ժամ, որից հետո ոչ մի տեղեկություն: Միայն վրա հասած լուրջունից պետք էր կռահել եղելությունը:

Հուլիսի մի դուռ էլ փակվեց: Թուրքերին տիրելու մի բուն հայկական հող է մնում: Անդրանիկն իր զինվորներով փակուղի է մտնում: Երկաթուղուց բացի նրանց չորս կողմը փաստորեն թուրքերն էին զբաղեցնում: Մոտակայքի գյուղերի ահ ու սարսափի մատնված բնակիչները օգնության հույսով վխտում էին անդրանիկյան գորքի աջ ու ձախ կողմերում: Նրանք էլ, որպէս արեւելահայ ժողովուրդ, որ Ռուսաստանին միավորվելու օրից շուրջ հարյուր տարի ի վեր գաղթ քաղը օգտագործել էին միայն պատմություններ անելիս, հիմա մտքներում միակ հուսադրող բառը այդ էին տեսնում: Նրանց նախնիների մեծ մասը հին գաղթականներ էին, ժառանգները հիմա դառնալու էին նոր գաղթականներ, որոնց երթը վերջնագաղթն էր լինելու: Բայց ո՞ր պիտի գաղթեին նրանք, արեւմտահայերի շտապիղները, երբ հիմա հուսալահ Արեւելյան Հայաստանն էր ոտքի տակից գնում: Եվ գամվում են անդրանիկյան զինվորին ու գորքին, գումարվում են ու տուն առ տուն, գերդաստան առ գերդաստան ձուլվում որպէս գաղթականների հոծ բազմություն:

Օրագրողը, որ դեպքերը գրի է առել Անդրանիկի վերհուշին ունկընդիր, պատմում է*, որ Ալեքսյոյը հանձնելուց հետո Անդրանիկն այլեւս ընկնելով անելանելի վիճակի մեջ, միայնակ պիտի վճռեր իր անելիքը: Գրեթե բոլոր կողմերից էլ թուրքեր էին՝ Աղբաքայի թուրքեր, Ախալքալաքի թուրքական շրջան, Բորչալուի թուրքեր, եւ շարժվելու համար մնում էր միայն երկաթգիծը, այն էլ, ինչպէս շատ շուտ պարզվեց, վտանգի ենթակա, որովհետեւ գրավվեց եւ հապաղելու դեպքում այդ ճամփան էլ կփակվեր: Միակ միջոցը Անդրանիկը տեսնում է, ըստ օրագրության, դեպի երկաթգիծը շարժվելը՝ որտեղից հնարավոր կլիներ կորպուսի մյուս գործաւսերի հետ կապ հաստատել եւ մտնել գործունեության ընդհանուր ոլորտի մեջ:

Խուճապի էր մատնված թե՛ արդեն գրավված, թե՛ դեռեւս չգրավված վայրերի հայ բնակչությունը, որն այս ու այնտեղ զանգվածաբար գումարվել եւ գաղթի ուղիներ էր որոնում: Ուստի Անդրանիկն իր գորքի մի մասին շարժել է դեպի մոտակայքի Գյուլի Բուլաղ գյուղի բարձունքները, որպէսզի տեղաշարժվող գաղթականությանը պահապան կանգնի թուրքերի հարձակումներից եւ հնարավորություն տա նրանց դուրս գալ դեպի խուսափելու հարմար ճամփաները: Անդրանիկը հիշելու առիթ է ունեցել. «Այս տեղեւն 20 գյուղի հայ

* Թեւ ժամանակները շփոթելով:

ժողովուրդը հետս առնելով ուղղվեցա Ջալալօղլու: Չէի կրնար 20.000 գաղթականությանը թողնել բախտին՝ հեռանալ: Մեկուկես օր կովել վերջն է միայն, որ գաղթականությունը բավականին ճամբա բռնեց դեպի Քոլագիրան երկաթուղիի կայարանը, որով կրցա մեկնել Քոլագիրան գյուղը, ուր գտա բանաստեղծ Հովհաննես Թումանյանը»¹:

Թուրքերը, չնայելով տեղանքի դժվարություններին, բարձրանում են դեպի լեռները եւ ձորերի միջով առաջանալով՝ շրջապատում Անդրանիկի գորամասի ձախ թևը: Կոիվը, որ դառնում է այլևս անխուսափելի, տեսում է մինչեւ գիշեր եւ շարունակվում նաեւ հաջորդ օրը: «Այսօրվա կոիվը, — ասում է օրագրողը, — ամենակատաղին է, ... գաղթականությունը բռնել է ամբողջ շոսեն եւ կշարժվի դեպի Լոռի, Ջալալօղլի, չգիտենալով, թե որտեղ է լինելու վերջին կայանը»:

Եվ գորամասը բռնել է նախընտրած երթի այդ ուղին, այսուհետ մտնելով նաեւ գաղթող բնակչությանը պատվար կանգնելու պարտականության տակ: Ծամփեզրի հայ գյուղերը անտարբեր չեն եղել դեպի իրենց երկիրը մտած թուրքական գորամասերը: Նրանք մի դեպքում գենքով դիմադրել են ու պաշտպան կանգնել իրենց գյուղերին, մի ուրիշ դեպքում էլ փորձել են աղուհացի ուժով սանձել նրանց ու խուսափել արյունահեղությունից: Եղել է, որ նաեւ փող են հավաքել եւ գումար տալու միջոցին են դիմել: Անպաշտպան էին, անկազմակերպ, ուստի եւ՝ անգոր: Իսկ թշնամին մնացել է նույնը եւ գանձն է վերցրել, եւ բնակչությանն է սրի քաշել²:

Անտարբեր դիտողներ չէին ճամփեզրի թուրքական գյուղերի բնակիչները: Հարձակվել են նրանք տատապանքով ու տքնանքով գաղթող հայության վրա, թալանել ու կոտորել: Եվ հենց գաղթի այդ ճամփաների վրա էլ թուրքերի դեմ կովի մեջ մտած զինված ու անզեն հայ երիտասարդները ստացել են իրենց մարտական մկրտությունը. մայրերին ու քույրերին էին պաշտպան կանգնում, որ գերդաստանի գոնե մի ցորեն հատիկը ծլարձակեր հայրենի հողի վրա:

Վտանգ կար, որ երկաթգիծն ու հարակից ճամփաներն էլ թշնամու ձեռքը կընկնեն եւ դռները կփակվեն չորս կողմից: Ծանր ու անելանելի էր վիճակը թշնամուց զերծ մնացած հայոց վերջին հողակտորի նաեւ մյուս հատվածներում, թշնամին այլևս ոչ թե հեռավոր, այլ օրերի հաշվարկով մերձավոր խնդիր ուներ. մյուս կողմերով էլ առաջ գրգռալ դեպի Ղարաքիլիսա, ապա Ալեքսանդրապոլից դուրս գալ Սար-

դարաբադի դաշտը, Արագած լեռան ստորոտներով Աշտարակ, եւ այդպես բոլոր ճամփաներով՝ դեպի Երեւան, ուր եւ մի վերջին հարվածով լուծել հայության՝ որպես ժողովրդի, որպես մշակույթի եւ պատմության լինել չլինելու հարցը: Ծրագրավորված ցեղասպանության նախախնդրի անբաժան մասն էր Ղարաքիլիսայի եւ Լոռու բարձրավանդակի գյուղերի ու նրանց հետ Ջալալօղլու գրավումը, որը շարունակվող գծի վրա հայ բնակչության հետ հաշվեհարդար տեսնելուց հետո, թուրքական զորքերին դուրս կբերեր դեպի Ղազախ ու այդտեղից էլ դեպի Ադրբեջանի խորքերը տանող ճանապարհը: Այնպես որ, այս ամենը կոահող Նազարբեկովը հետագայում, կանգնած լինելով փաստի առաջ, ըստ երեւույթին այլևս սուկ Ազգային խորհրդի հարցականներով չի դեկավարվել, որ դեպի Երեւան թուրքերի առաջխաղացման ամենավճուղական պահին անգամ Անդրանիկին իր բանակով դեպի Երեւան տեղաշարժի առաջարկ չի արել: Ուժերը տեղաբաշխված էին: Հիմնական զանգվածը կուտակվում էր երեւանյան ուղղության վրա, մնացածը Համամլու—Ապարան—Աշտարակ գիծը պահելուն էր տրամադրված, իսկ դեպի Ջալալօղլի թուրքերի ճանապարհին Անդրանիկի գտնվելը այլևս ոչ միայն դեպքերի բերումով էր, այլեւ հրամանատարության պաշտպանական մտահղացմանը համաձայն:

Ժամանակին, կոիվների բուն ընթացքում, երբ Ղարաքիլիսայում թուրքական զորաբանակների դեմ մահու եւ կենաց կոիվներ էին, ժողովուրդը խոր տարակուսանքի մեջ էր եւ իրեն կեղեքող հարցին պատասխան տալու համար ճիշտ եւ շինձու զանազան, իրարամերձ պատճառներ էր ենթադրում, որը բացասաբար էր անդրադառնում կովող մարտիկների հոգեկան աշխարհի վրա:

Հին ղարաքիլիսեցիները մինչեւ 40-ական, 50-ական թվականներն էլ ախով ու վախով, խոր ցավով ու ավստասանքով վերհիշելով, ասում էին. «Քոլորիսա աչքը ջուր կտրեց, այդպես էլ Անդրանիկը չեկավ, ասում էին գծոված էր Ղարաքիլիսայում կովող Նժդեհի հետ, խոով էր նրանից...»: Այս էր՝ խոով էին, գծոված, համերաշխ չէին իրար հետ, կարծես թե հայերը պարտության, անհաջողության ու նահանջի ուրիշ պատճառ չպետք է ունենային: Եվ ժողովրդի աչքը ճանապարհին մնաց, որի պատճառը Անդրանիկի ետ մղված լինելու ստեղծվածն էր: Եթե սա մեղք է, ապա դրանում Անդրանիկը բացարձակապես ոչ մի բաժին չունի: Ժողովուրդը ճշմարիտն իմանալու համար բանահյուսուրեն էր պատճառները որոնում, իսկ հրամանա-

* Այդտեղ, հետագայում Կիրովական անվանված այդ մեղմ ու բարեհամբույր մարդկանց քաղաքում է անցել սույն գրքի հեղինակի ուրախ ու տխուր մանկությունը:

1 «Ջօրավար Անդրանիկ կը պատասխանէ...», էջ 25—26: 2 «...հարուածող կորամասը», էջ 17—18:

տարությունն ամեն ինչ իմանալով հանդերձ, անկեղծության դեպքում դրանցում Անդրանիկի մեղքի ոչ մի բաժին չէր կարող տեսնել եւ ակնարկել: Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր սպայակազմի նախկին ենթասպետ Գ. Ղորղանյանը հատուկ գիրք է գրել «Հայերու մասնակցությունը համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատին վրա» խորագրով, որում եւ ընթացքի փաստաթղթերն են, եւ մասնակցի հուշերը. «Զօր. Անդրանիկին, որը մայիսի 1-ին իր ջակատով կը գրավեր Գյուլի Բուլաղ գյուղը, հրամայվեցավ գործել թուրքերու ձախ թեւին դեմ, պահպանելով ճամբաները դեպի Ախալքալաք եւ Վորոնցովկա (Լոռիի դաշտին մեջ): Միաժամանակ զօր. Նազարբեկյան կարգադրեց կազմ ու պատրաստ դարձնել երկու տեղական գունդերը՝ Ախալքալաքի եւ Լոռիի: Հրամայվեցավ, որ անոնցմե երկրորդ մտնէ Անդրանիկի ջոկատի կազմի մեջ, իսկ Ղազարի գունդը երթա դեպի Ղարաքիլիսեւ եւ մտնէ հայկաճաճ զորաբաժնի կազմի մեջ: ...Զօր. Անդրանիկ կապահովեր գլխավոր ուժերու աջ թեւը, ...իսկ գլխավոր ուժերը իրենց դասավորությամբ կապահովէին Երեւան եւ Ղարաքիլիսեւ—Դիլիջան տանող խճուղիներու հանգույցը: Վերջապէս Ա. եւ Բ. առանձին կիսաբաժնիները Սարդարաբադ փոխադրվելով, կը զորացվեր Երեւանի ջոկատը, որը կը պաշտպաներ Հայաստանի հարավային շրջանները եւ կապահովեր անոր մարտաքաղաքը»: Ել ուժերի նման տեղափոխման գնահատականը՝ «Զօր. Նազարբեկովի ընդունած որոշումը լիովին կը համապատասխաներ ստեղծված կացության՝ Ակատի ունենալով թշնամիի ուժերուն գերազանցությունը ու հայկական զորքերու բարոյական նվազումը»:

Ժիշտ է, Ղորղանյանը ճիսցած չէ Անդրանիկի տվյալ կովի արդյունքներով, բայց դա հանգամանքներով է բացատրվում, այլ ոչ անձնավորությամբ. «Անդրանիկ չհաջողեցավ Գյուլի Բուլաղին կողմեն ազդել թուրքերու ձախ թեւին վրա: Իր դեմ կը գործէին գերազանց ուժեր (5-րդ թուրքական զորաբաժնի), որոնք Գարախաչի լեռնանցքի մոտ (Ալեքսպոլ—Թիֆլիս ճամբուն) տեղի ունեցած կովեն հետո գրավելով Մոկրիյա Գորի (Թաց լեռներ) անցքի վր, Էլան Լոռիի դաշտը ու Անդրանիկը մայիսի 19-ին ստիպվեցավ բաշվել դեպի Զարալոլի: ...Անդրանիկը, որ երկու օր շարունակ կը կատեցներ թուրքերու շարժումը Զարալոլիի մոտ, հարկադրված նահանջեց եւ մայիսի 22-ին բանակեց Դսեղ գյուղի մոտ...»¹:

Ռազմագետի խոսքը պատճառաբանություն է, այլ ոչ անձնական

¹ Հատվածներ գրքից. տես «Հայրենիք», №3 (63), 1928 թ.:

հանդիմանություն: Ինչպես նկատվեց, Գ. Ղորղանյանը չի անդրադառնում Անդրանիկին ռազմաճակատի տվյալ հատվածում նշանակելու մասին Նազարբեկովի վճռի ճիշտ ու սխալին, պարզապես գրեցնելով, որ Անդրանիկի գորքը, ինչպես ամեն մի այլ զորաբաժին. կարող էր նաեւ այդ հատվածում տեղաբաշխված լինել: Սա ուրիշ հարց է:

Բայց անա մի դեպք, երբ ռազմի գործի վերաբերյալ բանաստեղծի խոսքն է նույնքան համարձակ ու վճռական, որքան կարող էր լինել ռազմագետինը: Դարձյալ այդ խոսքի հեղինակը Հովհաննես Թումանյանն է: Նրա արխիվում պահպանված է իր ձեռքով մատակ գրված հակիրճ մի բացատրություն: Երեւում է ինքն էլ դժգույն է տարակուսանքների առօրյա առատությունից.

«Ղարաքիլիսայի անկման օրից սկսած անդադար մարդիկ են պատահում, որոնք դատապարտում են Անդրանիկին, որ Ղարաքիլիսայի պատերազմի ժամանակ խոշոր ուժերով մնաց էնքան մտախի Դսեղ նստած, մինչդեռ եթե օգնության հասներ Դվալից, պատերազմը բոլորովին ուրիշ էլք կունենար:

Այո, միանգամայն ճշմարիտ են ասում, որ եթե Անդրանիկը Լոռու կողմից, Դվալից օգնության հասներ, պատերազմը անկասկած ուրիշ էլք կունենար, սակայն բոլոր խոսողները մի բան չգիտեին, որ հենց էդպես էլ ծրագրված էր եւ պատրաստվելու վրա էր, երբ զինվորական բարձր հրամանատարությունից հրահանգ եկավ Անդրանիկին մնալ Դսեղ եւ պաշտպանել երկաթուղու գիծը: Դսեղից արված տեղեկության հետեւանքով մինչեւ էս հրամանը փոխվեց, արդեն երրորդ օրն էր, եւ գրեթե միաժամանակ եկավ Ղարաքիլիսայի անկման բոթը»¹:

Հ. Թումանյանն իր ակնարկներում փաստեր նկատի ունի: Ինչ ասել է՝ «հենց էդպես էլ ծրագրված էր»: Նշանակում է, նախապես այդպես է նպատակահարմար գտնվել: Հնարավոր է, որ նախապես որոշվածն էլ հայտնի է դարձել դրսում, եւ ծագել են հրապարակային տարակուսանքները: «Բարձր հրամանատարությունը» Ազգային խորհրդի և Ապահովության խորհրդի կամքը կատարող Նազարբեկովն էր: Ավելի հետաքրքիր է «Դսեղից արված տեղեկության հետեւանքով» ակնարկը: Պարզ է, ինքը՝ Հովհաննես Թումանյանն է, որ Դսեղից հարց է բարձրացրել Անդրանիկին տեղաշարժելու մասին, բայց այլեւ ուշ էր:

Այս բոլորի պատճառն այն է, որ թե՛ բանակի հրամանատարու-

¹ ԳԱԹ, ֆ. Հ. Թումանյան: Գրողի այս փաստաթուղթը ժամանակին հրապարակված է եղել մամուլում. «Հորիզոն», Թիֆլիս, №158, 10.08. 1918 թ.:

թյունը, թե՛ գործին մոտ կանգնած ազգային քաղաքական գործիչներից շատերը հակված չէին, որ Անդրամիկը կովին աչքի ընկնող տեղում ու դերում մասնակցեք: Ըստ նրանց, ցանկալի էր, որ սովերի տակ մնար. Թուրքիան հարձակվող էր, նույն ընթացքում հաշտության բանակցությունները, առջեւում հաշտության հույսը, եւ ավելի լավ էր համարվում, այսպես ասած, ավելորդ տեղը նրա կրթերը չբորբոքելը, Թուրքիային գերադասելով Ռուսաստանից: Ռուսաստանի կազմում արեւելահայության կյանքի 90 տարին քիչ տառապանքներ չէին պատճառել հայության այդ հատվածին: Սա էլ օրվա մտայնությունն էր: Այդ տառապանքները ստվերարկում էին գոյատեւման հաջողությունները եւ մինչեւ իսկ մոռացության մատնում ուրախալի այն խրախճանքը, որով արեւելահայությունը 1827-ին դիմավորեց ռուսաց զորքի մուտքը Երեւան եւ հաջորդ տարի՝ Թուրքմենչայ գյուղում կնքված պայմանագիրը: Ստացվում էր Թուրքիայի դեմ պատերազմ եւ նույն Թուրքիայի սիրաշահում: Ոմանք օրը տեսական ժամանակից վեր դասելով՝ պատմության հետ էին կատակ անում: Հակառակ դեպքում Անդրամիկի մտերիմներից մեկը Նազարբեկովի վերը վկայակոչած նամակից ընդամենը հինգ օր անց, պարզ է, նրա բովանդակությանը անտեղյակ, Անդրամիկին չէր գրի. «Բո եւ մեր բոլոր գործունեությանց դեմ... համառ պրովոկասիոն եւ դավադրություններու փրոտիականդա է մղվում եւ ամեն կերպ աշխատում են մեր գործունեությանց արգելք լինել: Այդ պատճառով լավ կլինէր, որ միշտ չափավոր գործեինք»:

Ինչպես ասվեց, Անդրամիկը Էրզրումից Ալեքսյոյ վերադարձից հետո հիվանդ էր, բայց ոչ այն աստիճան, որ Նազարբեկովին դիմեր իրեն հրամանատարի պաշտոնից ազատելու խնդրանքով: Որոգայթներն են հարկադրել: Նազարբեկովն էլ մի պատրվակի է սպասել: Եւ ծնվել է մարտի 17-ի հիշյալ պատասխանը. «Ալեքսյոյ, գեներալ Անդրամիկին, պատճենը գնդապետ Բեժանբեկովին...»: Անդրամիկի փոխարեն ժամանակավորապես զորամասի հրամատար է նշանակվում գնդապետ Բեժանբեկովը, իսկ հարցին վերջնական լուծում տալու համար Անդրամիկի դիմումը ուղարկվում է Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատարին եւ Հայոց ազգային խորհուրդ²: Ժիշտ է, սրանով Անդրամիկին պաշտոնից չեն ազատել, բայց հարցը շարունակել է մնալ: Դա ռազմի դաշտում իր տեղի ու դերի հարցն էր, որը չշտկվելով, ըստ նրա կամեցածի ու պահանջածի չլուծվելով՝

1 ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, թ. 15—16: 2 ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 370, ց. 1, գ. 2, թ. 2:

շարունակում էր ժողովրդի մեջ տեղիք տալ իր նկատմամբ տարակուսանքների խորացմանը:

Մայիսյան օրերին պարզ էր դառնում, որ Երեւանն էլ կարող էր ընկնել թուրքական կրակի տակ: Դժվար չէր դա կոտակել: Բայց այդ օրերին անգամ Անդրամիկի նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը այն էր դարձյալ, որ նա իր բանակով կենտրոնից հեռու մնար, մի կողմ քաշվեր: Նույնն էր կրկնվում, ինչ որ Ղազանչի ուղարկելիս: Ըստ որում այս անգամ համապատասխան անձինք ու հաստատությունները չեն զլացել նրան անձամբ տեղյակ պահել այդ մասին: **Մայիսի 8-ին** «Հայկական հարվածող զորամասի հրամանատար գեներալ Անդրամիկին» Թիֆլիսից պաշտոնական գրություն է հղել Հայաստանի ապահովության խորհրդի նախագահը՝ Վ. Փափազյանը: Երկուսն էլ արեւմտահայոց որդիներ էին, եւ թվում է, թե նրանց միջեւ փոխադարձ բարյացակամության հարցում տարակույս չպետք է լինէր: Հենց դրանից էլ սկսել է Վ. Փափազյանը, գրությունը վերնագրելով «Հարգելի հայրենակից» ջերմ բառերով: Հասակ երեւում է, որ Անդրամիկը մինչ այդ հատուկ նամակով բողոքել է իր վիճակից եւ առաջարկներ արել բանակային ուժերի ոչ ճիշտ տեղաբաշխման վերաբերյալ: Նամակն ստանալուն պես Ապահովության խորհուրդն «անմիջապես ժողով է գումարել», «ուշադրության է առել» եւ Անդրամիկի «տեղեկագրության հիման վրա, նաեւ հիմնվելով բարեկամների շարք մը թելադրանքների վրա» հարկ եղածի մասին հեռագրել Նազարբեկովին: Ինչպես երեւում է՝ այդ հարկ եղածը պատճառաբանություններ են, որոնք, որպես Նազարբեկովին հղված հեռագրի պատճեն, ուղարկվել են նաեւ Անդրամիկին:

Հավաստիացվում է, թե տվյալ պահին «կովկասյան կառավարությունը ամեն զոհողություններով» ջանում է որեւէ առիթ չտալ, որ թուրքական բանակը սահմանն անցնի: Բայց սա չէ գլխավոր հոգսը, այլ այն, ինչը մինչ այդ նպատակահարմար չէին գտնում նրան բացեիքաց ասել. «կը գտնենք, որ գլխավորապես թուրքահայ զորամասերի եւ Ձեր ներկայությունը այնտեղ վերոհիշյալ տեսակետից կարող է հարմար առիթ համարվել թուրքական բանակի կողմից եւ անցանկալի արդյունք ունենալ թե՛ զինադադարի հարգման եւ թե՛ մանավանդ թուրքահայերի շահերի տեսակետից»:

Սա է նոր, պատերազմների պատմության մեջ մինչեւ այդ չեղյալ, փիլիսոփայությունը. հակառակորդը կոխվն սկսելուց հետո դեռ պիտի նաեւ իր կամքը թելադրի, թե ինչպիսի եւ ում ղեկավարած զորքերը որտեղ դուրս բերել իր դեմ: Այս էլ քանիտորդ անգամ ակնարկ-

վում է, թե հակառակ դեպքում թուրքական կողմը կարող է չհարգել զինադադարը: Ի՞նչ զինադադար: Կոնվլը գնում է, թուրքերն առաջ են գալիս, քաղաք քաղաքի հետևից գրավում են եւ բնակչությանը չէ որ կոտորում են, այլ ամբողջ մի ժողովուրդ, ու դեռ այդ ժողովրդի բախտը տնօրինողները գորավար են ետ մղում ճակատների մի ետնաբակ, որ նրա ձայնը չլսվի, նրա անունը հայտնի չդառնա, ու գուցե թե թշնամիքն էլ ավելորդ զոհեր չտա: Սա այնքան անսպասելի է ու անհավատալի, որ եթե «բախտի» բերմամբ այս փաստաթղթերը մի դեպքում Տիգրան Բեկզադյանի, մի այլ դեպքում էլ Վահան Փափազյանի գրածները չլինեին, ով կհավատար այս խորհմաստությունը: Հավանաբար բոլորն էլ համոզված են եղել, որ եթե ոչ այլ ոք, անկախն հարգարժան ու խոհեմ Անդրանիկը պետք է որ անմիջապես հասկանար, թե բանն ինչու՞մն է եւ հիսուներեքամյա զինվորի ու զորավարի իր գլուխը խոնարհեր այդ իմաստնության առջև: Այս էլ, ներողություն, դարձյալ մեր բառերն ու մեր դատողությունը չեն, այլ բառացի գրված են վ. Փափազյանի նամակում. «Վստահ ենք, որ կը հասկանաք մեր երկյուղը եւ այս առիթով կորպուսի հրամանատարի հետ բանակցության մտնելով, կընտրեք հարմարավոր մեկ վայր, ուր Ձեր գործմասը պիտի կարենա ավելի կանոնավորվել...»:

Էլ ինչո՞ւ էր ժողովուրդն ակնապիշ սպասում, թե որտեղ է իր զորավարը հայտնվելու:

Համբերությամբ եւ խողովակույզ հաշտվելով իր վիճակի հետ, Գյուլի Բուլաղի ճակատից Անդրանիկը ղեկավար մարմիններից հայտնում էր իր նկատառումները: Ապահովության խորհուրդ հղած իր հաշվետվության մեջ նա ուշադրությունը բեռնում էր նրան, որ թուրքերը խախտում են զինադադարի պայմանները եւ հարձակումներ են գործում խաղաղ բնակչության վրա: Միաժամանակ նա նպատակահարմար չի գտել իր գործմասը նշված երկայնաձիգ ձեւով ճակատի այդ հատվածի մի ծայրից մինչեւ մյուսը փոշիացնելը: Այդպես թշնամու հնարավոր հարձակման դեպքում հեշտ չէր լինի ուժերը ի մի բերել եւ կանգնեցնել նրա երթը: Գուցե թե զորավարի նաեւ այս եռանդի համար է, որ Ապահովության խորհրդի ղեկավարությունը Նազարբեկովի ուշադրությունը հրավիրել է Անդրանիկին, նրա պահանջին հակառակ, այդտեղից էլ հեռացնելու, էլ ավելի «անվթար» մի վայր տեղափոխելու վրա: Ահա բառացի՞ն՝ «...խորհուրդը խնդրում է Ձեզ առանձնահատուկ ուշադրություն դարձնել

այն հանգամանքի վրա, թե որքանով է հարմար, որ ներկայումս զինադադարի ամենապատասխանատու եւ [վստահավոր] հետեւանքներով հղի ժամանակին, թուրքական զորամասերի դեմ դուրս բերվեն թուրքահայերը եւ մասնավորապես մի այնպիսի չափազանց հեղինակավոր եւ վառ գորահրամանատար, որպիսին գեներալ Անդրանիկն է: Մենք այն կարծիքին ենք, որ գեներալ Անդրանիկի միայն ներկայությունը այնպիսի շրջաններում, ինչպիսին այժմ նրա գլուխը վայրն է, հանգամանքների բերումով կարող է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնցում գեներալը հարկադրված կլինի շեղվելու Ձեր ցանկություններից, նույնիսկ իր սեփական ցանկությունից անկախ»: Եվ պահանջը դարձյալ նույնն է. խորհուրդը համոզված է, որ Նազարբեկովը միջոցներ ձեռք կառնի, որպեսզի «առաջիկայում, մինչեւ ակտիվ մարտական գործողությունների հնարավոր անհրաժեշտությունը, նշված [Անդրանիկի] զորամասը փոխարինելու ճակատում գտնվող ուրիշ զորամասով, նրան ետ քաշելով մի ավելի նպատակահարմար վայր»¹: Այս էլ ոչ թե ուզմական, այլ ազգային-քաղաքական ու հայրենակցական ղեկավարության հոգատարությունն ու վճիռը: Ոչինչ որ դրսում ժողովուրդը կսպասեր եւ պատճառներ կհորիներ²:

Այնքանանդրապոլի անկումից հետո, Ալեքսուլից կտրված Անդրանիկն իր ընթացքով հայտնվեց Ջալալօղլում, որից հետո նա Դիլիջանից բացի ուրիշ տեղ չէր կարող անհանջել, ինչպես կտեսնենք ստորեւ, իսկ այնքանանդրապոլյան զորամասերն իրենց ընթացքով մի ճյուղով դուրս եկան դեպի Սարդարաբադի դաշտը, որտեղ նրանց սպասվում էր թուրքական բանակի դեմ հայության ուզմական ուժերի վճռական մարտը, մյուսով՝ Համամլու—Ղարաքիլիսա գծի վրա, որտեղ անհապաղ ընդհարվեցին հակառակորդի՝ այդ կողմով արշավող զորքերի հետ: Սարդարաբադի դաշտում գալիս, կենտրոնանում էին վերելում քանիցս հիշատակված Սիլիկյանի հրամանատարության տակ, իսկ Ապարանի կողմով արշավող թուրքերի դեմ պաշտպանական ուժերը ձեւավորվում էին Դրաստամատ Կանաչյանի՝ Դրոյի նախաձեռնությամբ եւ ղեկավարությամբ:

Նազարբեկովը դեպքերի թելադրանքով տեղաշարժվում էր: Ալեքսանդրապոլը հանձնելուց հետո կորպուսի շտաբը տեղափոխվում է Ղարաքիլիսա, որը հանձնելուց հետո նա իր հրամանները հղում էր Դիլիջանից:

Ինչպես երեկ Ալեքսանդրապոլից, այսօր էլ Ղարաքիլիսայից է կորպուսի հրամանատարությունը վերջին պահին Անդրանիկին տեղյակ պահում իր գործերի մասին, որոնք քաղաքը թողնելն ու նախաձեռնելն էին, որն այս անգամ Դիլիջան տանող ճանապարհով էր

1 Մի բառ անընթեռնելի է: ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 5, թ. 4:

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 5, 2 Ն. տ.:

իճելու: Հեռախոսով Անդրանիկը Ջալալօղլուց մի կերպ կապվել, հազիվ երկու իւրսք է ասել Նազարբեկովի օգնական Մանասյանին եւ լսել է նրա տխուր պատասխանը: «Լարաքիլիսան թողնում եւ գնում ենք Դիլիջան»: Հեռախոսն այլեւ լռել է¹:

Ջալալօղլի մտնելուն պէս Անդրանիկն աշխատել է որոշել իր անելիքը: Նա հաշվի է առնում, որ Ջալալօղլու բնակչության զգալի մասը ուսու էր, ուսուներ էին ապրում նաեւ մերձակա մի քանի գյուղերում: Հայերի հետ ուսու բնակիչները նույնպէս Անդրանիկին սրտաբաց են ընդունել: Նրանք միացնում են իրենց ջանքերը, նշում է օրագրողը, ձգտելով «կազմակերպել եւ պաշտպանել իրենց գյուղային թուրքական ավերիչ ուժերի դեմ»²: Անդրանիկը նրանց ներկայացուցիչներին խորհրդակցության է հրավիրում, որը հանգում է ներխուժողներին հակահարվածի պատրաստ լինելու եզրակացությանը: «Սկսվում են դիրքալին աշխատանքները», — գրում է օրագրողը: Ռազմական ուժերը դիրքավորվում են այն կողմում, որտեղից հաստատապես սպասվում էին թուրքական զորքերը: Թուրքերի մտնեցման առաջին իսկ պահից սկսվում է կռիվը, որը տևում է շուրջ երկու օր: Եվ, ցավոք սրտի, զուր չեն անցնում ուսուների մեջ եղած տարակարծությունները: Նրանց գյուղերից մեկում բնակչությունն արգելք է կանգնում եւ չի թողնում, որ հայերի զինված ուժերը իրենց գյուղով անցնեն, գնան թուրքերի մուտքն արգելակելու:

Սա ազգային խնդիր չէր: Հայկական գյուղերում նույնպէս չէին մարտնչում տրամադրություն է արտահայտվել: Ժամանակակիցը այսպէս է գրել դեպքերից ոչ շատ անց եւ հրապարակորեն. «...գյուղացիներից լսում ենք, որ Անդրանիկը Ջալալօղլի է հասել, օգնություն է պահանջել Լոռու գյուղերից եւ չի ստացել եւ որ նա այնուամենայնիվ կռիվ է սկսել թուրք կանոնավոր զորքի հետ՝ նախօրոք Ջալալօղլին դատարկել հրամայելով»⁴:

Կռիվը տևել է երկու օր, որով եւ սպասվել է Անդրանիկի զորքի երկրապահ գործունեությունը Ջալալօղլիում: Այնուհետեւ գործամարքում է դեպի Դիլիջան տանող ճանապարհը, միայն թե շրջանի սահմաններից դուրս գալուց առաջ Անդրանիկն իր գործամասի գինվորների հետ ծառախիտ անտառով եւ վար ու վեր կածաններով անցնում, գալիս է Դսեղ գյուղը, որտեղ այդ ժամանակ հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանն էր իր հայրական տանը գրողը:

Այստեղ՝ Դսեղում նույնպէս, Անդրանիկը տեսնում է, որ գյուղացիք միակարծիք չեն: Ծիշտ է, հիմնական զանգվածը բոլոր ուժերով կռվելուն կողմ է, հայրենի հողը ինչ գնով ուզում է լինի թշնամու մուտքից զերծ պահելու պատրաստակամ: Բայց մի մասն էլ համա-

ձայն է առանց կռիվ անձնատուր լինելու եւ դռների թշնամու առջեւ բացելու մտքին. միայն թե կռիվ եւ արյունահեղություն չիլնի¹:

Լարաքիլիսայից Դսեղում Անդրանիկին գտել, հեռախոսի մոտ է հրավիրել այս անգամ անձամբ Նազարբեկովը: Դա եղել է քաղաքից դուրս գալուց եւ հինգ օր անց վերադառնալուց հետո: Նազարբեկովն իր աչքով տեսել էր, թե ինչ ասել է բնակչությանը թրի հովանավորությանը հանձնելը: Եվ նա պաղատագին խնդրել էր Անդրանիկին. «Ի սեր աստծո, ի սեր Քրիստոսի, ի սեր նահատակներուն եւ Հայրենիքին պահես Լոռին եւ չի թողու որ թշնամին մեր կոնակը անցնի»: Անդրանիկի պատասխանը պարզ էր. «Որքան ատեն որ ժողովուրդը եւ զինվորը ինձի հետ են, պիտի կռվիմ եւ բոլոր ուժովս չպիտի թողում թշնամին, որ քայ մը իսկ առաջ ընթանա»:

Լարաքիլիսան հանձնելու լուրն իմանալուց հետո Լոռու եւ մոտակա Ղազախի շրջանի հեղինակավորները եկել, խնդրել են Անդրանիկին, որ նա իր զորքով մնա իրենց երկրում եւ պահապան կանգնի բրնակչությանը: Անդրանիկի կամքն էլ էր այդ: Պետք էր միայն հոգալ զորքի ապրուստի մասին:

Այս բոլորին տեղյակ էր Հովհաննես Թումանյանը: Եվ նա էլ է իմացել, թե ինչպէս հեղինակավորները գնացել ու դրժել են իրենց խոստումը: Ավելի լավ են համարել, կռիվից ու արյունից զերծ մնալու համար, սպիտակ դրոշմ վերցնել ու թուրքերին ընդառաջ գնալ: Իմացել է այս ամենը Թումանյանը եւ գորավարի հետ անկեղծ գրույց բացել, որն այսպէս է հիշում Անդրանիկը.

«Ջորավա ր, այս ժողովուրդին ներկայացուցիչները որչափ որ քեզի խոստացան եւ երդում րրին քեզի հետ հոս մնալու եւ կռվելու, սակայն եւ այնպէս ասոնք ճերմակ ֆիկելով (դրոշակով՝ Հ. Կ.) պիտի դիմավորեն թուրք բանակը եւ քեզ ոչ հաց եւ ոչ ալ ձիերուդ խոս պիտի տան, ուստի ես՝ քու բարեկամդ եւ մտերիմդ, չեմ ուզեր հոս



ԴՐԱՍԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆ

1 «...Օրագրութիւնը», էջ 101—102: 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 42, Գ. Տխոսնյանի հուշերը: Նաեւ՝ «...հարուածող պորամարք», էջ 20:
3 Ն. տ. էջ 21: 4 Ալ. Տեր-Պողոսյան, Տաճիկ պորքը Լոռում (Ականատեսի եռամսյա ապրումներից), «Ժողովրդի ձայն», №22, 28.09. 1918 թ.:

1 «...հարուածող պորամարք», էջ 24: 2 «...օրագրութիւնը», էջ 102:

մնաս եւ երեսուն տարւական փառավոր գործունեությունը արատավոր-
վի դավաճանությամբ»¹:

Լուրջ էին գործի թե պարենավորման, թե հանդերձավորման հար-
ցերը: Անդրանիկը, սուրհանդակների եւ անասկագրության միջոցով
դիմել է զանազան հասցեներով: Մարդիկ ընդառաջում էին: Բնորոշ
է Ախալքալաքի հայոց ազգային խորհրդի նախագահի պատասխան
ճամակը «Գեներալ մայր Անդրանիկին», գրված 1918-ի մայիսի
13-ին. «...Խորհուրդս հանձն է առնում ամեն միջոց գործ դնել՝ բա-
վարարելու ձեր զորամասը պահանջված քանակությամբ հացով ու
գարով...», — գրել է ու շեշտել, որ դա այնքան էլ հեշտ գործ չէ,
քանի որ տեղի կարիքներն, ինքնին, չեն կարողանում հոգալ²:

Սուղ էին միջոցները: Եվ դա իր հերթին խորացնում էր տրամադը-
րության անկումը: Վատ էր հատկապես Հարաքիլիսայի ճակատի հայ
զինվորների վիճակը: Նրանց շարքերում արդեն տեղ էր գտել դա-
սալքությունը: Անդրանիկն առիթ է ունեցել հանդիպելու փախչող-
ներից հատկապես նրանց, որոնք Դիլիջանով ուզում էին դուրս գալ
դեպի Թիֆլիս: Անդրանիկի պահապանները մի անգամ զիջերը բռն-
ում եւ իրեն մոտ Դսեղ են բերում 39 սպա եւ մի քանի հարյուր փա-
խըստական զինվորների: Զորավարը Թումանյանի հետ միասին հար-
ցուփորձ է անում, նախ, իհարկե, հաց տալով նրանց: Ծարահատյալ
բոլորին էլ թողնում են, որ իրենց ճամփով գնան³: Անդրանիկին ու
Թումանյանին մնում էր միայն նրանց հրածեշտի խոսք ասել եւ խոր-
հուրդներ տալ: Անդրանիկն իր զորամասով բռնում է դեպի Դիլիջան
ճահանջի ցեխոտ ու դժվարին ճամփան:

Դիլիջան հասնելու եւ այնտեղ գտնվելու առաջին օրերը շրջադար-
ձային եղան թե Անդրանիկի կյանքում, թե հայոց պատմության մեջ:

Թուրքական զորքերի հրամանատարությունը անակ է ուղարկում
հայկական կորպուսի հրամանատարությունը հասցեով, որ թուրքերի
եւ Հայոց կառավարության միջեւ հարթումում հունիսի 4-ին հաշտու-
թյանը մնում է չնչին մի հողամաս: Անդրկովկասյան Սեյմը լուծարվել
էր: Ամսի 26-ին՝ Վրաստանը, 27-ին՝ Ադրբեջանը եւ 28-ին Հայաս-
տանը հռչակվել էին անկախ հանրապետություններ: Հունիսի 4-ին
նույն հարթումում Վրաստանի նորահռչակ հանրապետության հետ
կնքած պայմանագրով Թուրքիային էին անցնում Կարսը, Արդվինը,
Արդահանը, հարթուր, Ախալցխան ու Ախալքալաքը: Հայերի հետ

¹ Ն. տ., էջ 103: ² ՀՀ ՊԿԱ, ֆ. 370, ց. 1, գ. 52, թթ. 18—19: ³ «Ջոր. Անդ-
րանիկ կը խօսի», էջ 234—235.

կնքված պայմանագրով դրանց ավելանում էին Էջմիածնի ու Ալեք-
սանդրապոլի գավառների մեծ մասը, Սուրմալուի ամբողջ գավառը,
Երեսանի ու Ծարուր-Դարալագյազի գավառների առանձին մասերը:
Հայաստան Հանրապետությունը գետնիկում է ընդամենը ինը հա-
զար քառակուսի կիլոմետր տարածքում: Պայմանագրում նշված սահ-
մանագծից դուրս են մնացել Նախիջեւանի, Չանգեզուրի եւ Արցախի
գավառները¹: Հայերն էլ այսուհետեւ ոչ թե զորք էին ունենալու,
որպես սովորական բանակն է, այլ միլիցիայի պարտականություններ
կատարող մի զորախումբ:

Փաստաթուղթը, որ անվանվում է մերթ որպես 1918-ի հարթումի
եւ մերթ՝ հունիսի 4-ի, կազմված է արտասովոր «բարյացկամու-
թյան» ոճով ու շնչով եւ հեեց այդպես էլ միջազգային ասպարեզ է
եղել՝ «Հաշտության եւ բարեկամության պայմանագիր»: Չտեսնված
հաշտություն է եւ անմասն բարեկամություն: Նրանում օսմանյան
կայսերական կառավարությունը ի՞նքն է պարտավորվում հարկ եղած
օգնությունը ցույց տալ Հայաստան Հանրապետությանը եւ այլևս
ավելորդ են համարվում նրա տարածքում փաստորեն ուրիշ, քիչ թե
շատ գործուն նշանակություն ունեցող, ռազմական միավորումները:
Այս մեծահոգությամբ ի պատասխան Հայաստան Հանրապետության
կառավարությունն իր կողմից պարտք է ստանձնում «հակազդել,
որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի եւ չզինվի իր տարածքի
սահմաններում, ինչպես եւ զինաթափել ու ցրել բոլոր բանդաները,
որոնք կփորձեն թաքնվել այնտեղ»: Ինչ ընտիր բառեր են՝ «բան-
դա», «թաքնվել»: Եվ ովքե՞ր են այդ բանդիտները, ո՞վ է նրանց
հրամանատարը, ի՞նչ թաքնվելու փորձի մասին է խոսքը: Հայազգի
Խատիսյանը, Քաջազունին եւ Պապաջանովը, որ ստորագրել էին
այս բառերի տակ, շատ ավելի լավ գիտեին, որ այդ բանդիտները,
որը հայերեն ասած՝ ավազակներն են, Անդրանիկի զինվորներն են
նկատի առնված եւ ինքն անձամբ՝ Անդրանիկը: Փաստաթղթի տաս-
նըչորս հոդվածներից սա հինգերորդն է: Կողմերը շտապով դա գրել,
առաջ են մղել ոչ միայն նրա համար, որ չմոռանան, այլեւ, որ իրենց
համար տվյալ հարցի կարեւորությունը առաջ մղեն:

Անդրանիկը պետք է շտապեր իր ճակատին փակցնել ավա-

¹ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին
քաղաքականության փաստաթղթերում, Ե., 1972 թ., էջ 531—537 եւ 771: 1918 թ.
հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուրդուխի կինոդադարով օսմանյան կայսրության
պարտության ճանաչումից հետո թուրքական կործերը հեռացել են Անդրկովկասից,
բացառությամբ Կարսի շրջանից, որը նրանք թողել են 1919-ի ապրիլին (տե՛ս Ն. տ.,
էջ 771). իսկ Չանգեզուրն ու Արցախը մնացել են որպես Հայաստանի եւ Ադրբե-
ջանի միջեւ վիճելի տարածքներ. ² Տե՛ս նշվ. ժողովածուն, Ե., 1972, էջ 534:

գակ-բանդիտ պիտակը եւ նույնպիսի հապճեպությամբ ձեռնամուխ լինելը ցրելու իր զորամասը, հաստատելու համար, որ այն ոչ այլ ինչ է, եթէ ոչ բաթումյան պայմանագրով բանդիտային անվանվածը, պիտի լոնը եւ խոնարհաբար ենթարկվեր այս աստիճան ստորացմանը:



ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ

Քի աչքը շարունակվում էր հառած մնալ Հյուսիսին, թեւս այդ հյուսիսը վաղուց արդեն խաչ էր քաշել այդ ժողովրդի վրա¹: Չափազանցնում է Սիմոն Վրացյանը և չարաչար սխալվում, հարց չտալով իրեն, թե ինչու արա աչքը Ռուսաստանին հառած: Սրանով Ռուսաստանին այնքան չսիրող Վրացյանը վիրավորո՞ւմ է Ռուսաստանին, թե՛ շոյում ու գորգորում: Այնպես որ տվյալ հանգամանքներում՝ եւ տվյալ ձեռով հանրապետության հռչակման հետ միաժամանակ ընդունված թալանչիական ու ստորացուցիչ փաստաթղթի նկատմամբ Անդրանիկի մերժողական վերաբերմունքը ղեկավարների նեղ կազմի կողմից է միայն հիվանդագիշ ընդունվել, այլ ոչ ժողովրդի: Ըստ որում հենց նրանք էլ՝ ղեկավարները, նրանց մեջ հատկապես վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը, հարկ եղած դեպքերում ըմբռնումով էին ընդունում Անդրանիկի գալույթը:

¹ Ս. Վրացեան, Անկախ եւ միացեալ Հայաստան, Բ. 1920 թ., էջ 46:

Դիլիջան գաղով, Անդրանիկը Նազարբեկովից հանձնարարություն էր ստացել այնտեղ գտնված հայկական մյուս զորամասերով արգելել թուրքական զորքերի ներխուժումը երկրի այս կողմերը:

Անկախ նրանից, թե ով ինչպես կընկալեր այդ պայմանագիրը, Անդրանիկն ընդունում էր այն որպես սրածայր սուր, ուղղված միաժամանակ նաեւ իր եւ իր զինվորների դեմ: Իբրեւ թե հայերը շատ զորք ունեին, այսուհետեւ փաստորեն եղածն էլ, չնչին բացառությամբ, արգելվում էր պահել: Եղածի մեջ առաջին հերթին Անդրանիկի հարվածող զորամասն էր նկատի առնված որպես վերացման ենթակա:

Անդրանիկն ու նրա զորքի լինել-չլինելը դարձել էին միջազգային դիվանագիտության հարց: Մենք նկատի ունենք նաեւ 1918-ի մարտին կնքված Բրեստի հաշտության բանակցությունները, որոնց ընթացքը զուգարիպեց Անդրանիկի երկրապահ դիվիզիայի ձեւավորման եւ Էրզրումի ճակատում գործողությունների հետ: Դիվիզիայի ասպարեզ գալը, առավել եւս հաջող գործողությունները պետք է որ լրջորեն խանգարեին բանակցություններին մասնակցող թուրքական պատվիրակության՝ հայկական տարածքներ զավթելու ծրագրերի իրականացմանը: Ուստի միաժամայն բնական պետք է համարել, որ բանակցությունների ընթացքում Անդրանիկի գործողությունների մասին համապատասխան տեղեկություններ էին հայտնվում Մոսկվա, Ստամբուլ եւ Բրեստ-Լիտովսկ: Էրզրումյան անհաջողությունից հետո ազգությունների գործերի ժողկոմ Ստալինին հայտնվել է. «Թուրքական բանակի եւ տեղական քրդերի առաջին իսկ հարձակման ժամանակ գեներալ Անդրանիկի գլխավորած բանակը նահանջել է գրաված վայրերից»¹:

Չնայած այդ ուրախալի լուրին, թուրքական կողմը բանակցությունների ընթացքում շարունակում է պնդել, որ կողմերի միջեւ հաշտություն ստորագրելու պայմաններից մեկը թուրք-կովկասյան ճակատից ռուսական զորքերի եւ առհասարակ տեղական ռազմական ուժերի դուրս բերելն է: Ըստ այդմ էլ մարտի 3-ին կնքված պայմանագրի 4-րդ հոդվածով ռուսական կողմը անարդարացիորեն եւ անմըտորեն պարտավորվում է անել «իրենից կախված» ամեն ինչ «Արեւելյան Անատոլիայի նահանգներից իր զորքերի դուրս բերումը ասպահովելու համար»: Ավելին, ռուսական կողմը նաեւ պարտավորվում էր օժանդակել, որ Արդահանի, Կարսի եւ Բաթումի մարզերը

¹ ԽՍՀՄ արտաքին քաղաքականության արխիվ (ԱՔԱ) ֆ. 148, 1918—1920 թթ., ց. 1, գ. 1, թ. 19:

հանձնվելիս ամեն ինչ անցներ հաշտ ու խաղաղ, սուսնց «վրիժա-
նության ակտերի, կողոպուտների ու ոճրապործության կամ այլ իրա-
վախախտումների», որպեսզի «կահույքն ու գույքը մնան անվթար եւ
չավերվեն»¹: Փաստաթղթում գաղտնի չի մնացել, թե այդ ումից էր
թուրքական կողմը իրեն ապահովագրում եւ ռուսական կողմն էլ՝
նրան օժանդակում: Իր բանակը զորացրելու պարտք ստանձնելուց
բացի, ռուսական կողմը հատուկ պարտավորվում է՝ «զորացրել եւ
լիովին լուծարքի ենթարկել հայկական խմբերը», որոնք կազմված են
թուրքա եւ ռուսա հպատակներից եւ գտնվում են ռուսական տարած-
քում ու թուրքիայի գրավված մարզերում»²: Սա արվել է թուրքական
կողմի ուղղակի պահանջով: Բանակցությունների փետրվարի 3-ի
երեկոյան նիստի նախագահող Թալեաթը հարց էր դրել, որ «ռուսա-
կան զորքերի դուրս բերումից հետո» տեղական, հայկական եւ այլ,
զինված ուժեր այլեւս չմնան³: Բանակցությունների ավելի վաղ փու-
լում, հունվարի 8-ին, Իզզեթ փաշան իր թուրքական պատվիրակու-
թյան եւ կառավարության անունից հեռագիր է հղել Պետրոգրադ՝ Լ.
Բ. Տրոցկույն եւ բողոք հայտնել «Կովկասյան բանակի կողմից գրավ-
ված թուրքական տարածքներում հայկական բանդաներ ձեւավորելու
դեմ», պահանջելով, որ անհապաղ դադարեցվեն նման գործողու-
թյունները⁴:

Ուրիշ, այսպես ասենք, «չետա» չի եղել եւ եթե եղել էլ է, գու-
խավորը Անդրանիկի ձեւավորած արեւմտահայ տղաներից կազմը-
ված դիվիզիան էր, որին չեն բարեհաճել դիվիզիա բառով կոչել:
Անդրանիկը Բրեստի բանակցությունների փաստաթղթերի այս էջերը
սուսնց կարդալու էլ չէր դժվարանալու կռահել, թե ինչ պետք է
այնտեղ ասեին հայության մասին ընդհանրապես եւ նրա Անդրանիկ
զավակի մասին՝ մասնավորապես, Թալեաթ եւ Իզզեթ փաշաները: Եվ
իմանալով կամ կռահելով, մեկ է, նա պետք է կարողանա՞ր լռել:

Ըստ նրա՝ ստացվում էր իր դեմ ուղղված երկնյուղ հակառակու-
թյուն. թիկունքից՝ նման պայմանագիրն ստորագրելու պատրաստա-
կամ անխոհեմ գործիչները, ճակատից՝ թուրք փաշաները:

Անդրանիկը գիտեր, որ Անդրկովկասյան սելմի ղեկավարները,
նրանց հետ նաեւ հայոց ազգային ղեկավարները, դեռեւս շատ
շարքաթներ սուսջ էին թուրքական կողմի հետ բանակցությունների
մեջ մտել: Բայց նա չէր կարծում, որ բանը մինչ այդ աստիճան

ստորացուցիչ պայմանագիր ստորագրելուն կհասնի: Մանավանդ որ
հայոց ազգային ղեկավարներից ոմանք, իմանալով թուրքերի հետ
որեւէ ստորացուցիչ պայմանագրի ստորագրմանը Անդրանիկի դեմ
լինելը, վաղօրոք նրան տեղեկացնում եւ հավաստիացնում էին, որ
դա չի լինի: Ահա փետրվարի 21-ին Թիֆլիսից հեռախոսով Անդրա-
նիկին ուղարկված լուրը. «ոչ պաշտոնական ձեռով որոշել ենք
չմասնակցել պատվիրակությանը»: Մենք բողոքել ենք եւ շարունա-
կում ենք մինչեւ վերջ բողոքել: Մեր բողոքի մասին հայտնվել է
դաշնակիցներին»¹: Բայց որովհետեւ հայոց ղեկավարները տարա-
կարծիք էին, Անդրանիկը ժամանակին ստացել է նաեւ հարցական
մի հեռագիր, որը դարձյալ ուղարկվել է Թիֆլիսից. «Տրապիզոնի մեջ
կովկասյան ազգերի խաղաղության համաժողով է գումարվում, թըր-
քահայր մասնակցի՞, թե ոչ»: Ուրիշ ճար չկար: Հայաստանի արեւմը-
տյան հողերի ու հայ ժողովրդի նույն արեւմտյան հատվածի հետ ինչ
որ լինելու էր, եղել էր: Ինչպե՞ս վարվի ժողովրդի արեւելյան հատ-
վածը: Այս հարցն էր մնացել: Վրացին ու ադրբեջանցին միայն
արեւելյան էին, նրանք յաթաղանի քմահաճույքին հանձնված ո՛չ
արեւմտյան երկրամաս ունեին, ո՛չ էլ ժողովուրդ: Նրանց բանն ուրիշ
էր, կողմ էին թուրքերի հետ բանակցելուն, հաշտություն կնքելուն, եւ
աճապարում էին գրվելիք թուրք ստորագրել: 2Է՞ որ ինչ թուրք էլ
ստորագրվեր, Հայաստանն ու հայ ժողովուրդն էր պատասխան տա-
լու: Սա բոլորից լավ գիտեր Անդրանիկը: Եվ նման հարց ծագելիս
պատասխանի վրա ժամանակ չէր կորցնում: Ուստի թիֆլիսյան այս
հեռագրին նա տեղնուտեղը պատասխանել է. «Ոչ մեկ թրքահայ թող
չուղարկեն Տրապիզոն պաշտոնապես: Եթե կուզեն ուղարկել, անձ մը
թող երթա անպաշտոն եւ շոշափե թուրք մտայնությունը»²: Սա
նույնպես էր գրումյան օրերին էր:

Անդրանիկին հայտնի էր, որ իր Զալայօղլի-դիլիջանյան օրերին
Բաթումում Վեհիբ փաշայի հետ հայոց քաղաքական հեղինակու-
թյունները՝ Հովհաննես Քաջազունին, Ալեքսանդր Խատիսյանը եւ
Միքայել Պապաշանյանը հաշտության բանակցությունների էին նըս-
տած: Պայմանագիրն ստանալով, երբ դեռ Դիլիջանում էր, միա-
ժամանակ իմացել է այդ օրերին շրջող այն լուրը, թե ամենախայ-
տառակ այդ փաստաթուղթը ստորագրելուն լրջորեն նպաստել է Նա-
զարբեկյանի հեռագիրը, թե ինքը՝ Նազարբեկյանը «ոչ մի կովող
զինվոր չունի»: Ուստի հեռագրի մասին իմանալուց հետո, Անդրա-

* Այսինքն թուրքիայի հետ բանակցելու համար անդրկովկասյան միացյալ պատ-
վիրակությանը:
1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 40, թ. 153: 2 «...օրագրութիւնը», էջ 89:

* Ռուսերենում чета.
1 Նշված ժողովածուն, էջ 431: 2 ՆՍՀՄ Ա.Ք.Ա., ֆ. 413, ց. 1, գ. 11, թ. 143—
149: 3 Ն. տ., ֆ. 160, ց. 1, գ. 70, թթ. 1—3: 4 Ն. տ., ֆ. 413, 1917—
1918 թթ. ց. 1, գ. 87, թ. 5:

նիկը պարտք է համարել անհասկալի իր կարծիքը հղել Նազարբեկ-
յանին, պատճենները՝ հայոց կաթողիկոսին եւ Ազգային խորհրդին.
«Վեց հարյուր տարվան ստրկության շրջան դարձյալ ձեր վիզն ու
նորը կանցնեք ձեր ձեռքով: Չեմ կրնար այս պայմաններուն հան-
դուրժել, մոռնալով մեր երեսուն տարվան զոհերը եւ մեկ միլիոն ան-
հատակները: Ստացեք ինձմէ Դիլիջանը, որպէսզի ես մեկնիմ ուր
կուզեմ»¹:

Չորավարը թալանչիական պայմանագրին բացարկ է հայտարար-
ում, որը ոմանց կողմից միակողմանիորեն ընկալվեց ու այդպէս էլ
մեկնաբանվեց նաեւ որպէս բացարկ պայմանագիրն ստորագրողների
ղեկավարությամբ ձեւակորված նորաստեղծ հանրապետությանն ան-
րաստեղծ կառավարությանը:

Միայն Անդրանիկը չէր, իհարկե, հունիսի 4-ի փաստաթղթի սահ-
մանած՝ թզուկ չափերի դեմ խոռվահույզ: Ըստ որում եւ առարկողներ
կային, եւ հաշտեր, որոնք մայիսի 28-ին հռչակված պետականու-
թյունը թե դիվանագիտական ու այլ կարգի փաստաթղթերում, թե
հրապարակային մամուլի էջերում ոչ թե Հայաստանի, այլ Արարատ-
յան, տեղ-տեղ էլ Երեւանյան հանրապետություն էին անվանում:
Որովհետեւ ելնում էին նրանից, թե Հայաստանը շատն է, մեծն ու
ամբողջը, իսկ Արարատյանը՝ թզուկը, միայն այն, որ տարածքում որ
չորացնող թուրքական կողմը «մեծահոգություն» էր ցուցաբերել
հանրապետություն հռչակելու նկատմամբ: Հաշտերն էլ, առարկող-
ներն էլ ե՛ր հանրապետության ներսում էին, ե՛ւ նրա սահմաններից
դուրս: Ամերիկահայ դաշնակցական ու ոչ-դաշնակցական մամուլի
էջերում բավական տեսական «գրապայքար» է մղվել «Արարատյան
հանրապետությունը հայկական միակ կառավարություն ճանաչելու
կամ չճանաչելու» հարցի շուրջը²: Սույնպիսի իրարամերժ տրամադ-
րություններ են արտահայտվել նաեւ ֆրանսահայ գաղթօջախում:
Սրա հետ սերտ կապ ունեն այն, որ Անդրկովկասը, իր բաղկացուցիչ
մասերով, Ռուսաստանից անկախ էր հռչակվել մեկուկես ամիս Բրեստ
Լիտովսկի հաշտությունից հետո, որը Ռուսաստանը կնքել էր ան-
ջատ կերպով, առանց իր դաշնակից մյուս տերությունների մասնակ-
ցության ու համաձայնության՝ կատարելով տարածքային շուայլ զի-
ջումներ պատերազմում պարտության մատնված թուրք-գերմանա-
կան կողմին: Սա հակասում էր եւ դիվանագիտության տարրական

նորմերին, եւ պատերազմում հայթոյ կողմի համար սովորական
կարգին: Հայթոյ կողմը Անգլիա—Ֆրանսիա—Ռուսաստան եռյակ
դաշինքն էր (Անտանտը): Ռուսաստանը, անջատվելով, մեծ-մեծակ
էր հանդես եկել եւ զիջումները ստորագրել: Բարեբախտաբար, թեեւ
նոր պայմանագիր չեղավ, բայց, կարճ ժամանակ անց, վերացվեցին
թե Բրեստ-Լիտովսկի, թե հունիսի 4-ի գծած սահմանները: Հայոց
պետականությունը հաստատվեց թեեւ ոչ Անդրանիկի ցանկացած,
բայց անհամեմատ լայն տարածքում, քան սահմանված էին հիշյալ
պայմանագրերում:

Պատմականորեն ստացվեց այնպէս, որ նախապէս բնական եւ
օրինական եղան թե Անդրանիկի զայրույթը հունիսյան փաստաթղթի
դեմ, թե գոհունակությունը նույն այդ փաստաթղթի նշած տարածքում
հանրապետության հռչակման նկատմամբ: Անդրանիկյան մերժման
մասին վերելում ասվել է: Գոհունակությունն ու ընդունելիությունը,
բնականաբար, մամուլում ավելի շատ էր արժարժվում, մերթ տառա-
պանքով ու համակերպվելով, մերթ վիճակի հետ հաշտվելով, տրտըն-
ջալով... Բնորոշ է հայագետ Մանուկ Աբեղյանի խոսքը. «...բայց մերն
է, մեր սեփականը, [որը] չեղածից, ոչնչից լավ է»: Նկատելով, որ
ստեղծված իրավիճակում մեծ չափեր է ընդունել փախուսող երկրից,
նա մնալը գերադասում է փախուստից. «Այո՛, այս եւ ուրիշ շատ
ծանր պայմաններ շատ են ճնշում, ընկճում մեզ, բայց մենք այժմ
ունենք մի գոհար, որ դարեր շարունակ չենք ունեցել մեր տառա-
պանքների մեջ»: Այդ գոհարը նա համարում է «մեր նախնիների
իղձն ու աղոթքը, մեր հուստ աստղը, որ պիտի մեզ թեւալորի եւ մեր
ուժն ու աշխատանքի եռանդը բազմապատկի»¹: Սա է այն պարզ
ճշմարտությունը, որը սկիզբ է, այլ ոչ վերջակետ:

Ինչպէս էլ ասենք, վերջը Անդրանիկին ենք վկայակոչելու: «Վան-
Տոսպ» թերթի թղթակիցը հենց շոշափվող հարցն է տվել նրան: Ել
նա պատասխանել է. «Ամենեւ շատ ցանկացողը ես եմ եղած հայկա-
կան կառավարության մը ստեղծումին, բայց երբ խոսք կը վերաբերի
Երեւանյան հանրապետության, ես պիտի ըսեմ, որ այդ հանրապե-
տությունն ու կառավարությունը միանգամայն անընդունելի են ինձ
համար»: «Ինչո՞ւ» հարցին հայտնի պատասխանն է, այդ հանրապե-
տությունը «շնորհ է բերված» «բարբարոս թուրք կառավարության
կողմէ», կառավարության, «որ հինգ ամբողջ դար իր բնի մեջ խեղ-
դած էր հայությանը», իսկ վերջերս էլ «վանդալիզմի դեպքեր» է թույլ
տվել հայ ժողովրդի նկատմամբ:

1 Արսեն Ժամկոչեան, Զօր. Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդնե-
րուն, Փ., 1945 թ., էջ 29, 30: 2 «Արձագանք Փարիզի», №1—3, ապրիլ—10, մա-
յիսի 1919 թ. (արտատպություն Բոստոնի «Ազգ» եւ Ֆրեզնոյի «Մշակ» (20.01
1920 թ.) թերթերից,

1 «Ժողովրդի ձայն», ՔՖՖ՛իւ. №22, 28.09. 1918 թ.:

Նման արմատի վրա կառուցված լինելով էլ հենց Անդրանիկը պատճառաբանում է ու բացատրում նորաստեղծ հայկական կառավարության մի քանի գործողությունները, որոնք ուրիշ դեպքում երբեք եւ ոչ մի անգամ թույլ չէր տա որեւէ հայկական կառավարություն: Անդրանիկը թվարկում է դեպքեր, որոնք նաեւ իր հետ են առնչվում՝ չպարենավորեց Ղարաբաղն ու Ջանգեզուրը պաշտպանող իր բանակին, ուղղամտերը չսվեց նրան, չմտածեց նույն Ղարաբաղի ու Ջանգեզուրի գաղթականության մասին: «Չէ՛ որ անոնք այլ Հայաստանի մաս կը կազմեին»: Եվ հիշատակում է փաստ. «Եստիսյաններն ու Դրոնները» միջնորդել են կառավարության հետ հարաբերություններ իւրեւր իւր: Այստեղ ակնհայտ է Անդրանիկի անհատականությունը: Ուստի թղթակիցը տեղին է համարել հարց տալ իր գրուցակցին՝ բայց դրանում ի՞նչ մեղավոր է ժողովուրդը: Եվ Անդրանիկը ընդլայնել է իր ներկայացրած մեղադրանքի շրջանակները՝ «Եթե մեղավոր է կառավարությունը, նույնչափ եւ ավելի մեղավոր է ժողովուրդը»¹:

Հրապարակումը «Արձագանք Փարիզի» թերթում է, որը արեւմտահայության տրամադրությունների արտահայտիչն էր եւ իր էջերում այս հրապարակումից որոշ ժամանակ առաջ դժգոհել էր, որ «Երեւանյան կառավարությանը» ճանաչել է միայն Թուրքիան, որով նա թուրքահայերին զրկում է իրենց ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունքից:

Գուցե ընթերցողն ուզում է հարց տալ, հարց, որը եղել է հենց դեպքերի օրերին, կա այսօր եւ լինելու է վաղը: Որովհետեւ դա սերունդների հարցն է Անդրանիկին, ժողովրդի հարցը իր որդուն: չէ՛ որ մայիսի 28-ին հանրապետությունն էր հռչակվել, չէ՛ որ դա վերածնունդն էր ու վերականգնումը, իր նոր ձեւի մեջ, հայոց հիւճ հարյուր քառասուններեք տարի առաջ կորուսյալ պետականության: Մի՞թե այդպես է որդին ընդունում իր ժողովրդի անկախության հռչակումը:— Այո, ինչպես տեսնում ենք, այդպես է ընդունում, ընդունում, բայց ոչ՝ մերժում: Եվ եթե մեկը հիմքի թույլ քարի փոխարեն ամուրն է ուզում տեսնել եւ հաստատունը դնել, նա նույնպես հիմնադիր է ու կառուցող: Անդրանիկը երբեք ոչ մի անգամ հայոց պետականության վերածննդին դեմ չի եղել, բայց դեմ է, այո՛, դեմ՝ խախտտ ու խարխուլին, կիսատ ու պոստին, կողմ լինելով, որ երկրի այժմ էլ արեւելյան հատվածի հողերն այդպես հեշ-

տությամբ, այդպես մեծագանգված չարիերով չքոնազավթվեին եւ դեռ նրանց հնամենի որդիների գավալների ստորագրությամբ էլ չորոշմվեին որպես հրամայական փաստ: Անդրանիկն ուզում էր հողերը կորցնելուց հետո վերագտնելու հույսերը եւս չկորցնել, այդ հույսերի մեջ առաջին շարքում տեսնելով ժողովրդի ուղղակի մոծը, որում իր դեկավարած դիվիզիան էր: Ստացվում է, որ պետությունն չունենալու օրը ձեւավորած դիվիզիան պետք էր ցրել պետության վերականգնման ժամին: Նա քչին չէր դեմ, այլ եղածից քիչ լինելուն, ուզե՞նալով եւ ձգտելով ավելիին ու լիակատարին, որի համար էլ նա հանրապետության հռչակման իսկ օրից գեներալ վարչորդն էր: Հենց այդ էլ նրա մե՛ղքն էր. պետականության վերածննդի իսկ օրից գեներալ պատյան չորեք: Համուն ինչի՞, մի՞թե նրա՛ համար, որ անքուն գիշերներն ու անդադար տառապանքը ավելի հեշտ ու հանգիստ էին ընտանեկան հանգստից ու վերածննդի խրախուսանքը տոնելուց: Մի ուրիշ, ներքին, կոիվ էր սկսվում, այլ ոչ բանավե՛ն: Կոիվ, որը սովորաբար կարող է նաեւ վախճան ունենալ, իսկ բանավե՛նը՝ դադար: Ազգային պետականության վերածննդին Անդրանիկի կողմ կամ դեմ լինելու պատասխանը վերելում դեպի վան գնալու ձգտումն էր, առջեւում նրա ընթացքը դեպի Սյունյաց ու Արցախ աշխարհները, որտեղ դարձյալ ոչ հանգիստ էր նա առնելու եւ ոչ էլ երանելի հանգստության թախտին էր բազմելու:

Անդրանիկը լավ գիտեր պատմությունը: Թուրքական կողմն էր, երբ արդեն նվաճված էին Էրզրումը, Կարսն ու Ալեքսանդրապոլը, հարկադրել էր պարտավորեցրել, որ Հայաստանը Անդրկովկասի կազմում Ռուսաստանից անկախ հռչակվելուց հետո, հռչակվեր որպես անկախ Հայաստանի Հանրապետություն: Հայոց ազգային խորհուրդը **անկախ** առարկել է տվյալ իրավիճակում եւ թուրքական կողմի պնդմամբ տվյալ պայմաններով անկախության առաջարկին: Քաջատեղյակ Սիմոն Վրացյանը հիշում է. «ձայների ճնշիչ մեծամասնությամբ անկախություն հայտարարելու առաջարկը», երբ կացությունն անելանելի էր, «անկախ պետություն կազմելը դառն հեղձանք միայն կարող էր թվալ...»: Չբավարարվելով այսքանով, Վրացյանը շարունակել է՝ «...ստեղծված պայմաններում անկախությունը հավասար է տաճիկ բռնատիրության վերադարձին, հայ ժողովրդի անհատականության մի նոր շրջանի»:

Անկախ Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց փոքրիկ մի հողակտորի վրա: Հայոց ազգային խորհրդի այն նիստը, որ բնության առնվեց անկախությունը, Վրացյանը նմանեցնում է

1 «Արձագանք Փարիզի», №10—11, օգոստոս—10 սեպտեմբեր— 1919 թ.

«սգալոր տան, ուր ննջեցայ կա դրված...»: Այս ծննդյան պահի մասին: Բայց որքան էլ ծանր էր այդ պահը, թե Անդրանիկը, թե Վրացյանը — երկու մերժողներ — առարկել են որոշակիորեն, այլ ոչ պատմականորեն: «Ծագում է հրաշալի արշալույսը ազատության», — գրում է Վրացյանը: Թուրքերի հարկադրած պայմանագրի զավթումները մերժելու և Զանգեզուր — Արցախ հողամասի պահպանության համար Անդրանիկի մղած կռիվը նույն այդ արշալույսը ճանաչելու առհավատչյան էր:

Այնուամենայնիվ տարածքներով շատ տարբեր էին ինչպես ամբողջ Արեւելյան Հայաստանն ու նրա հունիսչորսյան այս պատտակը, այնպես էլ նույնը չէին առանձին-առանձին Արեւելյան Հայաստանն ու Արեւմտյան Հայաստանը՝ հայության ամբողջական հայրենիքի համեմատ: Այս տեսակետից թերեւս ամենից ավելի խտտապահանջը Պողոս Նուբարն էր: Մինչեւ իսկ 1919-ի օգոստոսի 1-ին, երբ հունիսի 4-ի պայմանագիրը կիրառության մեջ չեղյալ էր, և նրանով զավթված հողերը միավորվել էին Հայաստան Հանրապետության հովանու ներքո, նա Անդրանիկին նույնն է գրում: Նա էլ գտնում էր, որ «հանրապետության կառավարությունը մայիսի 28-ին ինքն իրեն ամբողջ Հայաստանի միակ կառավարություն է հաստատել», այլ կերպ ասած՝ ինքնակոչ է: Դժգոհ է, դա «ապօրինի և քաղաքական սխալ» է նա համարում, սխալ, որը Փարիզի խաղաղության վեհաժողովի «ազգային պատվիրակությունը չէր կարող ընդունել»: Ուստի ինքն ու Ավետիս Ահարոնյանը միատեղ բողոքել են, որ Արեւմտյան Հայաստանը դուրս է մնացել և պահանջում են, որ հայոց պետականությունը վերականգնվի, հաստատվի «ամբողջ հայերի մասնակցությամբ», որպես ամբողջական, միացյալ անկախ Հայաստանն²: Անդրանիկը Պողոս Նուբարի համախոհն էր:

Եթե սույն կարծիքները համարենք որպես հանրապետության ծրնրնդյան պահի արտաքին հանգամանքների նկատմամբ Անդրանիկի և մյուսների կողմն ու դեմը, ապա նույն բանը կարող ենք ասել ներքին քաղաքականության մասին՝ ըստ փարիզյան թերթում գետնդրված հարցազրույցի: Այստեղ էլ է Անդրանիկը ներքնապես անհանգիստ ու բառերի մեջ անզիջող: Նույն «ինչու չի ճանաչում» հարցին ի պատասխան նա մատնացույց է անում կառավարությանը. «անհոգ է ժողովրդի մասին և, ընդհակառակը, կը քաջալերե գողերն ու ավազակները...»: Սա ևս կարող էր պատճառ լինել, բայց որպես առօրեական մանրուք, որը բնական է և բնորոշ բոլոր կտրուկ քաղաքա-

1 Ս. Վրացեան, Անկախ ու միացյալ Հայաստան, Բ., 1920 թ., էջ 45—48:
2 ՀՀ ԴԿԳԱ, ֆ. 370, ց. 1, գ. 63:

կան վերափոխումներին, մանավանդ շեմքի մոտ: Թերթը փաստ է վկայակոչում. «Բաշագունու կառավարությունը, ծնված լինելով խուճապի մեջ», շարունակելով վերապրել խուճապային իր տրամադրությունը, խզեց իր կապերը Անդրանիկի հետ և «թշմանական դիրք բռնեց նրա վերաբերմամբ...»: Եզրակացությունը ժամանակի օգտին է. «պատմությունը ցույց կտա այդ բոլորը պարզությամբ»: Նույն տեղում, որպես այդ պատմության նմուշ, հիշատակվում են երեկվա դեպքերը, որոնց այս շարադրանքի հաջորդ էջերն են նվիրվելու. Անդրանիկի հերոսական ինքնապաշտպանական ջանքերը Զանգեզուրում¹: Ավելի վաղ թերթը խոստովանում էր, որ մեծ եղան Անդրանիկի ջանքերը, որոնց շնորհիվ «Սիսիանը, Գորիսը ու Կապանը չլիովին գերծ մնացին թուրքական նվաճումից»²:

Յոթ օր է Դիլիջանում մնացել Անդրանիկը: Եվ այդ օրերից ոչ մեկում մարդկանց աչքերի առջեւ չի եղել նրանց լսած, նրանց իմացած Անդրանիկը: Ծառերի զարմանքն է շարժել նա և զայրույթը: Ի՞նչ Անդրանիկ, որ ոչ թե սոսկ մարդկանցից էր խույս տալիս, այլ և երկիր հայրենիքից ու նրա նորապսակ կառավարությունից: Սովորական խույս տալը քիչ է: Ատելության և արհամարհանքի ոչ-պատշաճ, ոչ-բառարանային խոսքեր էր շարտում աջ ու ձախ՝ թե արժողի, թե չարժողի հասցեին: Դիլիջանում առանց այն էլ կուտակված էր թշնամու գրաված գյուղերից ու քաղաքներից գաղթածների հոծ բազմություն և շարունակվում էր քաղաքում նեղվածքը խտանալ. ամեն քայլափոխի՝ տներում, պատշգամբներում, շենքերի պատերի, այգիներում ծառերի տակ, փողոցներում՝ բաց երկնքի, գաղթի ճամփան բռնած ընտանիքներն էին ծվարել, իրենք էլ չիմանալով՝ մնալու ևն վաղն ու մյուս օրն էլ այդտեղ, թե՛ գնալու ևն, և ո՞ր ևն գնալու այսուհետ, որտեղ է լինելու կանգառը, և լինելու է՞ արդյոք... Այս դեռ քիչ էր, հուսադրող ու պանծալի Անդրանիկն էլ, իրենց երազած փրկիչը, ոչ իրենց լսածն էր, ոչ էլ երբեիցե տեսածը՝ անգութ էր, աղմկոտ, վայրենաբարո, չորս կողմը մարդկանց չէր տեսնում, չէր լսում նրանց հառաչանքը, չէր արձագանքում նույնիսկ մանուկների լաց ու կոծին: Չկար, չկար ու չկար իրենց իմացած, իրենց ցանկացած Անդրանիկը: Հուսակտուր մարդիկ, մահվան երախին հանձնված, դառը հիասթափություն էին ապրում: Թող լինեք մահը, ճակատագիր է, ինչ կարող էս անել, միայն երանի թե չլինեք

1 «Մշակ», №1, 10.02. 1920 թ.: 2 «Նոր հորիզոն», Թ., №18, 11.12. 1918 թ.:

հիասթափությունը այդքան դառն ու մաղձոտ, երանքի քե: Կմեռնեի՞ն հանգիստ խղճով, բայց գոնե չէին տեսնի հուսալքողին էլ անհուսալի վիճակում: Հայրենիքը հո իրեն՞ք չէին պահողը: Պահողն էլ, պահպա- վիճակում: Հայրենիքը հո իրեն՞ք չէին պահողը: Պահողն էլ, պահպա- միկին ու չէին տեսնում նրան, չէին զգում պահողին ու պահպան- ողին, անճանաչելի էր, ուրիշ, դիվիզանյան Անդրանիկը... Անդրանիկ- յան գայրույթը ահ ու սարսափ էր տարածում, մարդկանց անհանգր- տությունն էր խորացնում, վիշտն ու տատապանքն էր բազմապատ- կում: Այս բոլորը միատեղ մի խոր տարակուսանք էր: Ինչո՞ւմն էր բանը:

Երկրի մարդիկ, նրա հեղինակավորները, երկրի ու ժողովրդի դահիճների հետ հաշտության, բարեկամության, եղբայրությանն դաշինք էին կնքել: Ջենքով պահել չկարողացածից բացի էլ, մի ստո- բագրությանը հաշտ ու խաղաղ, իրար ձեռք սեղմելով նոր-նոր հո- դեր էին գիջում դահիճներին, որոնց հետ դեռ կոխվը շարունակվում էր, իսկ վերջին օրերին էլ Սարդարաբադի դաշտում, Երեւանի մա- տույցներից ոչ հեռու, մահու եւ կենաց կովում նրանց երթն էր կանգ- նեցվել եւ ջարդ էր տրվել: Եվ թշնամին ա՛յն, ինչ չէր կարողացել ձեռք բերել մարտի դաշտում, գրչի մի շարժումով ստանում էր հեռու հեռվում, որ Բաթումն էր, եւ չարագուշակ այն օրը, որը նույն հունիսի 4-ն էր:

Տարակուսանքն է խորացել, զարմանքն ու կասկածն են պատել մարդկանց. ո՞րն է Անդրանիկը՝ Բշարե Խալիլի գլուխը կտրող, Առաքելոց վանքում պատասխարված, հարձակվողին Աղթամար կող- զուց ետ մղող հայրո՞ւկը, թե՛ նահանջի այս ճամփաները բռնած զո- րավա՞րը: Այս հարցը ծագել էր էրզրումյան օրերին, խորացել Գյուլի- Բուլաղ արտաքսվելու պահին, շարունակվել, երբ ճամապարձը նրան տանում է Ջալալօղլի, դուրս բերում Դիլիջան ու դեռ շարունակվելու էր նույն ձեռով: Այս տարակուսանքներին պատասխան տվեց Հով- հաննես Թումանյանը Ղարաքիլիսայի կապակցությամբ: Պատասխան էին տալիս նաեւ վերը բերված փաստաթղթերը: Պատասխան տրվել է նաեւ դեպքերի ընթացքում լույս տեսած լրագրերում: Բայց դարձ- յալ, եթե մեկն ու մյուսը բարին էր ասում, հին փաստերով էր խոսում ու երեկվա Անդրանիկին նկարագրում, էլրորդը տվյալ օրն էր մատ- նանշում.

— Ապա ինչո՞ւ չի մնում Դիլիջանում, ուր է ե՛տ քաշում իր զոր- քը, սրանից էլ մնալու եւ կովելու իսկական տեղ, ո՞ւմ է թողնում այս խեղճ ու անտեր գաղթականությանը...

Օրվա այս անմիջական տրամադրության, տարածված կարծիքնե- րի հետ մեզ հաղորդակցում է դեպքերի անմիջական տպավորության տակ գրված «Հայաստան» հոդվածաշարը «Հորիզոն» թերթում: «Հո- րիզոնը», ճիշտ է, Անդրանիկի մտերիմը չէ, բայց ժամանակի ու մարդկանց անմիջական պատկերն է, հարուստ ու արժեքավոր օրա- գիր: Հոդվածի հեղինակն էլ անաչառ է, խորաթափանց: Պատկերա- վոր է գրել, չի մանրացել, ընդհանրացրել է, օրվա եւ ժամանակի ամբողջության մեջ է քննել հարցերը: Վերը ասվածը նաեւ նրա պատ- մածի հիման վրա էր: Այդպիսին է տեսել նա տվյալ օրվա Անդրանի- կին:

Անդրանիկին անցնելուց առաջ հեղինակը Նազարբեկովի մասին է գրում, նա էլ է եղել Դիլիջանում: Տեսել է նրան եւ անվանել «Հայ- կական ամբողջ հերոսամարտի մեջ դժբախտ ու թեւաթափ ծերունի»: Ուրիշ ի՞նչ կերպ պետք է գրեր, երբ մայիսյան վերջին օրերին բանա- կի համատարած նահանջ էր: Բայց թեւաթափ ծերունին «թեւավոր- վում է մի վայրկյան, դառնում մեռնելու պատրաստ իր ժողովրդի կամքի մարմնացումը, ու մոռացած ռազմագիտություն, մոռացած իր խոհուն փորձառությամբ լի անցյալը. պատանեկական, հին, հայրու- կային խանդավառությամբ բռնկված՝ լի խղիական երազներով» որո- շում է մի վերջին փորձ անել եւ իր կողմից բազմիցս ծեծված թշնա- մու դեմ ժողովրդին հաղթական կովի տանել, բացակասելով՝

«— Հասել է ժամը, հայեր, մեռնել կամ հաղթել»:

Նազարբեկովը գիտի, որ ուժերի այդ հառաքերակցությամբ հաղ- թել չի լինի, որ առջեւում դարձյալ պարտությունն է: Եվ ծագում է հեղինակի հարցը՝ «Սխալվո՞ւմ էր արդյոք այդ երիցս դժբախտ ծերունին, այդ հմուտ, ռազմական փորձությունների բովով անցած հին մարտիկը, ոճի՞ր չէր գործում, երբ մահվան գիրկն էր մղում հա- զարավոր ամբոխին, որի առաջ ոչ մի դուռ բացվելու հույս չկար... Ո՞վ կարող է այդ պնդել, ո՞ւմ լեզուն կպտտի եւ խիղճը չի ըմ- բոստանա՝ նրան մեղադրանքի խոսք շարտելու»:

Զե՞ որ, եթե ուժերն ավելին լինեին, եթե օրհասական ժամին մի հրաշքով լրացուցիչ ուժեր տեղ հասնեին, հերոսաբար մարտնչողները ոչ թե հերոսաբար կզոհվեին, այլ կտոնեին իրենց փառահեղ հաղթա- Պակը: Եվ այնուամենայնիվ ժամանակակիցը, որ ինքն էլ մյուսների հետ ապրել է ուժերի անհավասարության տխուր փաստը, մեծարան- քի խոսքեր է գրում.

«...մահվան ճակատ առ ճակատ կանգնողները, մեռնել գիտցող- ները ապրելու իրավունք ունեն:

Այդ էջն ազգերի անմահության Պանթեոնը մտնելու թույլտվությունն է:— Մեր ցեղի ապրելու իրավունքի վկայականը»: Ահա՛ հայոց գոյատևման փիլիսոփայությունը Վարդան Մամիկոնյանից ի վեր:

Փրկելով ծերուկ Նազարբեկովին, հրապարակագիրը դառնում է Անդրանիկին: Տեսել է նա Անդրանիկին Դիլիջանից դուրս գալու օրերին. «դեռ երեկ էր, նա այստեղից անցավ խոով, նգովքը շրթերին ու կատաղությունը խոլական հոգում— հանդեպ իր տասնամյակներ գուրգուրած... երագները խորտակող «հաշտության»— նա հեռացավ... եւ իր գայրույթի... սմբակների տակ տորեց շատերին, մեծ անցքերի հանդեպ միանգամայն անմեղներին»: «...Անեծքի ու հաչհոյանքի խոսքեր նրա անվան հետ կապված աղետների համար»... Լսել է ականատեսը երեկ մարդկանց մեջ մխրճված, լսել է, իսկ հիմա փաստերից բխող համոզումներն է՝ «...անեծք ու հաչհոյանք» թափողը «մեծ մասսան, տատապող ժողովուրդը չէր, դրանք անհատներ էին թեև բազմաթիվ, իսկ ժողովուրդը լուռ էր: Նա իր հրաշքի ծարավ հոգով դեռ հավատում է իր հերոսին, նա իր հոգու խորքերում երագում է իր փառքով լուսապսակված քաջի մասին, նրա հարվածների ու պացումների մասին պատմում է աներեւակայելի առասպելներ, նրա թոխչքի առաջ ոչնչացնում է ժամանակ ու տարածություն»:

Եվ դարձյալ հայ փիլիսոփայական մտքի մի դրվագը.

«Որտե՛ղ է այդ ճակատագրից զարկված մարդը, ի՞նչ է մտածում եւ ո՞ր է տանում իր ժողովրդի ցավերով արյունոտված հոգին, մինչեւ երբ է շարունակելու իր խենթ, մտքի ու դատողության կանոնների բոլոր սահմանները ոտնահարող արշավը...»

Ով գիտե,— ո՞վ կարող է պատմել զարկված, ձագերն ու բունը կորցրած վագրի վագրի [մասին], մի՞թե կրծքից արյուն ծորելով, խելագարության ճիչեր արձակելով՝ ... գիտե թե ո՞ր է գնում՝:

Անդրանիկը՝ եւ ճիշտ, եւ սխալական, եւ մեծ բախտավոր, եւ մեծ դժբախտ: Դժբախտ ժողովրդի զավակը չի կարող երջանիկ լինել: Նրա մարտերի առաջին զծի վրա գտնվողը՝ առավել եւս: Նրա ուրախությունն էլ, տխրությունն էլ յուրովի են: Անդրանիկի սիրտը այրվում էր կրակի բոցերի վրա, նրա վիշտը առանց հավելագրման էլ լիովի բավական էր մի խոր տառապանք ապրելու համար: Ժամանակակիցը ինչ որ պետք էր, որքան որ հարկն էր ասում էր այդ. նրա երեսին կամ որպես բարձր ու հրապարակային դողանց հայոց քաղաքներում ու գյուղերում, դաշտերում ու բարձունքների կատարներին.

1 Գ. Բալայան, «Հայաստան», «Հորիզոն», Թ., №169, 25.08. 1918 թ.:

— Ինչո՞ւ Ղարաքիլիսա չեկավ...

Պատմությունը ուժերի հարաբերակցությունն է: Եվ ոչ թե մեկինը, այլ ամբողջինը: Պատճառը օրն է, հետեւանքը՝ վաղը: Ծշմարտությունը ճշմարիտ չէ, եթե համբերատար չէ: Նույնն է, թե՛ եթե անտեղյակ է ու հապճեպ: Դառնանք Անդրանիկի պատասխանին:

Հունիսի 5-ին Անդրանիկը Դիլիջանից ճանապարհ է ընկել Ելենովկա՝: Ելենովկան մեծ գյուղ էր Սեւանա լճի ափին: Դիվիզիան իր պահպանված կազմով բաշխվել է այդ եւ լճափնյա Օրդակլու, Ցամաքաբերդ ու մյուս գյուղերում: Հունիսի 6-ին Անդրանիկն իր գործին հրավիրել է հրապարակային ժողովի: Բացատրել է, որ Բաթումի պայմանագրով ոչ միայն հայոց հողերն են շոայրեւն հանձնրվում Թուրքիային, այլեւ հայկական պատվիրակությունը պարտավորվել է, որ նորաստեղծ հանրապետությունն իր բարեկամ ու բարերար Թուրքիայի նկատմամբ հուսալի եւ անվտանգ լինելու համար ցրելու է իր բանակային ուժերը եւ երկրում այսուհետեւ թողնելու է եւ պահելու միայն միլիցիական փոքրաթիվ մի զորական ուժ՝ ներքին պահպանության նպատակով: Անդրանիկն այդ պայմանագիրն ընդունել է ուղիղ իր դեմ: Նշվածից ավելի եղած զինական ուժը պետք է ցրվեր: Հազիվ թե իր զորամասը դրանում առաջինը չլիներ: Իսկ ի՞նչ էր մնալու, ծանր ու թեթեւ էր անում Անդրանիկը, ո՞վ էր իր զինվորի հետ ու նրա հետքով քայլող գաղթական հայերի զանգվածին անհապաղ տեղ կանգնելու, սնունդ տալու, նրա օրվա մասին հոգալու: Ո՞վ էր վերջին պահին ժողովրդին թիկունք լինելու առկա ու լինելիք նոր արհավիրքների դեմ, եւ վերջապես, այդ ինչ պայման է ու պայմանագիր, որը լիովին ու առընդմիջ թշնամուտուն էր հովանի կախում ժողովրդի գլխին ու ներքին գործերի վրա իշխելու արտոնություն է շնորհում նույն այդ թշնամուն:

Թանկ էր Հայաստանի Արեւմուտքը Անդրանիկի համար: Այնտեղ էին հանգչում նրա պապեճական տան շիրիմները: Արեւմուտքի հույսի վերջին մի թելը կտրվեց Էրզրումում: Ապրում էր դեռեւս Վանը: Չէր ուզեճա, որ Արեւելքն էլ հանգչեր: Բայց ահա հունիսի 4-ը կլանում էր Արեւելքի խոշոր զանգվածը, թողնելով քառիս բուն իմաստով մի հողակտոր: Այդպես էր գոնե նրա աչքում: Դա պետք է հեճարան ծառայեր, որ անկուշտը ամբողջը կուլ տար: Իր գործը, որն իր ձեռքով, իր կոչով, իր ձգողությամբ էր ձուլել, ծանր ժամին չէր

1 Արսեն Ժամկոչեան, նշվ., էջ 29, 30:

ուզենա ցրել, ընդհակառակը, նա հենց այդ օրվա համար էր ստեղծել եւ այդ օրվա համար էր պահում:

Հունիսի 4-ին նա մի հեռագիր էր ուղարկել, երեք հասցեով՝ Հայկական կորպուսի հրամանատար Նազարբեկովին, Ազգային խորհրդին եւ Պաշտպանության խորհրդին. «Նկատի ունենալով, որ Դուք ձեր սեփական ձեռքերով ձեզ գամել եք սեւաթույր գերության հայկոստանական շրջաններով, խայտառակ ձեռով ձեր խիղճն ու պատիվը վաճառելով դրանց դեմ ըմբոստանալու հանդգնած թշմամուն, հայտնում եմ, որ իմ զինվորը այլեւս չի կարող անգեմ մարտիկի դերում մնալ եւ լինել անձայն վկա, թե ինչպես է խարդախ հակառակորդը բզկտում իր բազմաշարքար հայրենիքի սուրբ մարմինը, ուստի իմ զորամասն այսօր երեկոյան կամ վաղը առավոտյան դուրս է գալու այստեղից: Սեմյոնովկայում գտնվող զորամասին կարգադրեք տեղաշարժել եւ գրավել այժմ իմ զորամասի զբաղեցրած դիրքը: 4-ը հունիսի 1918 թ.: Գեներալ Անդրանիկ»:

Փաստաթուղթը դեռ ստորագրված չէր, բայց ժողովուրդը խոսում էր այն մասին, որ հայության հետ բանակցությունների ընթացքում թուրքերը հատուկ խոսում են Անդրանիկին շարքից հանելու մասին: Վերեւում տեսանք, թե ինչպես հրետտի բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունն զգուշացնում էր հայոց ինքնապաշտպանական խմբերից եւ նրանց նախապես ցրելու, շարքից հանելու հարց էր դնում: Մայիսի 9-ին, երբ Անդրանիկը ռազմաճակատի անկյունային հատվածում իր պարտքն էր կատարում, թուրքերի հարձակման կենտրոնական երթուղու վրա մարտնչող զինվորից ճամակ է ստանում: Այստեղ էլ են հասել Անդրանիկի նկատմամբ թուրքերի ցուցաբերած հետաքրքրության մասին լուրերը. «...բոլոր խոսակցությունների ժամանակ մեր ֆրոնտում առանձնապես հետաքրքրվում են քեզանով եւ ուզում են իմանալ, թե ուր ես եւ ինչ ես շինում»: Չար լուրեր են, սիրտ ծակող. «Դա մեզ մի շարք վատ ենթադրությունների առիթ է տալիս: Մի՞նչեւ իսկ լուր կա, որ իբր նրանք (թուրքերը՝ Հ. Կ.) կարող են պահանջել, որ քեզ եւ Դրոյին հանձնեն իրենց»²: Մարդիկ ահ ու դողով ուզում են զավակին հեռու պահել խարդավանքներից: Սա անվիճելի ճշմարտություն է եւ համանման պատմության լուր մի էլը:

Երբ արդեն պայմանագիրն ստորագրված էր, Անդրանիկի եզրակացությունը մեկն է լինում. պայմանագիրը, որ ժողովրդի դեմ է, նաեւ

ուղղակիորեն իր դեմ է ու իր զորական ուժի: Թելադրող թուրքերը լավ գիտեին Անդրանիկին, գիտեին նրա տեղն ու նրա համառությունը: Անդրանիկը կամովին զորք ցրող չէր եւ ոչ էլ էրզրումյան անհաջողությունից հետո նորից զորքի գլուխ անցնելով, պարտության ամոթանքը կուլ տվողը: Տասնութ տարի առաջ նա Ադրյուր Սերոբի սպանության վրեժը լուծեց Խաչի վաշայից, ապա պատըսպարվեց եւ պաշարվեց սուրբ Առաքելոց վանքում եւ մարտնչեց ու անպարտ մնաց սուրբանի բանակային զորքերի դեմ: Այսուհետ կոիվը դարձյալ նույն դարավոր թշնամու դեմ էր, որն այս անգամ ստրկացուցիչ պայմանագիրը հարկադրողն էր:

Իր բառերով եւ խոսքի իր անմիջականությամբ, բայց, վերջին հաշվով, այդ նույնն էր ասել Անդրանիկն իր զորքի համահավաք ժողովում եւ մի նոր ճանապարհ է ցույց տվել զինվորներին. բոլորի սրտին մոտ, բայց ճանապարհից հեռու, Վանում եւ նահանգում վերջին բեկոր հայությունը կանգուն էր ու թուրքական զորքերի հարձակման վտանգի դեմ՝ աչքը դեպի վերահաս օգնական ուժերը: Անդրանիկը Մեանի ծիսուն ջրերի ափից բույր Վանա ծովն էր մատնացույց անում եւ իր զինվորներին հրավիրում էր՝ կարճ ճանապարհ կտրել՝ գնալ, օգնության հասնել անհողորդ վանեցիներին: Ծանապարհը պիտի Ջուլֆայի սահմանային կամրջով տաներ դեպի պարսկական Խոյ քաղաքը, ապա հանդիպում ու միավորում էր լինելու Հյուսիսային Պարսկաստանում գտնվող անգլիական զորքերի հետ, որոնց միացած պետք էր աճապարել Վան:

11 ԶԱՆԳԵԶՈՒՐ ԵՎ ԱՐՑԱԻ

Ա Երրորդ անցը Ջուլֆայի կամրջով

Կարո՞ղ էր նա երբեք ենթադրել, թե մի օր էլ պիտի հաստատվեր Հայկական լեռնաշխարհի հարավարեւելյան սահմանագլխին գտնվող պատմական Սյունիք աշխարհի մաս կազմող Զանգեզուրի շրջաններում, Արցախ նահանգի հարեւանությամբ, որն էլ անցյալում թուրքերով բնակեցվելուց հետո նրանց կողմից Ղարաբաղ անունով էր հորջորջվում: Չէր կարող, եւ դա նույնիսկ այն պահին, երբ ինքը, թեւեւ դեպքերի թելադրությամբ, բայց իր կամքով էր իր զինվորներին ու նրանց հովանու ներքո գաղթականների հոծ բազմությանը դրել հենց այն ճանապարհի վրա, որն այլ կերպ չէր կարող անցնել, բայց

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 159, նաեւ՝ Գ. տ., գ. 157, թ. 2:
² Ն. տ., ֆ. 370, ց. 1, գ. 5, թ. 5:

էթէ բուն Սյունիքին մերձ հարեանությանը: Որովհետեւ նրա երազը դարձյալ Արեւմուտքն էր, իր մայր Երկիրը: Նորից հույսի մի շող էր տեսնում եւ դարձյալ կովի էր նետւում: Վանում հանգչում էր ծովը: Սասունում մարում էին վերջին կրակները: Հայության հոգեվարք էր հաղէշում ու Մուշում: Ծանր էր Սպմաստի բնիկ հայ բնակչության եւ այնտեղ կուտակված գաղթականների վիճակը: Որդին ուզում էր հարազատների վերջին շնչի վրա հասցնել փրկության սպեղանին:

Անկասկած ճանապարհը մեկն էր. դուրս գալ Սեւանից, իջնել Պարսկաստանի հյուսիսային մասը եւ այդտեղից գնալ ուղիղ Վան: Հյուսիսային Պարսկաստանում պետք է անգլիական զորք լինէր: Ծտապում էր, հնարավորության դեպքում, միանալ եւ նրա օժանդակությամբ պահապան կանգնել հայոց հողերին ու բնակչությանը, մինչեւ որ հարցերը դիվանագիտական ճանապարհներով կլուծվէին: Լուրերը կանչող էին. Վանում հայության մնացյալ հատվածը թուրքերի հետ դիմադրական կռիւմ դարձյալ պաշարվել, ծուղակն է ընկել: Անգլիան աշխարհամարտի բոլոր ճակատներում, որպէս եռյակ դաշինքի (Անտանտի) տերություններից մեկը, մարտնչում էր գերմանաթուրքական ուժերի դէմ: Անդրանիկն իրավասու էր Անգլիայի հանդէպ հույսեր տածելու, որը նա կարող էր անել նաեւ նրա դաշնակիցներ Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի նկատմամբ: Ինչպէս որ իր մղած բոլոր կռիվներն էին եղել, նա շարունակում էր իր բարոյական ակնկալությունները պատերազմից: Պատերազմ եւ բարոյականություն: Ծուռով, շատ շուռով, նրա այդ տարակուսանքն էլ էր ճայթելու: Եվ դա լինելու էր ոչ թէ ուրիշ մի տեղ, այլ իր այս երթուղուց ոչ շատ հեռու, Զանգեզուրում եւ հատկապէս նրա Արցախ-դարաբաղյան սահմանագլխում, ուր նա հարկադրված էր հանդես գալու: Ծանապարհը նրան Վան չէր հասցնելու:

Սեւանից դուրս գալու նախորդ օրը զորքը շարվել է քառակուսի գծով: «Բա՛րեւ քաջաց», ասել է հապճեպ եկած զորավարը: «Բա՛րեւ քաջին», միաբերան պատասխանել են զինվորները: Զորավարը հրապարակել է Թուրքիայի հետ հայոց նոր կառավարության անունից հաթումում կնքված պայմանագիրը. «Ես այս դաշնագիրը չեմ ճանչընար, սա դաշնագիր չէ, այլ խայտառակություն», — բացականչել է նա եւ հայտարարել, որ ինքը համաձայնության (Անտանտի) երկրների հետ շարունակելու է իր պայքարը նվաճող Թուրքիայի դէմ եւ նրանց հետ միասին է իր սուրբ պատյան դնելու: «Ես վաղվանից անցնելու եմ Պարսկաստան եւ գնալ, միանալու եմ անգլիացիներին, ով ուզում է թող հետեւի ինձի, իսկ ով չի ուզում, թող հեռանա», — բար-

կացած ու զայրացած վերջացրել է նա: Զինվորները չեն սարսափել: Հնչել է միաձայն «ուռա՛»-ն¹:

Պայմանագիրը սուկ հայոց հողերը չէր շոայտրեն զիջում, թողնելով միայն Լոռու մի մասը, Արագածոտնը, Դարպազյազը, Սեւանի ավազանն ու Երեւանը՝ Արարատյան հարթավայրի մերձավոր հատվածով, այլեւ արգելում էր Հայաստանում քիչ թէ շատ կանոնավոր զանգված կազմող բանակ ունենալը, սահմանափակելով մեկուկես հազար զինվորի չափով: Պե՛տք է պայմանագրում հակառե-հանկանե շեշտվեր նաեւ Անդրանիկին զորք ունենալուց զրկելու, նրա բանակը ցրելու պահանջը, որպէսզի նա հասկանար, որ այն առաջին հերթին հենց իր՝ Արեւմտյան Հայաստանի բռնազավթված հողերի ազատագրության ուխտյալ զինվորի դեմ է ուղղված: Պայմանագրին համաձայնություն տալը նշանակելու էր, որ նա տեղնուտեղը ցրում է իր զորքը, իսկ ձեւականորեն, խաբուսիկ կերպով ընդունելը չէր անցնի: Թուրքերը շատ ուշադիր էին ու հետեւողական: Այդ դեռ ստորեւ կերեւա: Ուրեմն, Անդրանիկը կամ պետք է հրապարակորեն չցրեր իր բանակը՝ ի նշան պայմանագրին իր հակառակության, կամ պետք է ընդունէր պայմանագիրը եւ խոնարհաբար անհապաղ ցրեր բանակը՝ ի նշան համաձայնության: Կամ, ով գիտե, գուցե դեռ լինէր երրորդ մի ձեւ: Նա գնաց առաջին, պարզ ճանապարհով: Կամակո՛ր էր, թող այդպէս լինի: Թող ամբողջ հայ ժողովրդի մեջ մեկն էլ կամակոր լինէր: Եվ լավ է, որ դա հենց Անդրանիկը լինէր: Որովհետեւ նրա կամակորությունը ամենավատթար դեպքում միայն իր անձին էր վնաս բերելու, բայց ոչ երբեք իր ժողովրդին: Նա հարվածն իր վրա էր վերցնում: Նորապսակ կառավարությանը ազատում էր հարվածից, բացահայտորեն խտրոր ճանապարհով հեռանալով, Երեւան չմտնելով: Պատճառաբանում էր. փաստաթուղթը կառավարության մարդիկ են ստորագրել, ես նրանց հետ համաձայն չեմ, նրանց կամքին չեմ ենթարկվում, բողոք եմ հայտնում նրանց: Իմ անհնազանդության համար ի՛նձ պետք է մեղադրել ու ի՛նձ պարծել, բայց ոչ կառավարությանը: Նա Երեւան չէր մտնում որպէս մայրաքաղաքի, Երեւան չմտնելով, նա հայրենիքից չէ, որ հեռանում էր: Նա հրապարակորեն խզում էր կապերը փաստաթուղթն ստորագրողների, իր պատկերացմամբ՝ հայ դատը ուրացողների, այն մոռացողների խմբից: Գուցե նա հարցը չէր վերցնում իր պատմաքաղաքական ար-

1 «Իմ հուշերը. Գրեց Իշխմեջյան Միքայել», տե՛ս ՊԿՊԱ, ք. 402, ց. 1, գ. 2, ք. 51:

ծեքի ամբողջ էությանը, հնարավոր է, բայց մեկ է, նրա համար հայ դատն էր առաջնայինը, Արեւմտքի հայոց հողերին ազատություն տալը, նրանց հայոց Արեւելքի հետ ի մի բերելն ու մի հարկի տակ հավաքելը: Երեւան չմտնելը Հայաստանից դուրս գալ չէր, ինչպես որ հայրենիքից հեռանալ չէր Վանի բնակչությանը օգնելու համար առանց Երեւան մտնելու Վան գնալը:

Ժողովուրդների պատմության մեջ քիչ են եղել եւ միթե հիմա է բոլորովին չկա՞ն, չե՞ն կրկնվում կառավարությանը չճանաչելու հանգամանքներ եւ նրան բացարկ հայտարարելու փաստեր: Վճիռ կայացնելուց առաջ մեղադրյալին խոսք է տրվում: Իսկ նա իր ձեռքի տակ եղած փաստարկներն է վկայակոչում: Անդրանիկը կարող էր հրապարակել հունիսի 4-ից առաջ դաշնակցական ռազմական գործիչներից Ս. Մանասյանի՝ իրեն գրած նամակը: Թուրքիայի կողմից Բաթումում պատվիրակության առաջին դեմքն է եղել տեղ-տեղ փաշա հորջորջված Խալիլ բեյը, անդամներից՝ Վեհիբ Մահմեդ փաշան: Նրանց հետ բանակցությանը մասնակցելու համար Բաթում են ժամանել նաև Գերմանիայի կողմից Կ. պոլսում գերմանական դեսպանն ու գերմանական հյուպատոսը: Կարծես թե Թուրքիան քիչ էր միայնակ բանակցությունների սեղանին նստելու համար: Պետք էր հայ պատվիրակների սիրտը ահ գցել: Ս. Մանասյանը պարտք էր համարում Անդրանիկին տեղյակ պահել, որ լուրեր են գնում, թե գերմանական զորքերը գրավել են Դոնի Ռոստովը, իսկ Բաթումում էլ դեսանտ են իջեցրել: Խաբուսիկ, թյուրիմացության հրող ձեւերն էլ են կիրառվել. Գերմանական պառլամենտը Բրեստի պայմանագրի հիման վրա որոշել է «ապահովել կովկասյան հայության ամբողջությունը, իսկ տաճիկներին էլ տալ ինքնավարության նման մի բան Վանի շրջանում»: Դիվանագիտության բանահյուսական խաղեր: Խաբուսիկ այդ հորինվածքները հազիվ թե հույս ներշնչեին Անդրանիկին, եթե ինքը քաջալերիչ քայլի չդիմեր: Դա պետք է որ նրան հուշեին նամակի հաջորդ բառերն այն մասին, որ թուրքերը շատ ուշադիր են ու հոգատար իր նկատմամբ.

Դարձյալ վերը նշված պատմությունն է: Թուրքերը առիթը բաց չեն թողնում, որ իմանան որտեղ է և ինչ է անում Անդրանիկը: Տարածվում էր այն կարծիքը, որ նրանք կարող են նույնիսկ հայերից պահանջել, որ Անդրանիկին իրենց դատին հանձնեն: Միշտ է, Ս. Մանասյանը հաջորդ բառերով նորից պնդում է, թե «սրանք բոլորը ենթարկություններ են», եւ, այնուամենայնիվ, խորհուրդ է տալիս՝ «բայց

եւ այնպես անհրաժեշտ է որ չափազանց զգույշ լինիք եւ ոչ մի առիթ չտաք»¹:

Սա դեռ պայմանագիրն ստորագրելուց առաջ: Իսկ ստորագրելուց հետո այդ անուսարսափն ավելի ուժգին էր ուղղված Անդրանիկի անձի դեմ, թեև՝ հաճախ ինչպես առանց անունը տալու, այնպես էլ ոչ անուղղակի, պաշտոնական պահանջի ձեւով: Խորհուրդը չափազանց զգույշ լինելն էր: Թուրք-գերմանական բռունցքը սպառնում էր Անդրանիկին, Հանրապետության կառավարությունն էլ ճարահատյալ, բայց որոշակի պահանջ էր դնում, որ նա ցրի իր զորքը, հեռու մնա Հանրապետության գործերից եւ ավելորդ անախորժությունների տեղիք չտա: Անդրանիկը լուրերից չսարսափեց, բայց զգուշություն ցուցաբերեց, պահեց իր զորքը որպես հանրապետության կառավարությանը ոչ ենթակա միավորում, նրան իր պատճառով ավելորդ անհանգստություն չպատճառելու միտումով: Իսկ սրա համար առնվազն մի որոշ չափի քաջություն պետք էր, հերոսություն եւ սխրանք, քան թե վերցնել ու բանակը ցրելը, սուրն ու ատրճանակը դեն նետելը, ձեռքերը թափ տալով գալն ու թուրք փաշաների, գերմանացի սպաների ու իր կառավարության առջեւ խոնարհաբար, վիզը ծռած կանգնելը:

Անդրանիկով թուրքերը 90-ական թվականներից էին «հետաքրքրվում»: Դա ուրիշ հարց է: Սկսած այն պահից, երբ հայերն ու թուրքերը, որպես դիվանագետներ, նստել են կլոր սեղանի շուրջը, ծագել է Անդրանիկի հարցը: 1918-ի մարտին հայկական պատվիրակությունը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կապակցությամբ բանակցությունների էր Տրապիզոնում: Հայկական պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանին ընդառաջ են եկել թուրք դիվանագետները, որի մասին Ալ. Խատիսյանը վերադարձից հետո Անդրանիկին պատմել է.

«Երբ ընդմիջումներ եւ հանգստի պահեր կը տրվեին, այդ փաշաների ցավը քեզի հետ էր: Վեհիպ, Նուրի եւ Խալիլ փաշաները կըսեին. «Գիտենք, որ դուք կը հաշտվիք մեզի հետ, Զօր. Անդրանիկն ալ պիտի հաշտվի մեզի հետ»²:

Ներկա գտնվող վրաց ներկայացուցիչը պարտք է ստանձնել Անդրանիկին համոզելու, «որ Եվրոպա երթա»: Վեհիբ փաշան ճշմարիտ է եղել. «Աշխարհի որ մեկ անկյունն ալ որ դրկեք զայն, ան մեզի հետ չի հաշտվիր»³: Ինչո՞ւ էր Վեհիբը ճշմարիտ, որովհետեւ նա 1914—1916-ի կոիվներից գիտեր, որ Անդրանիկը անկոտրում է:

1 «...Օրագրութիւնը», էջ 103—105. 2 Ն. տ., էջ 148—147:

Անկուտրում է, թող այդպես լինի, բայց անպարտաճանաչ չէ: Նաեւ ինքնագլուխ չէ: Սեւանից իր գործով, նրան հետեւորդ գաղթականների բազմությանը դեպի հայ-պարսկական սահմանն ընթանալիս, 1918-ի հունիսի 7-ին, Անդրանիկը ներկայացուցիչներ է ուղարկել Էջմիածին կաթողիկոսին, Երեւան Ապահովության խորհրդի տեղական մարմնին հայտնելու համար իր վճիռը, որը Հայաստանի տարածքային ամբողջականությունը վերահաստատելու ուխտին հաստատ մնալն էր: Ուստի նա միաժամանակ տեղեկացնում էր, որ իր բանակում ծառայության է հրավիրում արեւմտահայ զինված մարդկանց, հաճն առնելով նրանց նյութական ծախսերը¹: Այս հարցին, մեկ է, նորից ենք անդրադառնալու: Ուստի՝ անխապատրաստությունն ավարտված էր, հետեւենք զորքի երթին: Երթն անկողի էր, բայց գուցե թե շատ կոնիվներից ոչ դյուրին:

Կարող էր Երեւանից գնացքով գնալ մինչեւ թուրք-պարսկական սահմանագիծը, այնտեղից բռնել Դիլմանից իրեն ծանոթ ճանապարհը: Բայց երկաթուղիները կամ թուրքերի կողմից գրավված էին ու հայերի առջեւ փակ, կամ խափանված ու ավեր: Հնարավոր ամենակարճ ճանապարհը ամենաերկարը դուրս եկավ: Սեւնոնովկայի լեռնանցքով՝ Սեւան, Սեւանից Սեյիմի լեռնանցքով, Դարալագյազի քարքարոտ խճուղիով՝ դեպի ստորոտները, ապա նորից լեռներով ու վայրէջքներով դեպի Ջուլֆա եւ Խոյ, Սալմաստ ու Ուրմիա, որտեղից արդեն՝ Վան: Պարսկաստանի հյուսիսային այդ շրջաններում՝ Ուրմիա-Սալմաստում, Վանից ոռոսական զորքի նահանջի պահին հապճեպ դուրս եկած, մի կերպ փրկված ավելի քան 25 հազար հայություն էր կուտակված, որի մեջ շատերը, շուրջ 5 հազար հոգի, գեներով էին եւ կովի ընդունակ ու տրամադիր: Տեղում նրանց կարող էին զորավիզ լինել, եւ արդեն միաբանություն էին կազմել, այդ վայրերի ստորական զինված ուժերը, մի քանի տասնյակ հազար մարդ, որոնք պաշտպանական, դիմադրական մարտեր էին մղում Պարսկաստան ներխուժած թուրքական զորքի դեմ: Անդրանիկը լսում էր այդ ամենի մասին, ձգտում էր հասնել, միավորվել, ուժ տալ իր հայրենակիցների կովին: Եվ սկսում էր ռազմերթը Ելենովկայից նախ դեպի Նոր Բայազետ, որտեղից հունիսի 10-ին դուրս գալով սպասվում էր Ղարանդուղից դեպի Վայոց Ձորի Բարաթամբ, Բարագլուխ, Քեշիշքենդ, Մալիշկա, Մարտիրոս, Սուլթանբեկ գյուղերը, ապա Նախիջեւանի շոգ դաշտը եւ հունիսի 19-ին մտնում են Նախիջեւան

քաղաքը, հաջորդ օրը Ջուլֆա: Հունիսի 21-ին անցնում են Ջուլֆայի կամուրջը եւ ամսի 22-ին դուրս են գալիս այս պատմության նախորդ էջերում հիշատակված Սեյրեվար հայկական գյուղը:

Ծիշտ է, սա Ալպերի սովորովյալ անցումը չէ: Այն ձմռանն էր, ձյան խորխորատների ու հեղձուցիչ ցրտաշունչ բուքի միջով: Սա ամռան շեմին էր, քիչ անձրեւներից ու երեկոյան սառնությունից դեպի չորային ու տոթակեզ եղանակները: Սեւանյան հարթավայրի երկու հազար մետրից շարունակվող վերելք, մինչեւ վերովարումներով վայրէջքը՝ դեպի խոր հարթավայրը, ուր ջրի սակավությանն ու տոթին ավելանում էին մոծակները: Ամեն քայլափոխի կարող էին սայթաքել, ձորը գլորվել լեռնածերպերով անցնող տեղանքին անծանոթ հեծյալները: Եվ, այնուամենայնիվ, զինվորները պատմում են, որ ամբողջ ճանապարհին ոչ մի վթար չի եղել: Մեկ է, եթե ծանոթ չէին Սեյիմի լեռնանցքին, ապա ուրիշ էլ ի՞նչ դյուրին ճամփաներ գիտեին, իրենց կյանքը անդրանիկյան զինվորի դժվարին ճակատագրին նվիրած հայորդիները. հայոց լեռները քարձր էին, քարքարոտ, գետերը՝ հորդ ու վարար, անմշակ դաշտերը՝ տատասկ ու փուշ, թեւեւ ամեն տեղ էլ անպակաս էին սիզավետ խոտն ու երփներանգ ծաղիկների բուրմունքը, գետեր ձուլող անվակների սուսիկ մեղեդին: Ծիշտ է, սա Ալպերի սովորական անցումը չէ: Ո՛վ է այս պատմությունը շուայրեւն գրել, ո՛վ է անցման դեկավարներին ու զինվորներին պետականորեն մի պարզեւի արժանացրել, ո՛վ է դրանով հետաքրքրվել եւ ո՛ւմ է պատշաճորեն այդ մասին տեղյակ պահվել, որ որոշված լինի, թե՛ եթե այսպան ու սովորովյալ չէր այս անցումը, ապա ո՞րն էր սելիմյան ու անդրանիկյան այս անցման բնորոշն ու հերոսականը:

Գնում էր Անդրանիկը զինվորների հետ միախառն, մեկ ետ, մեկ առաջ, բայց գնում էր միշտ նրանց հետ կողք կողքի, հացը, նույն հացը, այլ ոչ ճոխն ու տարբերը, նրանց հետ էր կիսում, գուցե թե նրանց պես հոգնելով, բայց պարտքի վերին գիտակցմամբ ոչ մի անգամ հոգնություն ցույց չտալով, ինքն իրեն հանգստի իրավունք չվերապահելով եւ զսպելով: Հիսուներեքամյա Անդրանիկն իր քսանհինգ, երեսուն, երեսունհինգ եւ քսոսատուն ու քսոսատունհինգամյա շատ զինվորների պես, ճիշտ է, կին ունենալու քաղցրությունը էր որդի ունենալու հայրական երջանկությունը այնպես տեսականորեն զգալու բախտը չունեցավ, բայց չէ՞ որ ապրելով այդ ամենը տեսականորեն չզգալու դժբախտությունը, հասկանում էր, թե ինչ երջանկությունից են իրենց գրկել իր զինվորները: Թիվը ստույգ չէ, բայց եւ ոչ շատ ավելի է, ոչ էլ շատ պակաս, երկու հազար հինգ հարյուր

¹ «...հարուածող կորամարը», էջ 33:

զինվոր ու սպա է եղել այդ պահին նրա բանակում¹: Մի անգամ ժողովուրդ պահելու համար փոքրաթիվ, իսկ մեծաքանակ թշնամի ահաբեկելու եւ սաստելու համար՝ ազդեցիկ ուժ: Անդրանիկյան բանակը հայրուկային խմբերից մինչեւ կամավորական առաջին գունդը, էրզրումյան երկրապահ դիվիզիան եւ այս հարվածող առանձին դիվիզիան իրեն տեսակով եզակի էր բանակների պատմության մեջ: Բոլոր նշվածները, նախ, ոչ թե հարձակողական, այլ պաշտպանական էին: Իրեն մարտական, մարտունակ, գեների տակ գտնվող մասից բացի, ունեին, որպես կցորդ, պաշտպանվելու առանձին կարիք ունեցող մարդկանց մի հսկայական զանգված, որի թիվը սկզբում հասնելով հինգ հազարի, այս երթի վերջին փուլում անցել է քսան հազարից: Այդ հինգ հազարն ու քսան հազարը գնում էին գործառույթի հետ եւ նրանց հետքով, որոնք պաշտպանում էին թշնամու հարվածներից, սնունդ ու հագուստ էին հայթայթում, հարկ եղած դեպքում իրենց օթեւան տալիս, բնակեցնում ու աշխատանքով ապահովում: Սա տարօրինակություն չէ, այլ յուրօրինակություն, թելադրված թշնամու առանձնահատուկ արյունոտ թնույթով, նրանով, որ այդ թշնամին հետամուտ էր ոչ թե սոսկ ինչ-որ տնտեսական, քաղաքական կամ տարածքային նվաճումների, այլ նախ եւ առաջ ազգաշինչ նպատակների, նա արյան ծարավ էր, ուզում էր հոշոտել եւ բնաջնջել մի ամբողջ ազգային կենսաբանական հարստություն (մնացյալ ամբողջը, հասկանալի է, այնպես յուրացնելու համար, որ դրա հետքն անգամ չմնար):

Անդրանիկյան երթի այս ծրագիրը գաղտնիք չէր: Եվ երթուղու գյուղերի, եւ Հայաստանի մյուս վայրերի բնակչությանը հայտնի էր: Տարբեր վայրերից երիտասարդներ այդ օրերին գորավիզ էին լինում Անդրանիկի բանակին: Մյուս կողմից էլ ավելանում էր հետեւող գաղթականների թիվը, հետավոր այս կողմերում էլ իրենց ծանոթ կամ բարեկամների մոտ ապաստանած արեւմտահայեր կային, որոնք փափագում էին պապեճական տները վերադառնալ: Միանալով գորքին, նրանք իրենց հետ բերում էին զանազան պիտույքներ, ոմանք էլ գալիս էին իրենց անասուններով, սայլերով, որ թե հեշտացնում էր, թե դժվարացնում բանակի գործը:

Նոր հայազետով անցնելիս Անդրանիկին, նրա կանգառում, այցի է եկել դեսպերի առիթով այնտեղ գտնված վերը հիշատակված Արսեն

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 5, թ. 12: Որոշ տվյալներով Սեւանից ճանապարհ ընկնելուց առաջ եղել է 1400, իսկ արդեն ճանապարհին հասել ու անցել է 2300-ից:

Կիտուրը, հայտնի հնչակյան գործիչը: Այդ մասին նույնպես նա հուշեր է թողել, որոնք դարձյալ ոչ այնքան փաստագրական են, որքան օրվա պատմությունների տպավորություն, եւ հենց այդքանով էլ ճշմարտացի: «Մինչեւ թուրքերը հաքվով զբաղված էին,— գրում է նա,— Անդրանիկ իր շուրջը հավաքելով եղած վիճակեն դժգոհ տարրերը, եկավ հայազետ»: Այսքանը կարող էր իմանալ Ա. Կիտուրը, այդքանն էլ գրել է, իսկ թե ինչ ասել է վիճակից դժգոհ լինել եւ ինչու հենց դրա համար նա պետք է հանկարծ հայտնվեր Նոր հայազետում, իրոք, դրանց պատճառները շարադրելը կարող է հուշեր պատմողի պարտականության մեջ չմտնել: Նա պատմում է այն, ինչ պատմել են ժամանակին, ինչ լսել է: Այդքանն էլ քիչ չէ, հենց թեկուզ այն պատճառով, որ ժողովրդի մեջ ոչ թե փաստաթղթերն են ընթերցվել, ոչ թե քաղաքագետների վերլուծություններն են նրան հասել, այլ բնական այս տպավորությունը: Ա. Կիտուրը գնացել է Անդրանիկի մոտ, որն էլ նրան ասել է, թե ուզում եմ «հավաքել բոլոր հավատարիմներին, ճեղքել Նախիջեւան, Խոյ, միանալ չոր գլուխ վանեցիներուն (սա, անշուշտ, Ա. Կիտուրի բառերն են՝ Հ. Կ.), կապ հաստատել Պարսկաստան եկող անգլիական բանակի հետ, եւ հարվածել տաճկական բանակը, այդ կողմեն, որպեսզի հեռացնեն զայն Հայաստանի սրտեն— Երեւանեն»:

Արսեն Կիտուրը հիացած է՝

«— Հիանալի ծրագիր, փաշա, ես ալ կմիանամ Ձեզի».— ասել է ու ավելացրել, թե ինքն էլ 200 զինվոր ունի, որոնց պատրաստ է տրամադրել գորավարին:

Անդրանիկը մերժել է Ա. Կիտուրի առաջարկը, բայց համաձայնել է, որ նա որպես անգլերեն իմացող, ուղեկցի իրեն ճանապարհին, որը հենց համընկել է Ա. Կիտուրի օրվա մտադրությանը:

Ա. Կիտուրը Նոր հայազետ էր եկել տեղի ամերիկյան կոմիտեի գրասենյակում աշխատող իր բարեկամին տեսակցելու: Նույն այդ ժամանակ նշված կոմիտեի գործերով Նոր հայազետ է եկած եղել ամերիկացի միստեր Ռոբերտ Մակդաուլը, որի հայրը գտնվում էր հաղդադում, եւ ինքն ուզում էր Նոր հայազետից դուրս գալ մի տեղ, որտեղից այնպես հեշտ լիներ գնալ հորը տեսության: Ա. Կիտուրը պատրաստվում էր այդ ճանապարհորդության ժամանակ ուղեկցել ամերիկացուն եւ ուրախ կլիներ, որ Անդրանիկը թույլ տար իրեն եւ միստերին իր բանակի հետ գնալ մինչեւ Պարսկաստանի սահմանը մտնելը: Անդրանիկը չի առարկում, մինչեւ իսկ ուրախություն է

հայտնում, որ մի եվրոպացի էլ ակամատես կլինի իր երթին, ասում է Ա. Կիտուրը¹:

Հաջորդ օրը հրաժեշտ են տալիս Նոր Բայազետին: Անդրանիկը գնացել է գորքի առջեւից, այսպես է հիշում Ա. Կիտուրը, մոտ 3000—3500 գորք, «բայց 25000 գաղթականություն հետու է հեռու կը հետներ փաշային»²: Եվ հիշում է, թե ինչպես «գաղթականական այդ քոչը» այնուամենայնիվ դժվարություն էր հարուցում գորքի շարժմանը: Զե՞ որ գաղթականների մի մասն էլ հենց զինվորների հարազատներն են եղել ու բարեկամները, որոնց երթի դժվարություններին նրանք չէին կարող անտարբեր մնալ: Ա. Կիտուրը հիշում է.

«Փաշան շատ հակառակ էր գաղթականական այս «քոչին», բայց չէր կրնար կտրել գայն:

— Ատո՞ւք մեծ արգելք են մեզի,— կրսեր,— զինվորներու սիրտը միշտ էտեւ կըմնա, երբեմն դիրքերը ձգած, իրենց կնոջ եւ երեխաներուն մոտ կերթան զբոսնելու:

Սա էլ բնական է, բայց Ա. Կիտուրը շարունակում է իր խոսքը. «Բանակը դեռ շարժած չէր, երբ կանանց պատգամավորություն մը եկավ փաշային:

— Ի՞նչ կուզեն,— հարցուց ինձի: Կանանց խումբին մոտեցա եւ հարցուցի իրենց նպատակը: — Եկած ենք մենք ալ միանալու Անդրանիկ փաշայի բանակին, իբր հիվանդանոցի քույրերը:

Երբ փաշան լսեց այս խոսքերը, հո՞նքերը կիտեց եւ խստորեն՝ — Մենք կանանց պետք չունինք, դուք գացեք եւ ձեր տուններուն հանգիստ նստեցեք»:

Մտերմական զրույցի ժամանակ, ասում է Ա. Կիտուրը, փաշան բացատրել է, թե ինչու «ինքը հակառակ է մանավանդ ոռուսահայ կանանց բանակի մասնակցության: Այդ «հիվանդապահները» կատարյալ փորձանք կդառնան կովոդ բանակին, ի վերջո, զինվորները փոխանակ դիրքերը պահելու, կերթան անոնց գրկները պահվտելու...»³:

Զահեղների աչքը ճանապարհին էր: Եթե կոիվների մեկ-մեկ ընդհատումներն էլ չլինեին, էլ երբ էին նրանք իրենց սիրտը մեկի առաջ բացելու եւ ցեղի բնական պահպանության հոգսերով զբաղվելու: Այսօր գայրանում էր Անդրանիկը, ուրիշ էլք չունեք, բայց հենց վաղը ինքն էր խորհուրդ տալու նույն այդ զինվորներին, այլեսս վաղվան չթողնել ընտանիք կազմելու գործը:

1 «Զօր. Անդրանիկ ընկ. Արսեն Կիտուրի հուշերուն մեջ», Գ մաս, Պեյրուս, 1959 թ., էջ 392: 2 Ն. տ., 3 Ն. տ., էջ 395:

Ահա 1918-ի հունիսի 23-ի մի նամակ. «Մենք մի 350 ձիավորներով եւ 800 հետեւակ զինվորով եկանք մինչեւ Նախիջեւան Անդրանիկին միանալու»: Ցավ է հայտնվում, որ եկել են այն ժամանակ, երբ Անդրանիկն արդեն անցել է Զուլֆայի կամուրջը: Այնուհետեւ հեռագրել են տարբեր հասցեներով, ջանացել, որ անպայման միանան Անդրանիկի զորքին: Դա այլեսս կարող էր լինել Զանգեզուրում, որովհետեւ այդ զորքը բռնել է «Միսիանի եւ Զանգեզուրի ճամփան», եւ նամակն էլ գրվել է այնտեղի Կարճատ գյուղից¹:

Մինչեւ Նախիջեւան, Նոր Բայազետից ի վեր՝ ճանապարհին մեկընդմեջ կամ իրար ետեւից շարքով աղբբեջանական գյուղեր էին: Մի մասի բնակչությունը քոչել, գնացել էր: Մյուսները, որ իրենց լրիվ կազմով մնացել էին, հաշտ ու խաղաղ ընդունեցին եւ ճանապարհեցին հայոց բանակին: Անդրանիկը զձեռով երթողին, մի շարք դեպքերում ճանապարհը աղբբեջանական, ինչպես եւ հայկական գյուղերի ոչ թե միջով, այլ կողքով է տարել: Նման դեպքերում գյուղացիք, մեկ է, հայ թե աղբբեջանցի, գյուղերի ծայրին ընդատաջ էին գալիս եւ բանակին նշում անցման կարճ կամ հարմարավետ ճանապարհը: Տեղ-տեղ էլ, այդ էլ է եղել, ըմբոստ, ամբարիշտ տրամադրություններ են եղել: Ուստի պատահում էր, որ, դեռ հեռվից, ընդատաջ եկող մարդիկ գոռուցանում էին: Անդրանիկյան օրագրությունը վկայում է. «Որեւէ ընդհարումէ խուսափելու համար լուր դրկվեցավ գյուղին, որպեսզի որեւէ թշնամական վերաբերմունք ցույց չտա, քանի որ գորամասը պիտի առաջ գնա»²:

Օրինակելի է գտնվել Դարպազյազից Նախիջեւան վայրէջքի ճանապարհին երկու դեմ դիմաց բարձունքների միջեւ գտնվող Բողազ Բյասան գյուղը: Նրա բնակիչները հայտնի էին իրենց հանդուգն քաջությամբ: Գյուղին մոտենալիս Արսեն Կիտուրը Անդրանիկին տեսնում է հանգիստ եւ վստահ տրամադրության մեջ: Եվ նա էլ պատմում է, թե գյուղ մտնելուն պես Անդրանիկը զինվորներին պատվիրել է երգել իր սիրելի երգը, որը «Հերոսը մոնչաց, սուլթանը դողողաց» բառերն ունեք: Կիտուրի աչքից չեն վրիպում քարածայների արանքներում կանգնած տղամարդկանց դեպի անցորդներն ուղղած հրացանների փողերը: Գյուղամիջով անցնելիս ծերուկ աղբբեջանցին, կուժը վզից կախ, ջուր է առաջարկում Անդրանիկին: Կիտուրը առաջ է մղվում բաժակը վերցնելու: Անդրանիկը գայրանում է, վերցնում եւ անվախ ըմպում է ջուրը:

1 ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 350, ց. 1, գ. 5: 2 «...հարուստող պորամասը», էջ 42: Նաեւ, ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 370, ց. 2, գ. 40: Մ. Լ. Խաչատրյանի պատմածը:

«— Խնդրիր ուզածդ, ծերուկ,— դիմում է Անդրանիկը:

— Փաշա՛, — աղաչական խոսում է թաթարը, երկու ձեռքը պարզելով նրա կողմը, — խնդրում եմ մի թուղթ գրես, որ քեզնից հետո եկող զինվորները մեզ չկոտորեն»:

Ծերուկը հարեան ու բարեկամ հայի հետ հաց կիսած համազրուդացու խոսքն էր ասում, այլ ոչ քարակոյտների մեջ հապճեպ պատրաստված հրացանակիր զինվորների:

Անդրանիկին ուղեկցողներից Հայկ Բոնապարտյանը, որն ավելի անգլերեն գիտեր, քան հայերեն, ծերուկի ուզածը թղթին է հանձնում, միայն թե անգլերեն: Ջայրանում է Անդրանիկը, ո՛վ է անգլերեն կարդացողը: Թող անգլերենն էլ իմանան, չէ՞ որ մեր մեջ մի անգլիացի կա, պատասխանում է Բոնապարտյանը, նկատի ունենալով Ռոբերտ Մակդաուլին, որ Նոր Բայազետից ի վեր լուռ ու անձայն հետևում էր երթին:

Փաշան ոգետրված խթանում է ձիուն, եւ գորքը շարժվում է առաջ¹:

Անախորժություններից խուսափելու համար Անդրանիկը կարգ է սահմանել, որ հատկապես ադրբեջանական գյուղերը մտնելուց առաջ կարգապահ սպաների ղեկավարությամբ զինվորների մի փոքրիկ խումբ առաջ անցներ եւ գյուղերի սահմանազախին նախապես գորքի մուտքը զգուշացնողի եւ պահակության դեր խաղար²:

Անդրանիկի գորքի այս ընթացքի եւ նրա մյուս գործերի մասին ժամանակին հաքվի «Ջամայա տրուդա» թերթը հրատարակել է գորամասի 1-ին գումարտակի հրամանատար կապիտան Բորտի եւ գնդացրային ջոկատի հրամանատար պորուչիկ Կոլմակովի նամակը: Եվ հենց այնտեղ էլ տառացի-բառացի ասվում է. «Մենք անցանք երեք գավառով, որոնք գրեթե համատարած մահմեդականներով էին բնակեցված, եւ գեներալ Անդրանիկի հրամանով, որը փակցված էր բոլոր գյուղերում, գնդակահարության սպառնալիքով արգելված էր ձեռք տալ մահմեդական բնակչությանը եւ նրանց՝ ունեցվածքին: Եվ որովհետեւ գորամասի կարգապահությունը դաժան էր, նրա հրամանները անպայմանորեն կատարվում էին»³:

Հունիսի 19-ին հասել են Նախիջեւան: Գիշերել են մոտակայքի հայկական գյուղի բաց դաշտերում եւ առավոտ վաղ ճանապարհվել Ջուլֆա:

Ծտապում էր: Ծտապում էր ետ չդառնալու համար: Այս կամքով

անցն ու դարձը նա փորձել էր: Հույսերով անց էր կացնում, հուսախար ետ բերում: Այդպես եղան 1914-ի հոկտեմբերի անցն ու 1915-ի հունվարի դարձը, վերստին 1915-ի հունվարի անցը, իսկ վերադարձը Իգդիրով եղավ: Ծտապում էր համոզվա՞ծ, որ կամուրջն անցնելով վերջապես իրականանալու էին նախորդ օրերի նույնությամբ մնացած իղձերը, թե վախենա՞նում էր, որ վերստին անցնելու համար իր տարիքը որպես գեներալի այլևս շատ առաջացած կլինի, իսկ որպես զինվորի՝ շատ ուշ:

Արագ անցնում են ճանապարհը եւ կանգառներում էլ չեն ձգձգում: Հանգստանում էին միայն գիշերվա քնելու ժամերին: Ջուլֆա հասնելը մտահոգություն էր պատճառում: Հարկավոր էր սահմանն անցնել: Դրա համար պետք էր կտրել Արաքսի հայտնի կամուրջը: Կամրջի կովկասյան կողմում ընդամենը 15 ասկյար է, իրար փոխարինելով, պահակություն արել, պարսկական կողմում՝ լրիվ մի դասակ¹: Կամրջին նախ մոտեցել է գորքի գլխամասը, մոտ 200 հեծյալ: Այստեղ Անդրանիկը պահակապետին ասում է, թե պատերազմն ավարտվել է, հայերի եւ թուրքերի միջեւ հաշտություն է կնքվել, իսկ ինքն էլ հայ զորավար է, որին թուրքական զորքերի հրամանատարը թույլ է տվել, որ հայ զաղթականներին առաջնորդի դեպի իրենց բնակավայրերը: Մինչ պահակապետը փորձում է մոտենալ հեռախոսին եւ պարզել Անդրանիկի հաղորդածի իսկությունը, հեծյալները հասցնում են անցնել կամուրջը, եւ դեռ պահակախմբին էլ, շուրջ քսան հոգու, ձերբակալում, ուղարկում են Ջուլֆայի ռուսական կողմը: Մինչեւ հաջորդ օրվա առավոտը կամուրջն անցել էին թե՛ զինվորները, թե՛ զաղթականությունը²:

Անդրանիկն շտապում է առաջ, դեպի Խոյ, որը վանին ավելի մոտ էր: Բայց դեռ քաղաքին չհասած, մոտ 25—30 կիլոմետր հեռավորության վրա, հայտնվում են թուրքական 36-րդ դիվիզիայի հետախույզները, որոնք սկզբում խուսափելով, ետդարձի միջոցին մարտի են հրավիրում գնդացիներով ու թնդանոթներով զինված լրացուցիչ ուժեր: Մարտը ընդհանուր առմամբ շահավետ է լինում Անդրանիկի առաջապահ խմբի համար: Մինչեւ գորամասի մյուս ուժերը կհասնեին, կոիվն արդեն ավարտված էր, եւ թուրքական ուժերը տեղի էին տվել³:

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 5, թթ. 24—25: 2 Ն. տ., էջ 47—50: Մեկ ուրիշն էլ պատմում է, թե կամրջով անցնելիս զինվորներից մեկը կարճատ է նվագել, մյուսն էլ սրինգ, հրապուրելով թուրքական մեղեդիով, եւ այդպես որպես թուրքեր անցել են սահմանը: Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 1, թ. 1—10: 3 Ն. տ., ց. 1, գ. 5, թթ. 52—53:

1 Ա. Կիսուր, Ն. տ., էջ 400—404: 2 Թորգոմ Գետրոզյանի հուշերը, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 14: 3 «Կավկասկոյե սլովո» (վերատպվել է), № 289, 1918 թ.:

Ջորամասը լրիվ կազմով շարժվում է դեպի հայկական Սեյրեվաթ գյուղը, որը Խոյից մոտ 12 կիլոմետր հեռավորության վրա էր: Այլևս այն չէր Սեյրեվաթը, ինչպիսին Անդրանիկը տեսել էր 1914-ի տարեվերջին, երբ իր կամավորների հետ առաջին անգամ եղել էր այնտեղ: Բնակչության մեծ մասը կոտորվել էր, ով էլ հասցրել էր՝ գաղթել: Բողորովին վերջերս էլ, ընդամենը 4 օր առաջ, գաղթել էին գյուղի վերջին հայ բնակիչները՝ տեղում թողնելով ընդամենը մի քանի հոգու, որոնք դեռ չէին կարողացել գաղթի ճամփան բռնել: Տխուր այդ վիճակում գալիս, գորավարին շրջապատում են վերջին աղբնակիչները եւ լացակումած պատմում նրան կատարվածը: Անդրանիկի զինվորը հիշում է, որ գորավարը տեղնուտեղը վճռում է անհապաղ արշավել Խոյի վրա, որտեղ թուրք գործն էր հաստատվել, գրավել քաղաքը եւ նոր միայն հանգիստ տալ հոգնած զինվորներին: Նա համոզված էր, որ տեղի թուրքական ուժերը անուշադրության չեն մատնի իր մուտքը քաղաք եւ հնարավոր է, որ նախահարձակ լինեն: Համենայն դեպս նա չի կարողանում պնդել իր վճռի վրա: Լրջորեն իր հրամանատարին առարկում էր եւ բացատրում Սմբատը, որ տղաները հոգնած են, որ հանպատրաստից դժվար կլինի հարձակումը¹:

Հունիսի 23-ի լուսաբացի հետ տրվում է հարձակման հրամանը: Անդրանիկը տեղաբաշխել էր իր ուժերը, որոնք այդ պահից, յուրաքանչյուրն իրեն հանձնարարված կետից, շրջապատում են քաղաքը, տեղ-տեղ էլ կարողանալով ներս թափանցել:

Հալոց գործը գիշերել էր պատմական Ավարայրի դաշտում: Հենց մոտակայքում, որտեղից Անդրանիկի զինվորները առաջանում էին դիրքեր գրավելու, բարձունքի վրա Վարդան Մամիկոնյանի մատուռ-դամբարանն էր, իսկ ստորոտում հայկական բանակի վաշտերից մեկն էր դիրքավորված²: Մինչեւ կեսօր կոիվը Անդրանիկի զինվորների օգտին էր: Վերցնելով կտրիճների մի հարյուրյակ, նա ճեղքում է դիմադրությունը եւ քաղաքի դարպասներից մտնում ներս, գրավելով բարձրադիր մի դիրք: Դիտելով կոիվների ընթացքը, նա կապավորների միջոցով աշխատում է յուրայինների կովին ընթացք տալ: Սակայն կովի թեժ ժամին լուր է հասնում, որ մարտի մեջ է մտնում թուրքերին օգնության եկած մի գորամաս: Վիճակը լրջորեն բեկվում

1 Մ. Հ. Խաչատրյան: Հուլիս եւ խոհեր, տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 40ա: 2 Վաշտի հրամանատարը եղել է Միքայել Իշխանյանը, ծնունդով՝ Կ. պոլսի Գում-Գալու թաղամասից, որը հետագայում ապրել եւ մահացել է Երեւան քաղաքում (1949-ին այս մասին հուշերը գրած լինելուց տարիներ անց, տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 402, ց. 1, գ. 2, թթ. 1—96):

է: Առանձնապես ուժեղանում է հակառակորդի հրետանին: Ծառանում է գորամասը թիկունքից շրջապատելու վտանգը: Այդ միջոցին կոիվները հեռվից դիտող 20 հազար գաղթականները խուճապի են մատնվում. աղմուկ-աղաղակ, վախի տեսարաններ, տազնապահար փախուստ:

Հեռվից գաղթականներն են բռնում ետդարձի ճամփան, մոտիկից՝ զինվորները: Վերջիններս այնուամենայնիվ որքան կարողացել ձգձգել են քաղաքամերձ բարձունքները գրավելու գործը, որի ընթացքում դեպի Դավրեժ ուղղություն վերցրած Այի Իհասանի գործը շուտ է գալիս դեպի կովի վայրը: Դժվար կացության մեջ հայերը շարունակել են մարտը եւ մերթ հաջողություն ունեցել, մերթ նահանջել, մինչեւ որ Անդրանիկը հրամայում է բոլորին շտապ, կազմակերպված նահանջի դիմել: Այդ նշանակում էր ոչ թե շուտափույթ ճողոպրել, այլ շարունակել դիմադրությունը այնքան, որ գաղթականները կարողանային կանգնել Ջուլֆայր կամուրջը տանող ճանապարհի վրա¹:

Հաջորդ օրը ուշ երեկոյան թե գաղթականները, թե զինվորները ոչ այնքան հոգնած ու ջարդված, որքան հուսահատ՝ սկսում են նույն կամրջով ետ դառնալ: Մյուս օրը առավոտյան բոլորն էլ անցել էին սահմանը: Ինչպես երեսում է, գաղթականների թիվը նվազել է, հավանաբար մի մասը, այնուամենայնիվ, ընկրկել է՝ կամ Պարսկաստանում մնալու, կամ նորից Երկիր վերադառնալու հույսով²:

Հարց է ծագում, ինչու ճանապարհի առաջին իսկ կովից հետո Անդրանիկը ետ վերադարձավ եւ, ինչպես կերես առաջիկայում, այլևս Վան գնալու ծրագիրը մարեց: Դեպքերի մասնակիցը հետելյալ կերպ է բացատրում: Խոյի տակ մղած կոիվների ժամանակ հայտնի է դարձել, որ Վանի բնակչությանը «հաջողվել է ճեղքել թուրքերի շրջապատումը, գնալ Պարսկաստան եւ այդ ժամանակ էլ գտնվել է արդեն Համադան տանող ճանապարհին»: Ստացվել է այնպես, որ հայության դիմադրությունն այնտեղ դադարել է եւ այլևս Վան գնալը կորցրել է իմաստը: Ահա, ասում է մասնակիցը, ինչո՞ւ է Անդրանիկը Խոյից նահանջել³: Սա եղած գրավորի մեջ մեզ հանդիպած միակ պատճառաբանությունն է: Անդրանիկն ինքն այդ փաստին չի անդրադարձել: Սակայն մեզ թվում է, որ սա դեռ ամբողջ ճշմարտությունը չէ:

1 Ըստ Իշխանյանի «Իմ հուշերի» եւ «Հայկական առանձին հարուստող կորամասի...»: Նաե՛ւ Գ. Ս. Բաղդասարյան. Հուլիս, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 5: 2 «...հարուստող կորամասը», էջ 55—58: 3 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 14 (Թ. Գեւորգյանի հուշերը):

Անդրանիկը Վան էր ուզում գնալ, հուսարով անգլիացիների օգնությամբ: Մինչդեռ ճանապարհին նա թե՛ Զուլֆայի կամրջի վրա, թե՛ հենց Խոյի պատերի տակ, հանդիպում է գերմանական զինվորների: Պատերազմը պաշտոնապես չէր ավարտվել և դեռ վաղ էր անգլիացիների հետ այս կողմերում հանդիպում և նրանցից օգնություն ակնկալելը: Իհարկե, նա կարող էր առանց անգլիացիների օգնությունն ակնկալելու էլ գնալ Վան Այրախես նա ուզում էր, առանց որեւէ այլ ուժի վրա հույս դնելու, դեռեւս 1915-ին, առանձնապես նուսական զորամասերից, եթե նրանք չկամենային, առաջ անցնել և օր առաջ Վան հասնել, բայց ավա՛ղ: Այնպես որ նույնը կարող էր նա այժմ անել և, ինչպես տեսանք, առաջին քայլերն արեց, հասնելով մինչև Ենդեվար: Սա վճռականապես նշանակում է, որ նա հաստատորեն իր խոսքի տերն էր և քայլն արված էր: Վարվելով այդպես, նա կանգնում է իր մտադրությունը խափանող երկու փաստի առջև, որոնցից մեկը պատնէշ էր, մյուսը անակնկալ: Պատնէշը թուրքերի դիմադրությունն էր գերմանացիների օգնությամբ, որը բավական ուժեղ դրսեւորվեց Խոյի տակ մղված կռվում: Անակնկալը՝ Վանից հայ բնակչության վերջին բեկորների գաղթը, առանց որոնց այլեւս այն իմաստը պիտի չունենար Վանի պատերի տակ նրա նրեւալը: Վերջապես, վերադարձի մի երրորդ, կամ միսիթարիչ, հանգամանք կարող էր լինել Պարսկաստանին սահմանակից Նախիջեւանի, այդտեղից դեպի արեւելք և հյուսիս գտնվող Զանգեզուրի, Արցախի բնակչությանն սպառնացող դարձյալ թուրքական հարձակումներից պաշտպանելու անհրաժեշտությունը: Այստեղ նրան անելիք կար և դրանով ևս կարող էր պատճառաբանվել նրա վերադարձը, մանավանդ որ արգելակվում էր դեպի Վան նրա ընթացքը:

Վճիռը թելադրվում էր դեպքերով: Նախիջեւանի նույն այն թաթարական բնակչությունը, որ ոչնչով չարգելեց Անդրանիկի ու նրա զորքի մուտքը իրենց գյուղերը դեպի Զուլֆայի կամրջը գնալիս, ետ վերադառնալիս զենքով դիմավորեց նրան: Թուրքական զինված ուժերի մոտ գտնվելն ու ուր որ է՝ գալու լուրերը շատ էին ոգետրել նրանց: Եվ ահա ադրբեջանական Յայջի գյուղը, որ Անդրանիկի առաջ շարժվելու միակ ճանապարհի վրա էր, զինված դուրս է գալիս նրա երթը արգելելու: Թուրք էմիսարների քարոզները անչափ թունավորել էին գյուղացիների մտքերը, որոնք անցյալում հաշտ ու խաղաղ էին ապրել հայության հետ: Երբ զորքը խաղաղ երթով մտնում է առաջ գնալու, գյուղեզորով անցնող ճանապարհի երկու կողմում էլ մարտական դիրքեր էին գրավել հրացանակիրները, կրակահերթի

պատրաստ էին գնդացիները և մինչև իսկ ինչ-ինչ ճանապարհներով ձեռք բերված երկու թնդանոթները, որոնք սպասում էին թուրք հրահանգիչների հրամանին: Կամ պետք էր ընկնել կրակի տարափի տակ, կամ կրակի դեմ կրակոցով հարթել ճանապարհը: Միջոց անգամ չի տրվում, որ հաշտության ճանապարհ խնդրվի: Ծանապարհն արգելողների առաջին կրակոցների դեմ վճիռը եղել է՝ «Զենքը զենքին ընդառաջ» հրամանը¹: Այսպես պատմվում է հուշերի մի տարբերակում: Մյուսում, որ գրել են երկու այլ մասնակիցներ, հեղինակները վկայում են, թե յայտեցիները «գաղտնի դիրքեր էին գրավել» և հենց որ իրենք սկսել են անցումը, նրանք կրակ են բացել «խաղաղ անցնող զորամասի վրա»: Անդրանիկի զորքը հարկադրված գրավել է գյուղը, և բնակիչները ստիպված նահանջել են դեպի պարսից սահմանը, որից այնքան էլ հեռու չէր գյուղը²:

Յայջիի այս դեպքի մասին շատ է խոսվել: Տեղին է: Ինչո՞ւ պետք է տարիներ, տասնամյակներ հայերի հետ դուռ-դրկից ապրած մարդիկ այսօր զենք վերցնեին նրանց դեմ: Ցավալի է: Դեպքին մասնակից ուրիշներն էլ են հուշեր թողել: Նրանք էլ այսպես են նկարագրել:

«Այդ Յայջի գյուղը մեծ գյուղ էր, ուժեղորեն զինված, շրջակայքի ահուսարսափը: Անդրանիկը, որ խաղաղ նպատակով գալիս էր Գողթան մի ապահով անկյուն գտնելու, երբ տեսնում է, որ Յայջի գյուղը ճանապարհը փակել և թույլ չի տալիս անցնել, պատգամավոր է ողարկում, պահանջելով ճանապարհը բաց անել, խոստանալով ոչ մի վնաս չհասցնել իրենց: Յայջի գյուղը նույնիսկ պատգամավորներին էլ չի ընդունում և հակառակ սպիտակ դրոշ էլ ունենալուն, կրակում են նրանց վրա»: Երբ պատգամավորների վրա տեղում է կրակի տարափը, կանգնած զորքը հարձակումով առաջ է անցնում և «այնքան ամուր կիրճը գրավում ու հառաջանում գյուղի վրա: Այնտեղ կային և թնդանոթ, և գնդացի, և օսմանյան թուրքերի սպաներ, որոնք պաշտպանում էին: Այստեղ կոփվր տեղի է ունեցել բաց դաշտի վրա: Եվ շատ քիչ ժամանակ, բայց համառ պաշտպանությունն մը հետո յայտեցիք դիրքերը թողնելով կփախչին: Մերոնք հալածում են և բոլոր զինված մարդկանց ջարդում: Իսկ մյուսները գնացել են դեպի Արաքս և ջուրը նետվել, ոմանք ազատվել են, ոմանք էլ հոսանքից թշվել»³:

1 ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 370, ց. 2, գ. 40ա: Նաե՛լ՝ «...հարուածող կորամառը», էջ 59—60 (սույն գրքում այս և այլ դեպքերի տարեթվեր չեն համընկնում փաստաթղթերում նշվածին): 2 Հ. Դ. Սրապյան, Ն. Ս. Խալիպույան, Անդրանիկի գործունեության սխալ մեկնաբանության մասին, Գ. տ., գ. 36:

3 Ն. տ., ֆ. 402, ց. 1, գ. 2, թթ. 64—66:

Բարեբախտաբար Յայջիի դեպքի մասին եւս, բոլորովին ոչ շատ ժամանակ անց, նույն 1918-ի դեկտեմբերին, մամուլում հրատարակած իրենց նամակում գրել են Անդրանիկի գործամասի հիշյալ սպաները՝ գումարտակի հրամանատար Բորտը եւ շոկատի հրամանատար Կոլմակովը՝ որպէս պարգաբանում եւ տարածված կեղծ յուրերի հերքում: Զորամասը, պատմում են նրանք, գտնվելիս է եղել Գողթան գավառից դեպի Օրդուբադ քաղաքի կողմը գտնվող Ազի եւ Չանանաբ գյուղերում: Վերադարձը շարունակելիս, երբ արդեն գործնապես անցնելու էր Զուլֆայից յոթ կիլոմետրի վրա այդ գյուղի մոտով, այնտեղից երկու հրանոթների կրակը ուղղված է եղել հենց Բորտի գումարտակին առնակառ: Այդ դեպքում, կարողում ենք նամակ-հոդվածում, նրա գումարտակը «գրավում է գյուղը, ըստ որում տներին, կանանց, երեխաներին ձեռք չէինք տալիս, իսկ զինված մարդկանց հետապնդում էինք»¹:

Անցնելու ուրիշ միջոց չգտնելով, Անդրանիկը հրամայում է գյուղը շրջապատել երեք կողմից, բայց այնպէս, որ խաղաղ բնակչությունը զոհերից խուսափելու համար ելք ունենա: Ասկայն ինչպէս խոստովանում է մասնակից զինվորը, հրամանը սխալ է կատարվել եւ գյուղը շրջապատվել է չորս կողմից: Դիմադրությունը տեսել է մի ամբողջ օր: Տեսնելով, որ հետագա պաշարումը կարող է վատ ավարտվել գյուղի բնակչության համար, Անդրանիկը դադարեցնում է այն:

Մինչեւ մոտակայքի Նեհրամ գյուղը հասնելը, Անդրանիկն իր զորքի մի մասին վաշտապետ Սմբատի ղեկավարությամբ ուրիշ ճանապարհով է ուղարկել Նախիջեւան: Այստեղ էլ Սմբատն է հարձակման ենթարկվել եւ սուրհանդակի միջոցով օգնություն խնդրել: Անդրանիկն իր զինվորների մի մասին Նեհրամի վրա հսկողության թողնելով, մյուսով շտապում է Սմբատին օգնության: Տեղ հասնելուց հետո պարզվում է, որ թուրքերն իմանալով Անդրանիկի օգնության գալու մասին, հապճեպ հեռացել են կովից, եւ Սմբատը իր ճանապարհով գնացել է Աքրակունիս գյուղը, որտեղ նախատեսվում էր զորքին հանգիստ տալ²:

Զուլֆայի կամուրջն անցնելուց հետո Անդրանիկը ավարտուն վճիռ չունէր՝ ուր է գնալու, ինչ է անելու: Առայժմ նա մտածում էր զորքի պարենավորման եւ հանգրվանելու վայրի մասին: Նույն ընթացքում հետաքրքրվում էր գավառի բնակչության տրամադրությամբ ու ցան-

¹ «Չնամյա տրուդա», Բաքու, 7.12. 1918 թ., № 148, Գան՝ «Կավկասկոյե սլովո». №269, 1918 թ.:

² Մ. Լ. Խաչատրյան, Հուշեր եւ խոհեր, ՀՀ ԴԿԳԱ, ֆ. 370, ց. 2, գ. 40ա:

կություններով, ըստ այդմ իր անելիքները բնակչության հետ համաձայնեցնելու նպատակով: Նա մանրամասն մի հարցացուցակ է կազմել եւ սուրհանդակների միջոցով հղել գավառի գյուղերն ու առանձին մարդկանց: Պահպանվել են թե Անդրանիկի հարցերը, թե ուղարկված պատասխանները: Վերջիններից մեկում այսպիսի բառեր կան. «Նախիջեւանի գավառը ընդունել մեր ապագա գործունեության բազան եւ Ռուսաստանի անբաժան մասը հայտարարել»: Գուցե թե հենց նման պատասխաններն են Անդրանիկին միտք տվել Նախիջեւանի գավառը ռուսաստանյան ենթակայության հռչակելու մասին, որը նա շուտով անելու է: Համենայն դեպս փաստ կա: Նույն այդ փաստաթղթի բաղկացուցիչ մասը տեղից այսպէս էր հուշում. «Գավառը հայտարարել զինվորական դրության մեջ, իսկ գեներալ Անդրանիկին՝ զորքի եւ ժողովրդի դիկտատոր՝ մինչեւ ռուսական զորքերի մուտքը երկիր»: Տեքստի հեղինակը, եզրակացնելով, գրել է. «Միայն անպայման ծրագրված գործունեությամբ մենք հնարավորություն կունենանք ազատել երկիրը մոտալուտ վտանգից, իսկ Ձեր անունը պահել յուր անարատ քարձրության մեջ»¹:

Վճիռը տեղացիք էին հուշում: Մարդիկ ընդառաջ էին գալիս: Ուզում էին օգտվել հանգամանքից եւ Անդրանիկին ու նրա զորքին պահել իրենց մոտ՝ որպէս պաշտպան ու հեճարան: Զուլֆայի կամուրջով ետդարձից հետո, դեռ Նախիջեւան չհասած, նրան ընդառաջ է եկել Երվանդ Խարազյանը, անդրկովկասյան սեյմի նախիջեւանյան պատգամավորը: Նա զինվորական էր, պորուչիկ ու հեղինակավոր դեմք գավառի քաղաքական կյանքում: Եկել, բերել է իր հետ տեղացիների գրավոր պահանջաթղթերը եւ պնդել, որ Անդրանիկը կանգ առնի իրենց գավառում, տալով նրան եւ զորքին ու գաղթականությանը օգնության բոլոր երաշխիքները²:

Կանչում էին նաեւ Կապանից: Արցախից էլ սուրհանդակ էր եկել, որը նրան հանդիպել է Բիստ գյուղում եւ հայտնել հայրենակիցների ցանկությունը: Խոստանում էին թե՛ զորքի եւ թե՛ գաղթականների ապահովություն: Իսկ աչքի առջեւ եւ ոտքերի տակ Նախիջեւանի հողն էր:

Միշտ այն օրերին, երբ Անդրանիկը Խոյից ետ դարձավ Զուլֆայի կամուրջով, հայտնի էր, որ ուր որ է թուրքական զորամասերը ներխուժելու են Նախիջեւանի գավառ: Անդրանիկը գալիս էր զորքով ու զենքով եւ հայ բնակչությանը, որտեղ էլ այն լինէր, օգտակար լի-

¹ Տարեթիվը է՝ 12.07. 1918 թ.: Տե՛ս ՀՀ ԴԿԳԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34:

² «Ժողովուրդ», Երեւան, №10, 1918 թ.: Նաեւ՝ Սմբատի նամակը Անդրանիկին, 7.12. 1918 թ.: ՀՀ ԴԿԳԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թթ. 22—25:

նելու պատրաստակամ: Նախիջեւանի հայ բնակչության կամքով նրա Ազգային խորհուրդը գիտակցելով, որ միայնակ ի վիճակի չի լինի կանգնեցնել թուրքերի ներխուժումը, դիմում է Անդրանիկի օգնությանը: Դա առավել էս անհրաժեշտ էր, որովհետեւ գաղափար աղբյուրեզանական վերնախավը, նրանց ազգային խորհուրդը ակնհայտ հակահայ քաղաքականություն էին տանում եւ պատրաստ էին օգնելու թուրքական հարձակվող ուժերին՝ օր առաջ գաղափարի տիրակալ դառնալու եւ տեղի հայ բնակչությանը ծնկի բերելու նպատակով¹:

Կառավարության որոշ անդամների հետ գծադրությունը գծադրություն, բայց եւ այնպես Անդրանիկի գործառնախ նախիջեւանյան այս վիճակի նկատմամբ անտարբեր չէին Հայաստան Հանրապետության ռազմական ղեկավարները: Այն ժամերին, երբ գործառնախ Յայջիից հետո հանգրվանի տեղ է փնտրում եւ դեռ չէր դադարեցրել երթը, գեներալ Սիլիկյանը Երեւանից ռադիոհեռագրով հայտնում է Անդրանիկին եւ զգուշացնում, որ Թուրքիայից գորք է շարժվում, մի ամբողջ դիվիզիա, նրա գործառնախ դեմ²: Դա արագացնում է կանգառի տեղանքը որոշելը. հրամանատարությունը որոշ գործառնախի հետ միասին Նախիջեւանից 16 կիլոմետրի վրա գտնվող Աբրակունիս մեծ գյուղում, մնացած մասը՝ Կզնուտ ու մոտակայքի մյուս գյուղերում: Հիշատակություն կա նաեւ, որ Երեւանից, կառավարության կողմից էս ռադիոգրով Նախիջեւանի հայոց ազգային խորհրդին նույնպես տեղեկացվել է, որ թուրքական գորք է առաջանում դեպի Չուլֆա եւ որ երկաթուղագիծն ու Երեւան—Չուլֆա խճուղին տրամադրվելու են թուրքական գորքերի հրամանատարությանը³: Ահա էս մի անհասկանալի հանգամանք, որը բխում էր դարձյալ հունիսի 4-ի ստորագրումից: Ստացվում է, թե ոմանք կարող էին ազգային շահերը զիջել, դիվանագետ լինել ու գործել ըստ հանգամանքների, իսկ Անդրանիկը իրավունք չստեղծ է ունենար իր անձն ու էությունը նույն այդ շահերի պաշտպանությանը նվիրելու: Դա նույնպես ժամանակին քիչ չի շարժել Անդրանիկի գայրույթը:

Իրադրությունը Նախիջեւանի գաղափարում լարված էր: Ամեն տեղ շրջում էին գաղափարի վրա թուրքերի հարձակման նախապատրաստվելու լուրերը: Անդրանիկը գիտակցում էր այն վտանգի ահավորությունը, որը կարող էր սպառնալ իր գործառնախն ու նրան հետամուտ գաղթականությանը: Խմորվում էր, փաստորեն, առնականության վիճակ: Տեղի թաթարական վերնախավը գաղտնի ու բացահայտ աշխա-

տում էր ամրապնդել իր կարգերը Թուրքիայի ռազմական ուժերի հետ եւ հրավիրել նրանց միատեղ գաղափարի հայ բնակչության նկատմամբ հաշվեհարդարի:

Ժամ չեն Անդրանիկի այդ օրերի գործունեության մասին մեզ հասած փաստաթղթային տեղեկանքները: Բայց եղածից էլ կարելի է հիմնականը կուսել: Հուլիսի 13-ին նա իր անունից ռադիոլուր է հղել գաղափարի ռազմական ուժերի հրամանատարներին, որոնք զբաղված էին թուրքերի ներխուժումը կանխելու գործով. «...Անհապաղ եկեք ինձ մոտ ճակատը պաշտպանելու մասին խորհրդակցելու»: Միաժամանակ հանձնարարել է, որ նրանք հավաքեն իրենց բոլոր հեծյալ ու հետեւակ զինվորներին եւ նրանց նույնպես ուղարկեն իր մոտ: Հեռագրի վերջին բառերն են՝ «Պետք է շտապել»: Նույն օրը, նույն անձանց նա, ի լրացումն, հայտնել է՝ «Հավանաբար 4 օրից հետո թուրքական գորքերը կլինեն»: Տեղի համապատասխան մարդկանց արդեն ցուցում էր տվել գաղափարում եղած ռազմամթերքի պահեստների եւ հրետանու վերաբերյալ. դրանք տեղափոխել ուր որ հարկն է¹:

Եթե օրհասի այս փաստերին հանդիպած չլինեք, եթե տեղի հայությունը չկատչեր նրանից եւ աղիողորմ չսկզբեր, որ մնա իրենց գորավիզ, անշուշտ նա պիտի գնար, նրա մտքում մինչ այդ մնալը չկար, ինչպես որ չկար վերադարձը Չուլֆայի կամքով, պիտի գնար հեռավոր մի տեղ՝ ապահով թե՛ զինվորների, թե՛ գաղթականության համար, որոնք այնպես զգում էին դրա կարիքը: Բայց հիմա նրա համար հեշտ չէր գաղափարի հայ բնակչության խնդրանքն ու պահանջը մերժելը: Եվ մի՞թե դա նրան պատիվ կբերեր: Նա խոնարհաբար ենթարկվել է Նախիջեւանի հայ ղեկավարների կամքին. «...տեղում մնալ, կազմակերպել դիմադրություն եւ թույլ չտալ թուրքական գորքերին Նախիջեւան մտնել»²:

Թե որքան էին նրա ուժերը դրան ի գորու, դա ուրիշ խնդիր է: Կովող մարտիկին չեն հարցնում, թե ուր է առաջ գնում: Եթե այդպես էր, նրան պետք չէր ռազմի դաշտ բերել: Տեղացիներն իրեն էին ապավեն տեսնում: Նա իրենց կողքին էր, իրենց հողի վրա, էլ չենք ասում գորավարի իր հոշակով հանդերձ: Եվ ոչ ոք չէր հարցնում, թե իսկ ինքը, հոշակավոր այդ գորավարը, որեւէ բանի կարիք ունե՞ր, թե ոչ: Ուշադիր նայողը կտեսներ, որ նա մյուսներից պակաս չէր զգում հույսի ու ապավենի կարիքը: Բայց ինչ արած, որ հունիսի

1 ՀՀ ԴԿԳԱ, ֆ. 370, ց. 2, գ. 32: 2 «Կավկասկոյե սլովո», №269, 12.12. 1919 թ.: 3 Գ. Կարապետյան, ՀՀ ԴԿԳԱ, ֆ. 370, ց. 2, գ. 27:

1 ՀՀ ԴԿԳԱ, ֆ. 370, ց. 1, գ. 5, - 26: 2 Տե՛ս մի խումբ հին Նախիջեւանցիների նամակը... ՀՀ ԴԿԳԱ, ֆ. 370, ց. 2, գ. 32:

4-ի պայմանագիրն ստորագրելով, հայոց կառավարությունը չէր կարող գոնե այդ օրերին մտնել նման դերի մեջ: Անդրամիկը նայում էր հեռուները, այնտեղ, ուր Բաքուն էր, ավելի հեռու՝ Մոսկվան:

...1918-ի հուլիսի 14-ի առավոտյան Նախիջևան քաղաքում պատերին փակցված էին եւ ձեռքով տարածվում էին ազդարար թերթիկներ. «Այսօր Վանից ես իմ ջոկատով անցնում եմ Ռուսաստանի հանրապետության կենտրոնական կառավարության լիակատար ենթակայության եւ տրամադրության տակ»: Սա՛ առաջին: Երկրորդ հոդվածով ի գիտություն բոլորի վերստին տեղեկացվում էր, որ Նախիջևանը այսուհետեւ, Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համաձայն, ռուսաստանյան հանրապետության անբաժան մասն է: Այնուհետեւ, առանձին-առանձին հոդվածներով, գավառը հռչակվում էր ռազմական դրության մեջ, ամբողջ բնակչությունը, անկախ ազգությունից, պետք է անհապաղ զինաթափվեր, Հանրապետության իշխանությունը չճանաչողները եւ նրա թշնամիներին օգնողները համարվելու էին Ռուսաստանի դավաճաններ եւ օրենքից դուրս, ենթարկվելու էին դաժան պատժի: Հրամանի հռչակման պահից երկու օրվա ընթացքում մասնավոր անձանց եւ հասարակական կազմակերպությունների ձեռքին գտնվող բոլոր տեսակի զենքերն ու զինամթերքները պետք է դրվեին ռազմական իշխանությունների տրամադրության տակ*: Հաջորդ օրը, հուլիսի 15-ին, հարկ է համարվում ի լուր ամենքի, այս անգամ առանձին թերթիկով, հայտարարել, որ՝ «զեներալ-մայոր Անդրամիկը Նախիջևանի մարզը հռչակում է Ռուսաստանյան պետության անբաժան մաս»:

Կշռադատելով գավառի ներքին եւ արտաքին դրությունը, ունկընդորդելով տեղի հեղինակավոր անձանց, Անդրամիկը 1918-ի նույն հուլիսի 14-ին հեռագիր է հղում 1917 թվականի հոկտեմբերի 25-ի հեղափոխության հետեւանքով Պետրոգրադում ձեւավորված կառավարության հետ ներդաշնակ՝ Բաքվի ժողկոմխորհի նախագահ Ստեփան Ծահուրյանին¹: Հեռագրի հիմնական նպատակը՝ վերը շարադրված առաջին հոդվածի բովանդակությանը Ստ. Ծահուրյանի միջոցով ռուսաստանյան կառավարության ղեկավար Լենինին տեղեկացնելն է: Դրանում գլխավորը, որ նա գրում էր Ծահուրյանին, այն էր, որ ասում էր, թե ինքն «անառարկելիորեն ենթարկվում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրին»:

* Հրամանների տակ ստորագրում էր նաեւ գավառի հայոց ազգային խորհրդի նախագահ եւ ռազմական ուժի հրամանատար պորուչիկ Խարապյանը:

¹ «Բակինսկի ռաբոչի», 18.07. 1918 թ., նաեւ՝ Ստ. Ծահուրյան, ԵԼԾ, հ. 5, էջ 372—373:

Նա գիտեր, որ դա նույնպես ծանր պայմանագիր էր, որը Արեւմտյան Հայաստանի ազատագրության հարցը բոլորովին անուշադրության մատնելով, ոչ մի բարի խոսք չստեղծելով ռուսական բանակի կողմից պատերազմի ժամանակ Արեւմտյան Հայաստանի նվաճված հողերի բախտի մասին, դեռ պայման էր ստեղծում. որ Թուրքիային լրացուցիչ միավորվեին նաեւ ռուսական կայսրության սահմանի ներսում գտնված Կարսն ու Արդահանը: Անդրամիկը դա չէր կարող ընդունել, նման վաճառքի հետ հաշտվել: Բայց մա ընդառաջ էր գնում չարյաց փոքրագույնին: Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Թուրքիային զիջվող հողերը հունիսի 4-ի զիջվելիքի համեմատ սահմանափակ էին, իսկ Կարսի եւ Արդահանի հանձնման նկատմամբ էլ կար մի վերապահում. նրանում ասվում էր, թե այդ հողերում իշխանության, կառավարման նոր ձեւի հաստատումը պետք է արվեր տեղի բնակչության մասնակցությամբ, նրա կարծիքը հաշվի առնելով: Միշտ է, սա բացարձակ մի ձեւակառություն էր եւ ոչ մեկն էլ, հողերը ստանալուց, զավթելուց հետո որեւէ մեկի կարծիքը չէր հարցնելու: Բայց եւ այնպես, եթե հայերը, անդրկովկասյան իշխանությունները առարկեին, դա կարող էին պատրվակ դարձնել եւ իրենց կամքը արտահայտել: Եվ գուցե թե այդ դեպքում Ռուսաստանն էլ զորավիզ կանգնեւր նրանց: Բրեստում հողերի հանձնումը այնպես անվերապահ չէր, ինչպես դա արվեց նույն 1918-ի հունիսի 4-ի բաթումյան պայմանագրով: Ահա այս մի պատճառ, որ Անդրամիկը դարձյալ ըստ էության դեմ լինելով բրեստ-լիտովսկյան զավթմանը, ինչպես որ, ի միջի այլոց, դեմ եղան անդրկովկասյան իշխանություններն ու նրանց հետ մեկտեղ հայ ազգային քաղաքական ուժերը, բայց հակառակ նրանց, հռչակում էր իր «ենթարկումը» այդ պայմանագրին: Այս մի պատճառ: Մյուսը, գլխավորը, այն է, որ Նախիջևանը ռուսաստանյան կառավարության տրամադրության տակ դնելով, այդ ձեւով ուզում էր հռչակել, որ թուրքերն ինչ-որ ստանալու էին, ստացել են Բրեստի պայմանագրով եւ այլեւս Անդրկովկասում ուրիշ զավթումների իրավունք չունեն, առավել եւս, որ Նախիջևանն էլ ոչ թե սոսկ անդրկովկասյան է, այլ ռուսաստանյան հովանավորության ներքո: Թուրքերի սրաբշավը կանխելու մի պատրվակ էր նա որոնում, մի զորավիզ ուժ էր ուզում մատնացույց անել եւ նրա վրա հենվել: Բրեստի պայմանագրում Նախիջևանը թուրքերին հանձնելու մասին խոսք չկար, հունիսի 4-ի պայմանագրում՝ Հայաստանին թողնելու: Նախիջևանը ռուսաստանյան ենթակայության հռչակելը ուղղված էր այնտեղ թուրքերի ներխուժման հնարավոր, եւ այն էլ մոտալուտ.

քայլի, գալստը թուրքերի նվաճման կամ թուրքերի օժանդակությամբ Ադրբեջանին բռնակցելու անսքող գործողությունների դեմ: Դա նշանակում էր նախիջեւանյան հողերի նկատմամբ նրա բնարմատ բնակչության տիրակալության լիիրավ կամքի արտահայտում: Միայն այդ նպատակով էր Անդրանիկն իր հեռագրում Ծահումյանին խնդրում «հայտնել ում որ հարկն է, որ ես իմ ջոկատով այսօրվանից գտնվում եմ Ռուսաստանի կենտրոնական կառավարության տրամադրության տակ եւ ենթարկվում եմ նրան»: Եվ տեղնուտեղը իր անխախտ վճիռն է՝ «կաշխատեմ արգելակել թուրքական զորամասերի մուտքը Նախիջեւանի գալստ»:

Որոշակի տեսանկյունից միանգամայն ճիշտ ու ցանկալի կլինե՞ր, որ «Ռուսաստանի կենտրոնական կառավարության» բառերի փոխարեն հռչակվեին «Հայաստան Հանրապետության» բառերը եւ հետագայում՝ ինչպես որ տեքստում: Ծա՛տ ցանկալի կլինե՞ր, եւ առաջին հերթին Անդրանիկի համար: Բայց ինչո՞վ պետք է օգնեին այդ բառերը, երբ թուրքերը հունիսի 4-ի պայմանագրով Նախիջեւանի մասին թառ անգամ չէին հիշատակել, այն թողնելով Հայաստանի պատկանելությունից դուրս եւ հեռու: Իսկ հենց այդ օրերին մի կողմից իր զորամասը ցրելու պահանջ էին դնում, մյուս կողմից էլ արդեն զորքեր էին ճանապարհել չպարզորոշված սահմանն անցնելու, Նախիջեւանը նվաճելու համար: Անդրանիկը արդեն առիթ էր ունեցել ընդհարվելու այդ զորամասերից մեկի հետ, որը 38-րդ դիվիզիան էր, վայրը՝ Խոյը, որտեղից նա վերադարձ կատարեց: Օրերի հարցից ժամերի հարց էր դառնում Ջուլֆայի կամրջով նաեւ այդ դիվիզիայի ստորաբաժանումների մուտքը դեպի «ոռուսական» Ջուլֆա եւ հայկական Նախիջեւան: Իսկ այն էլ, որ վերելում ասվեց Երեւանից գեներալ Սիլիկյանի հղած զգուշողական հեռագրի մասին, վերաբերում էր սահմանային Ծահրախտով, Թուրքիայից դեպի անմիջապես Նախիջեւան քերող հատվածով թուրքական երկու գնդերի մարտական երթին¹: Չի կարելի ասել, թե սա սուկ Սիլիկյանի ընկերական հոգատարության կամ մտավախության արդյունքն էր: Հազիվ թե հայոց կառավարությունը անտեղյակ ու անհամաձայն եղած լինե՞ր դրան: Սիլիկյանը պարզապես մտերիմ էր Անդրանիկի հետ, որն էլ՝ հարգալից ու վստահ էր նրա խոսքին: Ստ. Ծահումյանն անհապաղ պատասխանել է Անդրանիկին՝ «Ջուլֆա, ժողովրդական հերոս Անդրանիկին» հեռագրով: Անդրանիկի քայլը գտնելով խոհեմ, նրանում ամենավատթար խոսքերն է հղել Հանրապետության գլուխ

անցած կառավարության ղեկավարների հասցեին: Պարտք է ստանձնել օգնության ձեռք մեկնել Անդրանիկին, ցանկանալով, որ նա էլ իր հերթին Բաքվի հետ կապվելու ուղիներ գտնի: Ծահումյանը Անդրանիկի հեռագիրը բառ առ բառ հղել է Մոսկվա, Ժողովախորհի նախագահ Լենինին, նրանում Անդրանիկին էլ, ասելու համար, թե ում հեռագիրն է, անվանելով «հայ ժողովրդական առաջնորդ»: Նկատենք, ի միջի այլոց, որ Անդրանիկին ՌՍԴԲԿ գործիչներից այդպես կոչել էր նաեւ Լեւ Տրոցկին, 1913 թվականին նրա մասին գրած հանգամանակից հոդվածում: Պետք է, որ Ծահումյանը ավելի լավ իմանար իր հայրենակցին: Եվ ահա եկել է ժամը, որ ի գիտություն հեղափոխական եւ ոչ-հեղափոխական Ռուսաստանի, մեկը հրապարակավ ասել, թե ինչ էր իրենից ներկայացնում այն մարդը, որը այդ վճռաբեկ պահին նման քայլի էր դիմում. սուկ ռազմի՞կ էր մի զորագնդի, մի զորագնդի հրամանատար՝, մի քաջ ու համբավավոր զորավա՞ր, թե՛ նաեւ ճանաչված ղեկավար ու առաջնորդ, որը քաղաքական ազդեցիկ հեղինակություն էր եւ ժողովրդին նրա կնճոտ հարցերի իր լուծումները հուշող առաջնորդ: Ծահումյանը Անդրանիկի մեջ տեսել է այդ բոլորը միասին եւ առաջ է մղել «հայ ժողովրդական առաջնորդ» խոսացված բնութագրականը: Ուրիշ անգամ Անդրանիկն է առիթ ունեցել արտահայտվելու Ծահումյանի մասին, ասելով, թե նա «շատ լավ հայ էր», նրան դասելով «անկեղծ, մաքուր ու անշահախնդիր մարդկանց» շարքը¹:

Նախիջեւանյան այս պատմությունը տարիներ անց Անդրանիկը գրել է ու մեկնաբանել.

«Երբ այդ ռատիո-հեռագիրը կը դրկեի լուսահոգի Ստեփան Ծահումյանի միջոցով Ռուս կենտրոնական կառավարության, նկատի ունեի, թե երեք հազար վերստ հեռավորության վրա անկարելի էր, որ անոնք անմիջապես ինձի օգնություն փութային: Այդ հսկա տարածության վրա գտնված հողամասի բոլոր ճամբաները, կամուրջները, երկաթուղիները կամ քանդված եւ կամ փակված էին այլեւայլ ցեղերու կողմէ: Հակառակ այս դժնդակ կացության, այդ օրէն իսկ ես զգացած էի, թե միակ ոռուսական ուժը, բարեկամական հարաբերության հետ, պիտի մեղմեր ժողովուրդիս բազմազան ցավերը: Ահա այս հեռապատկերին համար էր, որ դրկեցի այս հեռագիրը հայտնելու Մոսկվայի կառավարության՝ թե ես եւ իմ քանակս, եւ ժողովուրդս անկեղծ եւ հավատարիմ ենք ոռուսերուն, ինչպես էինք 1914—1917-ի

1 «...հարուածող պորամսը», էջ 68:

1 ՀՀ ԴԿՊԱ. 370, ց. 1, գ. 94: Նաեւ՝ «Չօր. Անդրանիկ կը խօսի», «Պայքար», 5.09.1927 թ.:

տարիներում, կատարելով մեր ծառայությունը Կովկասյան ճակատի բանակներում մեջ»¹:

Մոսկովյան թերթերը խանդավառ խոսքեր հղեցին Անդրանիկի հասցեին.

«Անդրանիկը ամեն մի հայ մարդու հայտնի անուն է, անուն, որով իսկապես կարող է հպարտանալ հայ ժողովուրդը»: Եվ ապա՝

«Անդրանիկը հայ գյուղացիության միակ առաջնորդն է: Նրա սիրտը համաչափ բարախում է խավար ու աղքատ հայ գյուղացիությանն արտի հետ, գյուղացիություն, որը ենթարկվում է եւ ռուսական (Ռուսահայաստանում) եւ տաճկական (Տաճկահայաստանում) ռստիկանական պետական բուրժուազիայի եւ հոգեւորականության շահագործմանը: «Մեր Անդրանիկը», — այսպես է հուզվում և կրակոս հայացքով նրան անվանում Նոր Բայազետ գավառի բարձրաբերձ քարայրերում ծվարած գյուղի բնակիչը: Եվ «Քաջ Անդրանիկի» մասին երգն է երգում մանկան օրորոցին հսկված մայրը, որովհետեւ նրա իղձը որդուն Անդրանիկի դրոշի տակ տեսնելն է»: Մեջքերված են նրա խոսքերը. «Ես զինվոր եմ, զինվորը ճնշվածների եւ ստրկացվածների: Իմ սուրն այնտեղ է, որտեղ պայքարն է հանուն ազատության, պայքարը ընդդեմ տիրողների»²:

Երբ այսպես գրում եւ կարդում էին Մոսկվայում, Նախիջեւանում տարածված ազդաթղթերը հայտարարում էին, թե զենեղա-մայր Անդրանիկը «գործում է Ռուսաստանյան պետության հետ համաձայնության գալով»: Սա մի պարզ քաղաքական ոգեւորություն էր: Ոչ մի այդպիսի համաձայնություն էլ չէր եղել: Ուղղակի հայտարարվում էր, ըստ նպատակահարմարության: Ինչպես ամեն մի հայ մարդու, այնպես էլ Անդրանիկի համար հենց սկզբից էլ հանելուկ չէր գավառը ռուսաստանյան թե՛ հայաստանյան սրտկանեություն հռչակելը: Կար հուլիսի 4-ի բաթումյան սպանման գիրը: Հայոց կառավարությունը ինչ-որ կարողացել էր, արել էր: Ետին թվով վերլուծելիս, իհարկե, Նախիջեւանը Հայաստանի անբաժան մաս հռչակելը, թվում է, թե ոչ միայն անհրաժեշտ, այլեւ դյուրին մի բան էր: Անդրանիկն այդ ձեռով մարտնչում էր երեկվա Երեւանյան նահանգի բաղկացուցիչ մաս բնարմատ հայկական տարածք Նախնավանը թուրքերի երախը չզցելու եւ սահմանի այս կողմում պահելու համար, մինչդեռ հետագայում, 1921-ի մարտին, նույն այդ Թուրքիայի պնդմամբ եւ Ռուսաստանյան կառավարության թողտվությամբ այն դարձյալ Հա-

յաստանի սահմանագծից դուրս դրվեց, այս անգամ՝ ադրբեջանական տիրույթ հռչակելով: Եվ ոչ ոք չհիշեց Անու. աւիկի ջանքերը, կարծես թե նա «ռուսաստանյան» էր հռչակում, որպեսզի Ադրբեջանին մատուցվեր, այնինչ Ադրբեջանում խորհրդային իշխանության հռչակումից հետո այդ հանրապետության ղեկավարությունը, քանի դեռ հեղափոխական բարոյականության կրակը չէր մարել, Նախիջեւանը հռչակեց ընդամենը երկու օր առաջ խորհրդային հայտարարված Հայաստանի անբաժան մաս: Պատմության զարտուղի ելեւէջներ:

Ծարունակենք: Նախիջեւանը ռուսաստանահպատակ հռչակումից հետո գավառում անհապաղ հաշտ ու խաղաղ կյանքի միջոցներ են ձեռք առնվել: Նպատակահարմար է գտնվել, ներքին զինված ընդհարումներին վերջ տալու համար, որ բնակչությունը զենքերը վար դնի եւ ենթարկվի օրինականության: Հրահանգվում է զինաթափվել թե՛ հայ, թե՛ մահմեդական բնակչությանը: Այդ կապակցությամբ հուլիսի 18-ին մահմեդական բնակչության ազգային կոմիտեի նախագահ Խան Դիարբեքիրսկին եւ գավառի հակահայ ուժերի գլխավորներից Ջաֆարկուլի խանի որդի, Նախիջեւանի քաղաքագլուխ Խան Նախիջեւանսկին պաշտոնական գրությամբ դիմում են Անդրանիկին եւ նրան եռանդագին օգնող Երվանդ Խարազյանցին: Պատճառաբանում են, թե ժամանակը տագնապալի է, վիճակը անիշխանական եւ վստահ չեն, թե մարդիկ կենթարկվեն զինաթափման իրենց կամքին: Ասում են եւ առավել «հիմնավոր» պատճառ բերում, թե առհասարակ զինաթափման պահանջը ավելորդ բան է, եւ մահմեդական բնակչության անուսից խոսք են տալիս չեզոքություն պահպանել, չմիջամտել Անդրանիկի գործերին, պատրաստակամ անհապաղ ներկայանալ «Նորին գերագանցությանը», նրա առաջին իսկ պահանջով¹:

Հաջորդ օրը «Մեծարգո Մ. Կ. Խան Դիարբեքիրսկուն» գրավոր պատասխանել է Խարազյանցը: Զուր եք հրաժարվում, գրել է նա, դուք լավ գիտեք, որ հայերն էլ են զինաթափվում: Վերջ տվեք ձեր կրակոցներին: Անդրանիկը ձեզ գիտե որպես խաղաղ մարդկանց եւ նա չի կարող ներել, թույլ տալ, որ խաղաղ մարդիկ, որպիսին նա ձեզ գիտե, իր իշխանության ներքո զինվեն: Պետք չէ համառել, կատարեցեք զինաթափվելու հրամանը, իսկ ես իմ կողմից երաշխավորում եմ ձեր լիակատար ապահովությունը: Հետագայում, իհարկե, պարզ է դառնում, որ մահմեդական պարագլուխների բացատրություններն ու խոստումները կեղծ էին, նրանք առաջին իսկ հնարավորության պահին զենքը գործի դրին: Իսկ մինչ այդ Անդրանիկը

1 «...օրագրութիւնը», էջ 160—161: 2 «Վեչերնայա Իզվեստիյա Մոսկովսկոգ սովետա», 26.07. 1918 թ., նաեւ՝ «Իզվեստիյա ՎՅԻԿ», 26.07 1918 թ.:

պաշտպանական միջոցներ էր ձեռնարկում: Չորքը համարելու եւ մարտական կարգի բերելու հետ մեկտեղ ամրապնդում էր Նախիջե-վանի ճակատային եւ պաշտպանական դիրքերը: Գրում էր այդ ամենի մասին Անդրանիկը ում որ հարկն է հասցեագրած իր գրություննե-րում, անպայման ավելացնելով՝ «Պետք է շտապել»: Տեսնում էր ու գիտակցում, որ դրությունը լարված է եւ ամեն բոլոր կարող է թըշ-նամին երեսով գավառի ու քաղաքի մատուցներում: Հուլիսի 17-ին նա պարզ ու որոշակի հայտնում էր՝ հավանաբար չորս օրից հետո թուրքական զորքերը կհասնեն: Խնդիր էր դնում մինչ այդ զինա-կոչել զոհն 2000 զինվոր, կարգի բերել հրետանին¹:

Կառուցվածքային եւ հրամկազմի փոփոխություններ է մտցնում բանակում, բարձր պաշտոններում հայտնվում են նոր անուններ՝ առաջին հարվածային հեծյալ գնդի հրամանատար պորուչիկ Պավել Իվանովիչ Վիչին, ռազմադաշտային դաստարանի անդամ կապիտան Բորտ, կապի նորաստեղծ խմբի պետ պրապորշչիկ Չախարչենկո... Սպայական եւ զինվորական ժողովները դառնում են հաճախակի, անց է կացվում բանակային կյանքի որոշ դեմոկրատացում²:

Անդրկովկասի համար, առանձնապես Նախիջեանի համար, դրժ-վար ժամանակներ էին, քաղաքում ազգամիջյան լարված վիճակ էր: Հուլիսի առաջին օրերին թաթարական կողմը կրակ էր բացել հայ բնակչության վրա: Այդ պահին քաղաքին ընդհուպ մոտենում էին թուրքական զորքերը, եւ ադրբեջանական հետադեմ տարրերը ռզե-վորվել, թաքցրած զենքը հանել, գործի էին դրել: Տեղի հայերի եւ զինված մարդկանց թիվն էր պակաս, եւ զենքի³:

Դեպի Նախիջեան են աճապարում Արաքսի կամուրջն անցած եւ արդեն ռուսական Չուֆան գրաված թուրքական 36-րդ դիվիզիայի զորամասերը: Միաժամանակ դեպի Նախիջեան, ինչպես ասվեց, թուրքական ուժեր են շարժվում Երեւանի կողմից: Դա լրջորեն սրում է գավառի թաթարական բնակչության հակահայկական տրամադրու-թյունները: Առաջիններից մեկը զենքի է դիմում Նախիջեանին մո-տակա Նեհրամ գյուղը: Անդրանիկը փորձում է վիճակը խաղաղեցնել, նեհրամցիներին զենքը վար դնելու առաջարկ անելով: Սակայն ա-պարդյուն: Նեհրամցիների օրինակին հետեւում են ուրիշ ադրբեջա-նական գյուղեր: Անդրանիկը էլք պետք է գտներ, ո՞ր ուղարկել իր զինվորներին՝ հակամարտ բնակչության ռազմական ըմբոստացումը սանձելու՞, թե՞ հարձակվող զորքերին կանգնեցնելու: Կար երրորդ,

¹ Ն. տ., գ. 5, թ. 26: 2 Ն. տ., ֆ. 370, ց. 1, գ. 11: «Հորիզոն» թերթը, անտեղ-յակ, հակասական լուրեր է հրատարակել, տե՛ս № 180, 8.09 1918 թ.:
² ՊԿՊԱ. ֆ. 121, ց. 1, գ. 32, թ. 37—38.

մյուսներից բոլորովին էլ ոչ դյուրին, խնդիրը: Թուրքական զորքերի մերձենալու լուրը խուճապի էր մատնել հայ գյուղերի բնակչությանը: Նրա դեկավարները մինչ այդ Անդրանիկին թախանձագին խնդրում էին մնալ իրենց գավառում, չհեռանալ, պաշտպան կանգնել իրենց, միաժամանակ խոստանալով ապահովել նրա զորքի զենքի, հանդեր-ձանքի ու պարենի պահանջները: Սկսված խուճապը խառնում է հաշիվները: Անդրանիկին միավորվել ցանկացող երիտասարդները կանգնում են երկրնորանքի առջեւ՝ իրենց ընտանիքներին պաշտ-պան կանգնել, օգնել նրանց հապճեպ անհանջելու ապահով մի տեղ, թե՞ զնալ Անդրանիկի մոտ: Եվ հուլիսի 16-ին Անդրանիկի հոչակած զորահավաքը ո՛չ կազմակերպված բնույթ է ստանում, ո՛չ էլ ցանկա-լի արդյունք տալիս: Մահմեդական բնակչությունը արդեն թիկունքից կրակում էր հայության վրա, խափանում Անդրանիկի զորամասի տեղաշարժերը: Սա անհետաձգելի պահանջ է հարուցում: Դրսի զորքերը դեռ տեղ չէին հասել, իսկ ներքին ուժերը արդեն խփում էին: Ակամայից այս կողմն է Անդրանիկն իր զինվորներին ուղար-կում: Մահավանդ որ գավառի հայատյաց ուժերի գլխավորներից Զա-ֆարկուլի Խան Նախիջեանակին հետվից սերտ կապեր ուներ Նախի-ջեան ձգտող թուրքական զորամասերի հրամանատարների հետ, որոնց մեջ էր անձամբ Խալիլ փաշան, նա, որի զորամասի հետ դեպի Վան նրա անհանջի ճանապարհին առնչվել էր Անդրանիկի ջոկատը 1914—1916-ին: Գավառում վստում էին թուրքական Եմիաթներն ու ռազմական գործակալները:

Նախիջեանն իր գավառով Ռուսաստանի հովանավորությանը հանձնելու անդրանիկյան կոչը հոչակվեց փաստորեն հենց այն պահին, երբ տեղի ողջ մահմեդական բնակչությունը, եւ ոչ միայն նրանք, իհարկե, թուրքական զորքերի գավառ մտնելու օրերն ու ժամերն էին հաշվում: Ուրիշ ոչ մի դիմադիր ուժ չկար, չէր էլ պատրաստվում այդպիսին լինելու, բացի տեղի ճարահատյալ հայ բնակչության վերահավալից, եթե չլիներ Անդրանիկը: Այնպես որ մահմեդականներն իրենց արդեն եկող թուրքերի հպատակ էին գգում, իսկ եկող թուրքերը՝ ճախիջեանյան ցեղակիցների հետ ուր որ է՝ գավառի գիրկընդխառն տիրակալ:

Երբ թուրքերը մոտենում են Նախիջեանի մատուցներին, Անդրա-նիկի բանակի առանձին զորամասեր նրանց դիմաց ճակատ են կազմում տարբեր հատվածներում: Հարվածի մեծ բաժին է իր վրա վերցնում 1-ին գումարտակը՝ Սմբատ Բորոյանի հրամանատարու-

թյամբ: Սա թշնամու աջ թեւում էր: Նույն ուղղության վրա, Անրատյալ
նաեւ քաղաքը, պաշտպանական մարտեր էր մղում գումարտակնե-
րից երկրորդը՝ գնդապետ Տեր-Սիմոնյանի հրամանատարությամբ:
Նրան լրացնում էին տեղացի երիտասարդներից կազմված խմբերը:
Այնտեղ, ուր դիմադրության ձախ թեւն էր, թշնամու ուժեղ լինելը
ավելի վաղ է սքարզ դառնում: Եվ արագ ծայր է առնում հայ տղ-
դաների խուճապը:

Կոիվը հապճեպ չի եղել, այլ տեսական: Նկատելով խուճապը,
Անդրանիկը նրանց գորավիզ է ուղարկում երրորդ գումարտակը:
Վիճակն ամրապնդվում է: Միացյալ այդ ուժերը հարձակվողներին
ես են մղում քաղաքից դուրս մինչև Յարրմշա գյուղը եւ դեռ այդ
հեռավորությունից էլ հրանոթային կրակի տակ պահում քաղաքի
թուրքական թաղամասը:

Դիմադրությունը եւ ամենափոքր իսկ հաջողությունը ստացվում
էին ուժերի գերաբնութան վիճակում, վերջին ճիգերը գործարդելու
գնով: Ուժերի հարաբերությունը, որն սկզբից էլ հոգնու թշնամու
էր, ակնհայտ է դառնում, երբ Ջուլֆայի կամուրջն անցած թուրքա-
կան լրացուցիչ ուժեր են մարտի մեջ մտնում: Սմբատի գումարտակը
այնու անկարող էր դիրքերում մնալ: Նահանջելով, նա իր զինվոր-
ների հետ պատուպարվում է մոտակա բարձունքի վրա ծվարած
Ղազանչի հայկական գյուղում: Եվ նրանք էլ հաջորդ օրը, ամսի
19-ին, առավոտյան վերից կարող էին տեսնել, թե ինչպես ետ են
քաշվում նաեւ հայկական մյուս զորամասերը՝ Նախիջեւան քաղաքը,
հնադարից հայաբնակ Նախճավանը, լիովին թողնելով թուրքերի
տնօրինությանը: Ամեն մեկն իր ուժերի եւ ակնկալությունների չափ
էր վշտանում: Չորավարի վիշտը պետք է որ բոլորից մեծ լիներ: Այդ-
պես էր Անդրանիկի համար, այն էլ էրզրումյան ողբերգությունից
հետո: Կովելու կամքն անկոտրում էր, մահից վախը՝ բացակա: Չանգ-
վածն էր պակաս: Պակաս էր նաեւ շատ թե քիչ եղածի միաբանու-
թյունը: Էրզրումյան անհաջողության պատճառը դավաճանությունը
համարվեց: Նախիջեւանյանի պատճառը ո՞րը պետք էր համարել:
Համենայն դեպս այն նույնպես որոշ իմաստով պարտություն չէր, կամ
լինելով պարտություն, գերազանցապես անհաջողություն էր: Հաղ-
թողն ու հաղթվողը որոշելը թվաքանակի քիչ թե շատ համամասնու-
թյուն էլ է պահանջում:

Հուլիսի 20-ի առավոտյան Անդրանիկը դուրս եկավ Նախիջեւանից
տեսանելի Գզնուտ գյուղից: Այդտեղից էր նա կոիվներին ընթացք

տալիս: Միացյալ նահանջողներին, գնաց մի ճանապարհով, որով
չարունակվեց վերջին դարձը Ջուլֆայի կամուրջով՝

Ըստ կոիվներից մասնակիցների անտիպ հուշերի: Տե՛ս Ն. Պ. Դովլաթյան, ն.
տ., գ. 18: (Արժեքավորելով արիսիվների հուշագրական անտիպ նյութերը, պարտք
ենք համարում, ի հիշատակ, նշել հեղինակների անունները Ն. Վ.): Նաեւ՝ Ն. Ս.
Դավթյանի, Գրիգորյանի, Ե. Ս. Հովհաննիսյանի, Հ. Մ. Վարդանյանի, Լ. Մ. Պետ-
րոսյանի խմբային հուշեր, Գ. տ., գ. 32:
2 Ն. Պ. Դովլաթյան, Ականատեսի հուշերը, Գ. տ., ք. 370, ց. 2, գ. 31: 3 «Կավ-
կասկոյե սլովո», №269, 12-12. 1918 թ.:

1 Ըստ կոիվներից մասնակիցների անտիպ հուշերի: Տե՛ս Ն. Պ. Դովլաթյան, ն.
տ., գ. 18: (Արժեքավորելով արիսիվների հուշագրական անտիպ նյութերը, պարտք
ենք համարում, ի հիշատակ, նշել հեղինակների անունները Ն. Վ.): Նաեւ՝ Ն. Ս.
Դավթյանի, Գրիգորյանի, Ե. Ս. Հովհաննիսյանի, Հ. Մ. Վարդանյանի, Լ. Մ. Պետ-
րոսյանի խմբային հուշեր, Գ. տ., գ. 32:
2 Ն. Պ. Դովլաթյան, Ականատեսի հուշերը, Գ. տ., ք. 370, ց. 2, գ. 31: 3 «Կավ-
կասկոյե սլովո», №269, 12-12. 1918 թ.:

Բ Մուտքը Կապան եւ Գորիս

Ահա թե ինչո՞ւ էր անապարտւմ, հոգնած, գերհոգնած զինվորներին առաջ տանում եւ ինքն էլ անպայման առջեւից գնում:

Դեռ լավ է, որ Նոր Բայազետից հետո իրենից առաջ անցնելու համար Ռոբերտ Մակաուսիւն ուրիշ ձեռով չվիրավորեց, այլ Կիտորի միջոցով զոռուացրեց: Առանց այն էլ քիչ չէին եղել թե շտապելու եւ թե շտապողականության համար դժկամների, եւ ոչ միայն դժկամների, չարախոսություններն ու տեղին դիտողությունները: Գուցե Նախիջեանում էլ շտապե՞ց, գալառը ռուսաստանյան հոշակելով: Ժամանակն էր արագ, դեպքերն էին հապճեալ: Անդրանիկը նույնն էր: Վճռողը ուժն էր, այլ ոչ տրամաբանությունը, այն, որն ընկած էր Անդրանիկի գործունեության հիմքում: Բայալում էին ուժն ու արդարությունը, եւ հաղթում էր անարդարությունը, որը հենց ինքը ուժն էր: Անդրանիկը պողպատյա դարպասների դեմ էր մարտնչում, իսկ մյուսները հենց այդ դարպասներն էին կոում: Թվում է, թե երկուսի գործն էլ վերջին հաշվով դարպասների հետ էր: Թվում է:

Այլեւս հուլիսի 20-ին թողնելով Նախիջեան քաղաքն ու գալառը, Անդրանիկն ուղեւորվում է դեպի արեւելք, որը նրան հայոց լեռնաշխարհի՝ ուրիշների կողմից Ղափան հորշորջված Կապան քաղաքն էր տանելու:

Կապանը հնուց ի վեր իր ընդերքի պղնձահանքերը մշակող բանվորություն ունեցող բնակավայր էր, մերձակայքի մի քանի գյուղերի կենտրոն: Նախիջեանից քերող ճանապարհին զորքը առաջինը մտել է Ծաքտին գյուղը: Բնակիչները աղ ու հացով են դիմավորել: Նույն օրը հասել են Քաջարան հանքավայրը, որտեղ զինվորները շոգ օրվա գիշերը անց են կացրել բացօթյա: Առավոտյան վաղ, վկայում է զինվորն իր հուշերում, եկել հարգանքով զորավարին դիմավորել են մյուս «աղբերջանական գյուղերի ներկայացուցիչները»¹: Բյաթլանդամիշյար գյուղում ցանկացել են պատվելու համար անասուն մորթել: Անդրանիկը չի թողել. «Ձեր աղ ու հացը ինձ բավական է»²: Այս փոխադարձ հարգանքը ազդեցիկ է լինում: Երբ Անդրանիկը հասնում է Կապան, նրան տեղի եւ շրջակա գյուղերի աղբերջանական բնակիչների կողմից իր տուն հյուրասիրության է կանչում բանվոր Մահլամ Ջալալ օղլի Հուսեյնովը:

Չորքը գաղթականների մեծ բազմության հետ ավելի քան տասը

¹ Եանջալի Գյաջալի օղլի Մամեդովը Անդրանիկի մասին, տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 89, թթ. 4—5: ² Հուսեյն Նարաջ Հուսի օղլու վկայությունը, ց. տ., թ. 7:

օր ճանապարհ էր գալիս՝ գիշերները կանգառներով, ցերեկները՝ ոտքի վրա եւ ընթացքում: Բոլորը չէ, որ ձի կամ ֆուրգոն ունեին: Օգոստոսի 2-ին Կապանից դուրս են եկել եւ քարքարոտ, քարձրաքերձ լեռներով ու խորխորատ ձորերով ուղեւորվել դեպի Գորիս: Ծանապարհին գյուղերում կանգ էին առնում: Ընդառաջ էին գալիս թե հայ, թե աղբերջանցի: Ծատ տեղերում, երբ երթը կանգ էր առնում*, բացվում էր իսկական սեւ շուկան, տեղացիք պարեմամբերք էին վաճառում, փոխարենը էժան գնով ձեռք բերելով նախիջեանցիների ե՛ւ ոսկին, ե՛ւ թղթադրամը, ե՛ւ տնային կահ-կարասիքն ու հագուստեղենը, որ նահանջի վերջին պահին նրանք վերցրել էին իրենց հետ: Ջինվորներն էլ անտարբեր չէին ու սուկ ականատես: Գյուղացիների մեջ քիչ չէին մարդիկ, որոնք քարձր գին տալով գայթակղեցնում էին նրանց եւ փամփուշտ կորզում:

Օգոստոսի 3-ին զորքն ու գաղթականների քոչը հասնում են Գորիս, քաղաքի ղեկավարությունն ու բնակչությունը գալիս են ընդառաջ եւ ծափերով դիմավորում հեծյալ զորավարին: Գորիսի բնակելի տները, դպրոցներն ու այլեւայլ շենքերը լեփլեցուն բնակեցվում են, քարավանի լիովին տեղ հասնելուն զուգընթաց լցվում են նաեւ սյգիներն ու բնակելի դառնում հարմարավետ քարայրերը: Համալրող մարդկանց եկած իսկ օրից քաղաքը վերածվում է յուրատեսակ շուկայի, որտեղ զինվորներն ու գաղթականներն էին շրջապատվում հետաքրքրասեր քաղաքացիներով եւ իրենց գալառը հյուր եկածներին տեսակցության եկող գյուղացիներով:

Սկզբում տարերային էր ամեն ինչ: Ով դժգոհ էր իր նոր կացարանից, հիշում էր, որ հեռու Երեւանում, Գանձակում, թե սարերի այն կողմը՝ Արցախի կենտրոնական Ծուշի քաղաքում բարեկամ կամ ծանոթ ընտանիք ունի, հիշում էր, որ այդտեղից կարելի է, համենայն դեպս ոչ ավելի դժվար, քան Նախիջեանից մինչեւ Գորիս, գնալ ավելի հեռու՝ Բաքու եւ Թիֆլիս քաղաքները եւ, քանի ուշ չէ, այնտեղ հանգրվանել եւ որոնել իր բախտի նոր ճանապարհը¹:

Սեւանում ունեցած հրապարակային խոսքում, հետագա օրերի գրույցների ժամանակ, Ջուլֆա հասնելով եւ կամրջից անց ու դարձով հասկանալի դարձրեց, որ խնդիրը զորքը պահելն է եւ հայրենի Վանին ու հայրենակիցներին օգնության հասնելը: Իսկ հիմա, երբ այդ միտքը չէր իրականացել, ձախողվել էր, նոր հարց էր ծագում՝

* Օրագրողի եւ օրվա փաստաթղթերի տարբերվելը չեն համընկնում:

¹ «...հարուժող կորամարը», էջ 73—86:

ինչո՞ւ հիմա էլ որոշեց գալ Զանգեզուր, այլ ոչ թե գնալ Երևան, աշխատել կառավարության հետ եւ այնտեղ էլ որոշել իր տեղն ու դերը: Միանգամից պատասխանեցք. որովհետեւ կար սկզբնապատճառը: Զեր կարող Երևան գալ առանց իր գործը ցրելու, չէր կարող առանց գործը ցրելու հարաբերության մեջ մտնել կառավարության հետ: Դարձյալ կառավարության հետ նրա ամեն մի առնչություն պիտի նույն հարցը հարուցեր՝ իսկ գործը՞, ինչո՞ւ չի ցրում: Զանգեզուրցիք միամիտ չէին, հարցերը գիտեին, ուզում էին իմանալ պատասխանը, բայց իմանալ Անդրանիկից, որն այլեւս իրենց հողում էր: Ժամն էր, որ նա պատասխաներ, պատասխաներ ոչ միայն պարզ ու հստակ, այլեւ ի լուր ամենքի, հրապարակորեն, հիմնավորապես: Եվ նա դա արել է գրավոր, տպագիր թերթիկի ձեռով, որի տակ գրված է գեներալ-մայորի իր կոչումը, անունն ու տարեթիվը՝ «1918 թ., հուլիսի 30, Գորիս»¹: Իսկ վերնագրով հասցեագրել է. «Հայկական առանձին հարվածային ատրյադի սպայակույտին եւ զինվորներին»: Պահպանվել է գորամասի զինվորական խորհրդի նույն օրվա նիստի հապճեպ գրված արձանագրությունը. «Ասխազահ՝ գեներալ-մայոր Անդրանիկ, ներկայությամբ Սմբատի, Արտուշի, Բոնապարտյանի...»: Մնացյալի իմաստը հրապարակված թերթիկի պարունակությունն է՝

Սկզբում դարձյալ նույնն է հայտնում՝ «Երևանի հայկական հանրապետության քաղաքական, ռազմական եւ տնտեսական հանգամանքները» իրենց, այսինքն գործի, համար աննպաստ են: Այսպե՛ս կենթված հաշտության պայմանագրով պետք է հայկական կառավարությունն ունենա մեկ դիվիզիա գործից ոչ ավել», ըստ որի «թուրքական զինվորական իշխանության պահանջմամբ զինաթափ պիտի արվի ամբողջ ատրյադը», որը հրապարակման մեջ անվանվում է «Տաճկահայ առանձնահատուկ գորամաս»: Վերջինիս պահպանելը թուրքերը պետք է պայմանագրի կրկնակի խախտում համարեին: Նախ՝ նրանով կգերազանցվեր պայմանագրով թույլատրելի գործի թվաքանակը, եւ, անկասի դրանից, այն մինչեւ իսկ արեւելահայկական գորամաս չէ, այլ Արեւմտյան Հայաստանի, որպիսին Թուրքիայի կողմից ոչ մի անգամ էլ չէր ճանաչված որպես իրավական միավոր, էլ ուր մնաց նրա անվամբ կամ իբր նրան պատկանող գործի գոյությունը թույլատրվեր: Նշանակում է, ասվում էր փաստաթղթում, խոնարհվելու, զինաթափ լինելու դեպքում վտանգվելու է թե իր

հովանավորության տակ ծվարած արեւմտահայ գաղթականության, թե գորամասի զինվորների կյանքը:

Այսքանով, թերթիկի առաջին մասով, պարզվեց, որ անհնար է գորամասը ցրելը, համեմայն դեպս նա այդ քայլին չի դիմի:

Այս մի պատճառաբանություն, որը փաստացի էր:

Կար նաեւ մեկ ուրիշը, որը դարձյալ փաստացի էր, բայց միաժամանակ զգայական ու, այսպես ասած, փիլիսոփայական. ծայր արեւելքում գտնվող Զանգեզուրը, իր տեղում մնալով, նրա համար արեւմուտք էր դարձել՝ արեւելքում գտնվող մի նոր Արեւմտյան Հայաստան: Ոչ-աշխարհագրական, բայց լիովին տրամաբանական այդ ճշմարտությունը, որպես բացառիկ դեպք պատմության մեջ, կերտել էր նա, ով թելադրել էր հունիսի 4-ի պայմանագիրը: Ռոտվիտեւեւ այդ նա-ն Տաճկաստանն էր ու Տաճկահայաստան կերտողը կամ Թուրքիան ու Թուրքահայաստան ձեռողը: Նրա թելադրած հունիսի 4-ի պայմանագրից դուրս էր մնացել Զանգեզուրը, այն ոչ միայն զրկված էր Հայաստանից անբաժան մնալու, նրանը լինելու իրավունքից, այլ մինչեւ իսկ չէր էլ ասված, թե ում է պատկանելու: Այսինքն, գրավորով նույն այն բախտին ու վիճակին էր արժանացվել, ինչ-որ Արեւմտյան Հայաստանը. Արեւմտյան Հայաստանը չէր հիշատակվել, որովհետեւ թուրքական տարածք էր ու սեփականություն, Զանգեզուրը՝ որովհետեւ նրան էլ տիրակալելու հավակնորդ կար, ի դեմս Տաճկաստանի հետ նույնարմատ, նույնակրոն Ադրբեյջանի: Եթե հայ ժողովրդի, նրա հանրապետության եւ կառավարության համար Զանգեզուրը անբաժան Հայաստան էր, Թուրքիայի համար այն այլեւս Հայաստան չէր: Իսկ եթե նրա ստորագրած պայմանագրով դեռ Հայաստանում պիտի սահմանվածից ավելի գործ չլիներ, ինչու պետք է ոչ-Հայաստան Զանգեզուրում, ի՞նչ-ի՞նչ, հայկական գորաքանակ լիներ: Ահա գաղտնիքը, թե ինչու էր Անդրանիկը Ջուլֆայի կամիջով ետ դառնալով ուղղությունը Զանգեզուրը դարձնում: Նրա համար բոլորովին ոչ-նույնիմաստ երկու տարբեր կողմերը ընդհանրական իմաստ էին ձեռք բերում: Չհնվորն ու գորավարը մնում էր իր պատանեկան օրերի տարերքի մեջ: Նրա արարքը փիլիսոփայական որակ էր ձեռք բերում. ոչ թե ինչքան էր կարողանում, այլ ինչ էր անում: Ամենամեծ չարիքը կարող է ամենափոքր բարիքից լավ լինել: Ինչ է թե մեծ է: Անդրանիկը չէր կարող չգալուանալ, որ, ցավոք սրտի, մեծ գորավարի հոշակ հանածներից շատերը, եթե ոչ բոլորը, մեծամեծ կոտորածների հեղինակներ են:

¹ Հին տոմարով է: Ն. տ., էջ 85—87, նաեւ՝ ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 370, ց. 1, գ. 13.
² Ն. տ., ց. 1, գ. 11, թ. 15.

Զանգեզուր մտնելու օրից մինչևի դուրս գալը Անդրանիկը նոր շունչ տվեց տեղի ժողովրդական ինքնիշխանությանը եւ ինքն էլ իրենով բոլորի կողմից ընդունելիորեն իմաստավորեց այն, ինչն ազանգեզուրցին երբեք չէր կասկածել:

Իսկ այժմ փաստաթղթի լեզվով:

1918-ի օգոստոսի 18-ին հրապարակվում է Գորիսում, Սիսիանում, Կապանում տարածվում է «Զանգեզուրի հայ ժողովուրդ» ազդարար թերթիկը՝ ի յուր եւ ի պարտավորեցում բոլոր զանգեզուրցիների: Ակավում էր նրանով, որ Հայաստան Հանրապետության կազմում «չեն մտնում պատմական Սյունիքը (Զանգեզուրը) եւ Արցախը (Ղարաբաղը)»: Զուգահեռ է անցկացվում, ինչպես մի ժամանակ Բուլղարիան առանց Մակեդոնիայի, Տրանսիան առանց Էդրաս-Լոթարինգիայի: Հայտնվում է, որ Արցախի հայությունը վճռակաճորեն դեմ է արտահայտվել թուրքերի օժանդակությունն ստացող թաթարներին (ազերներին) հպատակվելուն: Զանգեզուրն էլ, անտարակույս է, որ բռնելու է զինված կռվի ճանապարհը¹:

Չորս օր հետո Զանգեզուրը հռչակվել է պաշարողական դրության մեջ: Տեղական «Թուշու» գնդի հրամանատար Մելիք-Ծահնագարյանը հաստատվել է ռազմական դիկտատոր²:

Զանգեզուրցու համար ազդարարը առջետում երկու ճանապարհ էր տեսնում՝ զինաթափում կամ մահու եւ կենաց կռիվ: Առաջինը կտրուկ մերժում էր, երկրորդին՝ ընդառաջ գնում: Գործի կոչ էր՝ զինվել եւ ստեղծել զինված խմբեր, «հավատալ, որ դա է փրկության միակ ճանապարհը»:

Հարեւան Սիսիանն արդեն վճռել էր մարտնչել: Ամսի 21-ին, Անգեղակոթից, որը Անդրանիկի նստավայրն էր, արձակվել էր նրա զորավարական հրամանը մնացյալ վայրերի ազգային խորհուրդներին եւ բնակչությանը. «Թուրքական հրամանատարությունը առաջարկում է զինաթափվել: Հրամայում են՝ անհապաղ զորակոչ հայտարարել, լեռներում մի քանի վաշտերով դիրքեր գրավել եւ անցնել դիմադրության»³:

Ի՞նչ էր մնում անել զորամասին: Որպես պատասխան նա թելադրում է իր հինգ առաջարկները:

Նախ՝ զինաթափ չլինել եւ Հայաստան Հանրապետության սահմաններից ներս չմտնել: Ըստ որում հենց նույն տեղում կա մի պայմանավորվածություն: Ենթադրվում էր, որ պատերազմն ավարտված

հռչակվելուց հետո, հաղթող տերությունները կնստեն կյոր սեղանի շուրջը եւ արդարացիորեն կքննարկեն աշխարհի վիճելի հարցերը, որոնց թվում է հայկականը: Ուստի Անդրանիկը թույլատրելի է համարում, որ այդ հարցերը թողնվեն հետագային եւ լուծվեն ըստ այն բանի, թե ինչպիսին կլինեն «Եվրոպական եւ Հայկական պետությանց զարանտիաները»: Սա նշանակում է, որ Հայաստան Հանրապետության սահմանները չմտնելու վճիռը տվյալ պահով ու հանգամանքներով էր պայմանավորված, այլ ոչ թե սկզբունք էր ու մշտընջենական: Ինչ վերաբերում է թուրքական պետության ստորացնող եւ ստրկացնող կամքին, ապա նա դրան դեմ էր սկզբունքորեն եւ անկախ ժամանակից ու հանգամանքներից:

Հռչակելով այդպես, համենայն դեպս թերթիկը գրված էր մարդկանց սեփական կարծիքի նկատմամբ հարգանքի, այլ կերպ ասած, դեմոկրատական ոգով: Նրանում ասվում էր, որ այն զինվորները, որոնք «իրենց ֆիզիկական ապահովությունը» կգտնեն կոնկրետորեն Երեսանի նահանգում կամ «ինչ-ինչ պատճառներով չեն ուզում շարունակել իրենց զինվորական ծառայությունը» իր զորամասի կազմում, «կարող են հեռանալ» նրանից: Համոզմունքի հարց էր, նրա պատկանահարմարության եւ հեռանկարի հարց: Զինվորները կարող էին ծանր ու թեթեւ անել: Եվ շատերն այդպես էլ վարվել են. Նախիջեւանից դուրս գալու պահին եւ դուրս գալուց հետո, ճանապարհին, իրենք են որոշել իրենց ուր գնալը: Հիմա՛, դեռ Գորիսում եւ այնտեղից դուրս գալուց հետո, որը, ինչպես կտեսնենք, մոտակա շաքաթների հարց էր, ավելի շատ եղան «ուր գնալ» հարցի ինքնուրույն լուծողներ, ըստ որում՝ թե՛ զինվորներից, թե՛ զաղթականներից: Եվ գործի թիվը, ավելի ճիշտ նրա հին կազմում եղածների, հին զինվորների ու սպաների թիվը առաջիկայում լրջորեն նվազելու էր: Դրանից Անդրանիկը չէր վհատվում, չէր հիասթափվում, թող մարդիկ իրենց կամքով որոշեն, թող տղաները դառնան իրենց տները, օր առաջ ընտանիք կազմեն, երկրին ու հանրապետությանը զորավիզ կանգնեն անմիջականորեն: Իսկ ինքը եւ իր հետ մնալ ցանկացող զինվորները առայժմ հողի այս հատվածում կմնան որպես պահապան, սա էլ Հայաստան է ու հայրենիք, ոչ խորթ է, ոչ էլ օտար:

Որեմն, մնացողներին էլ գործ կար: Զանգեզուրը վտանգից զերծ չէր: Նա հարձակման ենթակա էր, նրա վրա թշնամու աչք կար: Առնվազն մի զորամաս պետք էր, որ մայրաքաղաքի անբաժան այդ հատվածին ապավեն լիներ: Փաստ է, որ Անդրանիկի Զանգեզուրում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում հանրապետության կառավար-

1 Ն. տ., ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 5, 2 Տե՛ս հայտարարության թերթիկը, Գ. տ., թ. 16, 3 Ն. տ., ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 14:

րությունն այնտեղ ոչ միայն մի գործնաս, այլ մի զինվոր անգամ չի ուղարկել՝ ի պաշտպանություն: Այդ խնդիրը լուծել են տեղական ազգային պահպանության գործիչներն իրենց ջանքերով եւ Անդրանիկի հետ սերտ համագործակցությամբ, ի դեմս նրա ունենալով իրենց ռազմական հրամանատարին:

Գնացողները կզնան, իսկ մնացողները պետք է ենթարկվեն «զինվորական խիստ դիսցիպլինի, կատարելով ամեն մի զինվորական հրաման սրբությամբ», այս էր ազդարարում անդրանիկյան հրապարակագիրն իր երրորդ կետում:

Չորրորդ կետը իր ժամանակին մի «գաղտնիք» է հայտնել ի լուր ամենքի, որը, հավանաբար չնկատվելով, տարիներ ի վեր մնացել է որպես Անդրանիկի անձի ու գործի գնահատման համար աննպաստ մի ատեղծված: Անդրանիկը Երեւան մտնելուց, Հայաստան Հանրապետության՝ դրոշի տակ կանգնելուց չի հրաժարվել, այլ հայության կենսագոյության համար անհրաժեշտ իր գործնասի թուրքական արգելքի դեմ է ընթուստացել: Կարո՞ղ էր, որ Հայաստանն ու նրա կառավարությունը հաճելի չլինեին նրա համար: Բոլորովին ուրիշ բան էր նրա գործիչներից մեկից ու մյուսից իր գոհ ու դժգոհ լինելը: Նա պատրաստ էր ենթարկվելու նրանց կամքին, եթե ցանկալի էր աշխիթը լիներ: Երբ եվրոպական պետությունները երաշխիք կտան, հռչակում էր նա. «այդ դեպքում միայն կարող եմ շարժվել ինձ ցույց տված վայրը, ուր ապահովված կը լինի թրքահայ գաղթականության եւ գործնասերու ֆիզիկական եւ բարոյական գոյությունը»: Ասել է թե՛ հակառակ դեպքում իմաստ ունի՝ ստրկացնողի կամքին հնազանդ լինելու համար ցրել իր գործը: Այդ միտքը բոլորից հաջող ու հստակ արտահայտել է ինքը՝ Անդրանիկը, որպես նույն հրապարակագրի վերջին եւ եզրափակիչ կետ.

«Այս պայմանները չընդունելու դեպքում հարկադրված եմ հանուն թրքահայ վերջին մնացած քեկոր գաղթականության եւ գործնասերու ֆիզիկական եւ բարոյական ապահովության, զենքը վար չը դնել մինչեւ վերջին շունչ»:

Առաջին օրերին անկազմակերպ էր թե զինվորական, թե քաղաքացիական գաղթականական զանգվածը: Բայց կարելորդ ու յուրատեսակը, որ կարող էին ուրախացնել Անդրանիկին, այն էր, որ գործիչներին նա զինված տեսավ, մարտականորեն տրամադրված եւ ամեն մի հարձակման դեմ պատրաստ: Մուսավաթականները Գորիսի բնակչությանը զինաթափելու առաջարկ էին արել: Եվ սպանուցել էին, հակառակ դեպքում, քաղաքը «հողին հավասարեցնել»: Գորիսե-

ցիք այս հոխորտանքին նշանակություն չէին տվել: Գավառի ադրբեջանական գյուղերում թրեւ եկող ադրբեջանական եւ թուրքական գործակալները հայության դեմ շարունակում են ուժեր գումարել, զինել ադրբեջանական գյուղացիներին եւ ազգամիջյան ընդհարումներ հրահրել: Հարձակվում էին հայկական գյուղերի վրա, արտոսվայրերից նրանց անասուններն էին քշում-տանում իրենց կողմը, բնակչությանը մշտապես պահելով անհանգիստ վիճակի մեջ:

Խաղաղեցնելու համար Անդրանիկը վերաբաշխում է տեղի մարտական ուժերը: Նա դրանք բաժանում է ըստ առանձին տեղամասերի, ամեն տեղ նշանակելով գործի համար պատասխանատու հրամանատարներ: Մի քանի գյուղեր, ինչպես Խնձորեսկը, Տեղը, Խանաժախը դարձան պաշտպանական հենակետեր, իսկ գլխավոր մարտական ուժերը կենտրոնացվեցին Գորիսում: Պետք էր հետեւել նաեւ, որ գյուղացիք դաշտային աշխատանքները առաջ տանեին՝:

Անդրանիկի ու գործի քաղաք մտնելու հաջորդ օրը գեներալին ընդառաջ է եկել Չանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի նախագահը, բժիշկ Մ. Պարոնյանը: Նրա ձեռքին պաշտոնական փաստաթուղթ կար, որում ասվում էր, որ շրջանը պատրաստական է պահելու գործնասը 1000—1500 հոգու կազմով: Եվ դա էլ այն դեպքում միայն, եթե գաղթականության հոգսերից ազատ լինեն: 1000—1500 հոգին պետք է բաշխվեին շրջանի գյուղերում՝ փոխադարձ համաձայնությամբ՝:

Աշուն էր, սպա եւ ձմեռը: Ծագում էր գործին սնելու հարցը: Գորիսն էլ առհասարակ աչքի չէր ընկնում պարենամթերքի առատությամբ: Քաղաքը գյուղատնտեսական մթերքների հիմնականում սպառող էր, բայց ոչ արտադրող: Այնուամենայնիվ քաղաքի բնակչությունը սիրով ընդունեց գորավարին, նրա գործին ու գաղթականությանը, եւ առաջին օրերին օթեւանեց եւ պարենով ապահովեց նորեկ բազմահազար զանգվածին: Պատասխանատու անձինք հեռատեսություն ցուցաբերելով, մտահոգվում են վաղվա մասին՝: Պակասում էին կտթն ու մածուցը, հացը մնում էր ոչ այնքան պանրի, որքան կարտոֆիլի հույսին: Օրագրողը գորիսյան օրերի ասացվածք դարձածն է հիշում. «Առավոտ՝ փաթաթես, կեսօրին՝ գետնախնձոր, երեկոյան՝ կարտոֆիլ»: Բոլորն էլ նույնն են:

Նախորդ գրությունից մեկ շաբաթ անց՝ օգոստոսի 10-ին, բժիշկ Պարոնյանը գործնասի ռազմական շտաբին հղել է Չանգեզուրի 1 Ն. տ., ֆ. 370, ց. 2, գ. 5: Գ. Ա. Բաղդասարյան, Հուլիս Անդրանիկի մասին: 2 Ն. տ., ց. 1, գ. 33, թ. 4: 3 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30: 4 «...հարուստող պորմասը», էջ 89:

Կենտրոնական ազգային խորհրդի պաշտոնական գրությունը. առաջին մեզ հաջողվել է մի շարք գյուղերից ցորեն ստանալ եւ կերակրել զորամասը, «հետ այսու մենք անկարող ենք»: Պետք էր դիմել մնացած գյուղերին, բայց նրանց ուներին էլ գաղթականության հոգան էր: Նախագահը հայտնում է պարզ ու որոշ. «այսուհետեւ մեր բոլոր միջոցները սպառված են եւ ոչ մի հնարավորություն չունենք...»¹: Երկու օր հետո նախագահը, ի լրացումն Սմբատին հղած գրության, հայտնում էր, որ Ազգային խորհուրդը զորամասին կարող է տալ ընդամենը 60 փութ հաց, այն էլ ճանապարհի համար. «Մեր միջոցները միանգամայն սպառված են»²: Նույն օրը Սմբատը գրում է. «Գեներալ Անդրանիկին: Դրկում եմ նույնությամբ Ջանգեզուրի ազգային խորհուրդի գրությունը, որ ուղղված է ինձ»:

Այդ ընթացքում Հին Գորիսի գյուղացիք նամակ են հղել «Գերագույն գեներալին»: Գյուղն ունի ընդամենը 200 ծովա: Պարենով իրեն կարող է ապահովել ընդամենը 30 ծովա: Ծխերից ամեն մեկում բաժանված են Անդրանիկի զինվորները՝ «ումանց 3 հոգի, ումանց 4—5, մինչեւ անգամ 6 հոգի»: Մի փոքրիկ գյուղը անկարող է «միայնակ յուր ուների վրա տանել այդ ծանրությունը»: Ստացվում էր, որ այլեւս ժողովրդից մի կտոր հաց անգամ չէր կարելի վերցնել: Նույնն էր հայտնվում նաեւ Ուզ գյուղի հասարակության 85 ներկայացուցիչների նամակով՝ գյուղի բերքը սակավ է, հաքու աշխատանքի գնացած երիտասարդներն էլ առաջվա պես չեն օգնում, «խնդրում ենք Ձեր վեհափառ մեծությանը՝ գթացող լինեք, որ մենք չենք կարողանում հատուցանել Ձեր պահանջած 140 փութ ցորենը եւ 10 փութ գարին»: Կուզենային, սրտանց կուզենային հատուցել, բայց այդպիսին էր բախտի քմահաճույքին մնացած գյուղի հնարավորությունը³:

Ի վերջո նպատակահարմար է գտնվում, որ զորքը գաղթականության հետ միասին հանգրվանի նահանգի գյուղատնտեսական տեսակետից ավելի նպաստավոր Միսիան մեծ գյուղում: Օգոստոսի 27-ին Գորիսի բնակչությունը հրապարակում եւ քաղաքի փողոցներում հիացմունքով վերստին դիտում էր իր զորավարին եւ նրա զինվորներին, օգնում էր, որ գաղթականությունն իր քոչը հավաքի, իրերը կապի եւ երեխաներին ուսն առնի: Չար բախտի պարզեամբ տառապանքն էր: Ծանապարհվում են զինվորները զենքի վրա հույս դրած, անզեն գաղթականները՝ Անդրանիկի իմաստնությամբ: Որովհետեւ գիտեին, որ Գորիսից Միսիան ճանապարհին նորից աղբրեջանական

գյուղեր կային, որոնց միջով չանցնելու դեպքում սարերն ի վեր պետք էր բարձրանալ, որը ոչ միայն հեշտ չէր, այլ պարզապես անհնար էր նման երթի համար: Ամբարիշտ էին ու հանդուգն Աղուդի եւ Վաղուդի կողք կողքի գյուղերը: Արդեն հայտնի էր քանի դեպք, երբ փակել էին նրանք ճանապարհը մինչեւ իսկ անզեն հայերի առաջ եւ կրակ բացել նրանց վրա: Նրանք առավել հարձակողական էին դառնում, երբ լսում էին, որ ոչ միայն հայերն են ուզում անցնել, այլեւ հայ զինվորները ու մանավանդ զենք փոխադրողները: Բայց այս անգամ ուրիշ են եղել հանգամանքները: Բոլորովին վերջերս այդ գյուղերի զինված ուժերը փորձել էին փակել Միսիանի միջով Գորիս եկող հայ հրետանավորների ճամփան, բայց հանդիպելով նրանց հրետանու կրակին, փախել, բարձրացել, պատասպարվել էին լեռներում:

Այնուամենայնիվ, լիակատար ապահովության նկատառումներով, Անդրանիկը ճանապարհ ընկնելուց առաջ մարդ է ուղարկում Միսիանի շրջանի մահմեդական գլխավորների մոտ, ավելորդ բարդություններ չստեղծելու խորհրդով: Միսիանցի հայերն էլ իրենց հերթին, իրենց ներկայացուցիչների միջոցով նրանց հավաստիացնում են, որ Անդրանիկի նպատակը խաղաղ անցումն է, միտք չունի արգելք ծառանալ: Անցնող զինվորներից մեկը հիշում է, որ աղբրեջանական գյուղերի գլխավորները համաձայնել են խաղաղ ճանապարհ տալ Անդրանիկին: Ստանալով այս պատասխանը, Անդրանիկն իր զինվորներին զգուշացնում է, որ ոչ մի կրակոց չլինի:

Հետո է միայն պարզվել, երբ ամեն ինչ եղել-սրծել էր, որ աղբրեջանցի ծերունիները համաձայնել են, բայց մարտական ուժերը այլ կարծիքի են եղել: Այնուամենայնիվ, գյուղերից առաջինին՝ Աղուդիին մոտենալուց առաջ Անդրանիկը հեծյալ զինվոր Ջատիկին ուղարկում է առաջ՝ մեկ անգամ եւս զգուշացնելու իրենց գալու մասին: Բայց ինչ, թաքատոցներում կանգնած ասկյարները ձիուց վայր են գլորում Ջատիկին եւ հայ զինվորների մոտենալուն պես նաեւ նրանց դեմ են կրակ բացում: Սկսվում է երկկողմանի հրաձգությունը: Աղուդեցիները հապճեպ նահանջում են դեպի Վաղուդի: Գյուղացիները խուճապի մատնված, լքում են տները եւ փախչում՝ ծեր թե մանուկ, կին թե տղամարդ: Հեծյալ ասկյարները, որոնք կովի պատճառ էին դարձել, իջնում են ձորը, փորձելով շրջանցել հայ զինվորներին եւ թիկունքից խփել նրանց: Բայց դա չի հաջողվում: Բնակիչներն իրերն ու երեխաները շարակներն առած փախչում էին, չնկատելով, որ իրենց կողմը այլեւս ոչ մի հրացանից կրակ չէր արձակ-

1 ՀՀ ԴԿԳԱ. ֆ. 370, ց. 1, գ. 18: 2 Ն. տ., գ. 28: 3 Ն. տ.:

վում: Խուճապն սկսվելու պահից Անդրանիկն էր հրամայել դադարեցնել կոիվը, անգնե մարդկանց զոհերի տեղիք չտալու համար:

Դեպքերի մասնակիցը հիշում է դասակի հրամանատար Սարգսի հետ կատարվածը: Գյուղերը մտնելիս նա արագ եւ շատ է առաջացել նահանջող բնակչության հետեից, որոնց լքել էին իրենց «պահապանները»: Մինչդեռ դրա՝ մեջ չի տեսել Անդրանիկը կոիվող հրամանատարի եւ զինվորի բաշտությունը: Մարտից հետո նա Սարգսին պաշտոնից զրկել է, իսկ հետագայի մի ուրիշ սխալի համար գնդակահարության դատապարտել¹: Ուզում էր ասել, թե կոիվ ժամին չպետք է մոտանալ, որ դեմդ ոչ միայն ապուսպսիդ ու քո, այլև որդուդ ու թոռանդ հարեանն է:

Գ Միսիանում

Մի դժվարությանը հաջորդում էր մյուսը: Միսիան գալու ճանապարհին գաղթականների ու զորքի մեջ կասկած է ընկնում: Ոմանք մտածում են, թե դժվար կլինի նաև Միսիանում այսքան մեծ զանգվածին ապաստան տալն ու սնելը, թուրքերը այստեղ էլ կարող են հարձակվել եւ իրենց նեղը օգել, ժամանակն է, որ ամեն մեկը գնա գտնի իր հարազատներին կամ ապրուստի ու աշխատանքի մնայուն մի տեղ... Մյուսներն էլ այն կարծիքին են եղել, թե Անդրանիկի զորքի այստեղ գտնվելու, չզինաթափվելու պատճառով թուրքերը կարող են նեղել Հանրապետությանը:

Ամեն մեկի համար գուցե թե յուրովի հիմնավոր էր իր պատճառաբանությունը: Սակայն Անդրանիկն իր պատճառով Հանրապետությանը թուրքերի նեղելու հիմքեր չէր տեսնում: Եթե պետք է Հայաստանի հետ կոիվ սկսեն, մտածում էր նա, առանց իրեն պատճառ բռնելու էլ կարող են: Թուրքերը միամիտ չէին, գիտեին, որ մի Անդրանիկն իրենց մեծ վտանգ չի կարող սպառնալ, թեև ինքն էլ լավ գիտեր, որ իրենց հաշիվների մեջ նրանք իրեն անտեսել չէին կարող:

Ինչ կերպ էլ մտածեր ու բացատրեր, գաղթականությունը ուրիշ ուղիներ էր որոնում: Զորքի մեջ էլ քիչ չէին թե զինվոր, թե սպա, որոնք մտածում էին թեթևացնել Անդրանիկի հոգսերը, առանց գործին վնաս բերելու: Եվ այդպես՝ թե՛ մինչև Միսիան մտնելը, թե՛ Միսիան մտնելուց հետո շատ թվով գաղթականներ գնում են տար-

բեր կողմեր, նույն ձեռով էլ զինվորներն ու սպաներն են իրենց գեների հետ կամ գեներ հանձնելով կամուրջի հետևում ծառայություն: Անդրանիկի բերանից այս պատմությունը գրի առնող օրագրողը Միսիանում մնացած զորքի թիվը այնտեղ եկած 4000-ից իջեցնում է մինչև 1300-ի, զգալիորեն կրճատելով նաև գաղթականների թիվը: Սա, հասկանալի է, եկածների՝ թվի նվազումն էր: Ընդհանուր առմամբ Ջանգեզուրում Անդրանիկի տրամադրության տակ եղած զորքի թիվը չի պակասել, ավելացել են տեղացի զինվորներ եւ մինչ իր գալը այնտեղ ձեռավորված զորամասեր, որոնք հայտնի էին Ծուշու (Ծուշինսկի), Գանձակի (Գանձակսկի) գնդեր անուններով¹: Այս վերջիններն, իհարկե, ոչ որպես իր զորամասի բաղկացուցիչ մաս²:

Միսիանի հայության գլխավորները պատրաստվում էին ընդունելու Անդրանիկին: Երբ առաջին պահին նրանք հավաստիացնում էին իրենց այդ պատրաստակամությունը, Անդրանիկը հարցը լուծված չի համարում: Հարմար է գտնում, որ Միսիանի եւ նրան հարող գյուղերի ներկայացուցիչները հավաքվեն եւ միասին միջոցներ մշակեն համատեղ կյանքի եւ գործունեության համար: Եվ ժողով է գումարվել: Մասնակցել են եւ արտահայտվել Ջանգեզուրի Կենտրոնական ազգային խորհրդի, Միսիանի եւ մյուս գյուղերի ներկայացուցիչները: Անդրանիկը ցանկացել է, որ տեղացիների կամքով լինի Միսիանում

1 «...հարուածող պորամար», էջ 95, 87, 90—91, 2 1919-ի հունվարի 17-ի տրվալով սիսիանաբան գաղթականների թիվը 13.899 է: Անդրանիկն իր ձեռքի տակ եղած միջոցներից նրանց եւ չորս որբերի բաժանել է 403 հապար 187 ուրբի: Լավանում բնակեցված գաղթականներից 1919-ի հունվարի 19-ին հատկացրել է 44 հապար ուրբի: Ստեղծված էին զավառի գաղթականական գործերի ընդհանուր լիապորություն եւ տեղական լիապորություններ, ինչպես Միսիանում եւ Հալիձորում: Գավառային լիապորն ուներ երեք օգնական, որոնցից մեկը Անդրանիկի քարտուղար Եղիշե Զաջուհին էր: Մինչև 1919-ի հունվարի տվյալներով գավառում բաշխվել է 600 հապար ուրբի: Ըստ դրամավճարումների փաստաթղթի՝ Անդրանիկի զորքի հետքով եկած գաղթականները բաշխված են եղել Գորիսում (հավանաբար բաղաբում եւ գյուղերում) 570 հոգի, Միսիանի շրջանի Անգեղակոթ գյուղում՝ 1658, Վաղուղիում՝ 991, Որոտանում՝ 551, Բունակոթում՝ 426, Ախլաթյանում՝ 884, Բնուճիում՝ 415, Լծենիում (Լծկանի) 18, Ուզում՝ 238, Տուրոսում՝ 479, Բապարայում՝ 186 (127 ուս եւ 59 հայ), Թապալուղում՝ 248, Ալիուլում (Ալելու) 214, Լվլաղում՝ 177, Դարաբասում՝ 73, Մապարում՝ 251, Դարաքիլիսայում՝ 463, Շաբաթում՝ 278, Աղբենդում՝ 508, Շամբում՝ 197, Մուխաթարյանում՝ 212, Բալաթում՝ 279, Աղուղիում՝ 3184, Շաքիում՝ 1883, որբանոցում (Դարաքիլիսայի)՝ 88*²: Յուրաքանչյուր շնչին տրվել է 29-ական ուրբի: Գաղթականներ են եղել նաև Լալաղարափում, որոնց էլ՝ 100 հապար ուրբի:

Սա, ինչպես նշվում է արձանագրությունում, ամբողջ բաշխվածը չէ, այլ «մի աղբյուրից գաղթականության բաժնելու համար ստացվածը», որը կազմել է 600 հապար ուրբի:

Լավանի շրջանում, ըստ նպատամատուց այս տվյալի, եղել են 1976 գաղթականներ, որպեսիք եղել են նաև Գյումրի գյուղում (7000 ու): Բուն Ջանգեզուրի, Միսիանի եւ Լավանի շրջանների համար բաշխվել է 573.717 ու:

* Զորս որբինը առանձին էր, 88-ինը՝ առանձին:

1 «...հարուածող պորամար», էջ 89—93, Նաե՛ւ Թ. Գ. Գեորգյանի հուշերը, ՀՀ ԴԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 14:

իր մնալը, իրենք «չեն եկել ժողովրդի հանգիստը վրդովելու, ժողովրդին վնասելու», մի կողմում թուրքն է, ապա Նախիջեւանն է, եւ ահա իր գորամասը, բացատրել է նա. «Եթե կը փախագի սիսիանցին որ մնա, կը մնա», պնդելով, որ դա հեշտ գործ չէ, զորահավաք է պետք անցկացնել, զինվոր տալ եւ հոգալ նրա օթեւանի ու սննդի, հանդերձանքի մասին¹:

Արձանագրությունն այսպես է հուշում. Օգոստոսի 30-ի* օրը Սիսիանի շրջանի 14 գյուղերի 26 ներկայացուցիչները շրջանի Անգեղակոթ մեծ գյուղի եկեղեցում հավաքվում են ժողովի: Որոշում են «ոչ մի կերպ չհամակերպվել Ադրբեջանի կամ թուրք իշխանության զինաթափության հնարավոր առաջարկին եւ դիմադրություն ցույց տալ մինչեւ վերջ»: Նրանց խնդրանքն է, որ Անդրանիկը մնա իրենց շրջանում, որտեղ որ զորքի համար հարմար կգտնի, «զորամասերի պարենավորման ծանրությունը» համամասնորեն բաշխելով Կապուհի, Գորիսի եւ Սիսիանի շրջանների միջեւ: Տեղնուտեղը որոշվում է զորքին միացյալ ուժերով տրամադրել 6000 փութ ցորեն, 1000 փութ գարի, 50 փութ յուղ:

Հեռանկարային խնդիրներ էլ են շոշափվում: Անդրանիկը դիտվում է ոչ միայն որպես Չանգեզուրի, այլեւ Արցախի (Ղարաբաղի) հայության ասպվեն: Հայկական հանրապետության կառավարությունը քննադատվում է Արցախի նկատմամբ անտարբեր դիրք ունենալու համար: Մինչդեռ Ադրբեջանի կառավարությունը ուզում է ոչ միայն Արցախ, այլեւ Սիսիան մտնել: Սիսիանցիք գտնում են, որ Անդրանիկին պետք է զորավիգ լինել, տեղական ռազմական ուժեր ստեղծել, որին մեծ չափով կարող էր օգնել նրա տեւական ներկայությունը իրենց մոտ:

Անդրանիկը ժողովում ասված խոսքում կարեւոր նշանակություն է տվել մեծ տերությունների կովի արդյունքին՝ ավելացնելով «մենք մեր սկզբունքներից շեղվելու չենք» բառերը: Վճռական է համարում Արցախի կովի կազմակերպումը. «Ղարաբաղը պետք է լավ անուն թողնի... Եթե Ղարաբաղը մեկ դիվիզիա հանե, դեռ վեց ամիս ալ կապրի, իհարկե, հարձակողական կովով չէ, այլ ինքնապաշտպանություն պիտի կազմակերպվի», այսպես սեւագրական բնույթի գրքված է արձանագրության մեջ:

Ժողովում դրված խնդիրները հանգուցվում են Արցախի հետ: Չանգեզուր—Արցախ սահմանային հատվածը լեռներ էին, ճանա-

պարհը քարքարոտ, դժվարամատչ: Անդրանիկը մտահոգված էր Արցախով, առաջնային համարելով նրա եւ Չանգեզուրի միջեւ անընդհատ, գործնական կապի հաստատումը: Այստեղից, Չանգեզուրից, ճանապարհ բացելով, պետք էր նախապատրաստության համար համակողմանի միջոցների դիմել, այլ ոչ հապճեպություն հանդես բերել, որից հետո միայն դիմել միացման վճռական քայլին: Ահա նրա բանավորից գրառված խոսքը. «Ինքը պիտի փորձե բանալ Չապուղը, վերադառնալ Սիսիան 10 օրվա մեջ, միայն թե պետք է իրեն հայտնեն, թե ինչքան պատրոն կա, որ պիտի մնա Սիսիան, Գորիս եւ ինչքանը պիտի երթա Շուշի...»: Մտահոգված է, չի ուզում վաղվան օգել: Բայց ի՞նչ բազմակետեր են: Արձանագրողը շարունակել է՝ «Իսկ ինքը Շուշի չերթար»: Խոսքը լրիվ չի գրի առնված: Բայց, մեր կարծիքով, պարզ է: Առայժմ ինքը չի գնալու, նախ պետք է գենք ու զինամթերք ուղարկել, նաեւ Չանգեզուրը ամրապնդել որպես թիկունք: Ուրեմն, ինքն այսօր այստեղ կլինի, իսկ այնտեղ՝ դեպի Շուշի տանող ճանապարհին ա՛յն ժամանակ, երբ պահը հասունացած կլինի: Ընթերցողը կտեսնի, որ այդպես էլ եղել է: Երբ ինքն այնու չէր կարող գործը վաղվան օգել:

Արցախյան գործողության նախապատրաստության օղակներից մեկը համարվում է Ադուրի եւ Վադուրի գյուղերի բնակչության հետ հարաբերությունների բարելավումը: Խնդիր է դրվում գործի ներգրավել Չանգեզուրի ունեցած զորամասերին, որոշակիորեն հիշատակելով առկա երկու զնդերը, նրանց վրա դնելով ինքնապաշտպանական եւ կենսամթերքի փոխադրման պարտականություններ: Հաշվարկվում է, որ Արցախի համար նախատեսված զինամթերքը տեղ հասցնելու համար հարկավոր է 300 ձի, յուրաքանչյուր բեռը 5-ական փոսով¹:

Զբաղվում էր նաեւ բնակչության քաղաքացիական հոգսերով: Արգելել էր գավառից որոշ տեսակի մթերքների արտահանումը եւ անձամբ հետեւում էր դրանց բաշխմանը զորքին, շաղթականությանը, մանավանդ որբերին, հիվանդներին ու մյուս կարիքավորներին: 1919-ի մարտի 2-ի իր գրությունում հարց է դնում 5613 այրի կանանց եւ որբերին օգնություն ցույց տալու մասին, այդ նպատակին տրամադրելով 2526 փութ ցորեն²: Սիսիանի շրջանում գնած 2635 փութ ցորենից 50 փութը հատկացրել է Սիսիանի որբանոցին³: Ռազմի գործից ազատ օրերին մշտական էր զբաղմունքը մման «մանրուքներով»: Դարապագյազի՝ թուրք բնակչությանը շրջապատ-

* Հին տոմարով է: 1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30:

1 Ն. տ., ըստ արձանագրության: 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 5, թ. 127: 3 Ն. տ., ց. 2, գ. 64, թ. 3, գ. 56, թ. 23:

ված Ղուշի-Բիլագ, Գնդեազ եւ Հերհեր գյուղերի հայ բնակչոթյունը, ի նշան երախտագիտության, «նորին բարձրապատիվ պարոն հայ ազգի իշխան Անդրանիկին» գրել է՝ «Վերեւ աստված, Աերքե Դուք եք, Մեծ իշխան: Ազատիր մեզ... մեր կյանքը կախված է մի մազից... եթե Ձեր օգնությունը չհասնի... մենք կզնջվենք»¹:

Մի քանի գորավարական մանրուքներ: Հրամանները հղում է գրավոր, մեծ մասամբ իր պաշտոնն ու տարեթիվը նշված տպագիր պաշտոնաթերթիկների վրա: Սեղմ են ու դիպուկ. «Ամսի 22-ին 1-ին եւ 2-րդ դասակները պիտի մեկնեն Կորընձոր, իսկ 3-րդ եւ 4-րդ դասակները պիտի մնան տեղում»: Անհամատեղելի է գտել որ Գորիսի պարետը զբաղեցնի նաեւ վաշտերից մեկի հրամանատարի պաշտոնը²: Չորամասի բոլոր ստորաբաժանումների հրամանատարներին կարգադրում է՝ անհապաղ հայտնել եւ զինվորներին, եւ նրանց զենքի ու փամփուշտի քանակը, «ստանց թաքցնելու», ամեն երկու օրը մեկ կատարել զենքի հաշվառք: Վաղօրոք նշում է տագնապի ազդանշանի դեպքում հավաքվելու վայրը: Հարուստ է գրագրությունը Չանգեզուրի կենտրոնական եւ տեղական ազգային խորհուրդների հետ:

Գրությունների մի քանի նմուշներ: Գումարտակի հրամանատար պ.-րն Բոնասպարտյանին. «Մինչեւ վաղը չէ մյուս օրը գումարտակը պահել հրամանի կատարմանը կազմ ու պատրաստ (7. 07. 18 թ.)»: Հարյուրապետ Փիլոսին. «Դուք նշանակվում եք ձիավոր գնդի հրամանատար (13.08. 18 թ.)³: Սմբատը նշանակվում է Յոնա գյուղի եւ շրջանի պարետ, ամենայն լիազորություններով, որին պարտավոր են ենթարկվել թե սպաներն ու զինվորները, թե տեղական ժողովուրդը⁴: «Ջուլֆայի ոռոտայի հրամանատարին: Հրամայում եմ պարսիկներին պատասխանել անխնա կերպով, եթե նրանք արտիլերիայի կրակ բացեն ձեզ վրա, դուք եւս խփեցեք, ոչինչ մի խնայեք⁵ 12.07. 1918 թ.»: «Հրամայում եմ բոլոր զինվորներին... Բժիշկներին լսել եւ ենթարկվել: Անդրանիկ»⁶ (իր ձեռագրով):

Անդրանիկը հեռախոս ունի, գորամասը՝ ջրաղաց: Ոչխարները մորթելիս պետք էր «դմակը պահել, նավթի հետ հրացանի յուղ պատրաստելու համար»⁷:

Գորիսում, Միսիանում իր քանակը տեղաբաշխելուց հետո, Անդրանիկը զբաղվել է նրա շարքերի համալրմամբ եւ գործի է հրավիրել տեղական գորամիավորումներին՝ «Ծուշու» եւ «Գանձակի» անվան-
1 Ն. տ., ց. 2, գ. 172, թթ. 3—6: 2 Ն. տ., գգ. 11, 18: 3 Ն. տ., ֆ. 370, գ. 1, գ. 9, թթ. 7—9: 4 Ն. տ., թթ. 1—6: 5 Ն. տ., թ. 11: 6 Ն. տ., ց. 1, գ. 11, թ. 24: 7 Ն. տ., գ. 15, թ. 6, գ. 16, թ. 2:

ված գնդերին: Զբաղվում է նաեւ Արցախի ինքնապաշտպանական զորամասերն ամրապնդելու եւ նրանց հրամանատարների հետ կապ հաստատելու գործով: Այս ընթացքում նա մամուլում հրապարակած իր խոսքով տեղում ինքնապաշտպանական ուժերի առկայությամբ է պայմանավորում Գորիսի, Միսիանի ու Կապանի անկախությունը թուրք-թաթարական ուժերից, չնայած նրան, որ հանրապետության կառավարությունը չի ուզում իր հետ կապ հաստատել¹:

Թե Գորիսում եղած ժամանակ եւ թե Միսիան ժամանելու առաջին օրերին Անդրանիկն զբաղվում է իր գորամասի թվակազմի ճշգրտմամբ, նրա ստորաբաժանումների վերակազմությամբ եւ հրամկազմում էսկան փոփոխություններ մտցնելով: Մեպտեմբերի 6-ին նա ստորագրում եւ հրապարակում է Հայկական առանձին հարվածող գորամասին ուղղված իր № 1 հրամանը, ըստ որի գորամասը կազմված էր 5 վաշտից եւ 5 հարյուրյակից, ուներ գնդացրային երեք ջոկատ, գումակ, մատակարարման մաս եւ գանձապահ: Հրամանով սահմանվում էր խիստ կարգապահություն: Անհրաժեշտ էր համարվում, որ կանոնավոր կերպով շաբաթը երեք անգամ լինեն սպայակազմի մարզանքներ, լինի հրամկազմի միջեւ եւ նրանց նկատմամբ զինվորների հարգանքը. «աստիճանահարգությունը կանգնած լինի պատշաճ բարձրության վրա»: Կանոնավորվում էին ռազմական պարապմունքները, գույքի խնամքն ու պահակությունը: Անց էր կացվելու զենքի եւ փամփուշտի ստույգ հաշվարկ²:

Աղուդի եւ Վաղուդի գյուղերի մարտական ուժերը չէին հրաժարվում իրենց ամբարիշտ քայլերից: Դա անհանգստացնող վիճակ էր ստեղծում, մերձակա հայկական գյուղերին պահելով նրանց հարձակումների մշտական սպառնալիքի տակ: 1918-ի օգոստոսի 6-ին Անդրանիկը համապատասխան գորականներին հրահանգում է զբաղվել հաշտարար գործողությամբ: Գրության վերջում նա հարկ է համարում իր ենթականերին հատուկ ցուցում տալու. «Ձեր կողմից եկողները թե գյուղացի, թե զինվոր, չի լինի որ թալանելով ըզբաղվին, թույլ չիտաք ոչ ոքին տանելու ոչ մի բան»³:

Միսիանցիք՝ թե՛ շրջկենտրոնի, թե՛ գյուղերի բնակիչները, գեներալի գորքի համար բերում են կոշիկ ու գուլպա, ներքնահագուստ եւ վերնահագուստ, գլխարկ: Դժվար օրեր էին: Արեւելքից, Չանգեզուր-Արցախ սահմանային Չաբուղ ձորի հակառակ կողմից, զինված ուժերը հարձակումներ էին գործում հայկական գյուղերի վրա եւ

1 «Նոր հորիզոն», Թ., №18, 11.12. 1918 թ.: 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 18, գ. 30: 3 Ն. տ., գ. 11, էջ 104:

յորջ վնաս պատճառում բնակչությանը: Կոլոդ հայկական ուժերին Գորիսից օգնության են ճանապարհվում տեղական զորամասերը: Երթուղու հայկական գյուղերի երիտասարդները նախապես ձեռավորվելով որպես դասակներ ու վաշտեր, համալրում են զեներալի զորքը: Այդ ընթացքում հախտուն ոտքի են կանգնում գավառի աղբբեջանական գյուղերի զինված ուժերը: Նրանք ցանկանում են թիկունքից խփել հայությանը եւ դրանով իսկ օժանդակել դրսից հարձակվողներին՝ Զանգեզուրը նվաճելու եւ ծնկի բերելու մտադրությունների իրականացմանը: Վերջիններս առաջ են շարժվում Գորիսի Կոռնիձոր, Խոզնավար եւ Խանաձախ գյուղերի ուղղությամբ: Գորիսեցիք պատգամախոսներ են առաքում Սիսիան Անդրանիկի մոտ, օգնություն են խնդրում: Միաժամանակ Անդրանիկին է հասնում Զանազեզուրի Կենտրոնական ազգային խորհրդի նախագահ Մ. Պարոնյանի 1918-ի սեպտեմբերի 13/26-ի պաշտոնական դիմումը: Ազգային խորհուրդը խնդրում է մի քանի անհրաժեշտ զգուշողական միջոցներ ձեռք առնել եւ գալ Գորիս, որպեսզի միացյալ ուժերով նշվեն խնդիրները եւ գործի անցնեն. «Մենք մեր ամբողջ ֆիզիկական ուժով Ձեր տրամադրության տակ ենք, պատրաստ Ձեզ հետ գործելու ու Ձեզ հետ մեռնելու»¹: Ի պատասխան, Անդրանիկը հաջորդ օրը եւեթ հայտնում է. «Վաղը, առավոտյան ժամը 10-ին ես շարժվելու եմ Գորիս: Ամսի 17—18-ին կլինեմ Գորիսում: Աշխատեցեք ինչ գնով ուզում է լինի պաշտպանել եւ պահել ճակատը»²: Իսկ այնտեղից Գորիս ճանապարհի վրա նույն պատմությունն է, աղբբեջանցիք նորից փակել են Աղուղի-Վաղուղի երթուղին: Միայնակ չեն աղբբեջանցի նենգամուկները: Անկասկած է, գրում է Անդրանիկի բերանից օրագրողը, «որ այս բոլորը թուրքական ուժերու օգնությամբ, մասնակցությամբ է, որ տեղի կունենա»: Թուրքական այդ ուժերը այս կողմերը հասնելու հնարավորություն ունենին, ընդհատելով երկաթուղով հաքու գնալու իրենց ճանապարհը եւ այսպե՛ս Զանգեզուր բերող խճուղիով: Խնդիրներ են ծագում՝ բացել, անվնաս դարձնել Սիսիանից Աղուղի-Վաղուղիով եկող ճանապարհը, պաշտպանել երկաթգծից դեպի Գորիս բերող խճուղին, սաստել թե Զանգեզուրում եւ թե Դարալագյազում ոտքի ելնող մահմեդական կատաղիների: Այդ խնդիրներին լծված էին տեղի հայության ինքնապաշտպանական ուժերը՝ որոնք եւ կանոնավոր զորամասեր էին, եւ աշխարհագրային միավորումներ: Անընդհատ շարունակվում էր Սիսիանի եւ Գորիսի երիտասարդության զինվորագրումը՝ թե տեղական զորամիավորումներին, թե

Անդրանիկի զորամասին:

Անդրանիկն իր զորամասը առաջ է տանում դեպի Գորիս: Միասին գալիս էր նաև տեղական «Ծուշու» գունդը՝ իր երկու դաշտային թնդանոթներով: Դարձյալ նրանց դեմ ծառանում են Աղուղի, Վաղուղի գյուղերի մարտական ուժերը: Հայերն ստիպված են լինում գործի դնել թնդանոթները: Ծանապարհը փակողները ետ են քաշվում:

Նույն այդ ընթացքում գորիսեցիները միայնակ մարտնչում էին աղբբեջանական գյուղերի զինված ուժերի դեմ, որոնք գրավելով մոտակայքի Խոզնավար հայկական գյուղը, փորձում էին ընդհուպ մոտենալ քաղաքին: Սեպտեմբերի 29-ի երեկոյան, երբ Անդրանիկի զորքը մտնում է Գորիս, տեղի ինքնապաշտպանական մարտիկները ուժգին հակահարվածով հարձակվողներին արդեն շարտել էին քաղաքի մատույցներից 15 կիլոմետր հեռու:

Նորից զորքը բաշխվում է քաղաքի բնակիչների տների վրա: Այդպես մինչեւ հոկտեմբերի 10-ի երեկոն: Անդրանիկը զորքը նախապատրաստում էր առավոտյան Սիսիան վերադարձի: Սակայն ուրբաթը շաբաթից շուտ եկավ: Հաջորդ օրը, օրվա կեսին, երբ զորքը ուր որ է ճանապարհվելու էր, Ղարաբաղից լուրեր են գալիս, որոնք հարկադրում են ոտքը կախ գցել: Աղբբեջանի կառավարությունը, Գանձակում գտնվող թուրք Նուրի փաշան հայտարարություն էին արել Զանգեզուրի բնակչությանը՝ ենթարկվել, հպատակվել Աղբբեջանի կառավարությանը եւ այդպիսով հեռու մնալ ավելորդ բարդություններից, որոնք կարող էին արյուն պահանջել: Ըստ որում, Ղարաբաղից եկած սուրհանդակները հայտնում էին, թե թուրքերը մտել են Ծուշի, եւ քաղաքը անհապաղ հպատակվել է նրանց: Միայն այս լուրը, վկայում է օրագրողը, տեղիք է տալիս նրան, որ Գորիսի ինքնապաշտպանական 1-ին վաշտի մոտ կեսը լքում է կամովին ընդունած ծառայությունը եւ աճապարում տները:

Գորիս քաղաքի ու գյուղերի բնակչության պարագլուխները զինվորական ներկայացուցիչների հետ հավաքվում են ժողովի: Բնությունը հարցը կտրուկ էր՝ առանց կովի հանձնվել՝ արշավող թուրք զորամասերին, թե՛ կրծքով կանգնեցնել նրանց առաջխաղացումը: Անդրանիկն ասել է՝ «Միակ միջոցը կովելն ու պատվով մեռնելն է», եւ հետո էլ ավելացրել՝ գործը, բայց ոչ շատ խոսելը: Որոշեցեք, դիմել է Անդրանիկը ներկաներին, խոսքը ձերն է, որը նախընտրեք ըստ այնմ էլ կլինի ձեր հանձնարարությունը իմ զորամասի այս եւ վաղվա օրվան: Ներկաների կարծիքները բախվում են: Վաթսունմեկ ներկաներից քսանյոթը քվեարկում է վճռական դիմադրության օգտին: Քը-

1 Ն. տ., գ. 34, թ. 19. 2 Ն. տ., թ. 20.

ասանկը դեմ են: Նշանակում է մյուսները՝ ձեռնպահ: Զինվորական գործիչները մասն արդյունքով մարտի մեջ մտնելը հուսալի չեն գրտնում: Ուստի խորհրդի են նստում նրանք՝ առանց քաղաքական մարդկանց մասնակցության: Նույն օրը Անդրանիկի գործի մի մասը բռնում է Միսիանի ճամփան: Մյուսը ոտքի վրա էր վաղ առավոտից, երբ պետք է լիներ քաղաքի կենտրոնից: Մեկնելուց առաջ, ի գիտություն գործի, տեղական ռազմական ուժերի և Գորիսի բնակչության, Անդրանիկը հայտնում է տեղացիների թույլ տված անվճարականությունը, ակնարկում է դրանից բխող հնարավոր վնասը և պարտավորեցնող եզրակացությունը, այսուհետև ինքը պարտավոր է ավելի զգուշ լինել, ավելի պատասխանատու և որ «այդ անվճարականության հետևանքով ինքը ևս ստիպված է խուսափել կռվից», թեև համոզված, որ ճանապարհը մեկն է, և դա ոչ գաղթն է, ոչ էլ թուրքերին արտաքսը ընդունելը, այլ՝ աննահանջ կռիվը: «Պետք է կռվել, և եթե պիտի մեռնինք, գեթ պատվով մեռնինք»: Օրագրողը շարունակում է վերապատմել իր բառերով: «Ի վերջո ամենամկիրակյան հիշատակներու անունով երդում ըրավ, հայտնելով, որ ճիշտ է Գորիսեն դուրս կելլե, բայց չի հեռանար, գործի մեկ մասը միշտ շփման մեջ կը պահե քաղաքի հետ, և եթե շրջանը վճռապես, անկեղծորեն որոշե կռվի, առաջին հրացանի հարվածին ինքը պատրաստ է, պարտավոր է օգնության գալ»:

Այս խոսքերից հետո գորամառը քայլում է դեպի Միսիան:

Սա էլ յուրօրինակ դժվար դեպք էր Անդրանիկի կյանքում: Տվյալ պահին իր գորամասի կազմը լրջորեն նվազել էր: Թուրքերը թվապես ավելի էին և զենքով առավել: Բնակչության մեջ էլ զգուշողական տարակուսանքներ կային: Կարծիքներ էին շրջում, թե իրենց վճռական լինելու դեպքում տանկական գործերը օգնության կգան Ադրբեյջանին՝:

Գնում են ե՛ր Անդրանիկի զինվորները, ե՛ր տեղացիների «Ծուշու» եւ «Գանձակի» գնդերը²: Ավելի ճիշտ՝ վերադառնում են:

Զալպոլում թուրքերի երթը կանգնեցնելուց և նրանց ճամփան շեղելուց, Դիլիջանից Սեւան ճանապարհվելուց հետո հեշտ չէին օրերը Անդրանիկի համար: Զորքը Սեյիմի լեռնանցքից դուրս բերելուց հետո քանի անգամ նրա դիմաց դուրս եկան թշնամու քանիցս

1 ՀՀ ԴԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թթ. 7—8: 2 «...հարուժող կորամասը», էջ 112—123:

առավել ուժերը Խոյում, առավել ևս՝ Նախիջեւանում: Նույն վիճակն է խմորվել Զանգեզուրում: Թուրքերը լավ գիտեին այդ մասին: Նրանց բանակները Թիֆլիսից եկող երկաթգծով մարտեր մղելով, ձգտում էին առաջ ու առաջ, Բաքվում հեղափոխական կոմունան խեղդելու, քաղաքի հայության հետ արյան հաշվեհարդար տեսնելու համար: Եվ նայում էին հեռվից Զանգեզուրի ու Ղարաբաղի բարձունքների կողմը, երազելով արյան նույն հեղեղը հայության բնօրրան այս վայրերում: Դրա համար պետք էր Անդրանիկին սաստել, ահուսարսափի մեջ զցել նախքան նրա հետ հանդիպելը: Այդ քայլը իր էությանը հարմար է գտել թուրք հրամանատարներից ոչ անհայտ՝ Նուրի փաշան: Նա հանդես է գալիս Անդրանիկի գորավարական տաղանդը արհամարհող մեծամիտ հայտարարությամբ և Անդրանիկի դեմ ուղղված զրպարտչական գրություն է տարածում: Անդրանիկը քաջ ու հնարամիտ զորավար չէ, այս էր պետք նրան հուշակել, ու մյուսներին հավատացնել, Անդրանիկը, հասարակ մի բան է, որ միշտ էլ պարտվել ու փախուստի է դիմել թուրքական զորամասերի առջե: Դա եղել էր օգոստոսի 15-ին: Հեռու էին այն ժամանակ Անդրանիկն ու Նուրի փաշան միմյանցից: Հիմա Նուրի փաշան մոտակայքում էր, լեռներից ցած, որտեղից վեր նայելով հոխորտում էր, լավ իմանալով, որ Անդրանիկի դրությունն առանց այն էլ դրություն չէ: Անցյալում չէր պատասխանել Անդրանիկը, բայց հիմա, զանգեզուրյան օրերի այս դժվար պահին, այլևս վաղվան չի թողնում իր խոսքը:

— Ես կարդացի Ձեր հայտարարությունը, և գիտեմ, թե ինչ զրպարտանքներ եք շարտել իմ հասցեին: Այդ ե՞րբ եմ ես պարտվել և ե՞րբ եմ փախուստի դիմել: Դուք ձեզ հետ եղածն եք վերագրում ինձ: «Ընդհակառակը, այդ դուք եք այսօր իմ առջե բարոյապես պարտված», — հուշակում է Անդրանիկը, և մեկ առ մեկ հիշեցնում իմ 40 ֆիդայիների առաջ ձեր 1000-անոց գործի փախուստը Սասունի կռիվների ժամանակ, Մուշի Առաքելոց վանքի տակ և դարձյալ Մուշի Գոմեր գյուղի տակ: Հիշեցնում է նաև Բալկանյան պատերազմի օրերն ու հետագայում Բիթլիսի գրավումը: Եվ բերում է թարմ օրինակ՝ Խոյի կռիվը, որտեղ ինքը քաղաքի մատույցների տակ ստիպեց, որ մեծաքանակ հակառակորդը նահանջի դիմի, թողնելով իր մի քանի զնդացիներն ու հրանոթները: Գուցե թե ինչ-որ բան մոռացել է Նուրի փաշան: Անդրանիկն օգնում է նրան. «Եթե չեք հիշում, կարող եք հարցնել Յավեր փաշային»: Յավերը բուղարների դեմ կռվելիս Անդրանիկին գերի էր ընկել, պետք է որ հիշեր ու հիշեցներ:

Առանց հիշեցնելու է Նորի փաշան պետք է որ իմանար նաև մյուս կոիվները, որոնց մասին այս պատմության վերին էջերում ասվեցին: Բայց ենթ թողել միայն Գոմերի կոիվը: Այս դեպքից շատ տարիներ հետո, 1925-ին, Անդրանիկն այդ կոիվն է համարել իր կյանքի ուրախ օրը («ուրախ պահ»): Գոմերը Մշո դաշտի մեջ սուրբ Հովհաննես վանքի տակ գյուղ է: Կոիվը եղել է 1904 թվականին: Այսպես է գրել՝ «կոիվը կը մղեի տասնելուոր զինվորներու հետ 1800 թուրքաբորդ ուժերուն դեմ: (1500 կանոնավոր զինվորներ էին): Այս կոիվն մեջ մեզի հետ էին երկու հայ կիներ, որոնք դիրքեր կը շինեին մեզ համար եւ Եսառ (Իսառ) գյուղացի տեր Քերովբե քահանան, որ զենքը ձեռքին կը կուլեր թշնամիին դեմ»:

Այդ կոիվը, ասում է Անդրանիկը, «փոքրիկ խումբը» մղել է «հպարտ կամբով եւ մաքուր հայրենասիրությամբ», «շահելով հաղթանակը», «այդ պահը իմ ամենուրախ օրն էր»¹:

Այդ, Անդրանիկը չէր թաքցնում եւ ի լուր ամենքի, Սեւանից դուրս գալուց առաջ, հայտնում էր, որ անցնելու է Ջուլֆան, կապվելու է անգլիական զորքի հետ եւ առաջ է գնալու դեպի ձգողական վան: Բայց նա անգլիացիներ տեսնելու փոխարեն, եւ այն էլ ոչ թե որպես զորավիճ, այլ իր դեմ, գերմանացիներ տեսավ Խոյուն: Գուցե Նորի փաշան այդ էր զրպարտում, հռչակելով, թե Անդրանիկը անգլիական կառավարությունից «ուսկի է կաշառք վերցրել»: «Եթե աշխարհում մի երկիր կա, որը համակ կաշառակերություն է, այդ ձեր երկիրն է եւ ձեր կառավարությունն ու ձեր պաշտոնատար անձինք»: Այսպես է պատասխանում Անդրանիկը, մոտենալով իր գլխավոր խոսքին:

«Դուք ձեզ հերոս եք կարծում: Բայց աշխարհի պատմությունն է վկա, որ դուք հերոս եք միայն անմեղ ու անզեն ժողովրդի դեմ, մի բան, որը հենց ե՛ս լավ գիտեմ»: Մի քանի բառ է սա, բայց հերոսության անդրանիկյան պատկերացման ելակետը. հերոսը կոտորածի չափով չպետք է որոշվի, այլ փրկածի եւ ազատագրածի: Այդ ո՛ր թուրք զորավարն է, որ կարող է դրանով հպարտանալ, նաև այս է, որ առանց բառ-բառ ասելու է հասկանալի դարձնում. «Նրանից հետո, որ ամբողջ աշխարհն իմացավ, թե որքան արյունոտ է ձեր կառավարությունը եւ որքան նեղ թաղաքականություն է նա վարում, դուք ձեզ թաղաքակիրթ տերության պաշտոնյա եք համարում եւ հայտարարություններ անելով անմեղ ժողովրդին ուզում եք օգել ձեր հյուսած ծուղակը»: Այ դրանում, բացականյում է Անդրանիկը, դուք կարող եք հաջողության հասնել եւ բազում անմեղ մարդկանց արյու-

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 83:

նը հեղելու պատճառ դառնալ, բայց, մեկ է, դուք մեզ դրանով չեք խաբի: Վերջում գորակամի մնաս բարովն է. «Կամոքն աստծո մենք շուտով կհանդիպենք»¹:

Ծատ բան էր հորինվում: Մեկին ցանկալի էր Անդրանիկին վարկաբեկել, մյուսին՝ հռչակել, որ նա մեռել է: Եվ լուրը հասնում էր երկրից երկիր: Մոսկվայի հանձնարարությամբ կովկասի ու Անդրկովկասի գործերին մոտ կանգնած Օրջոնիկիձեն 1918-ի հոկտեմբերի 12-ին հեռագիր է հղել Լենինին եւ քառասյին մի վիճակի նկարագրության մեջ հիշատակել Անդրանիկի անունը՝ ինչպես որ լսել է, ինչպես որ տարածված լուրերն են եղել. «Ծուշու եւ Ջանգեզուրի գավառները թուրքերը գրավել են: Բնակչությունը համատրոնն դիմադրում է: Անդրանիկը դավաճանաբար սպանվել է Ղարաբաղում»²:

Այս լուրը Երեւանում ավելի վաղ էր տարածվել: Սեպտեմբերին Երեւանում լույս աշխարհ է եկել բուլշեիկյան «Խոսք» թերթը, որն էլ իր առաջին համարում հայտարարել է նույնը. «Ջանգեզուրում հայերի ձեռքով սպանվել է հաքթնի խմբապետ Անդրանիկը»: Թերթերից մեկ ուրիշը, ռուսկալարականը, աշխատել է իր հաղորդման մեջ նաև հավաստի եւ փաստացի երեւալ. իբրեւ թե Ջանգեզուրում հայերի ձեռքով Անդրանիկի սպանվելու լուրն առնելուն պես, նրա զինակիցներից Սնբառը, որն այդ ժամանակ գտնվել է Նոր Բայազետում, շտապ վերադարձել է Ջանգեզուր՝ քննություն կատարելու³: Խոսակցություններ էին գնում, թե այս բոլորը կառավարության սարքածն է, նա դա անում է այն նպատակով, որ ազատվի իր հետ Անդրանիկի գծությունից բխած պատասխանատվությունից, գուցե նաև՝ Անդրանիկին ու նրա զորքին անկատար թողնելու պատճառով թուրքերի ճնշումներից: Օրջոնիկիձեն 1919-ի հունվարին Լենինին հղած հեռագրում հիշատակում է Անդրանիկի անունը, որն ինքնին ասում էր, որ նա սպանված չէ՝:

Օրջոնիկիձեն, եթե ուշադիր լիներ, ավելի վաղ կարող էր ուղղել իր սխալը: 1918-ի հոկտեմբերի 18-ին Գորիսում տպագրվել է մեծ քանակով տարածվել էր «Ջանգեզուրի հայ ժողովուրդ» վերտառությամբ թերթիկ, որում հենց ապրող եւ գործող Անդրանիկի անունն էր: Նրա գլխավոր միտքն այս էր՝ Ջանգեզուրի հայ ժողովուրդը «եթե կուտ շարքերով, իբրեւ մի հոգի, մի մարմին դարձած խմբվի պաշտելի Անդրանիկի շուրջը եւ կուրծքը դեմ տա թշնամուն», կշարդի իր բոլոր թշնամիներին⁵:

1 Ն. տ., ց. 1, գ. 7, թթ. 2—3 (բնագիրը թուրքերեն է): 2 Գ. Կ. ՕրձՅՈՒՆԻԿԻՃԵ, Статей и речи. Т. 1, 1956 г., с. 45. 3 «Խոսք», №1, 1918 թ. 4 Գ. Կ. ՕրձՅՈՒՆԻԿԻՃԵ, Там же, с. 64—65. 5 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 43:

Կան ուրիշ փաստաթղթեր՝ հակառակ բովանդակությամբ: Առաջինը խոսք տանք հայկական կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկովին: Անդրանիկի՝ հունիսի 5-ին Դիլիջանից դուրս գալուց առաջ, նա հրաման էր հղել ու պահանջել այնտեղից դուրս չգալ, մնալ այդ շրջանում, մինչև որ նրան փոխարինող զորք կուղարկվի: Եվ ահա հուլիսի 6-ին Քանաքեռի իր հրամանատարական կայանից նա համաքանակային հրաման էր արձակել Անդրանիկի զորամասը հայկական կորպուսի կազմից դուրս հռչակելու մասին, պատճառաբանելով, որ «ինչպես Անդրանիկը, այնպես էլ նրա զորամասը ոչ միայն ընդհանուր գործին օգուտ չեն բերում, այլ, ընդհակառակը, վնասում են նրան»: Զի զլացել կորպուսի հրամանատարը շարունակության մեջ ոչ միայն նշել, որ Անդրանիկը «մշտապես չի կատարել իր մարտական հրամանները», այլև նրա վրա բարդել է «խաղաղ բնակչության նկատմամբ մշտապես թալան ու բռնություններ» գործադրելու մեղադրանքը¹:

Մենք մտածված ենք Նազարբեկովի բառերը չակերտների մեջ, նույնությամբ բերում: Որովհետև ընթերցողը տեսավ, թե հունիսի 5-ից մինչև հրամանի օրը՝ հուլիսի 6-ը, Անդրանիկը ինչ «թալան ու բռնություններ» կարող էր կատարել եւ կատարել է արդյոք: Ահա թե հանգամանքները մինչև որ աստիճան կարող էին ծուել փաստերը եւ դա հարկադրել անելու մինչև իսկ Նազարբեկովին, որը բոլորից լավ գիտեր, որ նման բան չէր կարող լինել ու չէր եղել, այն էլ մինչև իսկ հունիսի 6-ը, երբ Անդրանիկի երթը Հայաստանի գյուղերով խաղաղ ու անկրակոց էր եղել, իսկ Ջուլֆայով անց ու դարձի ընթացքում եղած կրակոցները թալան ու բռնություն չէին, այլ թշնամու հարձակման դեմ պաշտպանություն: Ուրեմն, Նազարբեկովը ուրիշ էլք չի ունեցել եւ այդպես պետք էր գրել «պատճառաբանելու» համար Անդրանիկի նկատմամբ հալոց կառավարության ղեկավարների հրապարակային մերժողական դիրքը, այլև կոծկելու եւ սքողելու հունիսի 4-ի նրա բացարկի հանգամանքները: Եվ դա անում էր Անդրանիկի մեծ բարեկամ, նրա նկատմամբ հոգատար եւ ուղղամիտ Նազարբեկովը: Անդրանիկի զորամասը դուրս դնելու մասին իր հրամանով Նազարբեկովը կառավարության առջև ըստ էության այնպիսի պարտք էր կատարում, ինչպիսին որ կառավարությունը՝ հունիսի 4-ը թելադրողների առջև: Իրանից հետո Հայաստան Հանրապետության կառավարությունը այդ փաստաթուղթը հիմք ընդունելու մասին ամեն անգամ իր պարտքն էր համարում տեղյակ պահել

թուրքական պետության ղեկավարությանն ու բանակային հրամանատարությանը, երբ նրանք Անդրանիկի զորամասի գոյությունը մատնացույց էին անում որպես 1918-ի հունիսի 4-ի պայմանագրի խախտում:

Գուցե ամենից նշանավորն էր Անդրանիկն իր կարծիքով, բայց միայնակ չէր: Հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով հայկական կողմը ըստ էության «հանձն էր առնում օգնել Թուրքիային ընդդեմ դաշնակիցների», այսինքն՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի ու նաև Ռուսաստանի: Նույն այդ փաստաթուղթով Հայաստան Հանրապետության կառավարությունն էլ պարտք էր ստանձնում «թուրքերի կողքին կռվել ընդդեմ... Ջոր. Անդրանիկի, որովհետև ազգային մեծ հերոսը մերժել էր ընդունել «Պաթումի տիքթաթ»-ը եւ արեւմտահայ դատի գերեզմանումը»¹:

Այնպես որ, եթե այս տեսակետից մոտենանք, կարող ենք ասել, թե Նազարբեկովը այնուամենայնիվ անհամեմատ չափավոր էր: Որպես մեղք նա ընդամենը թալանն ու բռնություններն է բարդել Անդրանիկի վրա եւ իր հրամաններին չենթարկվելը: Գուցե ենթադրվել է, թե այս ձեռով կարելի կլինի վերջ տալ Անդրանիկի կապակցությամբ թուրքական կողմի հոխորտագրերին: Բայց երևում է, որ՝ չէ: Թուրքական կողմը շարունակել է պնդել Անդրանիկի նկատմամբ վճռական իր պահանջները: Պետք էր կծիկը քանդել եւ ազատվել Անդրանիկի պատճառած հոգսից, որքան էլ հոգսը, որ կար, իր արմատով Անդրանիկի պատճառածը չէր: Հարցի լուծումը վերապահվում է... «օսմանյան կառավարության մեծարգո զինվորական մինիստր, նորին գերագանցություն Էնվեր Փաշային»: Այս վերտառությամբ 1918-ի հուլիսի 17-ին պաշտոնական նամակ է ստաքվել Կոստանդնուպոլիս: Հայաստան Հանրապետության կառավարությունը «իրեն պատիվ է համարում» իրազեկ դարձնել «Նորին գերագանցությանը», որ Անդրանիկ փաշան «խուսափում է հանրապետության կառավարությունից, իմանալով, որ զինվորական դատի պիտի տրվի» կառավարության ռազմական մինիստրի հրամանները չկատարելու համար: Եվ Անդրանիկի մասին երկու գաղտնիք է հայտնվում, մեկը՝ ետին թվով, մյուսը որպես սպասվելիք: Ետին թվովը Ջուլֆայի կամրջով անցն է դեպի Վան, սպասվելիքը՝ «ուժեղ բանակ կազմելու», սեպարատ պետություն ստեղծելու եւ Թուրքիայի վրա հարձակվելու նպատակը: Եվ այսպես, Թուրքիան զգուշացվում է անդրանիկյան վտան-

¹ Ն. տ., ֆ. 200, ց. 1, գ. 112, թ. 17:

¹ Գեորգի Արարենեան, Մեծ երպի ճամբուն վրայ, Գ., 1964 թ., էջ 111—112, Գան.՝ Ա. Չելիկեան, էջ 506—507:

գի՛ց: Իսկ թե ինչ էր մնում անելու թուրքական կողմին, ամփոփված էր նամակի վերջին բառերում. «Խնդրում ենք միջոցներ ձեռք առնել նրան վերջնականապես ջախջախելու համար»: Ստորագրել են կառավարության նախագահ Հովհ. Քաջազնունին, զինվորական նախարար Արամ փաշա Մանուկյանը, Հանրապետության խորհրդի նախագահ Սահակյանը¹:

1918-ի սեպտեմբերի վերջին օրերին Ալեքսանդրապոլում է գրտնրվել վերը բերված փաստաթուղթը բխեցնող հունիսի 4-ի պայմանագիրը հայությանը պարտադրողներից Խալիլ փաշան: Հայ դիվանագետ Ա. Չամալյանը այցելել է նրան: Խալիլն շտապել է ասել, որ «իր ստորադրյալներն ու Ադրբեջանի կառավարությունը գանգատվում են, որ Անդրանիկը ոչնչացնում է թուրք բնակչությանը»: Պարզ երեվում է, որ հայոց ղեկավարների վերոհիշյալ եռյակի գրությունը նկատի ունենալով է նա շարունակել, թե՛ «ի՞նչ պատժիչ գործախուժք չի ուղարկի Անդրանիկի դեմ», շատ մեծահոգի է, այլ կսպասի, որ «նախ հայոց պատվիրակություն մեկնի նրա [Անդրանիկի] մոտ»²: Գաղտնիք չկա՝ պահանջում է, որ կառավարությունն ինքը սաստի նրան եւ չձգձգի բաթումյան պայմանի կատարումը:

Խալիլ փաշան Երեսնամյա արժանացել է վարչապետ Քաջազնունու պատվավոր ընդունելությանը: Ծոշափված հարցերից մեկը վերաբերել է դարձյալ Անդրանիկին: Կառավարությունը պետք է պաշտոնապես հայտարարեր Խալիլին, որ ոչ մի կապ չի պահպանում Անդրանիկի հետ: Խալիլը, սպառնալից ասել է, թե Կ. պոլսում լուրեր են շրջում, որ Անդրանիկը գործում է Հայաստանի կառավարության հորդորանքով եւ նրա ցուցումով է հանգրվանել Չանգեզուրում: Վարչապետը պաշտպանվում է, ասելով՝ 1. Անդրանիկը Չանգեզուր է մղտել ոչ թե Հայաստանի տարածքից, այլ Նախիջևանի, որը Թուրքիայի հովանավորության ներքո է, 2. եթե Անդրանիկը մտնի Հայաստան, ապա կզինաթափվի եւ դատի կտրվի, որը նրան հայտնի է, այդ պատճառով էլ խուսափում է Հանրապետության սահմանն անցնելուց:

Անդրանիկի հարցը թուրք պաշտոնյայի համար քաջալերվելու առիթ է ծառայել: Ամեն ինչ ասել է լիակատար մերկությանը եւ հետն էլ թափելով իր սրտի ողջ մաղձը. մենք թուրք ենք եւ մեր երազանքն է անխզելի կապ հաստատել մեր եղբայր Թուրանի հետ, չցանկանալով, որ այդ միացման ճանապարհին որեւէ օտարի տիրապետություն գտնվի³:

Խալիլն իր իմացածը իր կարողացածի ձեռով է ասում, Քաջազնունին՝ իր:

Քաջազնունին սրտի կամոք չէր դժգոհ Անդրանիկից: Բայց դժգոհ էր: Դժգոհ էր ոչ այնքան իրեն իսկ Անդրանիկի վարքագծից, որքան այդ վարքագծի թուրք-պետական անդրադարձից: Անդրանիկը իր գորքը չի ցրո՞ւմ... չի՞ գալիս ծնկաշոք իր մեղքերին թողություն խնդրում: Ինչո՞ւ պետք է ցրեր: Այո՛, սա արտառոց դեպք էր պատերազմների պատմության մեջ, երբ զինվորներն ու զորավարները կոպում, արյուն են թափում, իսկ վերջում, որպես կանոն, սեղանի շուրջը նստում, վճիռները կայացնում են քաղաքագետներն ու դիվանագետները: Հետաքրքիր է, պատերազմների պատմության մեջ կա՞ ուրիշ մի դեպք, որ զորամասերից մեկն ու մյուսը զենքը վար չի դրել, չի խնամարկվել, երբ ավարտի պայմանագրերն արդեն ստորագրվել են: Եթե կա, ուրեմն սա էլ այդ դեպքերից մեկն է, եթե չկա, ուրեմն, իրոք, սա բացառիկ է: Գուցե դա էլ ռազմարվեստի պատմությանից Անդրանիկի անգիտությունից է: Կարդացա՞՞մ լիներ, այդպես չէր վարվի: Սա Սեպուհի կամ Սիմոն Վրացյանի չգրվածքի տողերից մեկն է: Այ թե ինչ ասել է ուժերի հարաբերակցություն. պետք է ոչ թե մի, այլ տասնյակ, մի քանի տասնյակ դիվիզիաներ մինչեւ վերջին պահը ու վերջին պահից էլ հետո ոտքի վրա լինեին, որ պարզ լինեին ճիշտն ու սխալը, մեղավորն ու անմեղը: Պատմությունը քայլ առ քայլ նվազեցրել էր հայ ժողովրդի թվաքանակը. կրճատել էր նրա հողերը եւ զենքն ու գորքը նվազեցնելով, նրան մղել էր փակուղի: Իսկ հայի մի գավալը, Թորոսի որդին, դեռ հին հաշվով էր գործում: Հին էր Անդրանիկը ու հնացած: Թող այդպես լինի, թող նորերը գան ու նոր երգեր երգեն...

Անդրանիկն իր կառավարության ենթակայությունից իրեն կամովին դուրս էր դրել՝ համոզված, որ դրանով իսկ ինքն ու իր զինվորներն առաջվա պես մնում են հարվածային տեսադաշտի առաջին գրծում: Թող կառավարությունն իր համար պատասխանատվության պարանը վզից հանի: Դա նույնիսկ լավ էր եւ այդ նաեւ Անդրանիկի ցանկությունն էր՝ հօգուտ հանրապետության հոգսերի թեթեւացման եւ վիճակի ամրապնդման: Բայց որ կլիներ նաեւ կառավարության գերագույն անձանց հատուկ խնդրանք իրեն «վերջնականապես ջախջախելու համար», դա կարող էր վեր լինել նրա բոլոր սպասելիքներից: Գերագույն Անձինք խիստ էին գայրացած: Բայց դա չէր վատը, այլ այն, որ իրար էին փարվել դիվանագիտությունն ու գայրույթը:

1 Ըստ «Սփյուռք» հանդեսի, №17, Բ., 1990 թ.: 2 «Հորիզոն», №209, 15.10. 1918 թ.: 3 ՀՀ ԴԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 36, թթ. 102—107:

Տեղեկացումներ են արվել նաև Ադրբեջանի կառավարությանը: Վերջինս շատ էր անհանգստանում. Անդրանիկի գործամասի Չանգե-
զուրում գտնվելը խանգարում էր Չանգեզուրը նվաճելու և Ղարա-
բաղում լիիշխան տիրապետություն հաստատելու նրանց նկրտում-
ների իրականացմանը:

Ադրբեջանի կառավարությունը Չանգեզուրը համարում էր իրենը: Այդ պատճառով էլ Չանգեզուրի տարածք Անդրանիկի մտնելու
առաջին իսկ օրերից նա սկսում է խոր անհանգստություն ապրել:
1918-ի օգոստոսի 15-ին Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտա-
կան ներկայացուցիչ Չաֆարովը «իր կառավարության հանձնարա-
րությամբ» Վրաստանում Հայաստանի կառավարության ներկայա-
ցուցչին բողոք է հղել, որ «զեներալ Անդրանիկի գործամասերը
Հայաստանի սահմաններից շարժվել են դեպի Ադրբեջանի սահման-
ները և գրավել Չանգեզուր գավառի մաս կազմող Գորիս բնակա-
վայրով հանդերձ»: Եվ դա էլ որակվել է որպես «ոչ-բարեկամական»
քայլ: Չանգեզուր մտնելը նշանակել է Ադրբեջանի սահմանը թափան-
ցել, որն էլ հենց դիտվել է առիթ, որ «երկու հանրապետությունների
միջև չեն կարող պահպանվել բարեկամական հարաբերությունները»:
«Իմ կառավարության անունից ամենավճռական բողոք հայտնելով
Ադրբեջանի Հանրապետության սահմանները հայկական զորք մտցը-
նելու առթիվ, — գրում է Չաֆարովը, — խնդրում եմ... ամենաարտա-
կարգ միջոցներ ձեռք առնել այդ գործամասերը Ադրբեջանի սահման-
ներից ետ քաշելու համար»: Ըստ որում Չաֆարովը սպառնալիք է
կարդում: Եթե նշված պահանջը չկատարվի, ապա Ադրբեջանի կա-
ռավարությունն այլևս հետևանքների համար ոչ մի պատասխանա-
տվություն չի կրի. «հետևանքը» զենքն էր լինելու և արյունահեղու-
թյունը: Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը 1918-ի
օգոստոսի 17-ին Ադրբեջանի ներկայացուցչին հղած պատասխա-
նում չի ուզում հարցը սրել. «Ինչպես զեներալ Անդրանիկը, այնպես
էլ նրա ամբողջ գործամասը հայկական զորքերի կազմից ու ցուցակնե-
րից հայկական կորպուսի հրամանով վաղուց հանված են այն բանից
հետո, երբ նրանք հրաժարվել են ճանաչել Հայաստանի հանրապե-
տության իշխանությունը և նրա պաշտոնատար անձանց, չենթարկ-
վելով նրանց»: Դիվանագիտական ներկայացուցիչը պարտք է համա-
րում ավելացնել, որ զեներալ Անդրանիկն ու նրա գործամասը ոչ մի
կապ չունեն հայկական ազգային գործամասերի հետ, հստակ կերպով
ընդգծելով, որ «Հայաստան Հանրապետության կառավարությունը ոչ

մի կերպ չի կարող պատասխան տալ» Անդրանիկի գործամասի «ան-
պատասխանատու գործունեության» համար: Այս պատասխան
գրությունն այնքան հրատապ է գտնվել, որ երկու օր հետո Չաֆա-
րովից բացի ուղարկվել է Կովկասում Գերմանիայի, Ավստրո-Հուն-
գարիայի դիվանագիտական պատվիրակություններին և օսմանյան
պետության ներկայացուցիչ Աբդուլ Քերիմ փաշային:

Գուցե թե վերը շարադրված ամբողջ որոշակին այնքան չի պար-
զում հարցը, որքան այդ «անպատասխանատու գործունեության»
քառերը: Ադրբեջանական կողմը, որ գրությունը հղել էր օգոստոսի
15-ին, զեներալ Անդրանիկին մեղադրում էր նրանում, որ նա «ներ-
խուծել է Ադրբեջանի Հանրապետության սահմանները»: Հարց է
ծազում, ադրբեջանական հանրապետության այդ ի՞նչ սահմանների
մասին է խոսքը: Վերևում մենք տեսանք, որ Անդրանիկը եղել է
ընդամենը բուն Չանգեզուրում, որ դեպի Գորիս և Միսիան նա եկել
է Նախիջեւանից Կապան ճանապարհով, ուղիղ, ոչ աջ է թեքվել և
ոչ էլ ձախ: Ի՞նչն է այստեղ Ադրբեջան: Սրան պետք է հայկական
հանրապետությունը ոչ միայն պատասխաներ, այլև պատասխան
պահանջեր: Այդ որ օրվանից էին Անդրանիկի անցած այդ ճամփա-
ներից մեկն ու մյուսը Ադրբեջանի սահմաններ եղել կամ նույնիսկ
համարվել: Թուրքերի քաջալերանքը զրգոել էր Ադրբեջանի դեկա-
վարության ախորժակը: Եվ եթե այսպիսի կեղծիք է թույլ տրվում,
ինչո՞ւ է պետք զարմանալ, որ կարելի էր նաև Անդրանիկի նկատ-
մամբ, մեղմ ասած, զայրույթ լինել, անկախ նրանից թե որտեղ էր
նա լինում և ինչ էր անում:

Նազարբեկովի հրամանը հիմք է ընդունվել և կրկնվել ամեն
պատեհ և անպատեհ առիթով, քայց երբեմն էլ նաև հավելումով,
աբապես ասած, ավելորդ գլխացավանքից հեռու մնալու համար: Մի
այլ դեպքում, օրինակ, Հայկական կառավարության մի այլ պաշտո-
նական փաստաթղթում ասվում է, թե Անդրանիկի գործամասը հայկա-
կան կորպուսի կազմից հանվել է «ներկայիս Հայաստանի տարած-
քից հեռացել է» Հայաստանի կառավարության կազմվելուց առաջ:
Սա ճիշտ է, իրոք, հունիսի 5-ին, երբ նա շարժվեց դեպի Նախիջե-
վան, կառավարությունը դեռ ավարտուն չէր ձեւավորվել: Բայց հիմա
էլ ասվում է, թե նա «Չանգեզուր և Ղարաբաղ թափանցել է ոչ թե
Հայաստանից, այլ Թուրքիայից», կոնկրետացնելով՝ նախկին Նախի-
ջեւանի գավառից: Նախիջեւանի գավառը, իհարկե, երբեք էլ Թուր-
քիա չի եղել, այլ, պարզապես և ճշտորեն, նկատի է առնվում նրա

վերադարձը խոյից: Եվ դարձյալ ինքնապաշտպանական ուժնացումներ. Անդրանիկը չի որոշում մտնել Հայաստանի սահմանները, որովհետև վախենում է «զինաթափվել եւ դատի տրվել»:

Հայաստանի կառավարությունը ուղղակի տրամադիր է Ադրբեջանի կառավարության եւ ժողովրդի հետ հաշտ ու խաղաղ լինելու եւ հարցերը լուծելու որպես դուռ-դրկից ապրող հարեւաններին է վայել: Չանգեզուրը եւ Ղարաբաղը տվյալ պահին որակված էին վիճելի տարածքներ: Ոչ Հայաստանը, ոչ էլ Ադրբեջանը Չանգեզուրն ու Ղարաբաղը դեռ իրենց պետականության կազմում չէին հռչակել: Թուրք-ադրբեջանական ջանքերն ուղղված էին այդ տարածքները գործնականում ադրբեջանական սեփականություն համարելու օգտին: Հայկական կողմը սպասում էր խաղաղ լուծման եւ պաշտպանվում էր ադրբեջանական կողմի հարձակումներից: Ուստի Հայաստանի կառավարությունը Ադրբեջանի կառավարությանը հղած փաստաթղթում, վերը նշվածից բացի եւ որպես բացատրություն, հիշեցնում էր. «Ադրբեջանի եւ Հայաստանի սահմանները դեռեւս չեն հաստատվել եւ չեն որոշվել համաձայնության որեւէ ակտով»: Ադրբեջանի կառավարությունը տարածքային պահանջներ էր ներկայացնում եւ նրան հանդիմանում զինված քայլեր էր կատարում, ինչպես ասվում էր Հայաստանի կառավարության հասցեագրած փաստաթղթում, ձգտում էր տիրել Գորիսին, «Ղարաբաղի եւ Չանգեզուրի վեճը լուծել իր օգտին, միակողմանի ճնշմամբ, չհարցնելով Հայաստանի համաձայնությունը»: Ուստի «Հայաստանի կառավարությունը վճռական բողոք է հայտնում դեռեւս չավարտված բանակցությունների առարկա հանդիսացող հարցի լուծման նման եղանակի դեմ»: Սա պարզ ու որոշակի նշանակում էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը փաստորեն, անկախ ձեռի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, ժխտում էր Անդրանիկի ինքնապաշտպանական դերի ու գործունեության նկատմամբ Ադրբեջանի կառավարության բողոքը եւ արդարացնում էր նրան որպես հարեւանի երկրի, նրա անբաժան հողերի ջերմ պաշտպանի: Դա պետք է, որ պարզ լիներ ինչպես վերը բերվածից, այնպես էլ փաստաթղթի եզրափակումից, որով «Հայաստանի կառավարությունը հույս է հայտնում, որ առաջիկայում, մինչեւ սահմանների հարցի երկկողմանի համաձայնությամբ լուծումը, Ադրբեջանի կառավարությունը կհրաժարվի վիճելի մարզերի նկատմամբ իր իշխանությունը հաստատելուց»¹:

Պատասխան տրվել է, բայց պատշաճ չէ: Իրականությանը հա-

մարժեք չէ: Կառավարությունը լիիրավ էր Ադրբեջանի արարքը նվաճողական անվանել ու գաղութատիրական: Այդ ինչպե՞ս է, որ ի սկզբբանե անտի հայկական Սյունիքն ու Արցախը, որոնց բնակչությունը մինչ այդ պահն էլ բացարձակ մեծամասնությամբ հայերն էին, դարձան վիճելի: Ո՞վ էր այդպես հռչակել եւ այդ ինչպե՞ս է, որ պետք էր համակերպվել դրա հետ: Սա էլ տարօրինակ է: Գուցե թե պատասխանողը չի ցանկացել սրել եւ հույսը դրել է խոսակցության առարկա դարձած ուր որ է գումարվելիք խաղաղության վեհաժողովի վրա: Իրականությունը տվյալ օրերին մոտիկ ժամանակ, 1918-ի դեկտեմբերին, Անդրանիկի գորամասի ռուս սպաներ Բորսոն ու պորուչիկ Կոլմակովն են հրապարակել ռուսերեն համակովկասյան թերթում: Հենց թուրքերն են նախահարձակ եղել, այլ ոչ հայերը, այդ նրանք են ցանկացել գրավել Հայաստանի անբաժան մաս կազմող հողերը՝ հոշոտել այնտեղ ապրող հայ բնակչությանը: Օգոստոսի 12-ին մահմեդականները զենքով ու զորքով վրա են տվել Ծուշու եւ Գորիսի միջեւ գտնվող Կալա Դարասի հայկական գյուղին: Նրանց էլ օգնել են չորս կողմի մահմեդական գյուղերի բնակիչները: Ութ օր պաշարել են գյուղը, գրում են նրանք, վերջն էլ այրել: Եվ դրանից հետո է, որ մոտակայքի հայ գյուղերն են ոտքի կանգնել: Վտանգը նրանց էր հասնելու: Նրանք տղամարդկանց գորահավաք են հայտարարել, որը հենց կապիտան Բորսոն է անցկացրել եւ ինքն էլ դա խոստովանում է ի լուր ամենքի: Ծիշտ է, գորահավաքի պահանջն ու հրամանը Անդրանիկն է տվել: Եվ ստեղծվել է մարտական ջոկատ: Այս այն պահին, երբ մահմեդականները Կալա Դարասիի հետ հաշիվ տեսնելուց հետո վերջնագիր են ուղարկել Գերենձոր հայկական գյուղին. «Երկու ժամում զենքը հանձնել, թե չէ ձեզ հետ էլ կվարվենք ինչպես որ կալադարասցիների հետ»: Եվ Բորսոն հռչակում է եղելությունը. «Ես իմ ջոկատով դիրքեր գրավեցի Գերենձոր-Խանաժախ-Խոզնավար գյուղերի գծով եւ մեր միջեւ սկսվեց դիրքային փոխհրաձգությունը»¹: Սա է ճշմարտությունը: Եթե Ադրբեջանի դիվանագետը իր կառավարության անունից այս եւ այսպես գրեր, դա անկեղծ կլիներ եւ հարցն էլ լուծելու երաշխիք կունենար:

Նույն տեղում էլ ռուս սպաներն ի լուր ամենքի գրել են, թե ինչպես է ադրբեջանական կողմը կեղծում փաստերը: Նույն Բորսոն, որ դեկտեմբերի 2-ին առիթ է ունեցել գալու Բաքու, գրել է, որ ինքը այնտեղ կարդացել ու տեսել է, թե ինչպես «Ադրբեջան» թերթը Անդրանիկի ղեկավարած գորամասի վրա «բարդում է բազմաթիվ

1 «Կավկասկոյե սլովո», №269, 12.12. 1918 թ.

կելծ մեղադրանքներ եւ մտածված կերպով խեղաթոյրում է փաստերը»¹:

Խեղաթոյրում է, այն էլ ինչպես: Նույն այդ ժամանակ Ադրբեջանի կառավարությունը բոլոր միջոցներով ամրապնդում էր կապերը արեւմուտքից արշավող թուրքական զորամասերի եւ նրանց հրամանատարության հետ, համագործակցված կոիվ մղելով թե՛ Չանգեզուրը, թե՛ Լեռնային Ղարաբաղը նվաճելու, իրենց պետությանը կցելու համար: Եվ ի՞նչ անբնական բան կար նրանում, որ հարձակումների ենթակա հայությունը պատշաճ կապեր չունենալով երեսանյան իշխանությունների հետ, դիմում էր Անդրանիկի օգնությանը:

Կոիվ է եղել: Երբ մեկն անընդհատ հարձակվել է, օգտվել է իր ուժերի գերակշռությունից, հենվել է իր զորավոր բարեկամ թուրքական բանակի օժանդակության վրա, մյուսն էլ, իր հարազատներին տեսնելով թշնամու սրի երակին մատնված, ինքն էլ է գեւք վերցրել: Անդրանիկը սրբություններ ուներ: Բայց դա իր ժողովրդին սրի մատնելու փաստի առջեւ աչքերը փակելը չէր, ականջները խցանելը: Եղել է նաեւ եռանդուն ինքնապաշտպանություն: Եղել է հակահարձակում եւ ասքա հարձակում: Դրանից հարեւանության պատմությունը չի մրոտվել, այլ այն մարդկանց այլանդակ դեմքը, որոնք ձգտել են հայրենի հողի վրա նրա բնարմատ որդուն ապրելու հազարամյա իրավունքից զրկել²:

Նախիջեւանի կողմից արշավում էին թուրքական զորքերը: Արշավում էին, ձգտելով մինչեւ վերջին մարդը սրբել հայկական գյուղերը: Եվ շատ ցավալի է, որ մոտակայքի թաթարական գյուղերում էլ գտնվում էին բնաջնջման մոլուցքով տարվող մարդիկ: Արգելվում էր ու խափանվում հայության ինքնապաշտպանական դիմադրությունը, բացվում էր նվաճողի ճանապարհը, ուր սկսում էր հորդել անմեղանգն մարդկանց արյունը: Եղել է, որ Անդրանիկը ստիպված ասել է, թե «տեղական թաթարները ոչնչով չեն տարբերվում տաճիկ կառավարությունից իրենց բարբարոսությամբ»: Այդ այն ժամանակ, երբ թույլ չի տրվել «տաճիկ հրոսակներին ներս խուժելու Միսիան եւ կոտորելու տեղական հայ ժողովրդին»³:

Տեղից վեր կացող թաթարական գյուղերի հզորները մեկ էլ պատահաբար հրովարտակ էին հղում հայությանը, թե պետք է հպատակվեք: Այդ կապակցությամբ է 1918-ի սեպտեմբերի 9-ին Չանգեզուրի Կենտրոնական ազգային խորհրդի նախագահ Պարոնյանը

պաշտոնական գրություն հասցեագրել գեներալ-մայոր Անդրանիկին. «Այսօր ստացվեց Սուրխայ բեկի ստորագրությամբ գրված մի գրություն, որով Կոռընձոր գյուղացոց առաջարկվում է հպատակվել Ադրբեջանի կառավարության ու գեներալ ցած դնել»: Եվ հղում է գրության պատճենը: Լուրեր էին շրջում, թե թուրքերը պատրաստվում են հարձակվելու Կոռնիձոր, Խնածախ եւ Մուղանջուղ գյուղերի վրա, որին նախորդել է անա կոռնիձորցիների սրվող առաջարկը: Կոռնիձորցիք որոշել են ծնկի չգալ: Իսկ ուրիշ ի՞նչ պետք է անեին: Գնային ընթացք եւ վզները երկարացնեի՞ն կացնի առաջ: Պարոնյանը Անդրանիկին գրում է. «Դրությունը շատ է կրիտիկական... Կը խնդրեի՞ք Ձեզ անմիջապես օգնության գալ եւ չուշանալ: 2—3 օրից հետո արդեն ուշ կլինի: Հարձակմանը սպասում ենք բոլոր տրայե»¹:

Առայժմ Չանգեզուրի բնակչության, պաշտոնատար թե անպաշտոն մարդկանց, կարծիքը հարցերի խաղաղ լուծումն էր: Չանգեզուրցին համբերատար էր, չէր ուզում, որ կոիվ ու արյուն լիներ, դուռդրկից հայն ու ադրբեջանցին քիչ չէին հաշտ ու խաղաղ ապրել, դարձյալ կապրեին, եթե անարդարություն չլիներ ու ոտնձգություն: Ինքնապաշտպանությունն, այլ ոչ հարձակում, բանակցություն, այլ ոչ զենք ու զրահ: Այդ նպատակով էր Անդրանիկը հրավիրվում, թեեւ զենք կար նրա ձեռքին: Այդ զենքը գուցե թե պետք է սթափեցներ, կլոր սեղանների շուրջը խելք խելքի հրավիրեր: Հայոց գյուղում էլ, ինչպես որ հարեւան ադրբեջանցու հարկի տակ, օրորոցի երեխաներ կային, մանուկ ու ծեր, կային անգեմ տղամարդիկ: Ի՞նչ պիտի լինի «զորամասի կես նպատակը Չանգեզուրի շրջանում» հարցը առաջինն Անդրանիկն է տվել Գորիսում շրջանի 16 գյուղերի ներկայացուցիչների ժողովում: Եվ նախորոշվել է ինքնապաշտպանություն: Դա նաեւ այն պատճառով, որ ինչպես ասվել է տեղում, «այլ ընթացք բռնելը անհնարին է, քանի որ» գավառը կղզիացած է եւ միանգամայն կտրված դրսի աշխարհի անցողաբանից: Ծոշավով էր նաեւ ծանր վիճակում գտնվող հարեւան Արցախի հարցը: Նրա նկատմամբ հարցը ընթացքը կորոշեր, եթե լիներ դրսից հարձակում, դիրքորոշումը կփոխվեր²:

Դյուրին չէր կապը Չանգեզուրի եւ Արցախի միջեւ: Միակ ձորաճամփին, որով կարելի էր կապ հաստատել, ադրբեջանական զինված ուժերն էին բացահայտ ու գաղտնի մշտապես հսկում, կրակ բացելով անցնող խաղաղ բնակչության վրա: Դրությունն ավելի բարդացել էր,

1 Ն. տ., թ. 9: 2 Ն. տ., թ. 12:

1 «Չնամյա տրուդա». Բ., № 148, 7.12. 1918 թ.: 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 7: 3 Ն. տ.:

ինչպես կերտա ստորեւ, երբ 1918-ի սեպտեմբերին թուրքական զորքը ներխուժել է Ծուշի: Անդրամիկը Ջանգեզուրը ամրացնելու միջոցների է դիմել, նրա կենտրոնական ազգային խորհրդի հետ վաղօրոք գույժագիր հղելով Կապանի ազգային խորհրդին. տաճիկները շուտով կարող են երեւալ Ջանգեզուրի շրջանում, պետք է անհապաղ շրջանի գյուղերի ամեն 50 տնտեսությունից մեկական զինված լիազոր ուղարկել Գորիս՝ դիրքորոշում մշակելու համար: Նախ պահանջվում է ստույգ պարզել հրացանների ու փամփուշտների առկա քանակությունը: Մինչ այդ հապճեպ կազմվել է զինվորական խորհուրդ Անդրամիկի գլխավորությամբ եւ 19—45 տարեկանների զինակոչ է հայտարարվել: Կարգադրվում է, որ «տաանց ընդ կողմնելու» զորահավաք սկսվի նաեւ Կապանում եւ շրջանում՝ «հապաղումը ծանր կլինի եւ ժողովրդի առաջ պատասխանատուն դուք կհանդիսանաք» զգուշացմամբ¹:

Գորիսում եւ Միսիանում տեղական ռազմական ուժերը ի մի են բերվում: Ջանգեզուրը ոտքի է կանգնում: Ուշադրության կենտրոնը Անդրամիկն էր: Տեղերից հաշվետվություններ էին տալիս նրան, սպասում հրահանգին: Սուրհանդակները նամակներ էին տանում Անդրամիկի նստավայր Անգեղակոթ, գնում էին քանավոր խոսքով այնտեղ, ուր նա կտեղաշարժվեր: «Հայ տառապյալ ժողովրդի պարծանք փաշա», գրում էր Գորիսի շրջանի Խնձորենկ գյուղի հասարակության անուանից կոմիսար Հայրապետ Առուշանյանը. «Ջանգեզուրի բերդը՝ Խնձորենկը իր հարազատ եղբայր Տեղ գյուղի եւ այլոց հետ վերջապես որոշեցին դիմագրավել թշնամուն... Մենք Ձեզ ենք ընտրել, անմահ դյուցազուն, քաջն Անդրամիկ, մեր ղեկավարն ու ուղեցույց աստղը»²:

Ծառ ծամանակ չեղա՛վ, որ խզել ենք Անդրամիկի կապը իր հոգեհարազատ ընկեր, բարեկամ խորհրդատուից: Առանց Հովհաննես Թումանյան-Անդրամիկ Օզանյան կապի լուսաբանման մեկական էջով թերի կմնան նրանց պատմության գրքերը: Պահպանվել է նամակի սեւագիրը. «Միրելի պարոն Թումանյան» հաղորդակցության խախտման հետեւանքով է, գրում է, որ մոտ յոթ ամիս կղզիացուսից հետո է վերջապես հնարավորություն ստացել գրելու: Եվ պարզ է դարձնում իր կղզիացման իսկական պատճառները: Դեմ է եղել նվաստացուցիչ պայմանագրին, չի կարողացել հաշտվել այն մտքի հետ, որ դա փաստորեն նշանակում է «թողնել տարիներում երազը»

¹ ՀՀ ԳԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 164, թթ. 2—3: 2 2.10. 1918 թ., տե՛ս ՀՀ ԳԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 12:

եւ թույլ տալ, որ թշնամի ուժը առաջ անցնի գնա... «այդ պարագան» իր համար որակելով «ավելի քան անհանդուրժելի»: Հաշվետվության մասն է: Ով գիտե, խզվել էին կապերը, ինչ իմանար, թե ինչպես է իր եղբայրը իրեն ըմբռնել. «...նկատի ունենալով այն լճացած, ստրկացած մթնոլորտը, բոլոր այն դժբախտությունները, որոնք կըսպանուային Հայկական հանրապետությանը եւ հայ ժողովրդին, վճռեցի անցնել Պարսկաստանով եւ միանալ դաշնակից անգլիական քանակին, որու շնորհիվ միայն կը հուսայի փրկել թուրքահայության վերջին բեկորները, իմ այն որոշումն հաղորդեցի մասնավոր պատգամավորության միջոցով վեհափառ կաթողիկոսին, Հայաստանի ապահովության խորհրդի Երեւանի մարմնին... եւ առհասարակ թուրքահայ ժողովրդին»: Կարծես թե բոլորն ասաց, շտապեց իր արածը իր խոսքով հայտնել, եւ եթե սխալ է ու դատապարտելի ինքը, ինչ արած, թող այդպես լինի: Բայց չէ, ազգի մեծ բանաստեղծն ու քաղաքացին չի դատապարտել, չի պարսավել ազգի մեծ զորավարին ու քաղաքացուն: Այդ կերտա նրանց առաջիկա հանդիպման սբահին, որին նրանք կարոտ էին:

Պետք էր համբերել հինգ ամիս եւս: Նամակը 1918-ի նոյեմբերի 22-ին էր՝, առջեւում՝ արտամաշ Արցախը:

Դ Դեպի Արցախ

Արրբեջանն Արցախին ուզում էր Ջանգեզուրի հետ միասին այն քախտին արժանացնել, որին որ սուլթանը Արեւմտյան Հայաստանին բռնակցել էր Գեղի իր լծի տակ: Սյունիքին սերտ հարեւան էր: Գորիսից խճուղին զանդալարեով ուղիղ տանում էր Ծուշի, որը Արցախի կենտրոնն էր, լուսավորության եւ մշակույթի համահայաստանյան օջախներից մեկը: Քաջ արցախցիները այդպես քանի դար դիմադրել էին տարբեր կողմերից արշավող զավթիչներին եւ պահպանել իրենց ինքնուրույնությունը: Նրանք այդպես էլ ինքնակախ էին 1813 թվականին Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ պատերազմն ավարտվելուց հետո կնքված պայմանագրով կամովին Ռուսաստանին միավորվելուց հետո, երբ Հայաստանի մյուս տարածքները մնացել էին Թուրքիայի եւ Պարսկաստանի տիրապետության տակ: Ռուսաստանի կազմում արցախցիները կայսերական կենտրոնի ու նրա կովկասյան փոխանորդի առջեւ պարտքերը փակում էին իրենց

իշխանների (մելիքների) միջոցով, որոնք տնօրինում էին տեղական կառավարման մյուս գործերը: Ավելի ուշ Արցախը, մինչև 1917-ի նոյեմբերը, այդպես ինքնաակախ էր Ելիզավետպոլի նահանգի մեջ, որպես նրա մի գավառը:

Արցախում ուսական գործեր կային եւ պաշտոնյաներ, որոնք գավառից հեռացան Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: 1918 թվականին Արցախը դարձյալ մնաց անցյալի պես ինքնաակախ: Կենտրոնում, Շուշում, հայերի գործերը վարում էր տեղում ստեղծված Հայոց ազգային խորհուրդը, ադրբեջանցիների՝ ադրբեջանականը: Հետո նրանց ենթակայությամբ ստեղծվեցին ըստ ազգությունների երկու քաղաքացիական կոմիտեներ, որոնք իրենց հավասարաթիվ ներկայացուցիչներից կազմեցին մի ազգամիջյան կոմիտե՝ նահանգի ընդհանուր գործերը տնօրինելու համար: Վերջինիս նախագահը հայ էր, տեղակալը՝ ադրբեջանցի: Քանի դեռ դրսից միջամտություն եւ ոտնձգություն չկար, ժողովուրդները հաշտ էին, գործերը խաղաղ: Այսպես Շուշին էր: Նահանգի Վարանդա, Խաչեն, Դիզակ եւ Զրաբերդ հայկական գավառներում բնակչությունն ապրում, իր հարցերը տնօրինում էր առանց ընդհանուր վարչական մարմինների: Անիշխանությունը հեշտ չէր նստում, իհարկե, բնակչության վրա: Ծավալվում են թալանն ու անկարգությունները, ավազակները մնում են անապատի: 1918-ի հուլիսին Շուշիում գումարված հայության առաջին համագումարը ընտրում է Արցախի համահայկական ազգային խորհուրդ, նրա կողմից էլ յոթ հոգուց բաղկացած մի մարմին, որը հանդես է գալիս որպես նահանգի ընդհանուր վարչական ղեկավարություն, կատարելով թե օրենսդիր եւ թե գործադիր մարմնի դեր: Սրանով փաստորեն հռչակվում էր Արցախի ինքնիշխանությունը, նրա անկախ վարչատարածքային միավոր լինելը, որը չէր ճանաչում Ադրբեջանի գերիշխանությունը, թեեւ դեռ ձեռավոր տեսքի էլ չէր քերվել Հայաստանի Հանրապետության հետ նրա վարչական միասնությունը: Շուշին եւ նշված գավառները ստեղծում են իրենց ինքնապաշտպանական զինված ուժերը: Ահա այս իրավիճակում է, որ 1918-ի սեպտեմբերին տաճկական գործերի վերոհիշյալ հրամանատար Նուրի փաշան որոշում է վերջ տալ Արցախի ինքնուրույնությանը եւ այն դնել Ադրբեջանի գերիշխանության տակ: Ստրկացման այդ նպատակները հանձնարարված էին իրականացնելու Զեմիլ Ջահիդ քեյին, որը Նուրի փաշայի օգնականն էր եւ Արցախի «հարցերի» տնօրենը: Նա սեպտեմբերի 20-ին երեքօրյա վերջնագիր է ներկայացրել Արցախի հայոց հոգեւոր առաջնորդին, պահանջելով, որ

նահանգի հայությունը հանձնի բոլոր իր զենքերը եւ անասարկելորեն ենթարկվի Ադրբեջանի կենտրոնական իշխանությանը: Հակառակ պարագայում սպառնում էր զենքի գործադրումը: Հայերը հայցում են երկարացնել վերջնագրի ժամկետը եւ թույլ տալ հարցին պատասխանել Բաքվում Ադրբեջանի կառավարության հետ բանակցելուց հետո: Տանկ զինվորականը մերժում է եւ վերջնագրի ժամկետի հաջորդ իսկ օրը մտնում Շուշի եւ մի քանի հայկական գյուղեր (Փրջամալ, Բոթուկ, Խանաբադ, Նախիջեւանիկ ու Հիլիս) վերցնում հրանոթային կրակի տակ: Սակայն Վարանդայի ու Զրաբերդի բնակչությունը դիմադրում է Ջահիդի զորքին եւ ետ մղում նրա մի քանի գրոհը: Այսպես անկոտրում արցախցիները կանգնում են տաճկա-ադրբեջանական զինված ուժերի դեմ մինչև 1918-ի նոյեմբերի կեսերը, երբ Թուրքիան, որպես պատերազմում պարտված տերություն, իր գործերը դուրս է քերում Անդրկովկասից, որից հետո Բաքու է ժամանում զեներալ Թոմսոնը՝ որպես երկրամասում անգլիական ներկայացուցչության ղեկավար: Այդ ընթացքում Շուշի է գալիս տվյալ ներկայացուցչության մայր Գիթրոնը: Նրա համաձայնությամբ Արցախը բաժանվում է չորս շրջանների՝ Վարանդայի, Դիզակի, Խաչենի եւ Զրաբերդի՝ իրենց տեղական վարչական մարմիններով հանդերձ: Սրանք էլ իրենց հերթին մեկական ներկայացուցիչ են ուղարկում Շուշի, որոնք միատեղ հանդես են գալիս որպես տեղի անգլիական միսիային կից վարչական մարմին՝

Կովկաս քրիտանական ներկայացուցչության ժամանումից հետո Հայաստանի կառավարության համար անսպասելի, անըմբռնելի բան է կատարվում: Այդ նա էր Անտանտի ու նրա կազմի երկրներից Մեծ Բրիտանիայի կողմը կանգնած, նրա հետ հույսեր կապողն ու նրան թիկունք լինելու պատրաստը, որը հենց որպես այդպիսին հակառակ էր Թուրքիային ու նրա հակաստանտանտյան դիրքորոշմանը: Մինչդեռ Թոմսոնը ոտքը Բաքու դնելուց հետո, ասես միանգամից, ջերմությամբ է փարվում Ադրբեջանի կառավարությանը, որը բարեկամության թելերով կապված էր Անգլիայի դեմ պատերազմող Գերմանիայի դաշնակից Թուրքիայի հետ: Իսկ Հայաստանն էլ հուսով էր, թե հենց որ անգլիացի մի զինվոր էլ Անդրկովկաս ոտք դնի, իր օգտին է լինելու, մանավանդ Ադրբեջանում եւ Ադրբեջանի հետ ունեցած իր գործերում: Ո՛վ գիտե, զուցե Հայաստանի կառավարության կազմում գերիշխող Դաշնակցություն կուսակցությունը մոռացկոտ էր դարձել: Այնուամենայնիվ

1 Հովհաննես Առաքելյան, Հայաստանի հանրապետության պ.-ն նախագահին, 2.03. 1919 թ.: ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թթ. 11—12:

նայնիվ, եթե մոռացված լինէր, որովհետեւ դա շատ առաջ էր, թե որքանով օգտակար եղան Թորքիայում անգլիական դեսպանն ու հյուպատոսները 1904-ի Սասունի կոտորածների ժամանակ, ապա գոնե ընդամենը երկու ամիս առաջ կատարվածի հետքերը թարմ պետք է լինէին հիշողության մեջ: Դաշնակցության համակուսակցական դեմքերը Բաքվում, հակառակ բուլշեիկների, հուլիսի 25-ին արտահայտվեցին անգլիացիներին չլուսփրստից Պարսկաստանից քաղաք հրավիրելու օգտին, նրանք եկան եւ դրանից ոչինչ էլ նպատակոր դուրս չեկավ: Կարճ ժամանակ անց թորքական զորքերը սրընթաց մտտեցան Բաքվի մատուցներին եւ ոչ մի անգլիական զինվոր նրանց երթը չկանգնեցրեց, ափսոսաց մինչեւ իսկ փամփուշտ վատնել: Եկող թորքերը գրկախառնվեցին իրենց ընդհառաջ էլած նույնադավան ցեղակիցների հետ, որի արդյունքը 30 հազար հայության արյունահոսքը եղավ:

Նույնն էր պատվում հիմա Արցախում: Բաքվի նավթի բուրմունքից արբեցած Թոմսոնը անհապաղ պաշտպան կանգնեց Արցախի բնակչությանը ծնկի բերելու համար Ադրբեջանի կառավարության այն խարդախանքներին, որոնք ծավալվեցին Ջանգեզուրի նվաճման ծրարագրերի ձախողումից հետո:

Դեռեւս Նախիջեւանից զորքով ու գաղթականությամբ Անդրանիկի դուրս գալիս, ինչպես նշվեց վերեւում, կարծիք կար գնալու գուցե միանգամից Արցախ: Նախապես էլ հայտնի էր, որ Արցախը ցորենով պարենի պաշարով ավելի հարմար էր, քան Գորիսը: Զինվորների մեջ էլ եղել է մի ձգտում, ինչպես դեսպերի օրագրողն է հիշում, «լինել այնտեղ, անտիկ դիրքերու մեջ, կովող ժողովրդի հետ»¹: Գորիսում, Սիսիանում եղած օրերի սկզբից էլ Անդրանիկը մտահոգված էր Արցախով: Հնարավոր միջոցների էր դիմում, որ անհանգի բնակչությունը ինքնապաշտպանության համար զենք եւ պարենի պաշար ունենա: Պետք էր Ջանգեզուրից փոխադրել: Դրա համար հարկավոր էր Զարբուլի ձորով անցումը ապահովել եւ ընդհանուր առմամբ ճանապարհը, որ 70 կիլոմետրից ավելի էր, անվտանգ դարձնել: Դրան նպաստելու էր Ծուշու եւ Գորիսի միջեւ գտնվող Ղարաղլաղ հայկական մեծ գյուղը Արցախում: Այնտեղից հայերը գալու էին իրենց փոխադրականով, որպեսզի տեղափոխեն, բայց թորքերը հարձակումով խափանում են այդ մտադրությունը, գրում է օրագրողը, վերջում էլ կրակին են հանձնում գյուղը եւ բնակիչները գաղթում են Ծուշի²: Զորը ամուր փակվում է երկու կողմերի առջև էլ: Սրանից

հետո է, անհա, որ հարձակման ենթարկվեցին Կոռնիձորը, Խոզնավարը եւ Խնածախը: Արցախի եւ առհասարակ Հայաստանի միջեւ պատմեջը հաղթահարելու միջոցը դառնում է ինչ գնով ուզում է լինի Արցախի եւ Գորիսի ու Սիսիանի միջեւ կապի խզումը վերացնելը: Համոզված, թե դրսից օգնության առջեւ դռները փակված են, Ադրբեջանի կենտրոնական իշխանություններն Արցախի հայ բնակչությանը իրենց հպատակվելու հրամայական պահանջներն են ներկայացնում: Այս ամենին Ջանգեզուրի ու Արցախի հայ բնակչությունը զինված պայքարի վճիռն է հակադրում: Հայաստանի կառավարությունը տարակուսում, դժվարանում էր այդ մտքի հետ համակերպվել: Նա խաղաղ լուծում էր ակնկալում, հուսալով դրան հասնել պատերազմում հաղթող տերությունների համատեղ որոշմամբ: Իսկ Անդրանիկը, բնակչության միահամուռ ցանկությամբ, հոկտեմբերի երկրորդ կեսից ռազմական ուժերն էր տեղում բաշխում եւ մարտական կարգի բերում: Արցախից «Ամենագեղազնիվ Անդրանիկին» գրավոր հայտնում էին, որ իրենք հավիտյանս հավիտենից չեն ենթարկվելու մահմեդականների տերությանը³:

Նորի փաշան դեռեւս 1918-ի մայիսից էր Արցախ պարտվողական տրամադրություն ներարկելու ջանք թափում: Հենց դա՛ էլ առավել բորբոքեց արցախցիների դիմադրական ոգին: Նույն տարվա հուլիսին Ծուշիում Արցախի հայության առաջին համագումարում Հայոց ազգային խորհրդի ընտրությունը անհանգը Ադրբեջանին չենթարկվելու ու Բաքվից անկախ մնալու հռչակումն էր նշանակում²: Ղարաղլաղ գյուղի եւ մոտակայքի մյուս հայկական գյուղերի հայ բնակչության նկատմամբ հաշվեհարդարից հետո թորքական զորամասերի հրամանատարները հետամտում են համայն արցախցիների դիմադրությանը վերջ տալու հետ մեկտեղ նաեւ Անդրանիկին երկրամասից հեռացնելու նպատակը: Սեպտեմբերի 22-ին Արցախի սահմանները, 24-ին՝ Ծուշի Զեմիլ Զահիդ բեյի գլխավորած թորքական զորքերի մուտքին հետևում են տեղի հայ բնակչության, հատկապես նրա աչքի ընկնող ներկայացուցիչների հպաձանքներն ու բռնությունները: Ազգային ինքնիշխանության մարմինները հռչակվում են վերացված³: Սրանից հետո է, անհա, որ տազնապալից լուրերը ստանալուն պես Անդրանիկը Գորիսում շրջանի զինվորական ներկայացուցիչների ժողովն է հրավիրում: Զահիդ բեյը հայտարարել է, որ իր զորքը շարժվելու է դեպի Ջանգեզուր: Տեղեկանալով, անհա, իրավի-

1 ՀՀ ԴԿԴԱ, ք. 370, գ. 1, գ. 38, թթ. 33, 34: 2 Հ. Աբրահամյան, Ղարաղլաղ հայության համագումարների պատմությունից, տե՛ս «Դ.Բ.Հ.», №1, 1986 թ.: 3 «Մշակ», 23.02. 1919 թ.: Նաեւ՝ ՀՀ ԴԿԴԱ, ք. 370, գ. 1, գ. 33, թ. 29—33:

ճակին, ժողովը որոշել է Գորիսում պատասպարված գաղթականությանը անհասպաղ տեղափոխել Սիսիան: Նպատակահարմար է գտնվել գավառի սահմանային գյուղերի բարձունքներում զինված պահակություն սահմանել: Անդրանիկը հայտարարել է, որ զենքն ու զինամթերքը, եղածը, բավական են, բայց հարկավոր է այն արագ կերպով բաշխել նաև տեղի ինքնապաշտպանական՝ «Ծուշու» եւ «Գանձակի» գնդերին, որպեսզի բոլոր ռազմական ուժերը լիովին պատրաստ լինեն մարտի: Ռազմամթերքի որոշ մասը նույնպես որոշվել է տեղափոխել Սիսիան: Այդպիսով հարձակվող թուրքական ուժերի դեմ մարտի մեջ մտնողը լինելու էին միայն Անդրանիկի հարվածող զորամասն ու նշված երկու տեղական գնդերը:

Խոյից Ջուլֆայի կամրջով դարձի օրից էին արցախցիք սպասում Անդրանիկին: Արցախի ազգային խորհրդի պատվիրակն էր, որ Նախիջևանի մոտ Բիստ գյուղում հանդիպեց եւ զորավարին հայտնեց նրա զորամասին Արցախում սպաստան տալու, ապրուստի բոլոր կարիքները տեղում հոգալու հրավերը: Բայց նրա ոտքը դեռ Նախիջևան տանող ճանապարհին էր, երբ վտանգի ենթակա տեղացիները իրենց երկրից այլևս առաջ չգնալու, տեղում մնալու եւ վճռական ապավեն լինելու առաջարկներն ու պահանջներն էին դնում: Օրագրողը գրել է. «Թուրքերն ավելի սպառնական են այդ ուղղությանը (այսինքն՝ Նախիջևանում՝ Հ. Կ.), հետեւաբար Անդրանիկ ավելի անհրաժեշտ կը գտնե գնալ այդ ուղղությամբ»:

Հետագայում դեպքերի բերումով Գորիս հասնելուց, ապա եւ Սիսիան տեղափոխվելուց հետո Անդրանիկը մտահոգվում է այնտեղ պահեստավորված զենքի մի մասը շուշեցիներին ուղարկելու հարցով: Շուշեցիները գիտեին, որ այդ զենքը զանգեզուրցիք պատասպարել էին իրենց, մասամբ նաև Գանձակի հայությանը մատուցելու համար: Շուշեցիք էլ ֆուրգոններն են ուղարկում: Բայց Ջաբրուլի ձորի թուրք պահապանների հարձակման ընթացքում զենքը փոխադրելու ելած մարդիկ հրացանային կրակի տակ են ընկնում, Ղարաղջլաղ գյուղի ավերմամբ էլ խափանվում է զենքի փոխադրումը:

Թուրքերի Շուշի մտնելուց հետո արցախցիք, թեև մեծ դժվարությամբ, սուրհանդակների միջոցով երբեմն-երբեմն կապվում են Ջանգեզուրի հետ, իրենց վիճակի, խնդիրների մասին տեղեկացնելով Անդրանիկին: Ամուր էր փակված Ջաբրուլի ձորը: Հոկտեմբերի 11-ին Շուշիից լուր բերողները միանգամից երեք հոգի են եղել: Կեսգիշերին են Անդրանիկն ու տեղի Ազգային խորհրդի անդամներն ընդու-

1 «...հարուածող պորամասը», էջ 86—87: 2 Ն. տ., էջ 114:

նել նրանց եւ խորհրդակցել: Պարզվել է, որ նրանցից մեկը՝ դաշնակցականների, մյուսը՝ սոցիալ-դեմոկրատների եւ երրորդը՝ հայ ժողովրդական կուսակցության կողմից է, լուրը՝ հավաստի, կարծիքը՝ որպես բոլորի կողմից լինելու, ընկալվելու համար:

Լուրջ խորհրդածություններ եւ հարցի հանգամանայից քննարկումներ են եղել Գորիսում եւ Սիսիանում: Տարակարծություններով հանդերձ, ուժեղ էր թշնամուն զենքով դիմադրելու եւ Արցախին օգնության գնալու ցանկությունը:

Երթի գնալուց առաջ թիկունքի ամրապնդման հարցերն են լուծվում: Կովելու իր պատրաստակամությունն է հայտնում նաև Կապանը:

Արցախից Վարանդայի ինքնապաշտպան զորամասի հրամանատար Սոկրատի սուրհանդակը բերում է նրա վճռական պահանջը Անդրանիկից՝ սահմանն անցնել եւ օր առաջ գալ օգնության: Նույն պահանջով սուրհանդակների թիվը բազմանում է: Ջանգեզուրի բռնակչության ներկայացուցիչները գալիս են համազումարի: Դարձյալ նույն վճիռը. «ամեն միջոցով օգնության հասնել Ղարաբաղին»:

Անդրանիկը գորքը շարժում է Գորիսից դեպի Արցախի սահման տանող խճուղիով: Նա հետախուզական երթ է կատարում Ադրբեջանին ու Լեռնային Ղարաբաղին զուգահեռ հայկական գյուղերում, որոնցում, ինչպես ենթադրվում էր, կարող էր ընդհարում լինել հակառակորդի զինված ուժերի հետ: Այդ գծի վրա հայերն արդեն իրենց համար պաշտպանական դիրքեր էին փորել եւ պահակություն սահմանել: Վերադառնալուց հետո, Արցախից ծպտյալ ծերուկ սուրհանդակը բերում է Վարանդայի ինքնապաշտպանական զորքի հրամանատար Սոկրատի նոր նամակը: Հայերը պատրաստ են, գրում է նա, 1500 հոգի զինված է որպես զորամաս, 15 հազար մարդ էլ անմիջապես կարելի է զենքի տակ դնել: Գրում է այս Սոկրատը, բայց եւ նշում, որ կան նաև տարաձայնություններ: Բնակչության մի մասը մտածում է կոտորածից, մանավանդ երեխաների, խույս տալու համար կովի չդիմել: Նրանց մեջ են մինչև իսկ հեղինակավոր դեմքեր, ինչպես Շուշու քաղաքագրուխը:

Այսուհանդերձ Սոկրատի առաջարկը վճռական է, արցախցիք պատրաստվում են մենամարտի, միայն թե Անդրանիկը ընդառաջ գա: Նույն ոգով նամակ է գրել նաև Հադրութի շրջանի հայոց ինքնապաշտպանության հրամանատարը:

Օրեր են անցնում: Անդրանիկը գավառի թե՛ տեղական, եւ թե՛ իր

1 Ն. տ., էջ 121: 2 Ն. տ., էջ 138:

գործը ի մի է բերում, Սոկրատի նամակին էլ, բերած ծերուկի միջոցով, պատասխան է ուղարկում եւ սպասում Արցախի հայության համահավաք կարծիքին: Ծրջում է գավառի գյուղերում: Տեղերում գլխավորների եւ հասարակության ժողովներ է գումարում: Հետեւում է գորակոչին:

Շուշի թուրքերի մուտքի առթիվ սեպտեմբերի 30-ին Գորիսում Ջանգեզուրի շրջանային համագումար է կայացել: Վճիռը հակիրճ է եւ հստակ. վճռական կոչով դիմադրել թշնամուն, «Կատարել գեներալ Անդրանիկի՝ զինական եւ պարենավորման բնույթի բոլոր պահանջները»: Ցավալին թերեւս այն է միայն, որ 61 պատվիրակներից 42-ն են ներկա գտնվել, որոնցից 27 կողմ, 14 դեմ եւ մեկ ձեռնպահ: Միաձայնության համար խնդիրը շատ էր խրթին: Եվ պատճառը գերազանցապես ուժերի հարաբերակցության մեջ էր, երկրամասի շրջանակներից դուրս:

Միսիանում հոկտեմբերի 2-ին ժողովի են նստում 17 գյուղերի ներկայացուցիչները: Նախօրոք Անդրանիկը գյուղից գյուղ էր անցել, ցանկանալով 19—45 տարեկանների զորահավաքով լրացնել տեղի զորական ուժերը: Բայց արդյունքները չէին գոհացրել: Դա առաջ էր: Շուշի թուրքերի մուտքից հետո որոշ տեղաշարժ է եղել: Բայց դա էլ՝ ոչ շոշափելի: Հավանաբար նույն պաշտպանական մտայնության պատճառով: Զորահավաքից դժգոհ Անդրանիկը պահանջել է իրեն տեղեկացնել, թե շրջանի 22 գյուղերում որքան հրացան ու փամփուշտ կա. «...այդ ցուցակագրությունն ալ չկատարվեցավ», ասել է Անդրանիկը ժողովում: Դրանից նա ինքն էլ է ընկել տհաճ վիճակի մեջ: Շուշին հանձնվել է, Ջանգեզուրի մյուս շրջանները ասել են իրենց վճռական մարտական խոսքը, Միսիանն էլ պետք է իր որոշումը տա՝ «կովել թե՛ հանձնվել».

հարցն այդպես է դրել Անդրանիկը: Բոլոր այդ հարցերը Անդրանիկը դրել է ժողովի սեղանին: Կովելու վճռից բացի պետք էր գեներալի հաշիվը ճշտել եւ զորահավաքն սկսել «իսկույն եւեթ»: Անհապաղ, առանց վաղվան գցելու, ամեն մի գյուղ իր համար նպաստավոր դիրքեր պետք է փորեր, որոշեր միջգյուղյա կապերի հարցը: Այլ կերպ ասած, խնդիրը լիապես մարտի պատրաստ լինելն էր: Մրանից հետո արձանագորողի գրառումն է՝ «բոլոր ժողովականները միաձայնությամբ որոշեցին ընդառաջել»: Այդ նշանակում էր՝

Միսիանի ժողովուրդը ոչ մի պայմանով չպիտի համաձայնի գեներալի ման ու անձնատրության,

1 ՀՀ ՊԿՊԱ. ք. 370, ց. 1, գ. 33, թ. 38:

ցուցակագրել եւ անհապաղ ներկայացնել Միսիանի ունեցած զենքի ու ռազմամթերքի տվյալները, սկսել 20—40 տարեկանների լրացուցիչ զորահավաք, զինել նոր զորամիավորումները եւ ստանձնել նրանց կարիքների բավարարումը¹:

Մրանք ծրագրեր էին: Ի կատար ամման հեշտ ու դժվար լինելը հասկանալի է դառնում ժողովականների առջեւ Ջանգեզուրի Կենտրոնական ազգային խորհրդի անդամ Ա. Ծիրինյանի ելույթից: Նույն այդ օրն էր նա վերադարձել Երեւանից: Ծիվել էր Հանրապետության ղեկավարների հետ: Հիասթափվել էր եւ այդ հիասթափությունն էր լեռների քարքարոտ ճամփաներով իր հետ բերել, տեղ հասցրել:

Խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի, Դաշնակցության կենտկոմի եւ բյուրոյի քսան անդամների ժողովում քննարկվել են Ծիրինյանի հարցերը: Հանգել են այն եզրակացության, որ «Լարաբաղի հայությունը պետք է ամեն կերպ զիջում ընէ, նույնիսկ գեներալի լինի»: Այս՝ մի խումբ ղեկավարներ: Իսկ խորհրդարանի մեծամասնությունը, հոչակում է Ծիրինյանը իր հետ բերածը, տրամադիր չէ մեզ օգնել ոչ փողով, ոչ էլ ռազմամթերքով: Փոքրամասնությունն է եղել մարտական ոգուն համակիր, որոնց մեջ՝ Դրոն: Հովհ. Քաջազնունու վարչապետական կարծիքն այն էր, որ Թուրքիան ավելի կամրանա: Ինքն իր կարծիքի մեջ ամփոփված Ծիրինյանը, տեսնելով, որ կառավարական մարդկանցից հույս չկա, դիմել է գեներալ Միրիկյանին: Եթե այդ պահանջներն արվեին չորս ամիս առաջ, ասել է նա, ինքը կարող էր մի որեւէ բավարարություն տալ, իսկ հիմա ի վիճակի չէ:

Զնուաթափվող զանգեզուրցին համատել է: Հանրապետության ղեկավարներից զենք ու զինամթերք է խնդրել: Դարձյալ չգոհացնող պատասխան: Լեռների երկրի առաքյալին մնացել է անել եզրակացությունը. «մինչ այս պահը մեր միջեւ կար գոնե բարոյական կապ, այժմ այդ էլ խզված է»:

Հաճույացում Թուրքիայի կառավարությանը եւ վարկաբեկում Անդրանիկին, այս է տեսել Ծիրինյանը մայրաքաղաքում²: Զի տեսել իրենց՝ ծայրագավառի մարտնչողների համար ո՛չ ամուր թիկունք, ո՛չ էլ նույնիսկ թույլ թիկունք: Մերժվում էր ոչ միայն առաջին գծի վրա կանգնած զանգեզուրցին, այլեւ մի ինչ-որ շապինկարահիսարցու որդի՝ գեներալացած ֆիդային: Եվ դա պարզ ու բացահայտ: Իսկ մենք վերելում հարցնում էինք, թե՛ գիտեր արդյոք, թե՛ չգիտեր Անդ-

1 Ն. տ., թ. 40: 2 Ն. տ., թ. 41:

րանիկը կառավարության վերաբերմունքը իր անձի նկատմամբ: Կարելի էր, ով էլ ուզում է լինի, նրա վարվելակերպի հետ համաձայնել կամ չհամաձայնել, դա քաղաքականություն է, որը միշտ էլ, կարգ է ճանաչում է երկու բեկեռների միջև: Իսկ փամփուշտ, քիչ թե շատ, չէ՞ր կարելի տալ, չէ՞ր կարելի Ջանգեզուրի հետ կապի, նրա բնակչության նկատմամբ վերաբերմունքի ձեւեր մշակել... որ բերված խոսքը գոնե ոգետրիչ լիներ եւ հուսադրող: Հետո հեռուից մեզ հասած փաստը ասում է, թե կարելի էր եւ անհրաժեշտ: Այդ է հավաստիացնում հոկտեմբերի 2-ի ժողովին ներկա գտնվածը. «Մի շարք գյուղերի ներկայացուցիչները պնդում էին, թե պետք է կոչվել Ղարաբաղից մեր երկիրը խուժող թշնամու դեմ, մինչեւ իսկ եթե նա լինի տաճկական կանոնավոր բանակ: Այդպես էին ասում գլխավորապես Կոռնիձոր, Տեղ, Խնածախ, Խոզնավար եւ այլ գյուղերի ներկայացուցիչները...», չնայած նրան, որ մյուսներն էլ տատանվում էին¹: Ասում էին, բայց ո՞ւմ համար՝ օրվա թե գալիքի:

...Անդրանիկը առկա գեներալ տեսակներն է պարզում ու քանակը: Ընդհանուրի է բերում զորակոչի արդյունքները: Եվ դարձյալ նույն հարցն է դնում՝ կոչվել, թե՞ հանձնվել: Պետք է որոշակի լինեն: Հանձնարարում է ամեն գյուղի համար ընտրել իր նպաստավոր դիրքերը եւ խրամատները փորել²:

Հոկտեմբերի 21-ին Անդրանիկի մասնակցությամբ Ջանգեզուրի Կենտրոնական ազգային խորհրդի նիստում որոշվում է դեպի Արցախ՝ Ծուշուն օգնության գնալ նախապես երթուղին հաստատապես ամրապնդելուց, վնասագերծելուց հետո: Անդրանիկը հայտնում է, որ այդ խնդիրը ինքը մտադիր է լուծել երկու փուլով, առաջինում ընթանալ մինչեւ Ջարուղ, այնուհետեւ այդտեղից առաջ շարժվել դեպի Ծուշի: Անդրանիկը պատրաստակամություն է հայտնում այդ քայլը կատարել անկախ նրանից՝ տեղացիները կօգնեն իրեն թե ոչ: Եվ դա սկսել առանց երկար քաշքշելու³:

Ժամանակ անց սուրհանդակները բերում են արցախցիների ժողովրդական մարտահրավերը «բազմաթիվ շրջանային ու զինվորական ղեկավարների ստորագրությամբ»⁴: Նրանում դարձյալ երկվություն է եւ տարակարծություն, ձեւակերպված երկու մամակում՝ անհապաղ գնալ օգնության, թե՞ տասը օրից հետո: Մեկը մի կարծիքն է պնդում, մյուսը՝ այլ⁵:

Անդրանիկը բացահայտել է իր երթի ծրագիրը: Չորքը նպատակ

ունենալով շարժել բավական վաղ, քան դա եղավ, նա իր առջեւ խնդիր էր դնում նախ խաղաղեցնել ճանապարհի սկզբին գտնվող մահմեդական գյուղերի ըմբոստ տրամադրությունները եւ հետագայում հարցի լուծումը ապահովել, ըստ հնարավորին, առանց մեծ կորուստների, առավել եւս՝ առանց արյունահեղության: Այդ գյուղերն էին՝ Մինքեհը, Մոլլա-Ահմետուն եւ Սուրանլարը: Հաջորդ փուլում ենթադրվում էր գրավել Ղարաղլաղ գյուղը եւ շարժվել, առաջ գնալ Ծուշի: Անդրանիկը նման ծրագիրը համարում է անառարկելի եւ անվերապահ. իրականացնելու է անկախ նրանից, թե տեղի ռազմական ուժերը իրեն կօժանդակեն, թե ոչ: Սա արձանագրված է. «Տեղացիներու դեմ պիտի կովի ամենախիստ միջոցով, նույնիսկ հրացանազարկ ընելով», համաձայնելով, որ դա անհապաղ հաստատվի դաշտային դատարանով: Պարզ է, վճռական խոսքը ուղղվում է տատանվողների ու տարակարծողների դեմ: Հարցը ճակատագրական էր: Ով-ով, հրամանատարը պետք է իր վճռի մեջ հաստատ լիներ:

Բայց, ահա, տեղական ռազմական ուժերի ղեկավարներից գեղապետ Մելիք-Ծահնագարյանը այլ կարծիքի է: Ի՞նչն էր նրան անհանգստացնում: Նախ այն, որ ռազմաճակատում պատերազմական գործողություններն ընդհատված էին, կարելի էր հարցին լուծում տալ առանց զինված ուժի գործադրման: Վախ կար, որ վերջինը կարող էր ծանր նստել Արցախի հայությանը. «Անօգուտ է որեւէ գործողության ձեռնարկել, քանի որ ընդհանուր զինադադար է եւ թե եղած ուժերը, եւ տեղացիք ոչ մի կերպով չպիտի օժանդակեն եւ այդ ձեռնարկը կարող է առիթ տալ, որ թուրքերը կոտորեն Ծուշիի հայությանը»: Բանավորից է արձանագրված:

Տեղացին այդպես է ասում: Իսկ Անդրանիկը տեղացի չէ: Հեռուից է եկել: Բայց չէ՞ որ նիստին ներկա գտնվող արցախցի պորուչիկ Հովակիմ Ստեփանյանը նույնպես տեղացի է: Նրա ցավերը ավելի շատ են: Արցախցին քիչ արյուն չի թափել, հիմա էլ Անդրանիկն է գործը բարդացնում: Բայց չէ, այդպես չի մտածում արցախցին: Նա գտնում է, որ մյուս ճակատներում պատերազմի դադարումը Անդրկովկասի հետ կապ չունի: Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը պատերազմող երկրներ չեն եղել: Կնքվող հաշտության պայմանագրերն էլ նրանց չեն վերաբերում: Մանավանդ, որ Հայաստանն ու Ադրբեջանը փաստորեն կովի մեջ են իրար հետ: Բայց, ասում է Հովակիմ Ստեփանյանը, եւ այս էլ նրա գլխավոր բայցն է, տեղական, այսինքն զանգեզուրյան, ուժերը կովի առաջին փուլին կմասնակցեն, իսկ երկրորդին՝ ոչ: Այդ այն բայցն է, որը ոչ թե մերժումն է, այլ

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35: 2 Ն. տ., գ. 33, թ. 40: 3 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34: 4 «...հարուածող կորամարը», էջ 141: 5 Ն. տ.:

համաձայնությունը. «Եթե լավ կազմակերպվի, մեր ժողովուրդը կըկուվի»: Սա գործի գլուխ կանգնած է՛ր տեղի ղեկավարներին էր վերաբերում, է՛ր, անշուշտ, նաև Անդրանիկին: Չանգեզուրցին տարիների փորձից չէր համոզվել, թե՛ եթե ինքը տեղում հանգիստ մնա, նրան ոչ ոք չի վողովելու: Որտեղ-որտեղ, մարդկային այս կարգը աշխարհի այս հատվածում հարցական էր. «Ադրբեջանը պետք է ուզի միշտ գրավել Չանգեզուրը, որ իր սահմանների մեջ մնա»: Սրանից էլ բխեցվում է եզրակացությունը. «Այդ պատճառով անհրաժեշտ է կատարել երկու գործողությունն էլ, ինչքան որ հնարավոր լինի: Ժողովուրդները ինքնաբերաբար չեն կուվի երկար ժամանակ, պետք է նրանց ետևում լինի կազմակերպող ուժ»:

Հազիվ թե այդ բաների իմաստի մեծ մասը Անդրանիկին չէին վերաբերում: Բայց դա նա ընդունում է ոչ որպես հանդիմանական մի ակնարկ եւ ոչ էլ ուղղակի հասցեագրում իրեն: Դա փաստն էր, որը նրան գուցե թե տվյալ դեպքում բոլորից շատ էր հուզում եւ տանջում: Եվ նա միջամտում է սկսված բանավեճին:

— Իսկ ո՞վ է ասել, թե եթե Չանգեզուրը խաղաղ մնա եւ քայլ չանի, Ադրբեջանը ինքը չի նախաձեռնելու:

Անդրանիկը փաստի խորքն է մտնում: Արմատն է մատնանշում: Այսօր մի կոիվ մեկը կսկսի, վաղը՝ մյուսը: Կոիվն ինչո՞ւ է սկսվում, ինչո՞ւ պետք է վաղը այն սկսվի: Որովհետեւ այն աչքը, որ ակնապիշ զանգեզուրյան հողի ու ջրի վրա է, արցախյան գյուղերի ու քաղաքների վրա, կարծես թարթիչ չունի, սեւեռում, անդադար նայում է եւ սպասում է զայվթելու հարմար վայրկյանին: Առանց այն էլ այդ աչքի տիրոջը թվում է, թե շա՛տ է համբերել ու ձգձգել: Եթե հանգամանքները ներեին, ասում է Անդրանիկը, Ադրբեջանը Չանգեզուրը գրաված «ճերմըկցած կը լիներ»: Ուստի, նա հաստատում է այն՝, գլխավորը տվյալ պահին մարտնչող ուժի կազմակերպումը պետք է լինի, իսկ դա «մի հոգիով չի լինի... Ադրբեջանը մոբիլիզացիա կընե եւ մի ամիս հետո կհարձակի Չանգեզուրի վրա»:

Պետք է որ այս խոսքերից հետո ներկաների հայացքը Անդրանիկի կողմից իրենց կողմը բեւեռվեր: «Մի հոգով չի լինի»: Պարզից էլ պարզ էր: Ահա այս պահից նիստում քննարկվող հարցի բնույթը փոխվում է: Հենց ճիշտ այդ պահին հնչում է ելույթ ունեցող տեղացու ներքին պահանջը, որը թաքնված մի անհանգստության դեմ էր.

— Ժողովուրդը վտանգի պահին ամեն ինչ կգոհի, կսկսի, բայց դրանից հետո այլևս զոհողության չի գնա, որոշեք այնպես. որ անհաջողության դեպքում «մեզ չմեղադրեք»:

Հավանաբար վճռին սրտատրոսի սպասող Ծիրինյանին թվացել է, թե այլևս ժամանակը թանկ է, թե սկսվել է քաշքշուկը, երբ հարցը առանց այս նիստի էլ լուծված է եղել.

— Եղել է Չանգեզուրի համագումարի որոշումը՝ գնալ դեպի Ղարաբաղ: Այլևս պետք չէ ձգձգել քննարկումը. «պետք է փորձել եւ կատարել երկու գործողությունն էլ»:

Ծիրինյանը գտնում է, որ նիստը իրավասու չէ համագումարի որոշումը վերանայելու: Ուրիշ բան, եթե խոսք գնա գործը լավ նախապատրաստելու եւ պատշաճ արդյունքը ապահովելու մասին:

Արցախից Հովակիմ Ստեփանյանը դառնում է քիչ առաջ Անդրանիկի ասած խոսքին, թե՛ եթե երկու գործողությունն էլ չի ձեռնարկվելու, ապա ինքը, Անդրանիկը, Չանգեզուրից կհեռանա: Իր հաջորդ բաների առաջին կեսը արցախցին ասում է դեմքով դեպի Անդրանիկը, երկրորդը՝ դեպի Չանգեզուրի ներկայացուցիչները: Զորավարը Չանգեզուրից չպետք է հեռանա, իսկ Չանգեզուրն էլ պետք է ապահովի Ղարաբաղի թիկունքը:

Ծիրինյանը եզրափակում է՝ Արցախ գնալու մասին Չանգեզուրի համագումարի վճիռը մնում է անփոփոխ: Որոշվում է ձեռնամուխ լինել առաջին գործողության կատարմանը, բացել ճանապարհը մինչեւ Զաքուղ՝:

Լուրերը տեղ էին հասնում: Արցախի շրջաններում ստեղծված էին համաշրջանային զինվորական հեծակետեր, որոնք իրենց ուժերն էին ի մի բերում: Այստեղ էլ նրբություններ կային: Չանգեզուրցիների Գիտից ժամանակ անց նրանք հարց էին տալիս. անցումը Զաքուղով սկսել անմիջապես՞, թե՛ տասը օր հետո: Անդրանիկը, որ կարող էր ու պատրաստակամ անհապաղ շարժվելու, հանգամանքները նկատի առնելով, նախընտրում է տասը օր հետոն: Արցախցիք տարակուսում էին, թե սկսելու, թե օրվա հարցում լիակատար միասնության չլի: Բանգում, թեև մարտի պատրաստ առաջապահ ուժեր կային, որոնք վճռական քայլերի են դիմում: Բնորոշ է Դիզակի օրինակը: Ծրջանի ռազմական գործի հրամանատարները Ծուշի թուրքերի մտնելուց հետո առանձնացել եւ Հադրութում ստեղծել են իրենց մշտական գործը, տեղերում համապատասխանորեն նշանակելով մարտի պատրաստ պաշտպանական կետեր: Դիզակցիք այն կարծիքին էին, որ ոչ միայն իրենց, այլև մյուս շրջաններում էլ բոլորը տեղերում պետք է

ունենային իրենց զինված ուժերը եւ հույսը դնեին ոչ թե դրսի, այլ «իրենց գեներալի եւ լավ կազմակերպության վրա»:

Դիզակցիք կապվում են Վարանդայի, Խաչենի ու Զիվանջիի շրջանների հրամանատարների հետ եւ «ամեն ջանք գործադրում քնակչության ոգին բարձրացնելու, դիմադրությունը կազմակերպելու համար: Բայց դարձյալ բոլորն արվում էր Անդրանիկի գալստյան հույսով, նամակներով ու բանակոր բերված խորհուրդներով ու ցուցումներով:

Ժամ-ժամ էին սպասում Անդրանիկին: Անհամբերությունից թորիմացություն էր ծնվում: Պատահում էր, որ սահմանի կողմից հրացանաձգության ձայներ էին լսվում: Մի անգամ էլ, կարծելով, թե Անդրանիկի զորքն է գալիս, դիզակցիք իրենց ուժերը շտապով կենտրոնացնում են այդ կողմում: Տեսնելով, որ ոչ մի զորք էլ չի երեւում, ինքնակամ քայլերի են դիմում մտակայքի մահմեդական գյուղերի ռազմամուկներին սաստելու եւ նրանց ուսմաձգությունները կանխելու համար: Հետո սուրհանդակը նամակ է բերել, որն էլ ոչ է տեղ հասել: Այս գալիս են Անդրանիկի հինգ սուրհանդակ եւս Դիզակից նրանց ուղարկում են Վարանդա, որտեղ Սոկրատ բեկ Մելիք-Ծահնագարյանն էր, նրանց նույնպես տեղեկություններ հաղորդելու: Այս ընթացքում դիզակցիք մի ամբողջ շաբաթ կազմ ու պատրաստ սպասել են հրահանգի: Եթե այն տասն օր սուս լիներ, կարող էին այդ օրերին էլ սկսվել ոչ միայն Չարուղն անցնելու, այլև դեպի Օուշի առաջ գնալու գործողությունները: Թեև համոզված ենք, որ դրանից հետո էլ ծագելու էին նոր դիրքերում ամրանալու, ստեղծված նոր վիճակը ամրապնդելու եւ դրա հարատևումն ապահովելու ոչ պակաս կարևոր, ոչ պակաս դժվարին հոգսերը: Արցախյան համար պատմության նոր էջ էր բացվելու:

Իրենց համար մեծ քանակությամբ ռազմամթերք կուտակելուց բացի, դիզակցիք օգնել էին նաև Վարանդայի գյուղացիության զինմանը. «Դիզակը միանգամայն ապահով է» եւ ի վիճակի «երկար ժամանակ ռազմական գործողության»¹, — գեկուցում էին Անդրանիկին Դիզակի հրամանատարները: Սա մի եզակի փաստ չէր: Դանակը բոլորի էլ ոսկորին էր:

Պատմական շրջադարձի այն օրերն էին, երբ չորս կողմը հասունացած ու խմորվող հարցեր էին: Սպասելի ու անսպասելի, հուսադրող եւ հուսալքող լուրեր էին գալիս մոտ ու հեռուներից: Պատերազմն ավարտվել է, Թուրքիան զինադադար է ստորագրել, հրա-

ժարվում է իր գրաված տիրույթներից, Ռուսաստանը, չեղյալ հռչակելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, պահանջում է, որ թուրքերն իրենց զորքերը ետ քաշեն մինչև պատերազմի սկիզբը եղած սահմանը: Թուրքերի զորքերը երկրամասից ետ քաշելուն զուգընթաց Անդրկովկասը դրվում է Անտանտի տերությունների ռազմական վերահսկողության ներքո, իսկ Բաքուն էլ հռչակվել է որպես նրանց համերկրամասային զինվորական ներկայացուցչության նստավայր: Հայտնի է դառնում, որ Բաքու է ժամանել այդ ներկայացուցչության ղեկավար գեներալ Թոմսոնը: Այս ամենը Արցախին օգնելու մասին Չանգեզուրի եւ Անդրանիկի վճիռներին զուգընթաց: Նույն այդ դեպքերի միջոցին է իր նամակը գրել Դիզակի հրամանատարը եւ շտապեցրել Անդրանիկին. «Ամբողջ Դիզակի, նույնիսկ ամբողջ Ղարաբաղի հայ ժողովրդի ցանկությունն է, որ Դուք անցնեք մեր երկիր»:

Ի՞նչ ստացվեց: Անդրանիկին արցախցիք սկսեցին հրավիրել եւ իրենք էլ նրան օժանդակելու պատրաստության նվիրվեցին այն ժամանակ, երբ Անդրկովկասում թուրք-գերմանական ուժերն էին հարձակվողն ու զորեղը: Բայց տեսական ընթացքում նրանք պարտություն կրեցին եւ համաշխարհային պատերազմում հաղթած դաշնակից (Անտանտի) տերությունների ներկայացուցչությունը հաստատվեց Անդրկովկասում: Թուրքերը քաշում են իրենց զորքերը ե՛ր Ադրբեջանից, ե՛ր Ղարաբաղից, ե՛ր երկրամասի մյուս վայրերից: Անդրանիկը քաջակերվում է: Քաջակերվում են նաև արցախցիք: Քաջակերվում է նաև Հայաստանի կառավարությունը: Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որի մասին ասվեց, դեռևս սեպտեմբերին էր Ռուսաստանի կառավարությունը չեղյալ հայտարարել: Նրանով հանձնված հողերից եւ հետագայում Արեւելյան Հայաստանի գրավված մյուս տարածքներից թուրքական զորքերը ետ են քաշվում: Արցախում ամրապնդվում են ինքնիշխանության մարմինները, հայությունը իր պապենական հողի վրա Ադրբեջանի գերիշխանությունը հաստատելու դեմ վճռական ելույթի է պատրաստվում, հույսով, որ հեռու չէ Անդրանիկը, որ նա կհասնի ժամանակին:

Վերջապես, նոյեմբերի 20-ին*, Անդրանիկը ճամփա է բռնում Օուշի: Նրան ընդառաջ էր գալու Վարանդայի ինքնապաշտպանական զորքը՝ Սոկրատ բեկ Մելիք-Ծահնագարյանի հրամանատարությամբ²: Չորքը լույսը դեռ չբացված, ժամը 3-ն անց կեսին, շարժվում է ուղիղ դեպի Չարուղի ձորը, ուր նրանց դեմ էլնում են թաթարական

1 «...հարուածող կորամարը», էջ 135—138: 2 Ս. Վրացեան, Հայաստանի հանապետութիւն. Բ., 1958, էջ 310—311: * Նոր տոմարով:

զինված ուժերը՝ թուրք սակարների հետ միասին: Օրագրողը վկայում է, որ նրանք մարտի կազմ ու պատրաստ էին, ուրեմն, նախապես տեղյակ սպասվողին: Մինչև հաջորդ ուշ գիշերն է տեսել մարտը եւ երկու կողմերի համար էլ ոչ առանց զոհերի: Անդրանիկն իր գործը տանում է ձորի տարբեր հատվածներով, եւ բոլորում էլ հաջորդ օրը վերակալել է կոիվը: Դեկտեմբերի 1-ին, շարունակելով կոիվը, գործը ձորից առաջ անցնելով գրավում է ճանապարհի աղբբեջանաբնակ գյուղերը: Դրանից հետո դեպի Օուշու կողմը գյուղերը հայաբնակ էին, ճանապարհը՝ դյուրին¹:

Աղբբեջանական կողմը տագնապալից հեռագիր է հղել իր կառավարության ղեկավար Ֆաթալի խան Խոյսկուն, սա էլ՝ ուղղակի գեներալ Թոմսոնին. «Չանգեզուրի գավառում հայերը Անդրանիկի գլխավորությամբ անխնա բնաջնջում են մահմեդականներին... որոնք զուրկ են որևէ պաշտպանությունից: Խնդրում ենք շտապ եւ արագ միջոցներ ձեռք առնել»: Եվ ապա՝ «Անդրանիկը 5000 զինվորի գլուխ անցած երրորդ օրն է պաշարում է Չաբուղը, որպեսզի անցնի Օուշի... Աղերսում ենք, գոնե այժմ անգլիական եւ ամերիկյան կառավարությունների ուշադրությունը դարձրեք դժբախտ Չանգեզուրի վրա»²:

Կարծես թե մինչ այդ անուշադիր էին եղել: Եվ ինչո՞ւ է Չանգեզուրը «դժբախտ» անվանված: Արդյոք նրա՝ համար, որ մահմեդականներն այնտեղ «տուժում են» քրիստոնյաների հալածանքներից: Դա չէ միտքը, այլ այն, որ Չանգեզուրը աղբբեջանական հող է ու երկիր եւ աղբբեջանցիների այդ սեփականության վրա տուժում են ու տառապում այդ սեփականատերերը: Թոմսոնին ա՛յդ պետք էր ասել եւ այդ «ճշմարտության» ընմբռնմանը բերել:

Լավ կլիներ, իհարկե, որ ոչ մեկի արյունն էլ չհոսեր: Դուռ-դրկից ժողովուրդներ էին, հաշտ ու խաղաղ պետք է լինեին: Այնպես է ներկայացվում, թե նախահարձակը մահմեդական կողմը չէր, նախաձեռնողը՝ Աղբբեջանի կառավարությունը: Երեկ չէ՞ր, որ Ջեմիլ Չահիդ բեյի գլխավորած զորքերը մտան Օուշի եւ անխնա կոտորեցին քաղաքի, մոտակայքի գյուղերի անգեմ, անպաշտպան հայությանը: Այն ժամանակ ինչո՞ւ չէր կառավարության ղեկավար Խան Խոյսկին ականջներից հանում խցանները: Թե՞ հեռու էին այդ վայրերը, ժողովրդի ճիշն ու աղաղակը տեղ չէին հասնում: Կամ գուցե՞ հայերի մահն ու կոտորածը ոչ մահ է, ոչ էլ կոտորած եւ այդպես է այլահի կամքն ու կարգը: Դժբախտությունների արմատը ուրիշի հողերը զավթելն էր ու յուրացնելը:

Չոր չի անցել Խան Խոյսկու անագանգը: Թոմսոնն անհապաղ սթաիվել է եւ հիշել իր նախնիների եւ հենց այդ օրերի իր հայրենիքի կառավարության ղեկավարների օրինակը: Ինչպե՞ս կարելի է ձգձգել... Եվ դա որպես փաստ Անդրանիկը իր պարտքն է համարել հայտնել Չանգեզուրի թե հայ, թե թաթար բնակչությանը 1918-ի նոյեմբերի 23-ին (դեկտ. 6-ին) հրապարակած հատուկ թերթիկով. «...Օուշի իմ զնալը կանգնեցվել է հաբվում դաշնակից զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնի հրամանով: Այդ հրամանը հենվել է Աղբբեջանի կառավարության նախագահ պ.-ն Խան Խոյսկու պընդման վրա»: Այդ հրամանը, շարունակում է Անդրանիկը, իրեն են հանձնել անգլիական բանակի կապիտան Սկուերը եւ ֆրանսիական բանակի կապիտան Կապիտը: Ըստ այդմ էլ, կանգնեցնելով դեպի Օուշի իր երթը, դադարեցրել է իր «ամեն տեսակի ռազմական գործողությունները»: Այդպիսին էլ եղել է Անդրանիկի պահանջը Չանգեզուրի հայ եւ մահմեդական բնակչությունից, գգուշացնելով, որ եթե կրակոցներ լինեն, ապա մեղավորները կպատժվեն պատերազմական ժամանակվա օրենքների համապատասխան: Այսինքն Թոմսոնի ամեն մի խոսքին Անդրանիկը հավատ է ընծայում եւ ինքն էլ իր հերթին, ի տես բոլորի, պահանջում, որ պարտաճանաչ գտնվեն, քանի որ... տրված են արցախցիների ցանկությունների կատարման հավաստի երաշխիքներ³: Համեմայն դեպս այդպիսին էր նրա համոզմունքը: Միշտ է, նույն օրը, դեկտեմբերի 6-ին, Անդրանիկը Կապանի, Միսիանի, Մեղրու, Լարաբադի թե հայ, թե աղբբեջանական ազգային խորհուրդներին շրջաբերական նամակ է հղել արյունահեղության ամեն մի քայլի համար խիստ պատասխանատվության կանչելու մասին: Եվ հատուկ ընդգծվում է, որ Թոմսոնը աղբբեջանական եւ թուրքական զորքերին հրամայել է դադարեցնել ռազմական գործողությունները, իսկ իրեն՝ այլեւս ջանք չգործադրել Օուշի զնալու: Եվ ես խոստացել եմ, հրապարակում է Անդրանիկը, ասես որպես անձնական օրինակ, շեշտելով, որ այլեւս չեն լինի նման գործողություններ, քանի որ հաստատ համոզված է, որ դրա հարկը չի լինի: Նորից այս շրջաբերականի թուղթը ուղարկում է տեղերը համապատասխան անձանց ստորագրել տալու եւ ամուր պահելու այն որպես իմացած լինելու վկայություն³:

Անդրանիկի օրագրողն էլ է առաջ գնացող զորքի մեջ եղել: Տեսել է, որ դեկտեմբերի 2-ին մեքենայով եկել են Թոմսոնի սուրհանդակ-

1 ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 370, ց. 1, գ. 51, թ. 13: 2 Ն. տ., նաեւ՝ «Կավկասկոյե սլոն», №221, 15(2), 12. 1918 թ.: 3 ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 370, ց. 1, գ. 50, թթ. 9—10:

1 «...հարուածող կորամարը», էջ 146—152: 2 «Մշակ» №257, 1918 թ.:

ները եւ նամակը հանձնել Անդրանիկին: Բերող անգլիացի եւ ֆրանսիացի քաղաքակիրթ սպաները տեղեկացնելով, որ պատերազմը դադարեցված, զինադադար է կնքված, ասել են, որ այս կոիվն էլ իմաստ չունի, քանի որ բոլոր հարցերը խաղաղ կերպով քննարկվելու, լուծում են ստանալու դաշնակիցների կողմից: Թոմսոնի նամակն էլ Անդրանիկից պահանջում էր՝ «կասեցնել առաջխաղացությունը, — գրում է օրագրողը, — սպառնալով, որ... զինադադարի այդպիսի խախտումը թշնամական ակտ պիտի նկատվի դաշնակիցների դեմ եւ հետեւաբար իր դեմ պիտի գտնե դաշնակիցների դիմադրությունը»: Փաստորեն այդ պահից կոիվը դադարեցվում է: Սուրհանդակները հաջորդ օրը վերադառնում են, իսկ դեկտեմբերի 4-ին Անդրանիկն է իր բանակով ետդարձի ճանապարհը բռնում՝ ամսի 5-ին հասնելով Գորիս¹:

Այս է արցախյան երթի վախճանը: Մեկը, որ Թոմսոնն էր, հուսադրում է ու ետ վերադարձնում, մյուսը, որ Անդրանիկն էր, համաձայնում է ու ակնկալում: Մեկը երեսաբաշտ խաբեբա էր, մյուսը «միամիտ հավատացյալ»: Թոմսոնի արյունակից նախնիները՝ սկսած իր ետկոի 1890-ական թվականների առաջին նախարար Գլադստոնից մինչեւ տվյալ օրերի քաղաքական դեմքերը, խոստումների մեծ վարպետներ էին: Եվ Թոմսոնի այս խոստումը, որ եղավ գործի կիզակետում, անհրաժեշտության եւ հնարավորության հենց անկրկնելի հարմար պահին, երկու բաժին ուներ: Առաջինով պահանջում էր, երկրորդով խոստում էր տալիս: Պահանջը գեներալական հրաման էր, խոստումը՝ դիվանագետի շողորթություն: Երկուսը միատեղ առընդմիջտ քրի երես հանեցին հայ ժողովրդի հասցեին անգլիական կառավարիչների տասնամյակներ ի վեր զղջմտանքի, ցավախնդիր ճառերի, խոստումնալից հուսադրումների, երբեմն էլ ստերեոտիպ գործնական վճիռների երկդիմի, խաբեբայական, նենգաշահ եւ, վերջին հաշվով, թշնամակողմ էությունը: Պետք է կարդալ, վերստին ընթերցել եւ բառ առ բառ խորամուխ լինել, թե հոետորական խաբքի ինչ հոշակա՛յ անուշներ են Մեծ Բրիտանիայի առաջին նախարար Գլադստոնի ճառերը, ինչպիսի՛ հուսադրումներ, ներքին խոր տառապանքի՛ արտահայտություն: Սուլթանը ճնշում էր ու հալածում, իսկ հայության մեծ բարեկամ Գլադստոնը ճառեր էր ասում: Հե՛շտ էր ճառեր ասելը եւ խոստումներ տալը: Թոմսոնը Գլադստոնի հետևորդ աշակերտն էր: Մի տարբերությամբ, որ Գլադստոնը հրամաններ չէր տալիս հայերին, ցուցումներ չէր կատարում: Նա ողբում էր հայոց վիշտը, զայրանում

¹ «...հարուստող պորամար», էջ 154—159:

էր, որ սուլթանը հալածում էր ու կոտորում քաղաքակրթության սկզբնափուլի հիմնադիրներից մեկին՝ հայ ժողովրդին: Աղերսագին ողբում էր: Թոմսոնը հրամայում էր՝ զորքերդ ետ քաշիր, հայ ժողովուրդ, խաղաղության վեհաժողով կլինի, հարցերը կլուծվեն: Ի՛նչ կարիք կա գեներալ: Պատմությանը հայտնի չէ, թե ինչպես կվարվեր Գլադստոնը, եթե Սպարտի հայերը, երկրի մյուս գավառների հայերը զինված լինեին մինչեւ ատամները եւ շարդեհն թուրքական զորքերին: Իմանալու փաստ չկա, բայց կռահելու հիմք կա: Գլադստոնը ուժ էր: Ուժը ուժի կողմն է: Ուժը ոչ ոռմանտիկան է, ոչ ոգեւորությունը: Ռոմանտիկան ու ոգեւորությունը անձնուրացության հատկանիշներ են, որոնցից ծնվում են հերոսները: Հերոսը պարտադիր կարգով հաղթողը չէ, այլ շատ հաճախ իր քաջությամբ մարդկությանը հմայողը:

Երկար է այս փիլիսոփայությունը: Թոմսոնի դեմքը, իր ապուսապերով հանդերձ, պարզ է: Նա իր մի հեռագրով իր նախնիներին էլ գերեզմանից հանեց եւ պատմության դատի առաջ դուրս բերեց: Դատն էլ, մինչեւ այսօր, անդատաստան է, որովհետեւ դարձյալ «փիլիսոփայություն» է. մեկն այսպես է ասում, մյուսը՝ այլ կերպ: Անդրանիկի խնդիրն առաջ գնալն էր: Նա պետք է իր զինվորներին առաջ տաներ դեպի մահու եւ կենաց կոիվը: Որ գնար, անպայման Շուշի կմտներ, եւ կմտներ առանց մեծ արյունահեղության: Պետք է, որ դրանից նա չվախենար: Բարդությունները մուտքում չէին լինելու: Եվ այնուամենայնիվ պետք է շարունակեր իր քայլը դեպի Շուշի, որն առջեւում էր եւ կողքի բարձունքից կարող էր տեսնել: Անդրանիկը պետք է առաջ գնար: Իսկ Թոմսոնը, Ադրբեջանում տեր լինելով, վերջին հաշվով, իր գաղութատիրական նկրտումների հյու-հնազանդ ծառան էր, նա՛ էլ պետք է սպառնար Անդրանիկին, որպեսզի հաբքի նալթի բուրմունքը ավելի լայն տարածվեր Լոնդոնի փողոցներում: Եթե մի փոքր ավելի առաջ գնար՝ լիովին պարզ կդառնար գնալ թե չգնալ: Բայց պարզ կդառնար ոչ թե Անդրանիկին, այլ քաղաքագետների ա՛յն սերունդներին, որոնք անդրանիկյան պատմության այս էջերում հարցական են դրել. ինչո՞ւ Անդրանիկը առաջ չըգնաց: Զգնաց, որովհետեւ հետեւաւերը նրա աչքերի առջեւում էր, այդպես էր նա տեսնում եւ այդպես էր նա զգում պահն ու սպառվելիքը: Ծուշում էլ են տարակույսներ եղել Անդրանիկի գալու նկատմամբ: Անարյուն քաղաքականության կողմնակիցներ կային: Սա նրա առջեւում էր: Ավելի գորավորը նրան թիկունքից քաջողն էր, այն, որ երեւանյան կառավարությունը դեռ չբացված խաղաղության վեհաժողովում հարցը շահած էր տեսնում եւ ուժի մասին, այն էլ հեռավոր այս

Ճայրամասում, լսել չէր ուզում: Հետո ի՞նչ: Միայնակ զինվորը քի՛չ է պատահել, որ մարտի գնա: Պատահե՛լ է: Ապա ո՞վ էր Անդրանիկը: Երբ Շապինկարահիսարի բարձունքի վրա, իր քնած քույրերի տան կտորներին իր դաշույնին ու հրացանին փարված պահակություն էր անում, ո՞վ էր նա, երբ մի հարյուրյակ զինվորով Առաքելոց վանքում պատուպարված մարտնչում էր տերության կանոնավոր զորքի դեմ, ո՞վ էր այն կեսգիշերին, երբ իր տղաներին դուրս էր բերում այդ բանակի մարտի պատրաստ շարքերի միջով... Այստեղ էլ, Չանգեզուր-Արցախ ճանապարհին, կարող էր Անդրանիկը առաջ գնալ եւ վերջին պահին ծուղակից դուրս գալ: Անդրանիկի «մեղքը» այդ ծուղակին ընդատաջ չգնալն է, այլ ոչ թե վերադարձը: Եվ զոր է, որ դժկամները նրա դեմ նրա վերադարձերը չեն հաշվում: Հենց միայն այդքան «վերադարձերը», առանց էության մեջ խորամուխ լինելու, բավական են ուզածը մեծաբանակ զորավարին նսեմացնելու համար, էլ ուր մնաց փոքրաբանակ եւ անթիկունք մի Անդրանիկի: Նա այս անգամ պատմության փորձից էր դաս քաղում: Առջեւում պատնեշ էր դրվում, թիկունքը՝ բաց, աշուժասիրտ քաշերի սուկ մի քանի զորախմբեր, տարակարծիք քաղաքականներ եւ դարեր շարունակ գերազանցապես անգեմ ու անբանակ քաջակորով մի ժողովուրդ: Ու դարձյալ ճնշում է տարակուսանքի ձայնը. մեկ է, զինվորը պետք է առաջ գրճար, քանի որ պատմությունը ավելի բարձր է հնչեցնում անհատական հերոսների անունները: Բայց չէ՞ որ Անդրանիկը ընդամենը երեկ էր թուրք հրամանատար Նուրի փաշային հիշեցրել իր անցած մահվան ճանապարհները...

Թոմսոնի հրամանը եւ Անդրանիկի ետդարձը լրջորեն բորբոքեցին թե՛ Ղարաբաղի, թե՛ Չանգեզուրի թուրքերի ու թաթարների հակահայկական հանդգնությունը: Մինչդեռ հայությունը ըմբռնումով մտեցավ խնդրին: Կապանից տվյալ օրերի մի փաստաթղթում ասվում է, թե՛ այդ համերաշխությունը «հայության համար խիստ ուրախակի լուր» էր՝: Հույսերով լցված, հայերը գյուղերում աշխատում են ընդհարումների տեղիք չտալ: Նրանք իրենց մոտ Անդրանիկի գտնվելը եւ այն, որ Թոմսոնը ոչ թե անհապաղ զորքեր է շարժել Անդրանիկի դեմ, այլ ընդամենը մի հեռագիր է հղել, եթե ոչ հարցի լուծում, բայց անպայման լուծման կարեւոր պայման են համարում: Այս մի կողմից, մյուս կողմից՝ թուրքերի ու թաթարների քաղաքական աշխուժացումը:

Նման իրավիճակում Թոմսոնի ներկայացուցչությունը Ղարաբաղի հայության տեղական իշխանությունների հետ մերձեցնելու, նրանց

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 51.

պահանջների նկատմամբ հոգատար լինելու որոշ քայլեր է կատարել, թե՛ն դրանք, որքան էլ նպաստավոր, վերջին հաշվով ձեռակառնություն էին: Ծուշու անգլիական միսիան հրավիրել է Դիզակի եւ Վարանդայի քաղաքացիական ու ռազմական լիազորներին եւ մանրամասն տեղեկություններ վերցրել այդ շրջանների բնակչության, որը գրեթե ամբողջապես հայեր էին, տնտեսական ու զինական դրության մասին: Հայության ներկայացուցիչները բացահայտ ասել են, որ իրենց շրջանների ժողովուրդը դեմ է Ադրբեջանի կառավարությանը ենթարկվելուն, չնայած նրան, որ Ծուշու եւ Ասկերանի վերաբերյալ անգլիական ներկայացուցչությունը հակառակ կարծիքի է եղել, այն է՝ առժամանակ հպատակեցնել Ադրբեջանին՝:

Ղարաբաղից Անդրանիկի ետ դառնալով նրա Ղարաբաղ գալու հարցը սպասված չեն համարում: Նրանք գտնում են, որ լավ կլիճի, եթե Անդրանիկը Չանգեզուրից գա հաստատվի իրենց երկրում, Խանքենդում եւ Հարդուբում, ուր կային գորանոցներ, որոնք ռուսական բանակի մեկնելուց հետո պարսապ էին եւ Անդրանիկը կարող էր իր զորքերը տեղավորել, որից հետո այլեւս Ադրբեջանի համար էլ հեշտ չէր լինի, ըստ հրավիրողների, Անդրանիկին դուրս մղել այնտեղից: «Ձեր եւ գեներալ Թոմսոնի հեռագրի համաձայն մենք վաղուց դադարեցրել ենք ընդհարումները թուրքերի հետ», — գրել են նրան: Բայց դա կարճատև է եղել եւ ավելի շատ ցանկություն, քան իրականություն: Դեկտեմբերի 20-ից հետո մահմեդականների զինված ուժերը շրջապատել են Խծաբերդ, Հին Թաղլար եւ Խանաձոր գյուղերը եւ հայությանը կույի մեջ քաշել: Այդ մասին էլ է Անդրանիկին անմակով հայտնվել. «տմարդի թուրքերը իմանալով, որ Դուք այլեւս առաջ չպիտի գաք, հարմար առիթ գտնելով» հարձակում են գործել: Նամակի իմաստն այն է, որ Անդրանիկը անգլիական ներկայացուցչության առջեւ կարգ ու կանոն հաստատելու հարց հարուցեր՝:

Դրությունը մեղմելու նպատակով անգլիացիները շրջանների հայության դեկավարներին որոշ աշխատանքների են ներգրավել. հետևել ճանապարհների ապահովությանը, պաշարել անիշխանության դեմ: Հայերը պայման են դրել, որ կարող են, եթե իրենց երկրում Ադրբեջանի մասին խոսք չլինի: Եվ օրինակ են բերել, որ մինչեւ իսկ տաճիկ թուրքերի օրոք նրանք ոչ մեկի առջեւ չեն խոսարհվել:

Անդրանիկը թե՛ն հեռվում, դարձյալ հույս էր եւ ոգեւորություն: Վարանդայի գորաց հրամանատար Սոկրատը, որ քաջ ու անվարան մարտիկի անան ի մի էր բերում իր շրջանի ուժերը, այսպես էր գրում Անդրանիկին. «Եթե ես մի որոշ քայլ արել եմ Ղարաբաղումը, ես ինձ զգացել եմ ապահով, որ իմ թիկունքում կա գեներալ-մայոր Անդրանիկ: Վերջին խոսքս է. իմ թեւերը կարող է կտրել միակ աստվածը. իսկ հետո Դուք, եթե ինձ մոռանաք եւ անուշադիր թողնեք ինձ»՝:

Փաստաթղթերը դարձյալ այն են հուշում, որ Թոմսոնի հեռագրին

1 Ն. տ., ց. 1, գ. 40, թ. 4: 2 Ն. տ., թ. 5: 3 Ն. տ., թ. 6:

Անդրանիկի ականջ դնելուն դարաբաղցիք ըմբռնումով և մտնեցն: Մրանում ամենահամոզիչը Դաշնակցության Դարաբաղի կենտրոնական կոմիտեի վերաբերմունքն է: Ամենահամոզիչը, որովհետև Դաշնակցությունն էր արտահայտվողը: Գրավոր գրվել է «Հերոսապետ Անդրանիկին» 1919-ի հունվարին. կոմիտեն «դիմում է Ձեզ եւ կանչում Դարաբաղ համուն վերջինիս 300 հազարանոց հայ ժողովրդի փրկության»: Տվյալ կոմիտեն ինչպես իր կուսակցության համահայաստանյան կենտրոնի եւ Հանրապետության կառավարության բռնած քաղաքական դիրքորոշման, այնպես էլ անձամբ Անդրանիկի նկատմամբ նրանց վերաբերմունքին հակառակ քննադատում է անգլիացիներին, որպես հակահայկական գիծ վարողների: Եզրակացությունը. «Դարաբաղի հայությունը կանչում է Ձեզ եւ Դուք պետք է գաք»¹:

Գծոված Դաշնակցության ընդամենը մի կոմիտեն է հրավիրում: Այո՛, թող այդպես լինի՝ ընդամենը մի կոմիտեն: Երեւանում, կառավարության կազմում էլ կային դաշնակցական նախարարներ, որոնք գործի շահից ելնելով դուրս էին գալիս գծության շրջանակներից: Համենայն դեպս հաստատապես այդ դիրքին էր խնամատարության նախարար Ալեքսանդր Խատիսյանը, որ չիսկ էր կապերը գեներալի հետ նույնիսկ այն ժամանակ, երբ առաջին նախարար էր: Խնամատարության նախարարը 1918-ի դեկտեմբերի 14-ին պատասխան ատակ է գրել «գեներալ-մայոր պարոն Անդրանիկին»: Պարզվում է, որ Անդրանիկը դիմել, հարց է բարձրացրել կառավարության առջև, նկարագրելով Չանգեզուրի բնակչության ու իրեն ուղեկցող գաղթականության նյութական ծանր դրությունը եւ խնդրելով օժանդակություն: Ալ. Խատիսյանը, խնամատարության նախարարը, հայտնում է, որ կառավարությունը Միսիանի իր կոմիսարին 50 հազար ռուբլի է ուղարկել կարիքավոր բնակիչներին ու գաղթականներին բաժանելու համար: Սակայն նախարարը հոգատար է գտնվել եւ միայն պաշտոնական գրությամբ չի բավարարվել: Ընկերական, ջերմ ամակ է կցել ներք ու շահերը մի են»²: Սա տեսակետ է եւ դա է ճշմարիտը: Ուրիշ «Միրելի Անդրանիկին»: Ցանկանում է, որ լինի կառավարության եւ Անդրանիկի հաշտությունը, հատուկ ընդգծելով. «Մեր ցանկություններն ու շահերը մի են»²: Սա տեսակետ է, եւ դա է ճշմարիտը: Ուրիշ բան, որ անձնական վերաբերմունքի եւ փոխհարաբերության տատանումները կարող են նաեւ ստորյա մտնեցումները փոփոխել: Մեկը օրն է, մյուսը՝ ժամանակը:

Տեսակետները բախվում էին: Երբ հարցը դժվար է, ուրիշ կերպ անհնար է: Բախումը պետք է հաշտություն եւ ուժ բերի: Ազատության

1 Ն. տ., տ. 7-8, 2 Պահպանվածը Անդրանիկի պաշտոնաթերթիկի վրա արտագրվածն է: ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 46, թթ. 15-17:

ուղիների մասին բախվում էին նաեւ իրենց իսկ դարաբաղցիների կարծիքները: 1919-ի փետրվարի 17-ին Դարաբաղի Ջրաբերդ գավառի ժամանակավոր իշխանության ֆինանսական կոմիսար Հովհաննես Առաքելյանը նամակ է հղել Հայաստանի նախարարների խորհրդի նախագահին: Կոշտ է գրել. «Միանգամայն պարզ պիտի լինի Հայաստանի հանրապետության նախարարների պարոն նախագահին

ու նորա կառավարության բոլոր շրջաններին, որ Դարաբաղի հայությունը վճռել է մինչեւ գլխավոր դատավորի, այն է՝ ելրոպակական կոնֆերենցիայի, վճռին սպասել եւ ինքն իրեն կառավարել: Քաղաքական տեսակետից նա, Լեոնահայաստանի հայությունը, որը 66 տոկոսն է կազմում, այժմ ժամր չէ համարում իրեն Հայաստանի անբաժան մասը համարելու»: Սա ժամանակավորապես, այլ ոչ ընդմիշտ: Համբերել՝ արյունահեղության տեղիք չտալու համար: Բայց եթե հույսերը չարդարացան, դարաբաղցու վճիռը ավելի քան անհողդող է լինելու՝ «իսկ եթե այդ վրճիռը լինի... հօգուտ Ադրբեջանին, այն ժամանակ Դարաբաղի հայությունը կանգնած կլինի ապստամբության շեմին, որի հետեւանքը այժմ անկարելի է նախատեսել»¹:



ԱԼԵՔՍԱՆԴԻ ՌԱՏԻՍՅԱՆ

Խորանունը Թումսնը, ինքը նշանակված լինելով տիրակալ, շողքորթում էր Ադրբեջանի կառավարությանը, շատ էր ուզում նրան դուր գալ: Դրա արտահայտություններից մեկը եղավ Դարաբաղը Ադրբեջանի ենթակայությանը հանձնելու գործողություններին նրա ետանդուն աջակցությունը: Այդ ձեռով հռչակվում է ադրբեջանցի բժիշկ Խոսրով բեկ Սուլթանովին միատեղ՝ եւ Լեոնային Դարաբաղի, եւ Չանգեզուրի գեներալ նահանգապետ նշանակելը: Բռնակցում՝ օրը ցերեկով, ինքնագալուխ կերպով, ուրիշ տերության ներկայացուցչի հովանավորությամբ:

Արմատը պետք էր ամրապնդել, որ ճյուղը դալար լինի: Չանգեզուր մտնելու սկզբից էլ այդ կարծիքին էր Անդրանիկը: Միայնակ, առանց Երեւանի Չանգեզուր չէր կարող լինել, առանց Չանգեզուրի՝ հաստատուն Երեւան: Սա գծոված էր մարդկանց հետ, նաեւ կառա-

1 Հ. Առաքելյան, Եզվ. փաստաթուղթը, Գ. տ.:

վարության կազմի, բայց ոչ պետականության հետ: Եվ գտնում էր, որ Երեւանը պետք է ընդառաջ գա, թիկունք լինի Չանգեզուրին: Անդրանիկի Չանգեզուր մտնելուց հետո շատ անգամներ են Չանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի գրություններն ուղարկվել, եւ սուրհանդակները գնացել Երեւան: Հերթական նամակն է 1918-ի դեկտեմբերի 20-ին Գորիսից Երեւան՝ «Հանրապետության պարոն նախագահին» հասցեագրվածը. «Ահա քանիտորդ անգամ է, որ խորհուրդս իր ներկայացուցիչն է ուղարկում հանրապետության մոտ, պարզելու այն քառասյին փիճակը, որ ունի ներկայումս Չանգեզուրը»: Ծիշտ է. «Ծնորհիվ գեներալ-մայոր Անդրանիկի ներկայության կոիվների հաջող էլքի եւ քաղաքական անցքերի փոփոխությանց... մենք ներկայումս ազատ ենք որեւէ սպառնացող վտանգից եւ բացի հանրապետությունից այլ պետություն չենք ճանաչում», բայց պետք է նաեւ, որ «հուսադրելու եւ թեւավորելու նպատակով» «մի քայլ էլ արվի հանրապետության կողմից»: Եվ հստակ բերվում է Անդրանիկի կարծիքը, որը նա հռչակել է խորհրդի նիստում. «Ինչպես ուրիշ անգամ, նույնպես եւ այժմ գեներալը կրկնում է, որ թող հանրապետությունը իր դեկավար ձեռքը, իր կառավարիչ մարդիկը ուղարկի, իսկ ինքը անպայման հեռանալու է»:

Անդրանիկի միտքը նրան գործակցող Չանգեզուրցիների միտքն է ու պահանջը, որ Հանրապետությունը պաշտոնապես վերականգնի («կցած համարի») Չանգեզուրի միավորումը Հայաստանին: Եվ դրա համար խնդիր է դրվում, որ Հանրապետությունը այնտեղ «ուղարկի կառավարիչ ու առանց ուշացնելու»¹:

Այս ահազանգն է, որ անուշադրության չի մատնվել եւ հարկադրել է: 1919-ի հունվարի 21-ի որոշմամբ Հանրապետության կառավարությունը «Չանգեզուրի եւ Ղարաբաղի հայկական մասերում ժամանակավոր վարչություն հաստատելու» նպատակով այնտեղ նշանակել է Հանրապետության պետական կոմիսար, ի դեմս շտաբ-կապիտան Արսեն Ծահմազյանի: Հանրապետության կառավարությունը իր կոմիսարի տրամադրության տակ է դնում համապատասխան գոյնար եւ ժամանակավոր վարչությանը գործելու հանձնարարական է տալիս²:

Զմեռ էր, ցուրտ: Այն, ինչ նախատեսում էին գործիչները եւ սիսիանցիք, արդեն փաստ էր. պարենի պակասը, բնակչության նյութական ծանր դրությունը: Ավելի ծանր էր եւ անապահով Անդրանիկի թե գորքի, թե գաղթականների փիճակը: Տրտունջները բազմազան

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 2, 2 Ն. տ., թ. 4: Նաեւ՝ Հ. Կ., «Հայաստան-Արցախ պետական միավորման փաստերն ու փաստաթղթերը», «խորհրդային Ղարաբաղ», 4-ը եւ 6-ը X. 1989 թ., «Եր. Երեւան», 10. X. 1989 թ.:

էին: Կարող էր սովը հարվածել: Բնակիչները այնու դժվարանում էին գինվորներին պահել իրենց հարկերի տակ, նեղվածք էր, անհարմար: Լինում էր, որ Միսիանի, Կապանի կամ Գորիսի գյուղացին, դարձյալ իր ապրուստի համար, սուր կարիքից դրոճված, ունեցած մի ապրանքը ուզում էր տանել Ծուշի վաճառքի կամ փոխանակության: Այդ էլ է արգելվում Անդրանիկի հրամանով. ամեն մի վաճառք կամ փոխանակություն Չանգեզուրցին պիտի համաձայնեցնի գյուղի կոմիսարի հետ, հակառակ դեպքում սպառնալու է երեքամսյա ձերբակալությունը³: Առաջարկ էր արվում, որ Անդրանիկը ցրի իր բանակը եւ արեւմուտահայ գինվորների փոխարեն բանակ կազմի տեղացի, Չանգեզուրցի. տղաներից: Սրա վրա պնդում էին Չանգեզուրցի եւ հայրերը, եւ մայրերը: Առանց այն էլ տղաները գեներալի տակ էին, թեւ բանակում չէին, առանց այն էլ նրանք պետք է եւ տանը մնային, եւ տանն էլ սնվեին, գենը էլ ունեին, փաստիւշտ էլ: Ինչ էլ Անդրանիկը կտար, այն էլ կիրացներ պատրաստի բանակի կազմը: Անդրանիկին մնում էր կամ համաձայնել տեղացիների ցանկությանը, կամ երթի նոր ճանապարհ ընտրել: Եվ իր վճռի մասին նա հայտարարում է մերձավորներին, գրում է, ում որ հարկ էր համարում իր ծրագրերը ասել, ադեն փետրվարի կեսերից. «Իմ որոշումն անխախտ է, ես կանցնեմ Միսիան եւ ավելի առաջ...»⁴: Նույն օրերին է Թոմսոնը տիրակալի իրավունքով Բաքվից հեռագրել Ծուշի. «Ղարաբաղի եւ Չանգեզուրի գեներալ նահանգապետ է նշանակվել բժիշկ Սուլթանովը, Ադրբեյջանի ներկայացուցիչը, նրան ընդունել որպես այդպիսին»: Երկու բեւեռ ուներ հեռագիրը՝ մեկը տեղեկացնում էր, մյուսը՝ հրամայում: Առաջինում նա իր դերն ավարտել էր, երկրորդը նոր պիտի սկսեր: Սուլթանովի գալուն Անդրանիկի մնալը պիտի խանգարեր, Անդրանիկի մնալուն՝ Սուլթանովի գալը: Թոմսոնը նոր դեր պիտի ստանձներ՝ Սուլթանովին վնասագործել, որի գլխավոր պայմանը նա տեսնում էր Անդրանիկին երկրից դուրս հրավիրելը:

Սուլթանովը գյուտ էր: Նրան հայտնագործել էին ադրբեյջանական հետադեմների հայատյաց նեղությունը եւ անգլիական դիվանագիտության խորամանկությունը՝ միաձուլյ: Սուլթանովը դրանցից մեկը կուլ տալով, մյուսը համեմայն դեպս խստովանել է. «Իմ խնդիրը ես համարել եմ բացառապես դիվանագիտական», ասել է նա իր կառավարությանը հղած նամակում, պաշտոնի անցնելուց ընդամենը մեկ ամիս անց: Եվ ահա թե որն է եղել այդ դիվանագիտությունը, որը

1 Տե՛ս «Հայտարարություն» տպագիր թերթիկը, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34: 2 Ն. տ., ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 15:

նա վարել է իրեն թե Արցախի հայ բնակչությանը խաղաղեցնելու, իրականում՝ ծնկի բերելու համար. նախ շոշափել հայերի հարաբերությունները: Ասես իմանալով այդ, հեղինակավոր հայերը նրա ժուշի ժամանելու պահին, չնայած հատուկ կանչին, նրան չեն ներկայացել: Հաջորդ օրը նա հրավիրել է Շուշու քաղաքագլուխ Ծահնազարովին և Վարանդայի գորահրամանատար Ասկրատ բեկ Մելիք-Ծահնազարյանին: Երևում է ուժը չի պատել: Սուլթանովը եզրակացրել է, որ հայերին հպատակեցնելու միակ միջոցը անգլիացիների բետ իր համագործակցելը կարող է լինել: Հայերն ասել են, որ իրենց հույսը ողուսաց տիրապետությունը վերականգնելն է: Սուլթանովն ասել է, թե դա լինելու բան չէ, Անգլիան այնու չի թողնի, որ Ռուսաստանը կովկասում վերածնվի, իսկ Ադրբեջանը այնու այդ ճանապարհով չի գնա: Ադրբեջանը կգերադասի գնալ Անգլիայի, այլ ոչ Ռուսաստանի հետ, այս է եղել Սուլթանովի սովորեցրածը: Բայց այստեղ եղել է մի հիշարժան փաստ. անգլիացիներն առաջարկելով, որ Սուլթանովը լինի գեներալ նահանգապետ, անհրաժեշտ են համարել, որ քաղաքացիական գծով նրա տեղակալը հայ լինի, իսկ նահանգային խորհուրդը՝ երեք հայ, երեք մահմեդական: Հայերը այս բանաձեռին չեն համաձայնել, իսկ Սուլթանովն էլ դրանից հետո իր խնդիրն է համարել հայերի նկատմամբ անգլիացիների մեջ անվստահությունն սերմանելը: Այդ ճանապարհի կարևոր միջոցներից մեկը Սուլթանովը գտել է հայերին փողով գնելը, կաշառելը, այն էլ աղքատներին, ովքեր գուցե թե կարիքից դրդված ցանկություն կհայտնեին ենթարկվելու Ադրբեջանին: Այս բոլորից զատ Սուլթանովի առանձին հոգսն է եղել Անդրանիկին ինչ գնով ուզում է լինի Արցախի կողմերից հեռացնելը: Փետրվարի 25-ին գրած իր այս նամակում նա համոզմունք է հայտնում, որ Անդրանիկը ամենաուշը մարտի 5-ի եւ 10-ի միջև կհեռանա Արցախի սահմաններից: Նույն ժամանակամիջոցում այդ կողմերից, Սուլթանովի համոզմամբ, պետք է որ հեռանային նաև Անդրանիկին հետևող գաղթականները¹:

Հենց այս դրության մեջ, փետրվարի 3-ին, Անդրանիկը նամակ է ուղարկել Հովհաննես Թումանյանին: Պահը ե՛ր նրա անձի, ե՛ր Չանգեզուր-Արցախ աշխարհամասի բնակչության համար ճակատագրական էր: Ի՞նչ աներ: Հենց հիմա է, որ նա սիրտը պիտի բացեր ու խորհուրդ աներ: Հունվարի 21-ին Թումանյանն էր նամակ գրել Անդրանիկին: Ուղարկել էր այդ ժամանակ Թիֆլիսում գտնված Կապանի պղնձի ֆրանսիական ընկերության տնօրեն Ռոպենի միջոցով:

¹ ՄԼԻ-ի ՀՄԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 429, թթ. 2—4:

Նամակն ստացել էր, պատասխանն էլ ուղարկում էր վերադարձող ճույն Ռոպենի միջոցով: Թումանյանի և Սուլթանովի դավադիր խորամանկություններն անբարոյականություն էին տարածում: Նրանց գործադրած փողը, խոստումները և լրտեսների ցանցի ծավալումը թուլացնում էին մեկի ու մյուսի մարտական ոգին, խորացնում կասկածը, ջարդում անկոտորում կամքը: Թշնամին նենգ էր, խաբեքա ու շողոքոթ: Սուր կարիքը օգտագործում էր դրամի սիրուն հպատակեցնելու համար: Դրանից քաջակերված Ադրբեջանն իրեն թույլ է տալիս հայտարարել, գրում է Անդրանիկը, «որ հայերը կընդունին Ադրբեջանին ենթարկվի և հպատակվի»: Տխուր է նամակի ոգին և անկումային: Բայց դա ոչ այնքան տրամադրություն է, որքան փաստ և ուժերի հաքարակցություն: Կարող էր Անդրանիկը այստեղ նաև գրել նրա մասին, որ Երևանի կառավարությունը եւս ավելի հակված լինելով բանակցությունների խաղաղ միջոցների և խաղաղության վեհաժողովի կողմը, ապա և այն, որ արցախցիք իրենք էլ վեհաժողովի խաղաղ վճռին սպասողական՝ զենքը վաղվան էին օգում: Հարցը դուռ-դրկից ապրող ժողովուրդների մեջ էր: Անդրանիկը հակիրճ գրում է. «Մեկ խոսքով, անհնար է այնու գորամաստվա կարեճամ մնալ այս շրջանը, հետևաբար որոշեցի մեկնել Չանգեզուրից»: Այս օրերին նրա մտադրությունն էր Նոր Բայազետով գնալ Ղարաքիլիսա և այնտեղ ցրել իր զորքը: Դեռ ճանապարհ չընկած, Թումանյանին հանդիպելու երազների մեջ է. «Ղարաքիլիսե հասնելուս մտադիր եմ հրավիրել քեզ գալ Ղարաքիլիսե, կը հուսամ, որ հրավիրելուս չես ուշանար գալ»: Այս 22 հազար գաղթականություն «սովի ու մահվան սպառնալիքի առաջ» է, որոնց «անհրաժեշտ է հասցնել շուտափույթ օգնություն»¹:

Փետրվարի 18-ին Թումանյանից պատասխան ստացած լինելով, ուղարկած նամակում հայտնում է, թե իր գորամասի բժիշկ Ռուբենին է հանձնարարականով ուղարկել Թիֆլիս, որը այցելել է նրանց տուն, բայց բանաստեղծին չի տեսել: Հուսով է, որ Ռոպենը, ֆրանսիական ընկերության տնօրենը, հարկ եղածը պատմած կլինի²:

Երևում է, բանաստեղծի և գորավարի կապը, որ փոստային չէր, եղել է ոչ միայն առիթից առիթ, այլև ըստ նամակատարների հրճարավորության:

Ի միջի այլոց, փետրվարի 25-ին Անդրանիկը Գորիսից նամակ է փղել Շուշում անգլիական ներկայացուցիչ Մոնկ. Մագոնին: Դրանից առաջ Գորիսում եղել էր ներկայացուցչության աշխատակից կարպիտան Կ. Թոունսենդը, որը Անդրանիկին հաղորդել էր, որ ներկայա-

¹ ԳԱԹ, Հ. Թումանյանի ֆոնդ, գ. 501: 2 Ն. տ., գ. 502:

ցուցչության կարծիքով ցանկալի է, որ նա մնա Զանգեզուրում: Մինչ այդ Անդրանիկը որոշել էր մոտիկ օրերում հեռանալ գավառից, բայց մեկ է, հայտնել է, որ ինքը չի կարող երկար մնալ. «Իմ բանակը,— գրել է նա,— ի վիճակի չէ ձգել իր մնալու ժամկետը: Անդրի հարցը անհանգստացնում է բոլորին եւ դարձել է շատ սուր, եւ, անկասկած, կբարդանա առաջիկա օրերին»: Նշում է նաեւ, որ սով է սկսվել նաեւ Միսիանում, որտեղից հայտնում են, որ ամեն օր լինում են մահացության դեպքեր, որ սովը բռնել է նաեւ գաղթականներին, ծանր է վիճակը զինվորների, որոնք էլ կոշիկ չունեն, հագուստ չունեն, չունեն շաքար, միս, բուսման պիտույքներ. «Օր առ օր անհնար է դառնում նրանց պահելու իմ եղանակը, եւ ես նրանց օգնելու հույս չունեմ, քանի որ այդ շրջանները շատ աղքատ են եւ տեղի բնակչությունն ինքն էլ մեծ կարիքի մեջ է»,— գրում է Անդրանիկը¹:

Պարզ էր, որ այլեւ Ղարաբաղ չի կարող գնալ: Թոմսոնը ամուր կառչել էր Ղարաբաղին եւ կարծես պարտք էր ստանձնել ամեն կերպ այն հօգուտ Ադրբեջանի պահպանելու: Գիտակցելով այդ, ղարաբաղցիք իրենք էին Անդրանիկին գրում, որ նրա խնդիրն այլեւս մնում է գոնե Զանգեզուրից չհեռանալը: Տվյալ օրերի լավագույն վերլուծությունն մենք կհամարենք 1919-ի փետրվարի 26-ին Դաշնակցության Ծուշու շրջանի կենտրոնական կոմիտեի պաշտոնական նամակը «Հերոսապետ Անդրանիկին»: Նրանում հայության նկատմամբ անգլիական դիվանագիտությունը մերկ է՝ սկզբնօրերից մինչ թունտնչան փուլը ներառյալ. «...համուն տնտեսական այլեւայլ դիտումների եւ ոչ մի միջոցի առաջ կանգ չառնել, Բրիտանիայի շահերը բարձր դասել մնացած բոլոր խնդիրներից եւ ոչ մի միջոց չխնայել դրա համար»: Թեւեւ սա մեծ ճշմարտություն է, բայց եւ այնպէս հարց է ծագում. մի՞թե դրան է հանգում ամեն ինչ: Ո՛չ, փաստաթուղթը խորացնում է անգլիական դիվանագիտության էության բացահայտումը. «Տնտեսական նորանոր թեւակոխումների համար ուժեղացնել անգամ Ադրբեջանին, Վրաստանին, որոնք հենց իրենց՝ անգլիացիների թշնամիներն են եւ որոնց, մանավանդ առաջինի, իշխանությունը հիմնված է տասնյակ հազարավոր հայ դիակների վրա, որոնք գոհն են նույն անգլիացիների զինակցության»: Այս բառերը մենք կհամարենք անգլիական, եւ ոչ միայն անգլիական, դիվանագիտության նկատմամբ հայ քաղաքական մտքի բարձրակետը տվյալ պատմական իրավիճակում: Համենայն դեպս ոչ միայն ուրիշ, այլ մինչեւ իսկ հակառակ կերպ էր մտածում հայոց կառավարությունը, դարձյալ տվյալ

պահին, տվյալ հարցի վերաբերյալ: Ծիշտ է, հանգամանքներն էին թեյադրում: Բայց հենց դրա համար էլ քաղաքականագիտության գըլխավոր խնդիրը հեռատեսությունն է, քաղաքագետներ՝ օրվա տրամադրությանը կույ չգնալը:

Անգլիական ուժի նկատմամբ հրապուրանքից գերծ չէր նաեւ Անդրանիկի վերաբերմունքը: Բայց սա չէ փաստաթղթի այս հատվածի փիզակետը: Ասվածից շատ ավելի վեր է այն, որ նրանում բացահայտվում է միջազգային դիվանագիտության երկու հակադիր բեւեռների գրկախառնության պատճառը. «Անգլիան աչք ունի Կովկասի վրա, նա շահագրգռված է «Ադրբեջանի եւ Վրաստանի» հողերի ընդարձակման խնդիրներով: Ուրեմն այս հարցում Անգլիայի ու Ադրբեջանի շահերն իրար զուգահիսում են եւ սրանով է միայն, որ կարելի է լինում բացատրել այն երեւույթը, որ Բրիտանիայի թշնամի Ադրբեջանն այսօր մեծարվում է, իսկ նրա զինակից հայերս շարունակ զսպվում, ճնշվում, ստորացվում...»:

Ուրեմն, այլեւս պետք չէր, որ անգլիական ներկայացուցչության քթի տակ մարդիկ լինեին, որոնք կարող էին ըմբռնել եւ դեռ մատնացույց անել իրենց դիվանագիտության իսկական երեսը, որքան էլ այն պաճուճվեր նաեւ հայության հասցեին զուգահեռ արվող բարեխոսությամբ: Տվյալ պահին, 1919-ի փետրվարին, մարտին ու ապրիլին այդ մարդկանց մեջ ամենից վնասակարը, այսինքն տեսնելու ամենից ավելի ընդունակը, Անդրանիկն էր: Իսկ այս անգամ իրեն, Անդրանիկին, իր ով լինելու մասին, գրում էր բացատրում էր ոչ այլ ոք, բայց եթե իրեն այնքան, այսպես ասած, հոգս պատճառած Դաշնակցություն կուսակցության Ծուշու շրջանային կենտրոնական կոմիտեն: Անդրանիկը պետք է իմանար, որ ինքը, ըստ անգլիացիների, «Կովկասում քիչ թե շատ աչքի ընկնող», «ուժեղ անհատներից» մեկն է, «որը անհրաժեշտ դեպքում լուրջ արգելք կարող է լինել իրենց ծրագրած քաղաքականությանը»: Եվ հենց այդ առավելությունների համար անգլիացիք պետք է ձգտեին օր առաջ Անդրանիկին դուրս մղել մոտակա այն ոլորտից, որտեղ կարող էր նշված «ուժեղ անհատների» ազդեցության շրջանակների ընդարձակման հեմարան լինել: Այդտեղ անպայման Արցախ-Ղարաբաղ հայաշխարհն էր: Դուրս մղելու միջոցները պետք է լինեին, ըստ Ծուշուց ուղարկված նամակի, «աստիճանաբար չեզոքացումը», «միջից վերացնելը», «մեծ հարմարություններ տալով անգամ Եվրոպա ուղարկելը»: Նամակում բոլորը բացատրելու, զգուշացնելու համար մատնացույց էր արվում Անդրանիկը, ասելով՝ «Նրանք շատ լավ են հասկանում եւ

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 48, թ. 4:

հաշվի առնում, թե ո՞վ եք դուք եւ ի՞նչ կարող եք անել հարկ եղած դեպքում»:

Շույց տալով ճանապարհը, շուշեցիներին մնում էր ասել միայն, որ դրանով ընթանալը կարող է «մեծամեծ դժբախտությունների պատճառ դառնալ»: Մնացյալը ասվում էր ի գիտություն սերունդների. «Դուք Չանգեզուրում Ձեր ներկայությամբ թեկուզ հեռվից սանձահարում, զայում եք Ադրբեջանի ակտրիսաները, Դուք այդտեղից իսկ ազդում եք տեղիս իրերի դասավորության, երեւոյթների ընթացքի վրա»: Հեղինակները պնդում են, որ Անդրանիկը, եթե չի կարող զալ Ղարաբաղ, ապա գոնե անայսման պետք է մնա Չանգեզուրում, գտնելով, որ այդտեղից եւ Հայաստանից նրա հեռանալը «քանայլու է մեծամեծ չարիքների դուռը»:

Այնուամենայնիվ դարաբաղցիք իրենք էլ, ըստ այս նամակի, նկատում են իրենց երկիր գալու դժվարությունները, եւ գրում են խորհրդակցաբար. հնարավորության դեպքում անցնել Ղարաբաղ, «եթե հնարավոր չէ, գոնե Չանգեզուրի սահմանից բնակ չհեռանալ» եւ այնուհետեւ հանդես գալ Ղարաբաղում եւ Չանգեզուրում միացյալ գեներալ նահանգապետ հաստատելու փաստի դեմ ուղղված վճռական բողոքով:

Նամակի հեղինակները նկարագրում են մասնավորապես Շուշու հայության ակնավոր ներկայացուցիչների նկատմամբ գործադրվող հալածանքները, գտնելով, որ նույնը կարող է սպառվել նաեւ Անդրանիկին. «Ձեզ եւս սպասում է նույն վիճակը՝ մեկուսացման ճանապարհով չեզոքացում, անգամ զինաթափ անել դեմոկրատիզացիայի անվան տակ»¹:

Պարզ ասած՝ շուշեցիք, առհասարակ Ղարաբաղի հայությունը, երկրնտրանքի մեջ էին: Պահն էր այդպիսին: Հարձակողական ոգու մեղմացուցի դեր էր կատարում խաղաղության վեհաժողովի հետ հույսեր կապելը: Դրանից բացի, այն ժամանակ, երբ Հայաստանի կառավարությունը բողոքում էր Սուլթանովին Արցախում գեներալ նահանգապետ նշանակելու դեմ, դաշնակից տերությունների Երեսնի ներկայացուցիչը հուշակում էր, թե Սուլթանովի նշանակումը վրճարական ու վերջնական չէ, որ դա պարզապես կարգի պահպանության նպատակն է հետապնդում, առանց «Ադրբեջանի ապագա վարչության» որեւէ պահանջ դնելու²: Վճռական պահին Անդրանիկին հրավիրելու հարցում արցախցիների ոչ-լիակատար միաբան լինելը Անդ-

1 Ն. տ., գ. 40, թթ. 16—17: 2 Ս. Վրացեան, Հայաստանի հանրապետութիւն, Բ., 1958, էջ 312,

րանիկի հարց չէր, այլ տակտիկայի: Այլապես ինչու պետք է սեպտեմբերի 26-ին շուշեցիք գերադասելն Ջեմիլ Չահիրին անգեմ դիմավորելը, երբ նույն այդ ժամանակ նույն արցախցի հայերի որոշակի մասը գեներալ ձեռքին դուրս եկավ ներխուժող նույն Չահիրի դեմ: Սիմոն Վրացյանն ասում է, թե հենց այն ժամին, երբ Անդրանիկն անցել է Չարուղը, Սոկրատ բեկ Մելիք-Ծահնագարյանը, փոխանակ ըստ պայմանավորվածության գտնվելու իրեն հանձնարարված պաշտոնական կետում, բանակցել է Շուշու քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Ծահնագարյանի հետ եւ միատեղ նամակ են հղել Անդրանիկին, որ կանգնեցնեն նրա առաջխաղացումը: Սա նույն պահն է, որ զուգադիպել է Թոմսոնի սուրհանդակների ժամանումին³:

Անկոտրում դարաբաղցիները շարունակում են չճանաչել Ադրբեջանի կառավարության եւ Թոմսոնի համագործակցությամբ բժիշկ Սուլթանովի Ղարաբաղի գեներալ նահանգապետ նշանակվելը: Նման իրավիճակում անգլիական ներկայացուցչությունը դարձյալ մայել է Չանգեզուրի կողմը եւ հայության ոգեշնչման աղբյուրները այնտեղ տեսնելով, նորից ու նորից այնտեղից Անդրանիկին հեռացնելու, հեռու մղելու դավերն է նյութել⁴:

Անդրանիկը անարձագանք չի մնացել: Չարուղից վերադարձից կարճ ժամանակ անց նա նկատել է, որ անգլիական ներկայացուցչությունը գործառու է տեղից տեղ փոխադրում՝ ի վնաս Արցախի եւ Չանգեզուրի հայ բնակչության ապահովության: Նա հաբու Թոմսոնին հեռագրով բողոք է հայտնում եւ պահանջում, որ ձեռք առնվեն համապատասխան միջոցներ նշված վայրերի հայ բնակչության կյանքի խաղաղ պայմանները չխախտելու համար: Միաժամանակ նա հարկ է համարել ներկայացուցչությանը վճռականապես հայտարարել, որ «Ղարաբաղի եւ Չանգեզուրի հսկայական գավառի չորս հարյուր հազարից ավելի հայ բնակչությունը ոչ մի կերպ չի կարող ճանաչել իր տարածքի նկատմամբ Ադրբեջանի որեւէ տեսակի իրավունք»⁵:

Բաբվի «Ադրբեջան» թերթը ազգակիցներին ոգեւորելու համար հուշակում է, թե Անդրանիկը հեռանալու պատրաստություններ է տեսնում: Փետրվարի 10-ին, այդ խոսակցությունների մթնոլորտում Շուշի է մտնում գեներալ նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովն իր ջրախմբով⁶: Ղարաբաղցիները ծանր օրեր էին ասլում: Կար ժամանակ, որ նրանց գոտեպնդում էր Անդրանիկի գալստյան հույսը:

1 Ն. տ.: 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թթ. 18—19: 3 Ն. տ., գ. 49, թ. 7: 4 Ն. տ., գ. 38, թ. 27:

Անդրամիկն այլևս նման հույս չէր ներշնչում: Հեշտ չէր նաև հայր
կառավարության վիճակը: 1918-ի դեկտեմբերին, երբ արդեն Թոմսոն
ընդ Անդրամիկին վերադարձել էր Շուշու ճանապարհից, սկսվում է
հայ-վրացական պատերազմը հանրապետության հյուսիսային սահ-
մանների համար: Արցախցին մտածում էր՝ իսկ ինչո՞ւ ոչ Արցախի
համար: Մի՞թե հայության վիճակը Արցախում ավելի ծանր չէր, քան
հայ-վրացական սահմանի կողմում: Թեև հանգամանքները բոլոր-
վին այլ էին, հարցը՝ որպես հարց է հիասթափություն, հիմքից գուրկ
չէր: Կարիքի մեջ ընկածը մեկին մեղադրում էր, մյուսին արդարաց-
նում: Գուցե ոչ ոք մեղավոր չէր, ճակատագրից բացի: Թոմսոն
հետագրի պահին ոչ միայն վիճակը չէր փոխվել, այլև ուժերի հա-
րաբերակցությունը: Արցախ-Ադրբեջան կապակցությանը ավելացել
էր Թոմսոն հասկացությունը, որը նույնն էր, թե բրիտանական ռազ-
մական ուժի Կովկասում գտնվող մասը գումարած Ադրբեջանին:
Դեկտեմբերի առաջին օրերից հետո դեպքերի ընթացքը հանգեցրեց
նրան, որ ի վերջո Անդրամիկն էլ, նրա զինվորներն էլ ճամպուրկնե-
րը կապեցին: Ում այսուհետ իր որսերը գնալը պարզ չէր, գնալու էր
մինչև Երևան, հետո կորոշվեր: Մյուսներից թե զինվորներ, թե
գաղթականներ եղան, որ տեղում մնացին, սիովելով Կապանից
մինչև Գորիսի արցախյան սահմանը, կամ թե բռնելով դեպի մոտ ու
հեռավոր բարեկամ-ծանոթները տանող ճամփաները: Ծառերն էլ, որ
Գորիսում էին, տեղափոխվել էին հացաշատ Սիսիան եւ սպասում էին
մնացածների գալուն: Մնացածները մարտի 25-ին, առավոտյան,
երթի հավաքվեցին Գորիսի հրապարակում: Զանգեզուրցիք ճամփոռո-
ներից սննդի պաշար էին տվել այնքան, որ բավարարեր մինչև երթի
վերջն ու դրանից մի որոշ ժամանակ հետո²:

Ետդարձի տարբեր ճամփաներ կային: Պետք էր գնալ Երևան,
ներկայանալ կաթողիկոսին եւ այդտեղ գործի գոյությանը՝ զինվորնե-
րի ու սպաների այդ գործունեությանը վերջակետ դնել: Ենթադրվում
էր գնալ Սիսիան-Դարալագյազ-Նոր Բայազետ ճանապարհով, որով,
ինչպես տեսանք, եկել էին: Բայց դա վերջնական չէր: Այդ ճանա-
պարհը դժվար էր, գործի այս կացության համար գրեթե անհայտա-
հարելի: Իր գրագրություններում Անդրամիկը նշելով այս, շեշտել է
դարձյալ նույն դժվարությունը՝ «իմ մարդկանց մեծ մասը գործնա-
կանում առանց կոշիկի է: Նրանցից շատերը ճանապարհորդելու
համար թույլ են: Ինձ համար շատ դժվար է մարդկանց եւ ձիերի
սննդի տեղափոխման հարցը»: Հարկադրված, Անդրամիկը դիմել է

բրիտանական ներկայացուցչությանը, խնդրել, որ թույլատրվի իր
գործին տեղափոխել Շուշու-Ադրամ-Եվլաղ երթուղիով կամ Նախի-
ջեանով: Սա դեռևս փետրվարի 25-ին էր գրում: Երկու օր հետո
Փարիզ, սպասվող խաղաղության վեհաժողովին մասնակցելու համար
այնտեղ գտնվող հայկական ազգային պատվիրակության ղեկավար
Պողոս Նուբարին նա հայտնում էր, որ Երևան կհասնի մարտի
25-ին, ուր միտք ունի ցրել իր բանակը, «իմ փոքր ուժերը», ինչպես
գրում էր, տեղակ պահելով նաև, որ «եթե օգնություն չլինի, ան-
կասկած է սովից մահացությունը»²:

Քանի որ նաև Նախիջեանով գնալու միտք կար, 1918-ի մարտի
18-ին նամակ է հղել նաև Նախիջեանի բրիտանական ներկայա-
ցուցչություն: Դեռ մարտի 9-ին նրանք նամակ էին գրել Նախիջե-
անով վերադառնալու եւ վերադարձին օժանդակելու առաջարկով:
Մինչև պատասխան ստանալը, Անդրամիկը բանակցում է Թոմսոնի
աշխատակիցների հետ: Նախընտրելի է համարվում Երևան վերա-
դառնալ Սիսիան-Դարալագյազ ճանապարհով: Որոշվում է, որ ամ-
բողջ ճանապարհին ուղեկցելու է Թոմսոնի լիազորյալ մայր Գիբբո-
նը: Օգտվելով ստիթից, Անդրամիկը Նախիջեանի բրիտանական
միսիային տեղեկություններ է տալիս այնտեղի հայության մասին եւ
հարցեր է առաջ քաշում: Ծառ են հայության հոգսերը, մի վերջին
անգամ ասել է Անդրամիկը, եւ մեծ կարող է լինել տեղի բրիտանա-
կան ներկայացուցչության օգնությունը, եթե նա ընդառաջ գնա կա-
րիքի մեջ գտնվող մարդկանց: Բոլոր ճամփաները զբաղեցրել են
մահմեդականները, տասը հազար էլ նախիջեանցիներ Սիսիան-Կա-
պանում, սովի ճիրաններում, չեն կարողանում իրենց տները վերա-
դառնալ, որովհետև նրանց ետդարձի ճամփան էլ այնտեղի մահմե-
դականներն են փակել: Տեղում, նույն Սիսիան-Կապանում, տասը
հազար տանկահայ գաղթականներն են սովի նույն ծանրության տակ
եղ որոնում: Երևանում էլ պարենի գործը հեշտ չէ: Այս բոլորի
դիմաց թվում է թե մեծ բան չի խնդրում՝ բացել ճամփաները, վե-
րացնել կարիքի առջև փակված դռները: Մարդիկ ուղարկեք տե-
ղերը, գրում է Անդրամիկը, թող պարզեն վիճակը եւ դա նույնպես
օգնություն կլինի³:

Անդրամիկը նախկին տեղեկացնում էր, որ Թոմսոնը մայր Գիբ-
բոնին լիազորել է ուղեկցել իրեն մինչև Երևան: Գիբբոնին Անդ-
րամիկը առաջին անգամ հանդիպել էր դեկտեմբերի 21-ին, երբ
մայրն իր ներկայացուցչության կողմից պաշտոնական այց էր կա-

1 Ն. տ., թթ. 33—34: 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 48, թ. 4:

1 Ն. տ.: 2 Ն. տ., թ. 5: 3 Ն. տ., թթ. 9—10:

տարել Գորիս: Գորիսեցիք բրիտանական դրոշ էին կախել քաղաքում եւ աղուհացով դուրս եկել փողոց: Հաջորդ օրը ճաշկերույթ էր եղել: Ապա՝ բանակցություններ Գիբբոնի եւ Անդրանիկի միջեւ: Գիբբոնը Չարտոյի ձորով ազդեցության սահման է գծել Անդրանիկի եւ Աղբր-բեջանի միջեւ, դեպի Չանգեզուր վիճակի պատասխանատու համարելով Անդրանիկին¹:

Գիբբոնի Գորիսում եղած ժամանակ Անդրանիկն իր գորամասի հրամանատարության ժողովում քննարկման է դրել գորամասի հետագայի, Չանգեզուրում մնալ-չմնալու, հարցը: Ինքն անձամբ ցանկալի է գտել մնալ մինչեւ մայիս, մինչեւ մեծ տերությունները կհանեին իրենց վճիռը երկրամասի վերաբերյալ: Բայց գորականները գտել են, որ ձմռան ու գարնան դժվարին այդ ամիսներին շրջանը ի վիճակի չի լինի զինվորների ու ձիերի սնունդ ապահովել: Հարմար է գտնվել բազմահազար գաղթականությանը տեղափոխել քիչ թե շատ նպաստավոր Նախիջեւանի շրջան եւ գորքն էլ առանց շատ ձգձգելու տանել դեպի Երեւան:

Օրվա գրագրությունների ոգին այն է ստում, որ չլինեին գորքի սննդի ու հանդերձավորման, օթեւանելու դժվարությունները, Անդրանիկը կմնար մինչեւ մայիս ու մինչ այն օրը, քանի դեռ պարզորոշված չէին Սյունիքի եւ Արցախի հարցերը: Չանգեզուրցիք էլ էին այդ ուզում եւ պնդում: Միայն թե նրանք իրենց որոշակի առաջարկն ունեին. զինվորները տեղից լինեին, սնունդը՝ առանց լրացուցիչ հոգաի: Գրել են նրանք Անդրանիկին մոտավորապես այս բաներով ու նույն այս բովանդակությամբ՝ փաշա, զանգեզուրցիք տանկահաջերից պակաս կովորներ չեն, բանակդ ստեղծիր մեր տղաներից, նրանց մենք կպահենք մեր հարկերի տակ, կսենք ու կհագցենք եւ այլեւ շատ հոգս չենք ունենա: Բայց այս նշանակում էր, որ Անդրանիկը պետք է ցրեր իր գորքը, գերազանցապես արեւմտահայ տղաներից կազմված այդ բանակը: Վերացական տեսակետից անհնարին ոչինչ չկա: Կամ թե՛ մեկի համար անհնարը կարող է ուրիշի համար հնարավոր լինել: Չանգեզուրցիք իրենց գորագողերն ունեին, կարող էին համարել: Դա սկզբից էլ հայտնի էր: Նրանք այդպես էլ վարվելու էին Անդրանիկի այնտեղից դուրս գալուց գրեթե անմիջապես հետո: Հայտնվել է նաեւ նոր գորավարը: Այսուհետեւ Գարեգին Նժդեհն էր լինելու դա, Անդրանիկի պանծալի ընկերն ու վաշտապետը բուրլարական կովի օրերին: Այդ պահից սկսվում է զանգեզուրյան ինքնապաշտպանության եւ հերոսամարտի նոր էջը:

1 «...օրագրութիւնը», էջ 161—162:

Չանգեզուրից դուրս գալու օրերին Անդրանիկի ներքին տառապանքը ոչ թե չկամենալն էր, այլ կամեցածը չկարողանալը: Միշտ է, չկամենալն է ամենից վատթարը: Բայց կամեցողի համար դա չկարողանալն է: Այս հավիտ, տարրալուծվող գորամասը նա պահում էր բացառապես իր սրտի ուժով, զինվորների ու գաղթականների՝ իրենից վարակված սրտերի ուժով: Երբ արդեն մոտենում էր վերջին պահը, նրան տանջում էր գաղթականների հոգսը: Նա պարտք ուներ: Նա ինքն էր փրկել նրանց եւ ինքն էլ պետք է մի վերջին հանգրվանի հասցներ: Նա պատասխան պետք է տար, եթե ոչ գաղթականների առջեւ, նրանց դեմ դիմաց, բայց գոնե իր խոնի առաջ: Սովից օրական երեսուն մարդ էր մեռնում: Չէր կարողանում, երբեք չէր ուզեցա բաժանվել նրանցից: Աշխարհում քանի՞ գորավար ու քանի՞ քաղաքագետ են ապրել անօգնական, անտեր ու անտիրական հայրենակիցներից բաժանվելու ակամա անհրաժեշտությունը: Եվ գուցե հենց այդքան էլ շատ գորավոր, բայց նույնքան էլ անճարակ ու դժբախտ գորավար է եղել նշանավոր գորավարների պատմության մեջ:

Ետդարձի օրերից մի օր անբաժան Գիբբոնը նկատել է, որ կեսօրին Անդրանիկը չճաշեց: Ամբողջ օրը լուռ է եղել, իր մտքերի, իր վշտերի մեջ սուզված: Եվ հագիվ թե Գիբբոնը, մեծահոգի՞, քարեգո՞րծ Անգլիայի որդին, ուրիշ մի կերպ կարողանար ավելի մեծ զայրույթ պատճառել Անդրանիկին եւ ավելի սուր խոցել նրա սիրտը, քան այն հարցը, թե պարենի որքան պաշար կկարողանար թողնել նա գաղթականներին, եթե ինքը խոսք տար տեղ հասցնել գորամասի ունեցածը: Անդրանիկը լուրջան զայրույթից անայթել է. կորեք դուք բոլորդ էլ, ես այսուհետ ոչ մի դաշնակից էլ չզիտեմ: Ինչ էլ որ ստացել եմ ձեզանից, կվճարեմ ձիերը Երեւանում վաճառելուց հետո: Ձեր կատարածը այն է եղել միայն, որ սովից մեռնողին հորդորել եք դիմանալ մինչեւ խաղաղության վեհաժողովը: Քանի՞ հոգի ողջ մնաց, եւ գոնե վերջին հայր կտեսնի՞ ձեր այդ խաղաղության վեհաժողովի վճիռը: Գուցե թե այս հարցականի վրա է իմաստնացել քաղաքակիրթ Անգլիայի ռազմիկը, դարձել պատմության արդարադատ դատավոր ու մի օր էլ ի լուր աշխարհի բոլոր պատմաբանների հոշակել. «Չափալանցության ոչ մի նշույլ չի լինի, եթե ասենք, որ այս պատերազմը պատմությանը չտվեց ավելի հերոսական, ավելի հուզումնալից եւ ավելի նշանավոր մի անձնավորություն, քան այս հայ գորավարը»¹:

1 «Մշակ», Ֆրեյնո, №1212, 3.09. 1937 թ.: Արտագրված է «Բելկվուդ մեգեպին» անգլիական ամսագրից: Հոկտեմբեր, 1919 թ.: Նաեւ՝ ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 370, ց. 2, գ. 128:

Ծարունակե՞ք: Օրերն անցնում էին: Փետրվարի վերջին սիսիան-
ցիք իրենց համար պահած սննդի վերջի՛ սյուշարներն էին սպառում:
Անդրանիկն ստիպված է եղել գաղթականներին զորամասի պահեստ-
ներից կերակրել:

Ավարտվում են ուղևորման վերջին նախապատրաստություննե-
րը: Գաղթականներին մի որոշ ժամանակ ապրելու գումար է բաժան-
վում, հոգ է տարվում որբանոցների երեխաների մասին: Դրա համար
եւ Անդրանիկն էր միջոցի դիմել, եւ օգնության առաջարկներ ու շնոր-
հումներ էին եղել: Քաղաքականության հետեւից չէր ընկել: Ավելի
միջոց, փորձել էր գոնե մի անգամ քաղաքական լինել, ինչպես մյուս
բոլոր քաղաքականները: Չէր գլա՞ցել, որսւմ էր ձեռք բերել, սնունդ,
գլխավորապես մարդկանց սովի բերանից փրկելու համար: Դիրքը
դիրք էր, քաղաքական պահանջը՝ քաղաքական պահանջ: Աշխարհում
բոլորը պետք է խորամանկ լինեն, ռիվաճագետ, շատերն էլ բարոյա-
կան ու անբարոյական չհարցնե՞լու իրենց հարցերը լուծեն, միայն
հայն է, այն էլ անհաց, անտուն ու անզեն հաչք, որ պիտի աչքերը
փակ, հանուն չորս կողմում ոտնահարվող բարոյականության իրեն
կամովին մահվան երախին հանձնի: Ծողոքորթ անգլիական գեներ-
ալ Դենստերփիլը եւ խաբեքա ու երկդիմի Թոմսոնը հաքվից դրան
էին ուղարկել: Անգլիան իր հոգեհարազատ զավակներին Կովկաս էր
ուղարկել հաշտություն հաստատելու: Նրանք էլ մեկին պաշտոն էին
տալիս եւ գերիշխանություն, որ նա մյուսին հալածի ու խոնարհեցնի,
իսկ հալածվողին փշրանքներ էին մատուցում, որ ոչ ոք չիմանար,
թե իրոք ով են իրենք եւ որն է նրանց իմացած արդարությունը:

Ապառելով ջանքերն ու պարզելով այլեւս, ոո ուժերի հարաբե-
րակցությունը իր կամեցածը կարողանալու օգտին չէ, Անդրանիկը
չէր կարող վերստին չտեսնել, որ իր խնդիրը իրենց կյանքը իրեն
նվիրած մարդկանց փրկությունն է:

Մարտի 22-ին Գորիսի քաղաքագլխի տանը հրաժեշտի ճաշկե-
րույթ է եղել: Մինչեւ սուսի 25-ը Գորիսից գորքը գրեթե լիովին
տեղափոխվել է Միսիան¹: Այդ օրը առաւիտյան, գորիսեցիք մնացող-
ների հետ հրաժեշտի վերջին խոսք են ասում Անդրանիկին եւ նրա
հետ ճամփա ելած հեծյալներին: Ետդարձի ճամփաներին, գյուղերով
անցնելիս, զորավարին հրաժեշտի արցունքախառն հայացքով ուղեկ-
ցում էին նրանցում օթեւան գտած գաղթական այրերն ու կանայք,
նրանց մանուկ ու ջահել որդիները: Արդյոք միայն Անդրանիկն էր
գնում, թե՛ նաեւ հույսը, բայց ոչ թե ապրելու. մի՞թե պարտադիր էր.

որ այսքան տառապանքից հետո երկրագուրկ արեւմտահայը դեռ
ապրելու հույս ունենար ու ապրեր: Նրա ցանկացածը Երկիր գնայն
էր, եւ այնտեղ ոչ այնքան ապրելը, որքան մայր հողի պարսեճական
գրկում թաղվելը: Եվ եթե երազն ինչ-որ չափով նաեւ ապրելն էր,
ապա մինչեւ թաղվելու այդ օրը եւ դարձյալ հանուն այդ թաղվելու:
Մի՞թե ուրիշ երջանկություն էլ է լինում: Մի բուռ հող ինչո՞ւ ինքն
իրենից գողանար, ցրեր արեւմտյան մայրերկրի սահմաններից դուրս:
Իր մարմնական հողի նկատմամբ իր պարտքն էր ուզում մատուցել:
Թե չէ, մեկ չէ՛ թե երբ կմտնի: Այս է, որ մայրերն ու հարսնացու
աղջիկները տանջանքից մաշված լաչակը շուրթերին քաշելով, զին-
վորների հետեւից վազելու ձգտող իրենց ոտքերը ւսնձելով, ապշա-
հար հայացքից սառած աչքերի կոպերի տակ ժայթքող արցունքնե-
րը խեղդելով, գողտուկ գլորվող տակ մի հատիկ արցունքի հետ
միասին ձեռքով հրաժեշտի նշան էին անում ու գնացող զինվորների
հետ փերիների պես սուրում դեպի երանելի հեռուները... Մեկի մըտ-
քով անգամ կանցնե՛ր, որ աստծուն ասեր, թե ինչո՞ւ եւ հայ ժողո-
վրդին լույս աշխարհ բերել, որ այսքան տառապանք պիտի պատ-
ճառես նրան: Գուցե՞ թե դրանով ուզում եւ պատիժներիդ զորավո-
րությունը փորձել եւ տեսնել, թե ով է քո աստվածային խորհրդին
ամենից ավելի հավատարիմը: Չլինի՞ մոռացել եւ, որ հայությունն
է առաջինն աշխարհում իր թագավորին հարկադրել, որ Քրիստոսի
դասերը հոչակի որպես տերության պետականորեն ընդունելի հա-
վատ: Գուցե՞ թե դա էլ է աստծո օրենքը. ով վաղ է իրեն ճանաչել,
չուտ է ուզում նրանից ազատվել: Աստվածապա՛շտ հայ ժողովորդ:
Ինչպես պիտի որդիդ չողբար քո վիշտը:

Հիշո՞ւմ էր Անդրանիկը: Սեւանից Նախիջեւան եւ Ջուլֆայի կա-
մուրջը գալիս գորքը մեկ անգամ լեռների հետ ամպերն ի վեր բարձ-
րացավ ու այլեւս վայրէջքն էր: Գորիսից Երեւան վերադարձը, ծայ-
րակետում վայրէջք լինելով, վերուվար էր: Գալիս Անդրանիկին
պահանջներ ներկայացնողները քիչ էին, հույսերն էին լիստատ:
Գնալիս հակառակն էր. ճանապարհի գրեթե բոլոր գյուղերում էլ
գաղթականներ կային, չլինեին էլ, ճանապարհից հեռու կողքի գյու-
ղերից էին ընդատաջ գալիս: Ապրուստ չունեին, լալազին ապրուստ
էին աղերսում, փրկության հույս էին հայցում:

Ուղեկցողը օրագրել է: Գիբբոնը ամբողջ ընթացքում տեսել է, որ
երկար ու ձիգ ճանապարհին իրենց ընդատաջ եկած գաղթական
հայության հարցը մեկն է եղել. «Ե՞րբ են վերադարձի դռները բաց-

¹ «...հարուածող պորամարը», էջ 188—194.

վելու: Ամեն տեղից էին գաղթածները՝ Նախիջեանից, Կարսից, Ալաշկերտից ու Վանից:

Ինչպես էլ լինէր, Չանգեզուրի բնակչության սրտով չէր Անդրանիկի գնալը: Չիններ Անդրանիկը այնտեղ, թուրք-ադրբեջանական դաշինքը չէր ընդհատելու իր հարձակումը զավառի վրա եւ գորքը նրա մատուցներից ետ չէր քաշելու: Թեւեւ Մուլթանովը Արցախի հետ միասին նաեւ Չանգեզուրն էր, որպէս միացյալ ամբողջություն, Ադրբեջանի նահանգ հռչակել, որեւէ անգամ չհանդգնէր Չանգեզուր մտնել: Նույնպէս շարունակելով ստորագրել «Ղարաբաղի եւ Չանգեզուրի նահանգապետ» խորագրերը կրող պաշտոնաթղթերի տակ, նրանց վրա գրում էր եւ հռչակում միայն Արցախի մասին: Անդրանիկը Չանգեզուրում ոչ միայն զինվոր էր ու զորավար, այլեւ քաղաքական ղեկավար եւ իշխանության կազմակերպիչ անձ: Չուր չէր Կապանի ազգային խորհուրդը 1919-ի մարտի 22-ին նրան հղած իր գրության մէջ հայտնում. «Համայն ժողովրդի բուն ցանկության հակասակ է, որ այժմս դուք մեկնէք Չանգեզուրից... Գուցէ դեռ փոխեիք Ձեր վճիռը, ժողովուրդը պատրաստ է ամեն ինչով ընդունաջ գալու»: Ժողովուրդն էլ էր տարակուսանքի մէջ. երբ նայում էր իր պարավոր շտեմարանին, տրտնջում էր, որ զինվորին ու գաղթականին սնունդ էլ է տալու: Բայց երբ կշռում էր ռազմական ու քաղաքական սպառնալիքները, գերադասում էր նրանց մնալը:

Անդրանիկը գիտեր զանգեզուրցու ե՛լ կամե՛նալը, ե՛ւ տարակուսելը: Բայց ոչ թե բառ առ բառ, այլ ներքին ձայնը լսելով, իր գնալու գաղափարի նրա ապրած տառապանքը տեսնելով: Այդ է ասում կես ճանապարհին, ապրիլի 6-ին, նրա զրույցը մայրը Գիբբոնի հետ: Հավանաբար Մայիշկայում է եղել, երեկոյան ժամը 10-ն անց կեսին: Լսելով Անդրանիկի գայրալից խոսքը Թոմսոնի մասին, մայրն ասել է, թե դեռ ուշ չէ, Անդրանիկը կարող է հանդիպել զեներալին եւ նրա երեսին ասել բոլորը: Չի ցանկացել Անդրանիկն այլեւս տեսնվել Թոմսոնի հետ, Գիբբոնն ինքն էլ կարող էր հաղորդել նրան: Չի ցանկացել տեսնվել, որպէսզի ժողովուրդը, թյուրիմացաբար, այլեւս դրսի մարդկանց վրա հույս չդնի եւ ամեն դեպքում նախընտրի իր գորքը, իր կամքը եւ «չօրինավորի օտարներուն դիմում ընելու»: Անդրանիկը լավ գիտեր, որ վերադարձի կես ճանապարհին, երբ ամեն ինչ ավարտված էր, ինչ միտք ուներ Գիբբոնին պատմել ու գլխին ավետարան կարդալ: Անդրանիկը մե՛նախոսում է, մտովի բարձրաձայն վերլուծում, որ ժամանակները լսեն: Չընդհատենք նրան.

1 ՀՀ ԴԿԳԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թ. 37:

«Վեցհարյուր տարի է, որ այս օրին կապասեինք, իսկ հիմա կը տեսնինք, որ ոչ միայն դարապաղցիին, զանգեզուրցիին, նախիջեանցիին իրավունքները չեն հարգվիր, այլ, ընդհակառակը, թուրքերն են, որ նպաստավորված են եւ լսելի կը լինին: Երեք ամիս է, որ անգլիացիները այս շրջանը եկած են, դեռ ոչինչ չեն ըրած հայ ժողովրդին համար, կը կաշկանդին մեր բոլոր շարժումները եւ արգելք կը հանդիսանան մեր արդար ցանկություններուն: Հայությունը միշտ զիջումներ կընէ եւ միշտ ալ կը շահագործվի: Մեր այդ զիջող ոգին ու անոթի, մերկ, կարիքավոր դրութենէն կօգտվին մեզ ճնշելու համար, եւ որովհետեւ թուրքերը ավելի զորավոր կը թվին, բնական է, որ կողմնակիցներ կը գտնին: Դեռ միեւնույն դրությունն է, որ կը տիրէ, սպն է՝ «իրավունքը զորավորին»: Եվ այս բոլորը ինչո՞ւ համար, որովհետեւ թուրքին դեմ կովեցանք, չի թուրքցանք ու պայքարեցանք արդարության համար, իսկ հիմա կը տեսնինք, որ արդարություն չկա:

...Ցանքսի ժամանակ, անհամար, սովամահ գաղթականությունն մը հնարավորություն չի գտներ երթալ իր հողերուն վրա վար ու ցանք ընելու եւ սովի տարի մը եւս դիմավորելու սոսկալի հեռապատկերը կը տեսնէ: Այլ բավական է: Մնացած գաղթականությունը թող չի մուրա, իսկ ինք պատրաստ է իր վերջին մի քանի զինվորներն ալ զոհելու, մի ավելի պատվավոր դրություն ստեղծելու համար»:

Բնական խոսքի այս փիլիսոփայական, քաղաքական խոհեմությունը գերծ չէ, սակայն, նույն այդ անձնավորության բնական, գուցեւ բնածին միամտությունից: Ցավում է նա, որ «անգլիական կառավարությունը հնարավորություն չի գտներ հայության ներկա դրության այս ծայրահեղ թշվառության ճշգրիտ պատկերը տեսնելու, ապա թե ոչ՝ նա թույլ չպիտի տար իր պաշտոնյաներուն այս ձեռով վարվել մեր ժողովուրդին հետ»: Եվ փաստերը. «Շուշիի, Ղարաբաղի համար թուրք նահանգապետեր կը նշանակին, կը պատրաստվին գանոնք Գորիս, Չանգեզուր դրկել, Նախիջեան անգլիական նահանգապետ կը նշանակեն ու անգլիական հող կը հայտարարեն, թերեւս վաղը մյուս օր ալ նույնը Երեւան ընեն, եւ մյուս կողմեն ալ անդադար կը կրկնեն, որ հաշտության վեհաժողովին պետք է սպասել...»:

Գիբբոնը լսում է Անդրանիկի խոսքը, որ այլեւս ոչ ոքի չպետք է խնդրել եւ ուրիշ միջոցների պետք է դիմել: Ուզում է իմանալ, թե այդ ինչ ուրիշ միջոցներ են լինելու առաջիկայում: Կհասնենք էջ-

միածին, պատասխանում է գորավարը, կտորհրդակցենք, այնտեղ կորոշենք այդ՝:

Ոտքի ճանապարհը ապրիլի 11-ին սպառվել է: Այդ օրը գորքը հասել է Դավալու երկաթուղային կայարան: Եղած ապրանքային վագոնների մեջ դասավորում են ծանր գենքերը: Մեկ օր տեղում գիշերելուց հետո գալիս են նաև լրացուցիչ այլ վագոններ՝ գորքի համար: Անդրանիկին դիմավորելու է եկել հանրապետության ռազմական նախարարի տեղակալը, նույն ինքը՝ Դրաստամատ Կանայանը, վերետմ քանիցս հիշատակված Դրոն՝:

Բաշխվում են ուժերը՝ հետեւակը զննաքով, հեծյալները իրենց ընթացքով: Անդրանիկը խթանում է իր Ասլան ձիուն, եւ հեծյալները արշավում են առաջ դեպի Էջմիածին: Ամսի 12-ի լույս 13-ի գիշերը քնել են մերձակա Փարաքար գյուղում եւ 13-ի կիրակի օրը առավոտյան մտել Էջմիածին, ուր հասել էր նաև զննաքը:

Ավարտվեց այս տառապանքի ճամփան եւս: Զինվորներին փող բաժանվեց եւ տրվեց «Ազատական թուղթ»: Փողը կոպեկներ էին՝ 200-ական ռուբլի, երբ հացի կիրգրամը 7—8 ռուբլի էր: «Ազատական թուղթը»՝ ի նշան նրանց ծառայության եւ գորացուման: Զորացրումը, որ ուրախություն պիտի բերեր, եղավ արտամոխիկ մի տխրություն. որտե՞ղ էին զինվորի հարազատները, ո՞ւր էր նա զնալու, ինչպե՞ս եւ ինչո՞ւ էր նա հոգալու իր ապրուստը: Հայ զինվորի նախաազիրը: Նույնն էր, ինչ որ հայրենիքինը: Զինվորին ցրում էին, երբ հայրենիքը ամենից շատ նրա կնիքն ուներ: Եվ ցրում էին հանրապետության կառավարությունից նրանց տեսության եկած Ալեքսանդր Խատիսյանի եւ մյուս պաշտոնյաների, Երեսանում ամերիկյան, ֆրանսիական, անգլիական ներկայացուցչություններից եկած անձանց աչքի առաջ:

Զորամասի գեները Անդրանիկը հանձնում է կաթողիկոսին, ինչպես 15 հազար ռուբլի գումարն էլ նրան պահ տալով, պատգամում է վաղ թե ուշ Հայաստանի մայրաքաղաքում ազգի նահատակներին հուշարձան կոթողել:

Երեսան էր ուզում զնալ: Երազում էր տեսնել ոչ թե քաղաքը, այլ մայրաքաղաքը: Տեսնել հին-հին բարեկամներին, գուցե նա հանգրվաններ մեկի ու մյուսի տանը, հյուրանոցում մի մահճակալ ու դիման տեսներ, գոնե մի գիշեր տաքուկ անկողնում մարդավայել հանգիստ տար իր հոգնած ուկրոներին: Երազում էր...

Բայց հանկարծ անցանկալի մի դիպված, որի մասին նա այսպես

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 39, թթ. 3—4: 2 «...հարուածող պորամարը», էջ 209:

է պատմել: «Մութ գիշեր» է եղել: Հապճեպ լուր են բերել, թե «զինվորներից յոթը սպանված են, եւ հրաձգությունը կը շարունակվի»:

Անդրանիկը կարգապահական նկատառումներով նախապես Երեսանի պարեո, հնուց իրեն ծանոթ Ծախիաթունուն գրած է եղել, որ իր զինվորներին Երեսան թողնեն միայն հատուկ անցաթղթերով, «հակառակ պարագայում» մինչեւ իսկ չստարկելով, որ արգելեն: Եվ ահա զինվորներից մեկին, Զանգվի կամրջով անցնել ցանկանալիս, հսկող ոստիկանը այդ պատրվակով խուզարկում է նրան, գրպանից հանում հենց նոր ստացած ապրուստի ռուբլիները եւ ճողոպրում: Զինվորը, նրա հետ էլ իր ընկերը, վագում են ճողոպրողի ետեւից: Մինչդեռ կամրջի պահակության սպան, որին դիմում են զինվորները, օժանդակում է, որ գողացողը փախչի: Այդ պահին հասնում են Անդրանիկի ուրիշ զինվորներ եւ կոիվ է բացվում: Դիպվածի վայրն է գալիս Դրոն, սկզբում մի հիսնյակով, որին լրացնելու է գալիս նաև հարյուրյակը: Սրանք էլ, քարեքախտաքար, իրենց մեջ ունենալով արեւմտահայեր, հակառակ Դրոյի հրամանի, հրաժարվում են կրակ բացել Անդրանիկի զինվորի վրա: Եվ իրարանցումը բորբոքվում է: Ծոտապ, լուրն ստանալուն պես, տեղից ուսնում, գալիս է Անդրանիկը մի գորախմբով եւ տեղնուտեղը զինաթափ է անում կրակողներին, իսկ նրանց սպաներին էլ տանում է իր հետ Էջմիածին: Թողնելով Երեսան, որպեսզի զբաղվի սպանության հարցով եւ ազատի իր զինվորներից գերի վերցրածներին: Կամրջի վրա նրան ընդառաջ են գալիս Ծախիաթունին եւ Երեսանի անգլիական ներկայացուցչության սպաներից մեկը: Հետո բերվում է ընդամենը մի վիրավոր զինվոր, ժխտելով մահացության փաստերը: Պարետն ու անգլիացին ասում են, թե մեղավորը Դրոն է, խոստանալով, որ իրենք կպատժեն հանցավորներին: Այսպես հիշում է Անդրանիկը, ապա եւ այն, որ իրեն Էջմիածնում այցի եկած գյուղացիները թողողել են, որ քաղաքում հաճախակի են եղել հրացանաձգության եւ սպանության նման դեպքեր*:

Հեռվից եկած տառապած, հայրենակարտ զինվորներից վերջին կոպեկն են գողացել ու սպանել, իսկ ճողոպրողին էլ օժանդակել: Եկել է հրամանատար Դրոն եւ կոիվն ավելի է թեժացել: Այս է եղածի համառոտը: Սրանից Անդրանիկը ընդհանրացնող եզրակացություն

* Երեսանյան կամրջի այս պատմությունը արել են նաև Ս. Վրացյանն ու Դ. Կանայանը՝ յուրովի եւ իրարամերժ: Պարզ երեսուն է եղել ութուկը խճողելու միտումը: Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետություն, Բ. հատոր, էջ 325—330, նաև «Հայրենիք», 29.11. 1978 թ.:

է արել. «Ես հեռացա հանրապետությունեն, որպեսզի մասնակից չլինեմ այն բոլոր անպատվաբեր, անմիտ, սնանկ եւ ազգակործան գործունեության...»¹:

Զանգեզուրից Էջմիածին բերող զտրվայրը հաղթահարվեց, Էջմիածնից Երեւան հարթուղին փակվեց: Խատիսյանի հաշտության միջնորդ լինելու խոստումը լուռ մնաց: Երբ զինվորները կոչում էին, քաղաքապետները դառնում էին անգոր: Հավանաբար վանելն ու վտարելը հեշտ է ու ախորժելի, քան հրավեր տալն ու գործի կանչելը:

Ճավայի վճիռ, որի տեղին ու անտեղի լինելը մնաց որպես իր շուրջը թեր ու դեմ հրավիրող ստեղծված:

Հոգևաբեկ զինվորները դառնում են վշտաբեկ, որպիսին գուցե երբեք նրանք չէին եղել: Հագուստները մաշված, կոշիկները ծակ, գրպանը դատարկ, ոգին միայն արի եւ երազները լուսե: Ոչ Նրանք գիտեին, թե դեռ ինչ է սպասվում իրենց, ոչ էլ գորավարը կարող էր իմանալ, որ գալու էին ժամանակներ, որ նրանց գործի մասին հուշերն անգամ փականքի տակ էին դրվելու, իսկ ով էլ որ չկարողացավ մի արահետ բացել իր համար, նրան էլ անսպասելի ու անըմբռնելի չարաչար հալածանքներն էին սպասելու...*

Ի վերջո զինվորները եկան, շարվեցին ամենայն հայոց եկեղեցու բակում: Չորավարը խոսք ուներ ասելու: Խոսք ունեին ասելու նաև զինվորները: Միշտ բարձրագույն զորավարը խոնարհվել էր ուզում, երախտագիտության, շնորհակալության խոսք ասել զինվորներին, նրանց իր պատճառած, իրենց նախասիրած, նախընտրած չարչարանքների համար: Չարչարել է ու լռեցրել, բայց դա երբեք ավելի չի եղել, քան հայրենիքի կրած տառապանքները: Գնացեք, գտեք ձեր հայրական տունն ու ձեր օջախը, ջահելներդ ընտանիք կազմեք, եւ ջանացեք որ ձեր ոտքի տակ Հայաստանը աշխարհում միշտ եւ հավիտյան անբաժան լինի եւ իր բոլոր որդիների ամբողջական սեփական տունը՝ սերնդեսերունդ:

Սա սպրիլի 26-ին: Խոսքն ու խորհուրդն էլ՝ զինվորներին: Իսկ իրեն ո՞վ էր խորհուրդ տալու: Գուցե բոլոր ասածները նաև իրեն էին վերաբերում: Այո՞, միայն ոչ թե՝ «նաև», այլ «նախ»: Ընտանիք կազմել, աշխատել ի մի բերել Հայաստան հողաշխարհը, որ մի՞

1 «Զօր. Անդրանիկ կը խօսի», էջ 240—243: Նաև՝ Արսեն Ժամկոչեան, Զօր. Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 32—35: Գալու էր բոլոր ժամանակների ամենամեծ ու անգերապահ զահճապետ-պատմիչ կորավարը. որի անունը այս գրքում այլեւս արժանի չենք գտնում մեկ անգամ եւս հիշատակելու: Նոր հալածիչներ էին ասպարեզի վրա իշխելու՝ ազգափրկիչ հորջորջվող ազգադահիճ հալածիչներ...

հարկի վրա մի՛ ծածկ լինեք: Այո՞, իսկ եւ իսկ ինքն է խոսել իր հետ: Շուտով դարձյալ կհամոզվենք:

Ջուլֆայի կամրջով անցած զինվորները Երեւանի կամրջով չանցան:

...Սպրիլի 27-ին գնացքը Երեւանից Թիֆլիս մի գեներալ էր տանում: Վագոնի կուպեում նրան ուղեկցում էին իր հնօրյա ընկերները: Այդ ճանապարհորդության վաղ թե ուշ լինելու մասին տեղյակ էին Ալեքսանդր Խատիսյանն ու գեներալ Թումսոնը¹: Թիֆլիս այցելելու մասին վաղը կիմանար Հովհաննես Թումանյանը: Գորիսից Երեւան ճանապարհից տրված հեռագիրը նրան հայտնել էր, որ սպրիլի 13-ին գեներալը լինելու է Էջմիածնում²:

12 ՎԵՐՋԻՆ ԾԻԳԵՐԸ

Հաջորդ օրը ուշ երեկոյան եմ հասել Թիֆլիս: Գիշերել եմ հենց վագոնում: Մյուս օրը Անդրանիկին Հովհաննես Թումանյանը հրավիրել է իր տուն, այնտեղ էլ նա անց է կացրել թիֆլիսյան իր օրերը: Բանաստեղծը սպասում էր: Զանգեզուրից գրածից բացի, Էջմիածին հասնելուց հետո, սպրիլի 19-ին. «Միրելի Հովհաննեսին» երկտող նամակով հայտնել է, որ իր գորսմատով արդեն գտնվում է Էջմիածնում, եւ ապա՝ «Եթե հարմարություն ունիս արի այստեղ, ցանկանում եմ թեզ տեսնել»³: Ծանապարհից, վրացական սահմանը մտնելուց առաջ, զորավարը իր գալու մասին հեռագրով տեղյակ էր պահել վրաց կառավարությանը, պատճենը հասցեագրելով Թումանյանին: Բանաստեղծը ձգում էր, բանաստեղծը հոգեւոր հեմարան էր եւ մխիթարություն: Ուղեկցել է մայրը Գիբբոնը: Թումանյանի տունը, որ միշտ գրողների հավաքավայր էր եղել, դառնում է զորավարի հնօրյա մարտական ընկերների, հայ հասարակական-քաղաքական գործիչների, նրա տեսքին կարոտ հասարակ հայ մարդկանց անդադար այցելությունների սրահ, որոնք հաճախ զուգակցվում էին հյուրասիրությամբ:

Թերթերը հաղորդում են, որ մայիսի 4-ի ցերեկը ժամը 12-ին Անդրանիկը Հովհ. Թումանյանի հետ միասին այցելել է Վրաստանի հանրապետության արտաքին գործերի նախարար Գեգեճկորիին: Նախարարը իր ուրախությունն է հայտնել ժողովրդական հերոսի հետ ծանոթանալու առթիվ: Զրույցը վերաբերել է հայ եւ վրաց ժողովուրդ-

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 54, թ. 17: 2 Ն. տ., ֆ. 370, ց. 1, գ. 70, թ. 1: 3 ԳԱԹ, Հ. Թումանյանի ֆոնդ, գ. 503:

ների բարեկամությանը: Հունվարի առաջին օրերին էր դադարեցվել սահմանային վեճի կապակցությամբ ծագած հայ-վրացական պատերազմը: Լսելով այդ մասին, Անդրանիկը դեռ հեռվում, Ջանգեզուրում իր վրդովմունքն էր հայտնել երկու դարավոր բարեկամ ժողովուրդների միջև պատերազմի նկատմամբ: Օգտվելով առիթից, Անդրանիկը հայտնում է իր համոզմունքը, որ «անցյալի գիրկն անցած հայ-վրացական ընդհարման փաստը չի կարող մթազնել այն բանի ըմբռնումը, որ ընդհանուր են պատմությամբ եւ ճակատագրով իրար հետ կապված հայ եւ վրաց ժողովուրդների թե ուրախությունը եւ թե տխրությունը»¹:

Փեզեճկորին գտել է, որ բոլորը չէ, որ գիտեն պատշաճորեն գնահատել այնպիսի մարդկանց, ինչպիսին Անդրանիկն է: Դա կարվի հետո, երբ պատմությունը լիովին կբացահայտի նրա ծառայության իսկական իմաստը:

Հակիրճ մի գրույցի ժամանակ երկու ժողովուրդների զավակները դրսևորել են իրենց հայացքների ներդաշնակությունը: Այստեղ է, որ Անդրանիկն ասել է, իսկ թերթերն էլ հրապարակել են՝ «...իմ կյանքում երբեք անձնական երջանկության չեմ ձգտել... ես ցանկանում եմ միայն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես ծառայում եմ»²:

Ճանապարհը հեռու պետք է տաներ: Հեռուն նախ Ֆրանսիան էր լինելու: Ծրագրեր ուներ: Հոգսերը կհսել է Հովհ. Թումանյանի հետ, ողջագործվել էւ մայիսի 6-ին նստել Բաթում տանող գնացքը, որտեղից նավով էր շարունակելու: Բաթումում հարմար նավ չլինելու պատճառով երկար կանգ են առել: Կարելի էր նամակ գրել.

«11-ը մայիսի, 1919 թ.: Սիրելի Հովհաննես, Թիֆլիսեն մեկնելու մեկ օրեն հասա Բաթում:

Այստեղ կը սպասենք դեռ նավու... Մաս մը իրեղեններ դրկեցի վառնա: Իսկ մենք երեւի դեռ մի քանի օր սպասենք մինչեւ մեզ տանող շոգեճակի գալը»³: Ամսի 15-ին նստել են անգլիական նավ: Մայիսի 28-ին հրաժեշտ են տվել Մելանիկի նավահանգստին: Կանգառներով, ճանապարհի տարբեր երկրների ծովափնյա քաղաքներ մտնելով հունիսի 1-ին հասնում են Մարսելի նավահանգիստ: Մտնողիսներն են ծաղկեփնջերով ընդառաջ եկել: Տեղավորվել է հյուրանոցում, ուր առաջին իսկ պահից տեսակցության են գալիս Մարսելում հանգրվան գտած իր կամավոր զինվորները: Հունիսի 4-ին մեկ-

1 Ե. Զաքուհի, Անդրանիկի եւ հայկական առանձին հարուածող պորամասի հետ, 1976, Նյու Չեքսի, էջ 170—171: 2 «Կավկասկոյե սլոկո», 4.05. 1919 թ.: 3 ԳԱԹ, Հ. Թումանյանի ֆոնդ, գ. 504

նում է Փարիզ: Տեղ հասնելուն ընդառաջ է գալիս բազմությունը, որի մեջ սպասվելիք խաղաղության վեհաժողովի երկու հայկական խորհրդակցություններից՝ ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուրբար փաշան, նրա հետ՝ հայ նշանավոր գրական գործիչ Արշակ Չոպանյանը, երկուսն էլ՝ Անդրանիկի համախոհներ, նրա անձն ու գործը գնահատողներ:

Փարիզում մնացել է մինչեւ հունիսի 16-ը: Թե՛ Մարսելի, թե՛ Փարիզի մարդաշատ հայ գաղթօջախներում ազդեցիկ հասարակական, քաղաքական գործիչներ կային, գրողներ, բժիշկներ, մտավորականության տարբեր շերտերի ներկայացուցիչներ, որոնց մեջ Դաշնակցություն կուսակցության հիմնադիրներից Միքայել Վարանդյան, նաեւ՝ գրող Վահան Թեքեյան, Շեքսպիրի երկերի հայ թարգմանիչ Հովհաննես Խան Մուսեհյան, երեկվա Ռուսաստանի Պետական դրամայի անդամ Միքայել Պասպազանյան... բոլորն էլ Անդրանիկին իմացող ու ծանոթ մարդիկ, որոնք այցի են եկել նրան, հարգանքի տուրք մատուցել, գրուցել ու խորհրդակցել նրա հետ: Եղել են նաեւ պաշտոնական-գործնական հանդիպումներ եւ այցելություններ. հունիսի 5-ին՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության արեւելյան գործերի վարիչ միստեր Կոթի, 10-ին՝ դաշնակից (Անտանտի) տերությունների գործերի ընդհանուր հրամանատար գեներալ Ֆոշի եւ սպասվելիք խաղաղության վեհաժողովի առթիվ Փարիզ այցելած տարբեր երկրների ներկայացուցիչների հետ: Ամսի 10-ին, ըստ օրագրության, Անդրանիկն այցելել է Ֆրանսիայի պրեզիդենտ Պուանկարեին¹, որի հետ հետագայում եւս հանդիպում է եղել, եւ այդ մասին հողված է գետնեղվել մայրաքաղաքի «Թան» թերթում²:

Հունիսի 16-ին փոխադրվել է Լոնդոն: Նրան շտապով ընդառաջ է գալիս պատմությունից մեզ հայտնի Թորգոմը, նրա էրզրումյան օրերի մարտական ընկերը: Դիմավորողների մեջ է հայ վիպասանի որդի Արամ Բաֆֆին: Հանդիպումներ, ճաշկերույթներ, ճառախոսություններ: Եվ հանկարծ Լոնդոնում, իր հայրենի մայրաքաղաքում, գորավարին այցի է գալիս զանգեզուրցի Գիբբոնը: Եկել է գեղանկարիչ քրոջ հետ, որը ցանկություն է ունեցել նկարելու իր եղբոր բարեկամին: Նույն նպատակով Անդրանիկին այցելել է նաեւ հայ գրող Ջապել Եսայանը, նկարչի վրձինը ձեռքին, որին հաջողվել է նստակյաց տեսնել եւ կերտել նրա գունազեղ պատկերը:

Խոնավ Լոնդոնը արթնացրել է ոտքերի ռեմատիկ ցավը, երբ

1 Ե. Զաքուհի, նշված գիրքը, էջ 187: 2 «Թան», 8.11. 1919 թ., նաեւ՝ ՀՀ ԴԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 473, թթ. 5—6:

հրավիրականներ էին գալիս Մանչեստրից, ուր նա մեկնել է բնակություն է հաստատել հունիսի 27-ից: Մանչեստրում թե Արեւմտյան Հայաստանից, թե մի քանի գաղթօջախներից տեղափոխված, գյուղատնտեսական հայություն կար: Ծաշկերություններից մեկի ժամանակ Անդրանիկին քաղաքի հայ կանանց միությունը 2 հազար ֆունտ ստեռլինգ է մատուցում: Անդրանիկը նպատակային է գտնում, որ նման գումարները կարիքավորներին օգնության տրվեն: Դա առիթ է ծառայում, եւ տեղաբնակ հայերը ձեռնադրում են «Հայ փախստականների հագուստեղենի ֆոնդ» բարեգործական միությունը, որը ձեռնարկում է հանգանակությունների, դրանց մասնակից անելով նաեւ Լոնդոնի, Ֆրանսիայի, Հաբեշտանի, Հնդկաստանի եւ հեռավոր Յավա կղզու հայությանը: Ֆոնդը, որ ենթահանձնախուրք ուներ Լոնդոնում, հարստեւել է եւ հիշարժան բարեգործություն ծավալել:

Ֆոնդի գաղափարը եւ ստեղծման կոչը տվել է Անդրանիկը: Հենց սկզբում միանգամից յուրջ գումար է հանգանակվում: Գործը ծավալելու համար Անդրանիկը նամակագրական կապեր է հաստատում: Այս նա բոլոր գաղթօջախներն է հասցնում իր «Կոչ հայության» հիղումը, որը նաեւ զեւտելվել է ժամանակի մամուլում: Կոչում գլխավորը մի հարց է հայրենակիցներին. «Արտասահմանի հայություն... թույլ պիտի տա՞ս, որ Կովկասէն մինչեւ Կիլիկիա նահատակ ժողովուրդը գալարվի սույի ճիրաններում մեջ...»: Ուրեմն չպետք է գլանալ տրամադրելու դրան ու հնարավոր այլ միջոցներ. հագուստ, կոշիկ, դեղորայք, սնունդ եւ առանց ձգձգելու, անհապաղ: Դարձյալ նույն անդրանիկյան, քաղաքական հիմքը. «Կոչ կը ընես՝ Երկիր թե Արտասահման բովանդակ հայության բոլոր կուսակցություններում, միություններում... ըլլալ միաբան, համերաշխ...»:

Դեպի միություն, դեպի վեռաշինություն»¹:

Ծիշտ է, հանգանակության գործի կազմակերպումը ճակատային կույի նման ոչ դժվար է, ոչ էլ մահացու: Բայց այժմ էլ սա՛ էր ծառայություն հանդիսատեսության գոյությանն ու ամրապնդմանը, որի ծննդյան օրերի հետ կապված հունիսի 4-ի տխրահուշակ փաստաթուղթը աշխարհամարտի ավարտով հնթնին չեղյալ էր դարձել, եւ գալթման ենթակա Կարսն ու Սուրմալուն էլ հայոց պետականության սահմանի մեջ էին: Հին վեճը մի օր պիտի մեղմանա՞ր ու վերանար թե՛ ոչ: Պետք էր օգնել վերածնված Հայաստանին: Նպատակահարմար է գտնվում հանգանակված միջոցներից բաժին հանել, գուցե թե լրիվ առաջին բաժինը, Հայաստան ուղարկել: Տանող եւ տեղում բաշխողը պետք է լիներ գնդապետ Վիլյամ Հասկելը, որ նշանակված էր դաշնակից տերությունների գերագույն կոմիսար Հայաստանում, ուր նա ժամանել է 1919-ի օգոստոսին: Բնականաբար, նա էլ հետագայում, գտնվելով Երեւանում, կապ պետք է պահպաներ նշված ֆոնդի աշխատակիցների հետ եւ շարունակեւր տեղում

1 «Արեւ», 14. 11. 1919 թ.:

գրադվել արտասահմանից նյութերի ստացման եւ բաշխման հարցերով:

Անդրանիկի Հաբեշտան հղած հեռագրի պատասխանից երեւում է, որ ֆոնդը շարունակում էր գործել նաեւ 1922 թվականին¹:

Արդեւ մինչեւ 1919-ի նոյեմբերի 10-ը Լոնդոնի, Մանչեստրի եւ Հնդկաստանի հայերից հավաքած գումարը կազմել է 50 հազար ֆունտ ստեռլինգ: Այդքան էլ մոծելու էին Անգլիայում գտնվող հայ գաղթականությանը օգնող մարմինները: Կուտակված էին հագուստ, սպիտակեղեն, կաշի, օճառ եւ այլ պիտույքներ Կովկասում ապաստանած գաղթականության համար: Այդ ամենը բաշխելու հսկողության գործին գնդապետ Հասկելին օժանդակողների մեջ է եղել Անգլիայի քաղաքացիներից բացի նաեւ Եղիշե Բաշունին: Սկզբից էլ հանգանակության գործը լավ հիմքերի վրա է դրվել եւ եղել են բազմաթիվ ընդառայելող հայրենասերներ: Իմանալով այդ մասին, Փարիզի խաղաղության վեհաժողովի հայկական ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուրաթը 1919-ի հոկտեմբերի 2-ին պարտք է համարել նամակով շնորհավորել Անդրանիկին «բաժանորդագրության փայլուն արդյունքի համար»²:

Հայ ժողովրդի պատմական բախտի բերումով հանգանակության գործի կազմակերպումը առաջնակարգ նշանակություն է ստանում: Միանգամայն բնական է ոչ միայն այն, որ Անդրանիկը հոժարակամ նվիրվում է այդ գործին, այլեւ այն, որ հայության հասարակական գործիչներն էլ իրենց պարտքն են համարում օժանդակել Անդրանիկին գործունեության այդ բնագավառում եւ նպաստել վերջինին ըստ հնարավորին ընդլայնմանը: Անդրանիկի խոսքը ազդեցիկ էր, լայն տարածում էր գտնում եւ բերում էր հնարավոր արդյունքներ: 1919-ի աշնանը միտք է ծագում Անդրանիկին նույն այդ նպատակով ուղարկել Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Անդրանիկն ինքն էլ էր դրան առիթ տվել:

Անատոլիական թերակղզու հարավային ծովեզերքին, Կիլիկիայում, որը հայության հին պետականության օրրաններից մեկն էր, բնակչությունը ոտքի ելած, ազատության էր ձգտում եւ օգնություն էր հայցում: Թերզինված ու անզեն բնակչությունը կանգնած էր թուրքական զորքերի հաճախումների դիմաց: Այստեղ մի նոր եղեռն էր նախապատրաստվում, ժողովրդի մի մեծ մեղն ընկած անօգնական հատվածի՝ զանգվածային բնաջնջում: Անդրանիկը ծրագրեր էր կազմում. միջոցներ հայթայթել, մի նոր բանակ կազմել եւ օգնության

1 Այս մասին տե՛ս «Հաշուետվություն Մանչեսթրի հայ գաղթականներու հագուստեղենի ֆոնդին» պատկերապարզ գրքուկը, որը հրատարակել է Հայ փախստականական հագուստի ֆոնդի հանձնախումբը: Տպագրվել է Վեներիկի Ս. Լապար կղզու Միսիսթոյան միաբանության տպարանում: Նախաբանում Մանչեստրի Հայ փախստականական հագուստի ֆոնդի պատմությունն է: Նրա հիմնադրման պղը հղել է Անդրանիկը: Գրքուկում մանրամասն նշված են անուններն այն անձանց, որոնք մասնակցել եւ օժանդակել են գործին: Նրանց թվում են բեհի անգլիացի գործիչներ են, եւ Մանչեստրի հայ գաղութի ու Հայաստան հանրապետության քաղաքացիներ: Նաեւ ստացված ապրանքների ցանկն է ու քանակը. դեղորայք, հագուստ, կոորեղեն, հակեր, դրանց արժողությունը, երկիր տանող նավերի անունները: 2 ՀՀ ԴԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 65, թթ. 3ա եւ 4ա:



ԱՆՐԱՆԻԿ

հասնել: Նորից կոպի դաշտն էր նախընտրում: Բանակ հանդերձավորելու, զինելու համար հանրապետությունը, ինքն էլ էր կարիքի մեջ, միջոց չունեւ, որը պետք է ստեղծեւ աշխարհի չորս ծագերում ցրիվ եկած հայությունը: Այսպես Անդրանիկը նորովի իմաստավորում է հանգանակության գործի իր նախաձեռնությունը: Նման միտք էր հուշում Անդրանիկին նաեւ Պողոս Նուբարը 1919-ի սեպտեմբերի 2-ին նրան գրած նամակում. հայ կամավորների խումբ ստեղծել, որը կարողանար օգտակար ծառայություն մատուցել ժողովրդին: Անդրանիկը ձեռնամուխ է լինում, գործի հրավիրելով իր հին բարեկամ գեներալ Հակոբ Բագրատունուն: Պետք էր զարկ տալ միջոցների հայթայթմանը, որից եւ ծագում է ԱՄՆ հանգանակության մեկնելու գաղափարը: Գործի կազմակերպման պաշտոնական կողմը

1 Ն. տ., թ. 1:

իրականացնում է ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը: Արդեն հոկտեմբերի 18-ին հաստատված էր պաշտոնաթուղթը, ըստ որի Անդրանիկը եւ Բագրատունին ԱՄՆ գործողվող հայկական զինվորական միսիա էին Բագրատունու ղեկավարությամբ: Նոյեմբերի 3-ին այդ կապակցությամբ Անդրանիկը առիթ է ունեցել նամակ գրելու. «Բագրատունին միսիային շեֆն է: Ես այ մի անդամ եմ, հավասար ձայնի իրավունքով: Առանց ինձի ոչ մի քայլ իրավունք չունի ընելու: Տեսնենք ինչ կլինի վերջը: Մինչեւ գնալս նորից կգրեմ»¹:

Փարիզում այդ ժամանակ գտնվում էր խաղաղության վեհաժողովի հայկական երկու պատվիրակություն, երկուսն էլ քաղաքացիական, մեկը Հայկական ազգային պատվիրակություն անվամբ, Պողոս Նուբարի ղեկավարությամբ, որը Արեւմտյան Հայաստանն էր ներկայացնելու, մյուսը՝ սուկ Հայաստան Հանրապետության պատվիրակություն, Ավետիս Ահարոնյանի ղեկավարությամբ: Նախապես ենթադրվում էր ստեղծել վեհաժողովի մեկ միասնական զինվորական միսիա, որում Անդրանիկը լինեւ ազգային պատվիրակության ներկայացուցիչը²:

Ավելի վաղ Հայաստան Հանրապետության վարչապետ Հովհաննես Բաջազունին էր նախապատրաստվում Ամերիկա մեկնել, այնտեղ, ինչպես գրում է Պողոս Նուբարը, «Զինվորական պիտոյից գնումներ ընելու համար», թեւ իրականում խնդիրները ավելի լայն էին. խորացող սովի դեմ պարենի հայթայթումը, Հայաստանի ամերիկյան հովանավորության, մանդատի հարցերը, ռազմական օգնությունը... Հատկապես վերջինիս կապակցությամբ Բաջազունին իր հերթին առաջարկել է գեներալ Բագրատունուն, որ «իրեն ընկերանա իբր զինվորական խորհրդական», այսինքն լինի իր պատվիրակության կազմում: Ինչպես բացատրում է Պողոս Նուբարը, Բագրատունին իրեն «դիրքին նպատակահարմար ու պատշաճ» չի գտել պաշտոնական պատվիրակության կազմում գտնվելը, գերադասելով մտնել «զինվորական հանձնախմբի» մեջ, միաժամանակ ցանկություն հայտնելով, որ դա լինի գեներալ Անդրանիկի հետ միասին: Դրան էլ վարչապետն է դեմ դուրս եկել³, Բագրատունուն քաշելով իր կողմը: Պողոս Նուբարը այսպես է գրում. «Պ. Բաջազունի չհավաներ», գտնելով, որ նման հարցի լուծումը իբրեւ թե «իրեն (այ-

1 Ն. տ., ց. 1, գ. 63, թթ. 1-4ա, նաեւ՝ ց. 2, գ. 64, թ. 8, նաեւ՝ ց. տ., ց. 1, գ. 1, գ. 395, թթ. 6-7, 2 Ն. տ., ց. 370, գ. 63, թթ. 1-2: 3 ՀՀ ՊԿՊԱ, ց. 370, գ. 1, գ. 65, թ. 1-2: Նաեւ՝ Ալ. Խատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու վարզացումը, Բ., 1968, էջ 132:

սինքն՝ վարչապետին) հանձնարարված պաշտոնն զուրա է...»:

2է՞ որ խոսքը Անդրանիկին էր վերաբերվում: Այդ դեպքում ըստացվում է, որ միեւնույն խնդրով երկու պատվիրակություն պետք էր ուղարկել, որին էլ Պողոս Նուբարն է առարկուս: Դա կարող էր, ըստ նրա. «Աննպաստ տպավորություն մը ընել..., թյուրիմացությանց տեղի տալ»: Պողոս Նուբարը պնդում է Բագրատունի-Անդրանիկ համագործակցության գաղափարի վրա, ինչին որ ի վերջո հանգում են¹: Սա որպես Փարիզի գումարվելիք վեհաժողովի Պողոս Նուբարի բարձր պատվիրակության ներկայացուցչություն: Հոկտեմբերի 12-ից արդեն Նյու Յորքում էր այդ պատվիրակության նաեւ քաղաքացիական ներկայացուցիչը, որն էր փարիզաբնակ պրոֆեսոր Աբրահամ Տեր-Հակոբյանը:

Հակոբ Բագրատունին հայտնի զինվորական դեմք էր: Ոչ հեռավոր անցյալում եղել էր (մինչեւ Հոկտեմբերը) Պետրոգրադի ռազմական շտաբի պետը: Երբ մոտենում է մեկնելու պահը, Փարիզի հայաստանյան երկու պատվիրակությունները (ազգայինն ու հանրապետականը) միատեղ հաստատում են, որ Բագրատունին ու Անդրանիկը մեկնում են ԱՄՆ կառավարությանը Հայաստանի զինվորական կարիքները ներկայացնելու և ըստ այդմ օգնություն ստանալու խնդրով²: Միտքը այդպես է ձեւակերպել նաեւ վեհաժողովի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը³:

Հայաստան Հանրապետության կառավարության համապատասխան փաստաթղթերով եւս հաստատվում է, որ գեներալ Բագրատունու ղեկավարությամբ և Անդրանիկի անդամությամբ միսիան կազմված է ԱՄՆ մեկնելու նպատակով⁴:

Մեկնելու նախապատրաստական փուլում ուրիշ միտք է ծագել Փարիզի միջազգային վեհաժողովին Հայաստանից նշված երկու պատվիրակությունների փոխարեն ներկայացնել մեկ միասնական զինվորական միսիա, և այդ դեպքում Անդրանիկը հավանական է համարվում որպես ազգային պատվիրակության հատուկ ներկայացուցիչ: Այդպես էլ եղել է: Դեռ չմեկնած, հոկտեմբերի 2-ին, Պողոս Նուբարը կարեւորություն տալով գործին, շտապեցնում էր, ցանկություն հայտնելով, որ Անդրանիկն ու Բագրատունին հնարավորին չափ արագ կատարեն իրենց խնդիրը և շուտ վերադառնան⁵:

Ժամանակի մամուլում Անդրանիկն ու Բագրատունին որակվել են նաեւ որպես «Հայաստանի բանակի հանգանակիչ հանձնախմբի»

1 Ն. տ., 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 65, թթ. 3ա—4ա: 3 Ն. տ., ֆ. 199, ց. 1, գ. 33, թ. 25: 4 Ն. տ., ֆ. 200, ց. 1, գ. 395, թթ. 6—7: 5 Ն. տ., ֆ. 370, ց. 1, գ. 63, թթ. 1—2:

անդամներ, որոնց թվում էր նաեւ կապիտան Հայկ Բոնապարտյանը¹: Որոշված է եղել ստեղծել «պատվո մատյան», նրանում գրառելու համար հանգանակության մասնակիցների անունները՝ մուծման չափերով հանդերձ: «Հայրենիք» թերթը կոչ է հղել. «Հայն է, որ պիտի ուզե և պիտի կրնա դուրս չմնալ այդ ցանկեն»²:

Նկատի ունենալով գործի կարեւորությունը և դրանում հայոց եկեղեցու խոր շահագրգռությունը, Անդրանիկը պարտք է զգացել Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ 5-րդ Սուրենյանցին Փարիզից, նոյեմբերի 10-ին հայտնել երկու օր հետո ԱՄՆ իր ուղեւորության և դրա նպատակի մասին, խոստանալով հետագայում էլ տեղեկություններ տալ ընթացքի վերաբերյալ: Դժվար չէ կուսհել, թե ինչ զգացումներ է ապրել նա այդ պահին, հարկ համարելով հատուկ խնդրելու կաթողիկոսին իր «բարեւները հաղորդել Չանգեզուրի, Դափանի և Միսիանի ժողովուրդներին»³: Կաթողիկոսին գրեց, բայց ասելիքը չսպասեց: Նույն օրը նամակ է հասցեագրել Թիֆլիս. «Սիրելի Հովհաննես Թումանյան... Ամառյա 12-ին գեներալ Բագրատունու հետ կը մեկնիք Ամերիկա: Իմ առողջությունս այն չափ լավ չէ..., Երեւանյան տիրող կառավարությունը հոգնեցա՛վ, թե կը շարունակե իր համատությունները... Բոլորի մեջ կը ցավիմ Խատիսյանին:

Եթե շարունակին այդ մտայնությամբ տանել ընդհանուր ազգի գործը՝ քիչ ժամանակեւ բնական մահով պիտի մեռնին և տուժողը պիտի լինի մեր ժողովուրդը»:

Եվ իր առողջությունն է վատ և կառավարության վիճակը. փա՛ստ է արձանագրում, թե՛ վաղվա օրն է կուսհում: Նամակը հոգեպես սիրելի Հովհաննեսին է գրում, հայրենիքին բարի ծառայություն մատուցելու կամքով: Եվ մտքով հրաժեշտի բաժակ է բարձրացնում բանաստեղծի հետ, հիշելով ու յուրովի գրելով նրա հեքիաթի բառերը.

«Դարդ անողին դարդ չի պակսիր,

Քե՛ք անողին քե՛ք չի պակսիր»:

Հետգրությունը ոգեշունչ է. «Դեհ գինիները լեցուցեք և իմ կենաց խմեցեք»⁴:

1 Հ. Բոնապարտյանը բժիշկ է, պատերազմի սկզբում եղել է թուրքական բանակում, ապա ձիգ հեծած անցել է ռազմաճակատի գիծը՝ ռուսների կողմը: Անդրանիկի կանգնեցության օրերին ծառայել է հարվածող կորամատու: Տե՛ս Վ. Փափազյանի նշված հուշերը և Ա. Չելեպյանի նշված գրքի էջ 572-ը: 2 Ըստ «Հայրենիք»-ի, տե՛ս 16.04. 1920 թ.: Հակառակ նշվածի, որոշ գրիչներ, չմոռանալով հին խոսվածք, փորձել են, թե գործի ընթացքում, թե հետագայում, անկեղծ նվիրումով կատարված հասարակական գործին անձնաշահ նշանակություն տալ (Տե՛ս «Ասպարեկ», 29.06. (3) և 10.12. 1923 թ.), «Պահակ», «Հայրենիք» (1919—1920 թթ.) և այլ թերթերի հրատարակումները: 3 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 211: 4 ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ, գ. 506:

1919-ի նոյեմբերի 23-ին Բագրատունի եւ Անդրանիկ գեներալ-ները ժամանել են Նյու Յորք՝ կապիտան (հարյուրապետ) Հայկ Բոնապարտյանի եւ Բագրատունու քարտուղար Մ. Տեր-Պողոսյանի ընկերակցությամբ: Կեցցեներով է դիմավորել ընդառաջ եկած բազմությունը, որի մեջ էին նաեւ մինչ այդ արդեն ԱՄՆ-ում գտնվող Հովհաննէս Քաջազունին եւ պրոֆեսոր Տեր-Հակոբյանը: Պատվո ընդունելությունն է մատուցել շաբթ կանգնած ամերիկյան ոստիկանության հեծելազորը: Դրոշագարդ ավտոմեքենաները նրանց առաջնորդել են դեպի հյուրանոց: Մամուլը նշել է, թե Անդրանիկն ու Բագրատունին եկել են Միացյալ Հայաստանի (այսինքն Պողոս Նուբարի) պատվիրակության կողմից, որպէս ամբողջական Հայաստանն ու հայ ժողովրդին ներկայացնող պատվիրակներ: Եկել են հայ կամավորներից «բանակ կազմելու գործը դյուրացնելու», որին Վաշինգտոնի կառավարությունը տվել է իր համաձայնությունը¹:

Քաջազունին ավելի վաղ եկած լինելով, մամուլում սկզբում նշվել է որպէս վարչապետ, բայց արդեն օգոստոսից հետո, երբ Հանրապետությունում վարչապետը ուրիշ էր, ի դեմս Արեքսանդր Խատիսյանի, նա անվանվում է «նախկին վարչապետ»: Այդպիսին է, օրինակ, նա անվանվում դեկտեմբերի 13-ին Բագրատունու եւ Տեր-Հակոբյանի միատեղ Բոստոն ժամանելու մասին հրատարակումներում: Հաջորդ, կիրակի, օրը հարյուրապետ Բոնապարտյանի ընկերակցությամբ Բոստոն է ժամանել Անդրանիկը: Հայության խանդավառություն է, հյուրերի ճոխ ընդունելություն²: Անդրանիկը երեկոյան ընթրիքի ժամին ճառ է արտասանել. «Հայը պետք չէ ամեն ինչ սպասե օտարեն, այլ իր կառավարության հիմը հաստատուն ընծայելու է, որպէսզի ազատությունը իրական դառնա»³: Թեւեւ նրբորեն, բայց բավական հասկանալի ձեւով Անդրանիկը իր միտքն է հրատարակում:

Եթե ոչ առաջին իսկ պահից, ասված առաջին իսկ բառից, ապա աստիճանաբար ունկնդիր հայությունը սկսում է նկատել Ազգային եւ Հանրապետության պատվիրակությունների տեսակետների ու դիրքորոշումների տարբերությունները: Դեկտեմբերի 23-ին Բոստոնի հայերեն թերթը պարզ կերպով ցանկալի է համարում, որ «համերաշխություն կայանա հայ Հանրապետության եւ Ազգային պատվիրակությունների միջեւ», որ լինի «մեկ ճակատ, մեկ կառավարություն, մեկ պատվիրակություն», որպէս «Ֆիզիկապէս սպառնալ եւ նյութապէս ավերակ Հայաստանը» շուտափույթ եւ հաջողությամբ վերականգ-

1 «Պահակ», Բոստոն, 25.11. 1919 թ.: 2 Ն. տ., 16.12. 1919 թ.: 3 Ն. տ.:

նելու երաշխիք: Նրա կարծիքով «փրկությունը մեկ կառավարություն, մեկ քաղաքականություն եւ մեկ պատվիրակություն ունենալուն մեջ պետք է գտնենք»:

Համերաշխության եւ միաբանվելու կոչ է արվում եւ դրան հետեւելու հարցն է դրվում տեղում գործող դաշնակցականների ու ռամկավարների առջեւ¹:

Պատվիրակությունների իրարամերժ կեցվածքները թե զայրույթ են առաջացրել, թե, ի դեպ, անհարկի արարքներ: Մամուլը փաստ է հրատարակել: Բոստոնի հայ ազգային զինախումբը Անդրանիկի ու Բագրատունու տրամադրության տակ է դրել երկու պահապան զինվորի եւ մեկ ավտոմեքենա: Բայց ահա, այսպէս կոչված, «սեւ ուժերը» սպառնացել են զինվորներին եւ պահանջել, որ նման պարտականություն նրանք այլեւս չկատարեն: Թերթը զարմանք է արտահայտում եւ վրդովմունք. «Ի՞նչ հանելուկ է սա, ո՞ւմ է պետք այս անհամերաշխությունը, «այս խելագար կուսակցությունը, այս վատ մտայնությունը, այն ալ այս պարագաներում...»²:

Հասարակությունը վճռապէս դրել է միացյալ ազգային պատվիրակության պահանջը, դրանում տեսնելով «ամբողջական Հայաստանի միացյալ կառավարության հիմը դնելու» պայման³: Ինչո՞ւ երկու պատվիրակություն, ինչո՞ւ երկու Հայաստանի զաղասիար ու պահանջ:

Փորձենք ոչ թե հախտուն քննադատել մեր նախնիներին, ի դեպ, այնպէս մերժողական, ինչպէս Անդրանիկը Քաջազունուն եւ Քաջազունին Անդրանիկին, այլ մոտենանք ընթրումով թե մեկին, թե մյուսին: Հարցի լուծման համար վճռողը հարցադրման ձեւը, մինչեւ իսկ ընդունված որոշումը չէ: Վճռողը համակողմանի պատմական հանգամանքներն են, ուժը, գործարար հմտությունը, իրական քայլերը: 1920-ի օգոստոսի 10-ին Փարիզի տակ, Սեւրում, չափազանց հեղինակավոր փաստաթղթով Արեւմտյան Հայաստանի հայկական վիայեթները թուրքական տիրապետությունից դուրս եւ Հայաստան Հանրապետությանը միացյալ հռչակվեցին: Հռչակումից հետո անգամ լուծումը նպատակին չհասավ, իսկ այստեղ նույն նպատակի համար ձեռի շուրջը բանավեճ բացելով գծովում էին, տրոհվում ու տարանջատվում... Այդպէս հնում էլ է եղել, իսկ արմատները նորովի ծլարձակում են նաեւ Անդրանիկ-Քաջազունիական բանավեճից բազում տասնամյակներ անց... Ուրիշ գործոններ կան, որոնցից մեկը համազգային միասնության անդրանիկյան պահանջն է:

Սուկ մի հարց չէր երեկվա բանավեճ հարուցողը: Մյուսն էլ այն
1 Ն. տ., 23.12 1919 թ.: 2 Ն. տ.: 3 Ն. տ., 30.12. 1919 թ.:

էր, թե ինչու է Հանրապետության պատվիրակությունը բավարարվում Ամերիկայի կառավարության առջև նորաստեղծ հայկական պետականությունը միայն դե ֆակտո (փաստացի), այլ ոչ նախ դե յուրե (իրավականորեն) ճանաչելու պահանջը դնում:

Անդրանիկն ասել է, թե ինքը Ամերիկա է եկել այնտեղի իր հայրենակիցների մեջ «համերաշխություն կայացնելու եւ հազարավոր թշվառներուն օգնության հասնելու միջոցներ ստեղծելու»:

Թերթերը կրթոտ են եղել, այլ ոչ անաչտո, հայոց հին քառուլ ասած, ոչ անախտակիր: Եղել է, որ մի մանրուքը սրել են եւ սուր իրողությունը էլ ավելի բորբոքել: Ռամկավարական «Պահակ» թերթի այդպիսի մի սյուրման դեմ Անդրանիկը հրապարակորեն ասել է. ինքը Ամերիկա է եկել ազգի կարիքներին սատար լինելու, այլ «ոչ թե այս կամ այն կուսակցությանը քաջալերելու»:

Ներազգային համերաշխության միտքը Անդրանիկը իր հրապարակային ելույթներում արծարծել է բացահայտ ու տողատակի այնպիսի շեշտերով, որոնք գրգռել են որպես վարչապետ Ամերիկա եկած եւ այնտեղ նախկին-վարչապետ դարձած Հովհաննես Քաջազունու թե՛ քաղաքական, թե՛ անձնական ինքնասիրությունը: Այդ մասին նա հետվից հանգամանակից ամսակ է գրել Ալեքսանդր Խատիսյանին, լրատվական նյութ մատուցելով թե նրան, թե գալիք օրերի հետաքրքրասերներին:

Վարչապետն ու Անդրանիկը համախոհ ընկերներ չէին: Նամակում նրանց հակասությունների կծիկն է:

Նոյեմբերի 23-ին միասին Նյու Յորքի մայր տաճարում լինելուց հետո պաշտոնաթող վարչապետն ու պաշտոնաթող գեներալը այցելել են Նյու Ջերսի, ուր նրանց քաղաքի մուտքում դիմավորել են տեղական իշխանության ներկայացուցիչները: Այստեղ ճառեր ասողների մեջ է Անդրանիկը, որի խոսքը նվիրված է Հայաստանի ազատագրության համար նահատակված հերոսների հիշատակին: Միասին են նրանք այցելել նաև Բոստոն եւ Քեմբրիջ: Նամակը գրելու պահից հետո ենթադրվել է այցելել Ֆիլադելֆիա եւ ուրիշ քաղաքներ՝ թե կենտրոնական նահանգներում, թե հեռավոր Կալիֆոռնիայում: Եթե պետք էր հասարակական կարծիք ստեղծել, ապա, ասում է Քաջազունին, դա կատարված է լիովին: Չնայած դրան, նկատում է նա, առ այդ պահը հայկական գաղութը դեռևս որոշակի կերպի չի բերել «իր հայրենասիրական վերելքը», իսկ ԱՄՆ-ի կառավարու-

թյունը «չի պատասխանել առաջադրված պահանջին»¹: Այսինքն՝ հանգանակությունը դեռ իր ձեւն ու բովանդակությունը չի ստացել, իսկ ԱՄՆ-ի կառավարությունն էլ լսողի դերից առաջ չի անցել, Հայաստանի պատվիրակների առջև չի բացել իր անելիքների խաղաթղթերը:

Հովհ. Քաջազունին իր դիրքորոշմամբ հակառակ է Պողոս Նուբարին, որի կողմնակիցն է Անդրանիկը: Ուստի Քաջազունին բողոքովին էլ չի դժվարանում Անդրանիկին եւ նրա «պոչ»^{*} բծիշկ Հայկ Բոնապարտյանին բնութագրել անպատշաճ բառերով: Ըստ այդմ Քաջազունին եւ իր գործընկեր Բագրատունին Հանրապետության կողմնակիցներ են, Անդրանիկը եւ Բոնապարտյանը՝ Պողոս Նուբարի: Պարզվում է, որ տեղի հայկական գաղութը պատակոված է, դաշնակցականները Հանրապետության կողմն են, մյուս բոլորը՝ Պողոս Նուբարի: Ըստ որում, ճշգրտելով իր խոսքը, Քաջազունին վերջիններիս ոչ թե հանրապետության, այլ նրա կառավարության հակառակորդներ է անվանում, իր կողմից փաստորեն սրելով եղելությունը, գտնելով, թե այդ մարդիկ, իբր «դժվարությամբ են տարբերում պետությունը կառավարությունից»: Իրականում շատ լավ էլ տարբերում են. կառավարությունը կոնկրետ մարդիկ են, պետությունը՝ լայն հասկացություն: Պարզապես ուզում է Անդրանիկին, մեղմ ասած, հանդիմանել, ձեւը չի գտնում: Մարդիկ կարող են կառավարության կազմին դեմ լինել (կամ մասամբ, կամ լրիվ), իսկ պետությանը, այն էլ վերածնված ազգային պետականությանը՝ ոչ:

Անդրանիկը պետականության բացասման, մերժման հարց չի դրել: Նա զայրույթ է արտահայտել: Ամեն զայրույթ բացասում չէ: Որոշակի մարդկանց հասցեին նա եւ անողոք է եղել, եւ երբեմն էլ... անվայելուչ: Ոչ միշտ, ոչ հետևողականորեն: Դրանում, չժխտենք, կա սովորույթի ու միջավայրի դերը, բայց անժխտելի են քաղաքական, աշխարհայացքային, ավելի ճիշտ՝ դիրքորոշային պատճառները, առավել եւս ակնհայտ են խժթմանքները անձնական հողի վրա: Պատճառի մի լավ քաժին էլ ընկնում է անձնական հակակրակներին: Հարյուրամյակներով պետություն չունեցող ժողովուրդ, պետության կարգով սահմանված մարդկանց աստիճանակարգի եւ դրանով պայմանավորված ձեւականությունների ու ձեւամոլությունների բացակայություն: Եկած

* Նամակը գրողի բառն է:

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, - 16: Նաեւ՝ «...հարուժող կորամաքը», էջ 105:

խոսքը ասվում էր տեղնուտեղը: Եվ խմորվում էին թայֆայական քե-
ւեռները, որոնց տուրք էին տալիս նաեւ կուսակցությունները:


Ըստ Քաջազնունու, Անդրանիկը որպէս Պողոս Նուբարի աշակից.
Հանրապետության հարցերի լուծումը տեսնում է դրսում, սոսկ դիվա-
նագիտության ոլորտում՝ «Փարիզում, Լոնդոնում եւ Վաշինգտոնում»,
այսինքն ինքն իրենով է պայմանավորում: Մինչդեռ, դարձյալ ըստ
Քաջազնունու, այդ լուծումը պետք է տեսնել բուն Հանրապետությու-
նում, որը «շարունակում է ապրել, չի ավերվել» (թ. 19): Այստեղ
շատ բան, անշուշտ, ճիշտ է: Բայց դա որոշակի հարց է եւ չէր կարող,
ով էլ լինէր, կանգնել ու համառորեն ասել, թե չէ՛, այս է, որ կա՛
միայն եւ միայն դիվանագիտություն: Սա ացես քաղաքական նեղմը-
տություն է: Բանականությունը չի կարող մեկը սկզբունքորեն եւ
լիովին ընդունել, մյուսը՝ մերժել, որոշակի շրջանակներից դուրս՝
գերադասելով մյուսից: Քաջազնունին Պողոս Նուբարին հանդիմա-
նելուց, Անդրանիկին էլ արհամարհելուց հետո գրում է. «Մենք հա-
սել ենք նրան, որ այլեւ ոչ մեկը հրապարակորեն չի համարձակ-
վում վատ բան ասել Հանրապետության հասցեին: Մենք շատ բանի
ենք հասել...»: Ծատ լավ, այդպէս էլ է: Բայց ինչու է միևնույն ժա-
մանակ զայրանում, որ Անդրանիկի հետ Պողոս Նուբարի լիազորա-
թղթերով ու նույն խնդիրներով ԱՄՆ եկած պրոֆեսոր Տեր-Հակոբ-
յանը, ինչպէս ինքն է գրում արհամարհաբար, արցունքներն աչքե-
րին ողբում է «սիրեցյալ Հանրապետության» դրությունը, իսկ Անդ-
րանիկը ցույց տալով Հանրապետության դրոշը, վերամբարձ ձեռով
կոչ է անում «բարձր պահել այն...»: Ի՞նչ ծաղրելու բան է: Մի՞թե
պրոֆեսորն ու Անդրանիկը օտար աշխարհում, ուրիշ մի միջավայ-
րում եւ անկախ դրանից, իրենց թույլ են տվել այդպէս արհամար-
հանքով արտահայտվելու, ինչպիսի շեշտեր, որ բարդում է բառերի
վրա նամակի հեղինակը: Մինչդեռ մամուլը, ինչպէս տեսանք, բո-
լորովին այլ բան էր գրում:

Զխորանանք: Հանդիպել են փոխզայրալից վարչապետն ու գորա-
վարը: Զայրույթի գլխավոր պատճառի մասին վերելում ասվեց ու
կրկնվեց: Տե՛ղ էին գտել մաղձը թափելու: Ազգային քաղաքական
խնդիրը անձնական հակամարտության է վերածվել: Համակրանքն ու
հակակրանքը դարձել են սկզբունքներ եւ հայրենի երկրից հեռու,
օտար միջավայրում բախվել: Զորավարը անձնական քաջությանն է
տուրք տվել, նախկին վարչապետը՝ քաղաքական պատվազգացու-
թյանը: Իսկ փաստերը, որոնք ընկած են բռնկված ինքնասիրության
խորքում, վերջին հաշվով, միանգամայն բնական են՝ դարեր առաջ

ազգային պետականության կորստյան, այժմ էլ վերականգնման այն-
քան ծանր երկունքով ու գոյատեւման նույնքան ծանր արհաւիրք-
ներով պայմանավորված:

Քաջազնունու հետագա շարադը-
րանքը դարձյալ Անդրանիկի անձի
վերլուծությունն է: Նա բառեր է
վկայակոչում եւ չակերտների մեջ
խոսքեր գրում, ըստ որոնց Անդրա-
նիկը սքողված ձեռով առարկում է,
գուցեւ ըմբոստանում է իրեն Հան-
րապետության գործերից հեռու
պահելու, իր նկատմամբ կառավա-
րության ճնշիչ քաղաքականության
դեմ: Սակայն դրանք սոսկ խրժ-
քծանքներ չեն, որքան էլ արտա-
քուստ այդպէս թվան: Ընդերքը ու-
րիշ է: Կառավարությունը կուզենա,
որ բոլորն իր ծննդյան օրից գլուխ
խոնարհեն իր առջեւ, չնայած որ
մանուկ է, բայց չէ՛ որ մեկն ու
մյուսն էլ կցանկանան, որ կառավարությունը նույն այդ երկունքի
օրվանից ապրի միայն երկրի վիճակը բարվոքելու հոգսերով, խտրա-
կանությանը վերջ տա ու մարդկանց միեւնույն աչքով նայի, լինի
համբերատար ու մեծահոգի: Մանավանդ որ հայ ժողովրդի մինչ այդ
տեսած բազում բարեկամներն ու նրանց իշխանությունների խոս-
տումները ամպագոռոգ էին եղել, իսկ գործերն ավելի շատ մերժո-
ղական, քան հաստատող: Եվ հաճախ խոստումները ճիշտ ու անհրա-
ժեշտ են թվացել սկզբնափուլում, սխալ ու մերժելի են պարզվել
ժամանակներ անց: Եվ պատմությունն առաջ է գնացել... նորից
սկսվելով:

Քաջազնունին վկայում է Անդրանիկի շահագրգռությունը. «Նա
ուժգնորեն քարոզում է Ամերիկայում ապրող հայերից ուժեղ կամա-
վորական բանակի ստեղծման միտքը, որի գլուխ հավանաբար դրվե-
լու է ինքը...»: Եվ մեր առջեւ բացվում է վարչապետի վա՛ն երե-
վակայությունը. Անդրանիկը այդ բանակի խնդիրը տեսնելու է նրա-
նում, որ «շարժի դեպի Հայաստան, որպէսզի այնտեղից, չգիտես
թուրքերին, թե՛ ներկայիս կառավարությանը դուրս մղելու, եւ այդ



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՋԱԶՆՈՒՆԻ

ձեռով փրկի երկիրը»: Բառ առ բառ: Բաց թողինք վարչապետի անց-
կացրած գուգահեռը. «Անդրանիկը այս անգամ իր արշավը պիտի
սկսի ոչ թե Զանգեզուրից, այլ Ամերիկայից» (թ. 24): Մնացածը
միանգամայն բնական է՝ ատելություն, զայրույթ եւ քմծիծաղ: Ինչո՞ւ
չասենք՝ գուցե Քաջազնունին այդքան մանրամասն գրել է, որ ոչ
այնքան Խատիսյանն իմանա, որքան սերունդները. Անդրանիկի կողմ-
նակիցները «անում են իրենցից կախված ամեն ինչ, որպեսզի մեզ
վարկաբեկեն ամերիկացիների աչքում: Չորս կողմը թույն են շար-
տում»:

Անսխալական չէր, իհարկե, Անդրանիկը: Դժվար էր նրա համար
դիվանագիտության ձեռի շրջանակներում մնալ: Ինչ որ նա պետք է
ասեր եւ ասում էր յուրայինների միջավայրում, կարող էր պոռթկու-
մով հրապարակ հանել: Ինչը, որ մեկի համար դիվանագիտական
փափկանկատություն էր, նրա համար պարզապես անցանկալի խո-
րամանկություն էր կամ նույնիսկ երկերեսանություն: Ամերիկահայ
հասարակության եւ իրենց իսկ բնիկ ամերիկացիների առջեւ նա
հայտարարել է, թե դաշնակիցների կողմից, այդ թվում նաեւ Ամերի-
կայի կողմից, Հայաստան Հանրապետության ճանաչումը «ավելի
չարիք է, քան թե բարիք»: Այ թեզ բան, ի՞նչ-ի՞նչ, այն էլ Հայաստա-
նի անկախության ճանաչումը, որը հայ ժողովրդի դարավոր երա-
զանքն էր: Տեսնենք: Նախ, նա ասել է ոչ թե «Հայաստանի» այլ
«Արարատյան հանրապետության»: Որովհետեւ տվյալ ճանաչումը
նրա խորին համոզմամբ թուրքական կողմի հարկադրածն էր ու թե-
լադրածը, որպեսզի գլուխ բերվեր եւ օրինականացվեր հայկական
հողերի բացարձակ գողությունը: Ոչ միայն ամբողջական Հայաս-
տանն էր մերժված, այլ մինչեւ իսկ անտեսված էին Արեւելյան Հա-
յաստանի հսկայական տարածքներ, ինչպես Զանգեզուրն ու Ղարա-
բաղը. որտե՞ղ էին սահմանագծված այդ տարածքները, զծի ո՞ր
կողմում էին Նախիջեանն ու Կարսը: Եվ մի՞թե Անդրանիկի խոսքը
հանրապետության հռչակմանն էր վերաբերում, այլ ոչ թե այդ հողե-
րի գողությանն ու աղճատմանը: Դրա համար էլ նա Արարատյան էր
անվանում եւ ոչ Հայաստան: Որովհետեւ Արարատյանը մասն էր, իսկ
Հայաստանը ամբողջականը պետք է լիներ: Դաշնակիցները, Անտան-
տի տերությունները, եթե իրապես հայ ժողովրդի բարեկամներ էին,
այդ էլ չասենք, եթե արդարադատ էին, ամբողջի ստեղծմանը պետք
է օժանդակելին, այլ ոչ թե իրենց դե ֆակտո կամ նույնիսկ դե յուրե
ճանաչմամբ մասնիկը օրինականացնեին որպես Հայաստան: Գուցե
թե դիվանագիտորեն պատշաճ չէր խիստ ու հրապարակավ արտա-

հայտվելը, բայց չէ՞ որ պատմականորեն եւ առարկայորեն անհամե-
մատ մեծ սխալ էր մասնիկը Հանրապետություն հռչակելը, հետո էլ՝
աղճատվածի ճանաչումը, եթե խնդրին նայենք առանց դիվանագի-
տական նրբանկատության: Եվ, ահա, շրջանցելով մեծ ճշմարտու-
թյունը, ամերիկահայ մամուլի, այսպես ասած, անդրանիկադեմ օր-
գանները ճշմարտությունը ոչ թե բանավեճի, այլ անպատշաճ վեճի
առարկա էին դարձնում, իրենց իրավունք վերապահելով անձը վի-
րավորող արհամարհանքի ու ծաղրանքի ձեւերի կիրառումը՝:

Բայց ինչո՞ւ հարց չտանք, գուցե Անդրանիկը իր հայտարարու-
թյան համար մի հի՛մք ուներ: Գուցե թե նա իր այդ ակնարկներից
բացի ավելին չասելով, ավելի շատ դիվանագիտություն է հանդես
բերել, քան այդ մեկ ուրիշը ճշմարտությունը պարզապես թաքցնելով:
Տեսնենք: Ամերիկյան Հայաստանում ներկայացուցիչ ուներ ի դեմս
գեղապետ Հասկելի: Հայ պետական գործիչներն ուրախ էին ու հու-
սով, որ Հասկելը օգտակար կլինի երկրի դրության բարելավմանը:
Բայց ստիպված էին հսկառակ բովանդակության ճամակներ հղել
Վաշինգտոն, նրա կառավարությանը տեղյակ պահելու համար: Ան-
ձամբ Ալեքսանդր Խատիսյանն է գրել, որը սկզբում Հանրապետու-
թյան արտաքին գործերի նախարարն էր, իսկ 1919-ի օգոստոսից
վարչապետը: Գրել է 1919-ի նոյեմբերին: Միտքը հետեւյալն է:

Հայաստանում գտնվող ամերիկյան ներկայացուցիչը ոչ մի միջո-
ցի՝ չի դիմում Հայաստանի վրա թուրքական ու թաթարական զորա-
մասերի սահմանափն հարձակումները կանխելու համար. «...մենք
գտնվում ենք ամերիկացիների հովանավորության տակ, բայց այդ
հովանավորությունը կրում է պրատոնական բնավորություն...»: Այ-
սինքն, ամերիկացիների կողմից ոչ մի միջամտություն: Նախիջեա-
նում արհավիրքներ են, հայությունը կոտորվում է, մինչդեռ, գրում է
վարչապետը. «Այս ընդհանուր Նախիջեանում է գտնվում ամերիկյան
նահանգապետը, բայց նա բոլորովին անգոր է... Նախիջեանի թուր-
քերը տաճկական սպաների ղեկավարությամբ, զինված թնդանորձե-
րով եւ գեղացիներով, արդեն մի շաբաթ է Դարապազյազի հայու-
թյան հետ կռիվ են մղում...: Պ. Հասկելի փոխանորդ գեղապետ Ռեյը
կտրուկ հրամայել է... բայց թաթարները մեծ նշանակություն չեն
տալիս այդպիսի սպառնալիքներին»: Ուրեմն, դրանք բառեր են եղել,
բայց ոչ գործնական: Նշվում է, որ Ամերիկայի կառավարությունը

1 «Ձիմվորական դիվանագետը»: Տե՛ս «Հայրենիք», Բ., №2466, 2468, 1920 թ.:
Չաեւ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 212:

դեռ շարունակում է չճանաչել Հայաստանի անկախությունը, իսկ նրա ցույց տված օգնությունը «այլուրից գատ ուրիշ» ոչինչ չի եղել:

Սա է գրել Խատիսյանը ի գիտություն ԱՄՆ-ի կառավարությանը, հայ պատվիրակների այնտեղ մեկնելու նախօրերին¹: Սա արդեն դիվանագիտական փաստաթուղթ է: Իսկ եթե Անդրանիկը կանգնե՞ր եւ ա՛յդ էլ ասե՛ր:

Ուղղամիտը ամերիկյան թերթն է եղել: Հիշեցնելով Անդրանիկի անցյալ քաջագործությունները, թերթը գրել է. «Այժմ էլ նրա խոսքն է այնպես սուր, ինչպես նրա թուրն էր»²: Բայց հիմա էլ պարզվում է, որ թրի կտրածը այնքան կտրվողին չի ցավ պատճառել, որքան որոշ յուրայինների:

Հիմա խնդիրը այնքան մեկի ու մյուսի ճիշտն ու սխալը մատնացույց անելը չէ, որքան ընդհանուր դաս քաղելը: Սա սուկ հայկական ինչ-որ մի բացառություն չէ: Ամեն տեղ է այս, որտեղ եղել են ու կան քաղաքական տարբեր մտայնություններ, ուժեր ու կողմնորոշումներ: Եվ որտեղ հարո՛ւստ է պայքարի փորձն ու բա՛րձր քաղաքական մշակույթը, այնտեղ էլ արդյունավետ է բազմակարծության արգասիքը: Իսկ հայոց պետականության կորուստը դարերով էր հաշվվում, վերականգնումը՝ ամիսներով: Նրա թե՛ ներքին եւ թե՛ արտաքին վիճակը ոչ միայն սովորականի պես բարդ էր ու խրթին, այլե՛՛ ծանր էր ու ողբերգական: Սուկ անձերն ու բնավորությունները չէին անհաջողությունների պատճառները: Անձերը՝ որոնց երազը իրոք մեկն էր՝ հայրենիքին ծառայելը: Ուժերը պետք էր ի մի բերել ուժերը, որ այնքան շատ չէին եւ ամեն տեղ էին կարիքն ու սպասուցող աղետը: Քաջագունդին եզրակացրել է. «Գործը կտրարտվի հավանաբար նրանով, որ կակավեն միջոցների հավաքումներ տարբեր կազմակերպությունների կողմից միեւնույն լուուցների ներքո: ...Ես վախենում եմ, որ այդ հավաքումների արդյունքը, փոխադարձ վարկաբեկումների դեպքում, շատ անմխիթարական լինի: Բայց, հավանաբար, ուրիշ ելք չկա: Պետք է հաշտվենք անխուսափելիի հետ» (թ. 28): Սա է՛ նպատակի մեջ, ներքուստ, նրանք վերջին հաշվով հաշտ էին: Մի ժողովրդի զավակ էին:

Ամերիկյան օրերից յուրաքանչյուրն զբաղված էր, ծամերը՝ լարված: Անդրանիկը հեռախոսի մոտ էր, շրջագայության մեջ, ընդունելությունների սրահներում եւ քանակների դահլիճներում: Կապված լինելով Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայկական ազգա-

1 ՀՀ ԴԿԳԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թթ. 4—5, 2 «Կրիստեն սայենս մոնիթոր», 21.12. 1919 թ., Բոստոն:

յին պատվիրակության նախագահ Նորատունկյանի հետ եւ գործելով նրա հետ համաձայնեցված, Անդրանիկը մի առիթով նրան տեղեկացրել է. «Զեր ըրած հանգանակությունը կատարած եմ, խոսելով Նյու Յորք, Պոսթոն, Օիկագո, Լոսանջելոս եւ Ֆրեզնո: Լոսանջելոս անցյալ շաբթու գնացի, քանի մը տեղում ազգայիններ[ս] միասին ընդունելություն մը սարքեցինք»¹:

Անդրանիկն ու Բագրատունին շուտ են վերադարձել: Հանգանակությունները թե՛ն եղել են, բայց ռազմական հարցում լիապես չեն գոհացրել: Քաջագունդին, որ ԱՄՆ-ում Անդրանիկից երկար է մնացել, 1920-ի փետրվարի 4-ին նորից նույն շեշտով է գրել Ալեքսանդր Խատիսյանին՝ Նուբարի առաքյալները ցանկալի արդյունքի չեն հասել. «Ծավում եմ, որ համաձայնություն չի կայացել, բայց շատ ուրախ եմ, որ դուք (ուզում եմ ասել՝ մենք) դրանում մեղավոր չենք»: Ի՛նչ ուրախանալու բան է: Եվ ինքն էլ է դատապարտում ներքին երկպառակությունները: Գտնում է, որ թե՛ հայրենիքում եւ թե՛ դրսում պետք է համագործակցել «քանակական եւ հայրենասեր բուրժուական տարրերի հետ»: Անդրանիկի հասարակ ծագումը կամ վարժարանային կրթության պակասն է հիմա էլ, հավանաբար, նրան անհանգրստացրել: Նուբարն էլ, նրա մտերիմ, երեկվա ռուսական պետական դումայի անդամ Պապաջանյանն էլ, նրանց հետ նստել Անդրանիկը «տխմարներ» են Քաջագունդու համար, որոնք Հանրապետության թշնամիներ են եւ չպետք է թույլ տալ, որ մոտենան անկախ Հայաստանի իշխանությանը: Նա գտնում է, որ Պողոս Նուբարին պետք է խայտառակ հրաժարականի առաջարկ անել, Ահարոնյանը պետք է իր կապերը խզի նրանից եւ տերությունների հետ կապերը վարի միայնակ²: Բոլորովին այլ բաներ էր հղում Պողոս Նուբարը նույն Անդրանիկին, նույն դեպքերի առթիվ, որոնց մասին նա գրած է եղել իր ղեկավարին: «Հապճեպով է կարդացել» նամակը եւ զայրացել է, որ «որոշ անձնավորություններ դժվարություններ են հարուցում», անձնավորություններ, որոնք «մեր երկրի շահերի առջեւ պետք է անհետանային»: Այդ բոլորի մասին Պողոս Նուբարը գիտեր, հաղորդել էր նրան Անդրանիկից էլ վաղ պրոֆեսոր Տեր-Հակոբյանը: Պողոս Նուբարը այս բոլորը որակում է որպես երկպառակություն, համոզված, որ «միությանը ու փոխադարձ օգնությանը» կարելի է ստանալ ցանկալին: Պողոս Նուբարը Անդրանիկին «ազնիվ զինվոր ու անկեղծ հայրենասեր» բաներով է անվանում: Երկու ծայրաբեկտ,

1 ՀՀ ԴԿԳԱ, ֆ. 370, ց. 1, գ. 64, թթ. 20—23, 2 Ն. տ., ֆ. 200, ց. 1, գ. 431, թթ. 2—4.

իրարամերժ, հակասական, եւ՝ դարձյալ նույն ժողովրդի զավակներ։ Քաջագուննին մինչեւ արմատը ամեն ինչ սխալ համարեց, Պողոս Նուբարը հակառակը. «Ընորհավորում եմ Ձեզ», գրում է նա եւ հիշատակում Անդրանիկի ամերիկյան գործերը. «Ձեր նշած առաջին արդյունքները շատ լավ են եւ դա Ձեզ պետք է քաջալերի հայրենասիրական այդ վսեմ գործը շարունակելու, որովհետեւ մեր ազգը, ավելի քան երբեք, ֆոնդերի կարիք ունի, մեր բազմաթիվ զոհերին օգնելու եւ մեր ազգային գործը պաշտպանելու համար»¹։ Ինչպե՞ս սրանից գոյիս հանել, արդոյք պե՞տք է ետին թվով մեկին ճիշտ, մյուսին սխալ համարել։

Տվյալ դեպքում արդյունքը երկուսի համար էլ ըստ էության նույնն է։ Անդրանիկն ու Քաջագուննին բախվել են որպէս տարբեր մտածելակերպ եւ գործելակերպ, բայց դրանից փնտլել չի փոխվել։ Ամերիկյան ապաստածը այնքան գորավոր էր, որ ով էլ, ինչպէս էլ նրան զարնվեր, այն մնալու էր անդրովելի*։ Այդպէս էլ եղել է։ Միայն թէ դրանում Անդրանիկը համոզվել է այնտեղ ունեցած մի քանի հանդիպումներից հետո եւ հենց այդ պահից էլ չի թաքցրել իր կարծիքը, իսկ Քաջագուննին ուշ է հանգել նման եզրակացության կամ, ով գիտե, գուցե թե ուշ է հարկ համարել արտահայտել իր վերաբերմունքը։ Բարեբախտաբար, Քաջագուննին, ինչպէս որ ասացինք, երկար է մնացել Ամերիկայում, հակառակ դեպքում էքսպարչապետի առաջին փուլի նամակները, որոնք վկա բերվեցին, հավիտյանս կործանարար պիտի լինեին Անդրանիկի համար։

Ամերիկայում Քաջագուննու տեսական շրջագայության ամիսներին իր հայրենիքում փոխվել է Հանրապետության կառավարության կազմը, ինքն էլ ազատվել է պաշտոնից եւ վերադարձից հետո վարչապետը Ալեքսանդր Խատիսյանից հետո այլեւս ուրիշն էր՝ թժիշկ Համր Օհանջանյանը։ Նրան էլ հղել է նա իր սրտամտիկ խոսքը. «այսօր արդեն 14 ամիս է, որ ես թափառում եմ դուրսը... հոգեկան կացությունս բավական վատ է²։

Անդրանիկը վաղ է տեսել ու նկատել, որ ամերիկյան ղեկավարությունը ընդառաջ չի գալիս Հայաստանի պատվիրակների ցանկություններին։ Առանց թաքցնելու, տարակուսանք է հայտնել ու զայրույթ։ Ում էին պետք գեղեցիկ խոսքերը։ Ի՞նչ արժեին փոխադարձ

հարգանքի եւ սիրո հավաստիացումները, թեկուզեւ ամենաճոխ հյուրանոցների շուրջը։ Անդրանիկի տարակուսանքից ու զայրույթից բաժին էր հասնում նաեւ դիվանագիտության մեջ հմտության ձգտող դյուրահավատ նախկին վարչապետ Քաջագուննուն եւ նրա կառավարությանը, անկախ նրանից, թե դա որքանով էր դիվանագիտորեն ճիշտ ու ընդունելի։ Եվ եթե հարցը գնահատենք ա՛յդ դիվանագիտության տեսակետից, անկասկած է, որ Անդրանիկի վերաբերմունքը քննություն չի բռնի։

Եվ ահա նախկին վարչապետը 1920-ի հունիսի 26-ի իր նամակում նոր վարչապետին պատմում է։ Երեք շաբաթ իր շքախմբով հայկական բանակի համար հանգանակության հարցով շրջագայել է Կալիֆոռնիայի հայաշատ քաղաքներում։ Իրենցից առաջ նույն խընդրով այդտեղ այցելած է եղել Անդրանիկը՝ կապիտան Բոնապարտյանի հետ։ Եվ հայաստանյան երեք պատվիրակությունները զուգընթաց քայլել են նույն ճանապարհներով։ Պարզ է, հայկական միջավայր է, պետք է որ անկեղծ գրույցներ լինեին, հարց ու պատասխան, թերեւ նեւ կարծիքներ։ Գաղտնիք չէ, որ տարբեր պետք է եղած լինեին նաեւ վարչապետի եւ Անդրանիկի պատասխանները։ Մի՞թե պարկեշտություն է, որ անպաշտոն գեներալը թեկուզ դարձյալ անպաշտոն, բայց երեկվա վարչապետի՝ ներկայությամբ, առանց նրա նկատմամբ պատկառանքի, քննադատում է ու հոխորտում մերթ հայրենի կառավարության, մերթ ամերիկյան ղեկավարության հասցեին։ Էլ ի՞նչ պատվիրակություն, էլ ի՞նչ օգնության ակնկալություն։ Քաջագուննին հագիվ է զսպել իրեն. «Մենք բանակովի չէինք բռնվում Անդրանիկի հետ», — գրում է նա։ Խուսափել են, նոր անախորժությունների տեղիք չտալու համար։ Բայց երբ եկել է նոր վարչապետին գրելու ժամը, հին վարչապետի գրիչը, ինչպէս եւ պետք էր սպասել, շատ համարձակ է դարձել. «Դժվար է երեսակայել... թե այդ խենթացած խմբապետը եւ իր անարժան ավանտյուրիստ կապիտանը ինչե՛ր են ասել մեր պետությունը վարկաբեկելու համար»։ Եթե մեկ ուրիշն այդ աներ, գուցե թե դեռ ոչինչ։ Բայց տեսեք, որ դա անում է ոչ թե սովորական մեկը, այլ այն մարդը, որի տեսքին կարոտ էին, որի մի խոսքը գուցե թե հարյուրների ու հազարների խոսքից թանկ էր ու ազդեցիկ։ Այդ է, ըմբռնումով, խոստովանում նախկին վարչապետը. «Անդրանիկի անունը այնքան քարձր է հնչում այս հեռավոր վայրերում, այնքան մեծ հմայք ունի գործին անտեղյակ մարդկանց համար..., որ անտեղյակ մարդիկ ազդվում են ու ներշնչվում»³։

1 ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 370, ց. 1, գ. 63։ Պողոս Նուբարը Անդրանիկին 18.03. 1920 թ.։

* Հայաստանի պատվիրակները ցանկացել են հանդիպել պրեզիդենտ Վիլսոնին՝ Նա քաղաքակրթորեն հայտնել է, որ հիվանդ է եւ տեսակցության ու ողջույնի համար ուղարկել է իր քարտուղարին։ Տե՛ս Ա. Չելեպեան, էջ 591։

2 ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 121։

Անդրանիկն իր խոսքն ասելու տեղ էր գտել: Հանդիպել էր ո՛ւմ- ո՛ւմ, ոչ միայն այն, թեկուզ երեկվա, կառավարության, այն վարչա- պետի հետ, որի օրոք փակ էր հայրենիքի մայրաքաղաքի ճամփան իր առջեւ, ոչ, դա ի՞նչ է որ: Աշխարհն արդեն գիտեր, որ Քաջազնու- մին էր այն մարդը, որը դեռ վարչապետի պետոհն չբազմած, ստորա- գրել էր հունիսի 4-ի պայմանագիրը: Ահա եւ ամբողջ գաղտնիքը: Մի գաղտնիք, որը եթե աշխարհին անգամ անհայտ լիներ ու մշու- շածածկ, Քաջազնումինն հո գիտեր եւ, իհարկե, Անդրանիկի հետ ւ- մերիկյան թե, դիցուկ, սովորապիսիական ու կանադական հայ հա- մայնքների հետ հանդիպումների ժամանակ, պատահումների մի քե- րումով գնացքով միատեղ ճամփորդելիս, թե էոս Անջելեսի Դիսնեյ- լանդ այգում ճեմելիս, մեկ է, նա պիտի դիվանագետի ու քաղաքա- գետի իր ամբողջ խոհեմությամբ հանդերձ համրի պես լոներ եւ կու տար շանթի մեան ճայթող ու նետի պես խոցող այն խոսքերը, որոնք արձակելու էր անգո՛ւսպ ու հանդուգն Անդրանիկը: Թե չէ, ինչ է, լեզուների մեջ հմուտ, բառերի մեջ ազատ, գիտելիքների մեջ քաջա- տեղյակ Քաջազնումինն պետք է այդքանից հետո կրեր վիրավորանք- ների ծանր քեռը եւ իրեն դիվանագիտական նրբանկատության գո- հաստեղանին հանձններ: Երբե՛ք: Քաջազնումինն ինչպես որ Անդրանիկի հետ դեմառդեմ հանդիպումների ժամանակ լսել ու կուլ էր տվել, այնպես էլ իր նամակներում է, որքան էլ զայրալից, խոհեմությամբ շրջանցել նրա հետ ունեցած իր հուճիստության վեճը: Տեղը չէր, այո՛, Ամերիկյան բանավեճի: Բայց ուրիշ էլ որտե՛ղ պետք է Անդրանիկը իր երեկվա վարչապետի առջեւ բացեր իր սրապանձված լեզուն: Հե- տո ինչ, որ Ամերիկայում էր: Բայց չէ՞ որ սրահներում, որոնցում հանդիպումներ էին, լեւի-լեցուն հայեր էին, եւ խոսքն էլ հայերեն էր: Մի պարզ ճշմարտություն են ասել Անդրանիկը եւ նրա հետ ԱՄՆ մեկնած պատվիրակները. առանց Արեւմտյան Հայաստանի հանրա- պետության ճանաչումը կարող է թուլացնել, սովերարկել եւ մոռա- ցության մատնել Արեւմտյան Հայաստանի դատը: Այդ գաղափարի քարոզին առանձին եռանդ է նվիրել Անդրանիկը¹: Սա է, որ գծտու- թյան առարկա է ծառայել Անդրանիկի եւ Քաջազնումու միջեւ: Դրան առանձին պրոթյուն է հաղորդել Անդրանիկի բարձր հեղինակու- թյամբ հնչեցրած խոսքը:

Սրա հետ լիովին համընկնում է նաեւ Հանրապետության մյուս վարչապետերից Ալ. Խատիսյանի կարծիքը: Նա էլ գտնում է, որ կառավարության հետ Անդրանիկի գծտության գլխավոր, կարող ենք

1 ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թթ. 60—62

ասել նույնիսկ միակ, պատճառը այն է եղել, որ «Տաճկահայաստանի նահանգները դուրս էին մնում Հայաստանի հանրապետության սահ- մաններից», մանավանդ որ դեռ չէր ընդհատվել Անտանտի տերու- թյունների պատերազմը Թուրքիայի եւ նրա դաշնակիցների հետ¹:

Խատիսյանն էլ գիտեր Անդրանիկի զայրույթն ու ներքին խոռվքը: Գիտեր այն բառապաշարը, որ ոգեւորության պահերին բաց էր թողնում իր իսկ հարազատ կառավարության, մանավանդ նրա դե- կավարների, հասցեին: Հակառակի մեան հունիսի 4-ի պայմանագրի տակ Ալեքսանդր Խատիսյանի հետ մեկտեղ ստորագրել է Քաջազ- նումինն: Վերհիշելով հունիսի 4-ը, Խատիսյանը անհարմար չի գրա- նում անկեղծորեն խոստովանելու, որ այն հեռու էր «Անդրանիկի, ինչպես նաեւ ամբողջ հայության իդեալից: Անդրանիկի կյանքը, նրա քաջագործությունների ամբողջ իմաստը կայանում է նրանում, որ նա ուզում էր տեսնել տաճկահայությանը ազատագրված թուրքական դարավոր լծից, որի փոխարեն կնքված էր հաշտություն, որով տաճ- կահայկական նահանգները դուրս էին մնում Հայաստանի հանրա- պետության սահմաններից եւ, որ գլխավորն է, հաշտությունը կընք- ված էր այն ժամանակ, երբ դաշնակիցները շարունակում էին իրենց պայքարը տաճիկների դեմ... Այս էր պատճառը, որ նա բաժանվեց իր կյանքի եւ կովի երկարամյա բարեկամներից»: Սրան գումարած էլ, մշում է Խատիսյանը, Անդրանիկը դժգոհ է եղել կառավարու- թյան կազմից²:

Անդրանիկի անունը բարձր էր հնչում, նա մեծ հմայք ուներ, եւ մարդիկ նրա խոսքից ազդվում էին ու ներշնչվում: Գրում է սա Քաջազնումինն եւ միաժամանակ էլ կարծում, թե Անդրանիկը բաներ էր ասում, որոնցից մարդիկ «անտեղյակ» էին: Իզուր: 1919 թվակա- նին այդ ի՞նչ հայ մարդ պետք է լիներ Ամերիկայում եւ ինչո՞ւ պետք է լիներ Ամերիկայում, որ չգիտենար, թե ինչ է հունիսի 4-ը կամ հաթումի չարաբաստիկ պայմանագիրը: Այդ ի՞նչ հայ պետք է լիներ, այսպես ասենք, պարոն Քաջազնումին, որ այդքանն էլ չիմանար: Իհարկե, եթե Դուք մարդկանց անտեղյակ եք անվանում, շատ մե՛ղմ եք ու հարգալի՛ց, որ Անդրանիկին էլ ընդամենը մի «տխմար» բա- նով եք հավերժացնում: Այո՛, հավերժացնում, որովհետեւ Դուք այն գրել եք երեկվա վարչապետի Ձեր ձեռքով եւ հղել եք Հայաստան Հանրապետության ներկա վարչապետին, ցանկացել եք շատ թանկ գնահատել գրչի մի շարժումով Ձեր մի բառը, որը ոչ միայն այնքան

1 «Մշակ», 3.09, 1937 թ.: 2 Ն. տ.:

անհարիր է Չեր գրադեցրած պաշտոնին, այլև ևնյնքան անվայել, մեր խորին համոզմամբ, Չեր բարեկիրթ էությունը:

...Այս տողերը գրելիս դեպքերից տասնամյակներ են անցել: Վաղուց սուրբ հողի հետ միախառն հավերժացել են վարչապետ Քաջազունու եւ նրա ախոյան Անդրանիկի տարագիր շիրմները: Հայ ժողովուրդը խոր ակնածանքով է նրանց հիշատակին հարգանքի տուրք մատուցում: Ծա՛տ ունի նրանցից ավելի պանծալի զավակներ հայ ժողովուրդը: Բայց նա այսօր ուզում է իր կորցրած հողերի պահանջատիրությանը հանդես գալ, ուզում է ելնել ու աշխարհի առջև խնդիր դնել, թե ինչու են խլվել իր Կարսն ու Իգդիրը, քանի՞ դար պետք է մայր հողի վրա, բայց օտար երկնքի տակ մնան Անդրանիկի ազատամարտի քաղաքներ Ծապինկարահիսարը, Մուշը, Բաղեշն ու Վանը... Ուզում է հայ ժողովուրդը: Իսկ զավթողի ժառանգները պատմության ախոռներից փաստաթղթեր են հանում. առաջինը հունիսի 4-ինն է, որի տակ Հովհ. Քաջազունու ստորագրությունը, ապա 1920-ի դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որի տակ առաջին ստորագրությունը նրանից հետո վարչապետի պաշտոնն ստանձնած Ալեքսանդր Խատիսյանինն է: Ոչ մեկի տակ էլ հայի ձեռքը կամովին չի գնացել ստորագրելու: Դրանք զավթողագրեր են ու հարկադրագրեր, մամուլի հարկադրանք են եւ հրացանի սպառնալիք: Եվ մի՞թե պետք է հավատալ, թե խենթ է կամ, ինչպես Քաջազունուին կասեր, տխմար է այն գեներալը, որը դիվանագիտության եւ անբարոյական քաղաքականության դեմ ելնելով իմաստուն է իրեն կարծել եւ հիմարաբար բացահայտ ասել հայոց հողերը բռնազավթելու մասին ճշմարտությունը:

Բոլոր այդ ճշմարտությունները, որպես հայոց կառավարության նկատմամբ իր վերաբերմունքի պատճառաբանություն, Անդրանիկը գրել է խոստովանել է Փարիզյան «Ազգ» թերթում: Ոչինչ ավելի չի ասել, քան այստեղ ասվեց եւ ասվել էր սույն շարադրանքի վերեւում: Բայց այս անգամ էլ Քաջազունուին իր նամակում դա որակում է «իրք» բառով: Խոսքը գնում է քաղաքական լուրջ խնդիրների մասին, այնինչ էքսվարչապետը, որ մինչ այդ դեպքերը այն կարծիքին էր, թե Անդրանիկին պետք էր դատի տալ 1919-ի ապրիլի երեսնյան կամրջի դեպքերի համար, հիմա լրացնում է, պնդելով, «որ պիտի դատի ենթարկվի նաեւ Ամերիկայում բռնած ընթացքի համար»¹: Պարզ է:

Վարչապետ է եղել, թող այդպես լինի, թող Անդրանիկը նրա

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թթ. 116—119:

կարծիքով ու պահանջով վարչական-դատական կարգով պատժվի: Բայց դրանից առաջ հավանաբար մեկն էլ արդարամիտ կզուցվեր ու կմիջամտեր: Այդ մեկը այս անգամ լինելու էր ու կլիներ Ամենայն հայոց կաթողիկոս վեհափառ Գեորգ 5--որդ: Բոլոր այդ դեպքերից հետո, 1921 թվականի սեպտեմբերի 9-ին նա հատուկ կոնդակով մեծարել է Անդրանիկին եւ պատշաճը մատուցել նրա արտասահման անցնելուց հետո ծավալած հանգամակշական, հայրենասիրական գործունեությանը: Ի լուր հայոց բոլոր եկեղեցիների եւ ի լուր ամենայն հայության նա հռչակել է՝ «Հայրենասեր գորավար պարոն Անդրանիկ... հավետ սիրելվոյ մերոյ, նվիրեմք ողջույն եւ հայրապետական օրհնություն... Միրելի ինձ է դյուցազն հայրենի մերոյ, Անդրանիկն հայոց, որ ի հեռուստ իսկ հոգա... եւ հեղինակ հանդիսացեալ ի Մանչեսթր հանգանակութեան թե վասն սուրբ աթոռայ Էջմիածնի»²:

Տարբեր կարծիքներ են, որովհետեւ մեկը կաթողիկոս է, մյուսը՝ պաշտոնաթող վարչապետ: Այնուամենայնիվ, վշտացել է Քաջազունուին: Ինչու չպետք է վշտանար: Որքան էլ դժգոհեր Անդրանիկից, առավել պետք է դժգոհեր Ամերիկայում իր շրջագայության արդյունքներից, որոնք շոշափելի չէին: Նոր վարչապետ Համո Օհանջանյանին նա ուրախությանը չէ, որ գեկուցում էր, թե սե՛նատում քննարկվել է Հայաստանի մանդատը ընդունելու մասին պրեզիդենտ Վիլսոնի առաջարկը եւ մերժվել³: Ամերիկայի Բարձր Դուռը արժանի չէր համարում այդ մանդատը ստանձնելը. Հայաստանն ի՞նչ ուներ տալու, թանկ կնւտեր իրենց վրա այդ մանդատը:

Նույն այդ օրերին այդ մասին Հանրապետության կառավարությանը ուշագրավ տեղեկություններ է հայտնել ԱՄՆ-ում նրա դիվանագիտական ներկայացուցիչ Գարո Փաստրմաճյանը, որը ընկերակցել է Քաջազունուին նրա այնտեղ գտնված օրերին: Ամերիկյան մերժել է Հայաստան Հանրապետության De facto (փաստացի) ճանաչումը, պատճառաբանելով, որ այն «ոռուական հողերի վրա է, որպեսզի ատով ապագա Ռուսաստանը չվիրավորեն»: Դրան Ամերիկյան կզնար, երբ Հանրապետությանը կմիանային Արեւմտյան Հայաստանի հողերը: Իսկ մինչ այդ անպաշտոն կապ կպահպաներ: Գեներալ Բագրատունին որպես ԱՄՆ մեկնած ռազմական պատվիրակության ղեկավար, 30 հազարանոց բանակի զինման պահանջ է դրել ամերիկյան կառավարության առջեւ³: Բոլորն էլ ապարդյուն:

1 Տեղակալ Մ. Ավետեան, Հայ պատագրական սպառնալից հիսնամեայ..., Փ., 1954 թ., էջ 226: 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 104: 3 Ն. տ., թթ. 60—62:

Այս փաստերն իմանալուց հետո արդեն մեզ թվում է, թե ասեւ Քաջազունին էլ Ամերիկայի նկատմամբ իր քննադատական խոսքով Անդրանիկի հետ մարտոնյան մրցավազքի ելած լինի: Հայաստանին օգնելու հարցը, գրում է նա, «անիմաստ նախադասությունների» է վերածվել եւ գովեստական բառակույտի¹: Պարզվում է գարմանայի մի գաղտնիք. ա՛յն, ինչ Անդրանիկն ասում էր իր հախտոն բանավորով, որ գոնե սիրտը գովանա, այդ բոլորը Քաջազունին սրահում ու ջերմացնում էր իր կրծքի տակ եւ միայն նամակի թուղթն էր, որին վստահում էր իր քաղաքական եւ դիվանագիտական վարվելակերպի գաղտնիքները. «...այլեւ ոչինչ չի մնում ինձ անելու Ամերիկայում, կարող եմ վերադառնալ տուն: Մյուս կողմից սարսափում եմ, մտածում եմ, թե ինչպես պիտի վերադառնամ տուն դատարկ ձեռներով, ինչ պատահաւսն պիտի տամ Ձեզ, որ այնքան ըստասեցիք ու այնքան տառապեցիք»²: Ինչպես չդառնանք եւ օրերի հեռավորությունից չասենք մեծարգո պարոն Քաջազունուն, թե էլ ո՛ր էիք շտապում ու զայրանում Անդրանիկի վրա: Իր նամակներում, ցավոք, որոնք Դուք չէք կարդացել, նա ի միջի այլոց, այդ աստիճան վատատես ու մերժող չէ: Իսկ Դուք էլ քայլ առ քայլ Ձեր նամակներում մերձեցնում եք Անդրանիկին եւ, ի վերջո, մինչեւ իսկ փարվում նրան ու տառացի-բառացի գրեթե նույնությամբ Ձեր բախտի ու անելիքի նկատմամբ հուսահատության ժառին այն եք ասում, ինչ որ ժամանակ առաջ Անդրանիկը: Ուրիշ գործի մասին եք երազում, գտնում եք, որ ապարդյուն է անցել ձեր շրջազայությունը ԱՄՆ-ում, ուզում եք Ձեզ արդարացնել երկրի ու ժողովրդի առջեւ եւ նույնությամբ այն եք երազում, ինչ որ երեկ Անդրանիկը: Ձեր բացակայության օրերին նոր կառավարություն է կազմվել, Ձեզ պաշտոն են տվել, Ձեր սրտովը չէ: Ձեռն իմացել, որ Դուք ուրիշ մի տրամադրությամբ եւ ուրիշ մի սրտով եք վերադառնալու այնտեղից եւ այլեւս ի վիճակի չէք լինի պաշտոնավարելու հին ձեռով: Արդարանալ եք ուզում: Ահա Ձեր նամակը վարչապետ Համո Օհանջանյանին. «Սիրելի Համո..., ցավում եմ, որ ինձ չէք հարցրել: Ցավում եմ, որ կայացած որոշումից հետո ստիպված եմ հրաժարվելու: Այդ պաշտոնը վարել եւ չեմ կարող չունիմ համապատասխան ընդունակությունները»: Նեղն էք ընկել, վշտացել եք ու հիասթափվել: Իսկ հե՛շտ էր Անդրանիկի համար մեղած ամեն մի ճակատամարտից հետո: Էրզրումը չորս կողմից կրակի տակ էին վերցրել, կանգնեցրին Գյուլի Բուլաղի գծի վրա, որ երկրորդ անգամ հոգեպես ջախջախի եւ կամուլին ինքն իրեն դուրս

1 Ն. տ., թ. 104: 2 Ն. տ.:

դնի: Բայց նորից ոտքի վրա մնաց... Ծարունակենք.. «Գալիս եմ Երեւան,— գրում եք Դուք հեռավորությունից,— կառավարությանը լրիվ զենուցում եւ հաշիվ տալու իմ այսքան երկար ճամփորդության մասին: Այդ անելուց հետո եւ կը մտնեմ բանակը իբրեւ կառավոր զինվոր: Ուզում եմ անձնապես, ֆիզիկապես մասնակից լինել գալիք անխուսափելի կռիվներին՝ մեր երկրի սահմանները ամրացնելու համար»: Այ քեզ բան, ասացիք գրեթե բառ առ բառ այն, ինչ Անդրանիկը 1917 թ. աշնանը, երբ նրան դիվիզիայի հրամանատար նշանակելը վիճարկվում էր, եւ մենք մեջ ենք քերել այս գրքի մուտքի խոսքում: Զայրացած էր նա, հրաժարվեց հրամանատար դառնալու ամեն մի ակնկալությունից եւ հրացանն ուն նստավ որպես զինվոր: Դա զինվորն էր: Հիմա նկատեցեք, երեկվա վարչապետն է ուզում մի նոր Անդրանիկ դառնալ, կարծելով, թե դրա համար բավական է զինվոր դառնալը:

Ահա թե որն է Քաջազունու մեծությունը: Մի Անդրանիկ էլ նրա հոգու խորքում էր նստած: Ինչպես ամեն մի անկեղծ հայրենասեր հայ մարդու մեջ:

Կարդացե՛լ էր Քաջազունին Անդրանիկի երեկվա խոսքը, լսե՛լ էր նա այդ մասին, որ բառ առ բառ կրկնեց, թե՛ ինքնաբուխ էր: Անշուշտ, ինքնաբուխ էր, հակառակ դեպքում վարչապետը, որքան էլ երեկվա, իրեն զայրացրած զինվորի խոսքը բառ առ բառ չէր գրի: Ուրիշ կերպ կգրեր կամ բոլորովին չէր գրի, առիթ կգտներ բանավորով ասելու: Սա վարչապետի ինքնաբերական մեղայականն էր Անդրանիկի առջեւ, ավելի ճիշտ, նրանց բացարձակ հոգեհարազատությունը: Սրանից հետո ինչ խոսք, որ պետք է ետ վերցնել վերելում քաղաքակիրթ եւ հայրենասեր Քաջազունու նկատմամբ արված բոլոր հանդիմանական ակնարկները, հարց տալով՝ իսկ ինքը արդյոք նույնպե՛ս կվարվեր Անդրանիկի նկատմամբ: Գուցե թե հենց այդ նկատառումով է նա հետո, Անդրանիկի կենդանության օրոք, գրել եւ հրատարակել իր «Թուրքիա թե՛ Ռուսիա» հրատարակումը, որում, մանրորեն մեջ չմտնելով, այս անգամ էլ այդ հարցադրման անդրանիկյան գիծն է կրկնել: Սա հետո, տարիներ անց է գրել վարչապետը: Մինչդեռ Անդրանիկը 1920-ի մարտի 27-ին Ամերիկայից վերադարձից առաջ է Ամերիկայի առջեւ ճշմարտախոսության իր քննությունը բռնել, ասելով այն, ինչը Քաջազունու հոգու խորքում նույնպես լեռնացած հիասթափություն էր ու զայրույթի մաղձ: Նա դա

1 Ն. տ., թ. 126:

արել է ճակատ առ ճակատ, որպես աներիկյան կառավարությանը հղած կոչ:

Վերնագիրն է՝ «Այ մենք վհատած ենք»: Վերնագրից իսկ խոսվքը պարզ է, թեև առաջին տողը «Հնորհակալություն է աներիկացիներուն», որի ոգին «թաքնված է» «Հայաստանի հանդեպ իրենց ցուցաբերած հետաքրքրության համար» շարունակության մեջ: Ընդամենը... հետաքրքրության համար: Եվ այդ այն դեպքում, երբ հարյուրավոր հայ կանաչք թուրք ընտանիքների մեջ են, շատ-շատերն էլ «լեռներուն ու ձորերուն մեջ մահվան սպառնալիքի տակ կասրին»: Այս այն չարաբախտ ներկան է, որում «թուրքերուն նպատակը ամբողջ հայ ժողովրդի բնաջնջումն է»: Հետագա ամբողջ շարունակվող այդ նպատակի բացահայտումն է: Հայրենիքի սիրո բնա՞ղոն է խոսում նրա մեջ, թե՛ վաղվա օրվա ստույգ կռահումը: Եվ թվարկում է, թե ինչ են անում թուրքերը եւ դեռ ինչ են անելու իրենց ուխտ-նպատակի համար: Եվ պարզ գրում է, որ դրան նրանք ձեռնամուխ են լինելու արդեն սկսված գարնանը, նույն 1920 թվականին: Քանի որ այդպես էլ եղել է, թեև ոչ գարնանը, այլ աշնան սկզբից, բերենք բառացի. «...անոնք գորաշարժ հայտարարած են: Նպատակն է վերջացնել իրենց սկսած քսումների գործը այս գարնան»: Կարող էին հիմա էլ հանդիմանություն անել, թե՛ ի՞նչ է պարոն Անդրանիկ, գորավարությունդ թողել, այժմ էլ գուշակ ես դարձել: Կարող էին, որովհետև դա թեթև, տարածված մի կարգ է: Այդ դեռ ոչինչ, Անդրանիկը Ամերիկային ի գիտություն հայտնում է, թե ինչ է ինքը՝ Ամերիկան եւ ինչ դեր կարող է նա խաղալ հայոց հերթական լինել-չլինելու այս նախաշեմին: «Միայն Ամերիկա կրնայ արգելք հանդիսանալ իրենց [Թուրքիային]»: Միայն Ամերիկա՞ն, այս կարծիքը Անդրանիկը Քաջազունուն էլ հայտնած կլիներ: Եվ օուցն թե հենց առաջինը նա էլ զայրացել է, որ երեկվա հայդուկն ու այսօրվա անուս գեներալը հիմա էլ բախտագուշակ է դարձել: Եվ դա շատ ներդաշնակ կլիներ այն ամենի հետ, ինչն արդեն ասում էր: Թելադրում է Հայաստանին Ամերիկայի գործնական օգնության մի ամբողջ ծրագիր՝ հատկապես ռազմական բնույթի: Թուրքիան Անգլ է, Հայաստանն օգտակար կլինի Ամերիկային, հարկավոր է հայկական բանակը զինել. «Հայաստանի հինգ-վեցերորդը Թուրքիայի մեջ է»: Միայն Ամերիկան կարող է աղետը կանխել:՝ Նա ուզում էր կանգնեցնել այն, ինչն սկսվեց 1920-ի սեպտեմբերին, որը թուրքերի հերթական հարձակումն էր Հայաստանի վրա եւ հայոց հերթական

գողգոթան: Ինչու պետք է կռահողը հանգիստ լիներ եւ յուրայիններին ձեռնական օգնություն հուսադրողներին՝ շողոքորթ: Ոչինչ, որ խայթում էր, ավելի վատ, եթե քծնող լիներ ու հաճոյախոս, խաբեքա ու պաշտոնամոլ: Հիմա ու այսուհետ, տարիներ, տասնամյակներ անց, գոնե մի բան ուսուցանում է ու զգուշացնում, հակառակ դեպքում ո՞ւմ էր նա դուր գալու, եթե զգեստավորվեր քաջազունահայկան նրբանկատության պատմունձանով: Այդ տարագր ոչ նրա ֆիդայական էությանը սազական կլիներ, ոչ էլ գեներալի պաշտոնակալի կեցվածքին:

Թուրքական գորքերը հարձակվեցին Հայաստանի վրա 1920-ի սեպտեմբերին, գրավեցին Կարսը, Ալեքպոլը, կանգնեցին Երեւանի կոկորդին եւ հապճեպ երկու պայմանագիր ծնվեց, երկուսն էլ նույն 1920 թ. դեկտեմբերին, Երեւանում եւ Ալեքպոլում: Երկուսն էլ հողեր էին զիջում, մի դեպքում իշխանության գլուխ բերելով հայոց ազգային կառավարություն Թուրքիայի հովանավորությամբ, մյուսում՝ դարձյալ հայկական կառավարություն, բայց որպես խորհրդային ձեռի վերակերտված ռուսաստանյան պետականության բաղադրյալ: Հաղթեցին զենքը, դիվանագիտությունն ու քաղաքականությունը: Եթե հաղթեցին, իհարկե: Հայոց ազգային պետականությունը երերաց: Կառավարիչների ռուսաստանյան թելը իշխանության գլուխ բերեց Լեւինի հայ զինակից սոցիալիստ բոլշեիկներին ու խորհրդայիններին: Թուրքական կողմն էլ հագուրդ ստացավ եւ շատ արյուն խմեց ու շատ էլ նոր հողեր պարզեւ ստացավ: Թվում էր, թե հիմա է, որ պետք է Հայաստան ազատ մուտք ունենար Նախիջևանը խորհրդային հոշակած եւ Ստեփան Ծահույանին ու նրա միջոցով Լեւինին հեռագիր հղած գեներալը, որը ինքը պետք է կամենար եւ դռներն էլ պետք է բաց լինեին, որ վերադառնար Հայրենիք: Այդ էլ չեղավ: Ինքը դեռ չէր դադարել Արեւմտյան Հայաստանի զինվորը լինելուց, իսկ հետագայում էլ նորօրյա ճամփաները ուրիշ կողմ տարան նրան:

Ամերիկայից վերադարձել է Մանչեստր, ժամանակ անց տեղափոխվել Փարիզ: Կիլիկիայի ազատության հարցը գտնվում էր կիզակետում: Անտանտի տերությունների փոխհամաձայնությամբ Կիլիկիան, Սիրիայի հետ միասին, պատերազմի ավարտից հետո տեղաբաշխված էր ֆրանսիական ազդեցության գոտում: Փարիզի ազգային պատվիրակությունը, դարձյալ Պողոս Նուբարը, ընդհուպ ձեռնամուխ են լինում կիլիկիացիներին օգնելու գործին: Տարբեր վայրերից գալիս են նվիրյալ հայ կամավորներ եւ ձեռավորվում որպես մարտնչելու պատրաստակամ խմբեր: Միջազգային եւ Պաղեստինի կոնվենցիան

մասնակցած բանակների հայ գերիներից կազմվում է հայկական լեզոհոն: Ստեղծված էր Սիրիայի եւ Կիլիկիայի ֆրանսիական զորքերի գերագույն կոմիսարիատ, որի տնօրինության տակ էին ազդեցության գոտու թե զինվորական եւ թե առկա ու ծագող քաղաքական ու քաղաքացիական հարցերը: Կոմիսարիատի հետ Կիլիկիայի խնդրում գործնական կապերի մեջ էր սույն շարադրանքի վերելից, Անդրանիկի ջանքերից օրերի պատմություններից, մեզ հայտնի Միհրան Թամադյանը, որը հետագայում հեռանալով հնչակյան կուսակցության շարքերից, ներկայումս սահմանադրական ուսուցիչար կուսակցության պարագլուխներից մեկն էր¹: Դեպքերն այնպես են զարգանում, որ 1920-ի օգոստոսի 4-ին Կիլիկիայի հայ, հույն, ասորի, քաղղեսցի եւ սիրիացի ազգային համայնքները ի մի գալով ստեղծում են միացյալ ազգային խորհուրդ եւ երկրամասը հռչակում անկախ՝ Ֆրանսիայի գերիշխանության ներքո: Անհապաղ ձեւավորվում է ժողովրդական կառավարություն, Միհրան Թամադյանը՝ որպես վարչապետ, եւ այլ պաշտոնյաներով հանդերձ²:

Թվում է, թե Ֆրանսիայի կենտրոնական եւ պատերազմի բերումով ստեղծված այլերկրային իշխանությունները պետք է ողջունեին կատարվածը. այնքան ջերմ էին եղել հայ-ֆրանսիական հարաբերությունները եւ անկեղծ ու շուտ մեծ տերության խոստումները: Սակայն կիլիկիական գործի ժամին ստացվում է հակառակը. նրանք չինելով Թուրքիայի դեմ պատերազմող պետությունների դաշինքի անդամ, փաստորեն ավելի շատ Թուրքիայի կողմն էին: Նրա հետ համերաշխության բեւեռները չայրելու համար Սիրիայի եւ Կիլիկիայի գերագույն կոմիսարը, որը գեներալ Կուրոն էր, նստավայրը՝ Բեյրութը, ազգային փոքրամասնությունների անկախացումը հռչակում է չեղյալ եւ իր ենթարկյալների միջոցով հասնում է իր հրամանի ի կատար ածմանը:

Անդրանիկը, որ ուշի-ուշով հետևում է դեպքերի ընթացքին, իր խնդիրն է համարում վիճակի արմատական փոփոխումը: Բայց ինչպես: Ուժ էր պետք եւ զենքի գործադրում, որովհետեւ թելադրվում էր մի կողմից մարտի մեջ մտնել գերագույն կոմիսարի հրամաններն ու հարկադրանքները կասեցնելու, մյուս կողմից հենց տեղում ուժով իշխանությունը վերականգնելու եւ նրա հարատևությունը ապահովելու համար: Անդրանիկը գործ է ձեռնարկում. հանգամանություն, զինակոչ եւ զորքի կազմավորում: Նա միայնակ չէր, շարժման գլուխ

կանգնած էր Պողոս Նուբարը՝ Փարիզում խաղաղության վեհաժողովի ազգային պատվիրակության կազմով հանդերձ, նրանց հետ միասին էին Վան-Վասպուրականի ժողովրդի ազատագրական ինքնապաշտպանական կոիվների հերոսամարտիկ Արմենակ Եկարյանը, Կիլիկիայի ըմբոստացման նշանավոր դեմքերը³: Անդրանիկը Փարիզից գալիս է Աթենք՝ մնում հարմար պահի սապարեզ էլնելու համար սպասողական վիճակում: Պողոս Նուբարին օժանդակող Արշակ Չոպանյանը մեկնում է Բեյրութ, գերագույն կոմիսարից պահանջելու, որ թույլատրվի Անդրանիկի մուտքը Կիլիկիա՝ Ադանա, Մարաշ եւ մյուս քաղաքները, հակառակ դեպքում, առանց նախնական թույլտվության, կարող էին անախորժություններ լինել⁴:

Անդրանիկը եւ Չոպանյանը փոխադարձ կապի մեջ էին եւ իրենց քայլերը կատարում էին Թամադյանի հետ բանակցելով: Հոկտեմբերի 6-ին Անդրանիկն իր պարտքն է համարել հայտնել Թամադյանին, որ երեկ ինքը հասել է Աթենք, իսկ Չոպանյանը գնացել է Բեյրութ: Չգտելով դեպքերին ըստ հնարավորին մոտիկ վայրում գտնվել, Անդրանիկը շուտով փոխադրվել է Իզմիր⁵: Անատոլիական թերակղզու այս ամից ուզում էր հենարան գտնել հարավային ափ՝ Կիլիկիա, թափանցելու համար⁶: Այստեղ, Իզմիրում, նա ստանում է Չոպանյանի վշտալի նամակը, որ գերագույն կոմիսարը, գեներալ Կուրոն, մերժել է իր միջնորդությունը եւ արգելել Անդրանիկի ու առհասարակ որեւէ հայկական օժանդակ զինական ուժի մուտքը Կիլիկիա:

Այս դժնափակումից հետո է, որ Անդրանիկը յուրայինների հետ որոշել է մեկնել Եգիպտոս, այնտեղ մարտի մեջ մտնելու պատրաստակամ ուժեր հավաքագրելու եւ սպասելու վճռական քայլի: Դժվար կացության մեջ էլք էր որոնում անհանգիստ ու անհամբեր: Մուտքը արգելված էր, իսկ զորական ուժերով հարմար չէր երևում ծայտյալ ափ դուրս գալը: Ուրեմն, «ի՞նչ կրճակ ընել» հարցն է, որ նա նամակով հղում է հին ու հեղինակավոր բարեկամ Թամադյանին. «Եթե նույնիսկ անպաշտոն մտնեմ, ի՞նչ հանգամանքներու եւ ուժերու վրա կոթնած կարելի է շարունակել մեր գործը»: Փորձառու եւ հմուտ է Թամադյանը, գուցե նա մատնացույց կանի: Ահա իսկական, անկեղծ, պրպտող, գիտունին հարգող ու խոնարհվող Անդրանիկը իր

1 «Պայքար», Բացառիկ, 1949 թ., էջ 122: Նաե՛ւ՝ Ա. Չելեպեան, էջ 623:
2 «Պայքար», տարեգիրք, 1961 թ.: Պրոֆ. Հայկ Արամյանի «Ջոռ. Անդրանիկ Փարիզի մեջ» հուշ-հոդվածը, էջ 99: Ա. Չելեպեան, նշվ., էջ 624, 3 Կարդգ. Թաթևյան, Անդրանիկ Փաշան Իզմիրում, տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 82:
4 «Արեւ», №104, 7.01. 1921 թ.:

1 Անդ. Անդրեասեան, Միհրան Տամադեան, «Զարթոնք», 19.09. 1970 թ.: 2 Տեղակալ Մ. Ավետեան, նշվ. էջ 474—498:

հին ուղեցույց Թամադյանին հղած նամակում. «Իբրև հին հեղափոխականի եւ անկեղծ ընկերոջ կուզեմ ձեր մանրամասը կարծիքը եւ խորհուրդները լսել»: Սա էլ է Անդրանիկը գրել, ճիշտ եւ ճիշտ Հովհաննես Թումանյանին գրած նամակների ոճով. «Անհամբեր սպասելով ձեր տեղեկություններուն սիրալի բարեւներով»¹:

Բայց մեկ է, ոչ մի խորհուրդ էլ գործի ճամփա չբացեց: Դաշնակից տերությունները աչքերն ու ականջները փակել էին: Ֆրանսիան մոռացել էր բարեկամության իր գեղազարդ խոստումները, կարծես այնու երեկվանը չլիներ, երբ հայությունից զինվոր էր հայցում Արեւելքի այս հատվածում իր զորքերը համարելու համար: Ասպարեզ էր ելնում Թուրքիայի բռնազավթած հողերի պահպանության եւ ընդարձակման դրոշակակիր Մուստաֆա Քեմալն իր զորաբանակով: Հայերը մնացին անօգնական: Ֆրանսիական զորքը ոտքը մի փոքր կախ գցելուց հետո խույս տվեց ու ծպտյալ, գաղտագողի լքեց հայության պաշտպանական կոիվների սկզբում որպես թիկունք եւ հույս զբաղեցրած իր դիրքերը: Ծեր թե մանուկ, կին թե տղամարդ՝ հայերն ընկան աքցանի մեջ, խոշտանգվեցին ու կոտորվեցին որպես մսադաջում՝ հարյուրներով եւ հազարներով, բոցավառվեցին բարձրաբերձ խարույկների վրա²:

Այս տեսարանները նրա աչքից հեռու էին: Նա չկարողացավ Կիլիկիա մտնել³: Կոիվների փուլին վերջակետ էր դրվում: 1920-ի դեկտեմբերի 21-ին նա վերադարձել է Փարիզ⁴:

Այնհայտ վերջակետը չի համոզել: 1921-ի հունիսին միտք է հղացել ստեղծել մի զորագունդ եւ այս անգամ հունական բանակի հետ դուրս գալ ընդդեմ թուրքական բանակի: Փարիզում է եղել Պողոս Նուբարը տարակուսել է: Քննարկման է դրել Փարիզի իր յուրայինների ժողովում: Անդրանիկի ծրագիրը հավանության չի արժանացել: Պահը հարմար չի գտնվել եւ խնդիրը թողնվել է «լավագույն պատեհության»⁵:

Եվ այսպես, ամերիկյան շրջագայությունից գոհ չէին ոչ Քաջագունին եւ ոչ էլ Անդրանիկը: Հանգանակության արդյունքներից ամերիկահայ հարուստ գաղութից Անդրանիկի սպասելիքներն ավելին էին: Գուցե թե հոգնել էին անընդհատ հանգանակություններից, որոնք զանազան առիթներով էին լինում, մասնակի կամ ընդհանուր իսկ ռազմական օգնության մասին մինչեւ իսկ պաշտոնապես բա-

նակցելու հնարավորությունն չի ընձեռվել: Այնպես որ վերադարձի ժամին բարձր չի եղել Անդրանիկի տրամադրությունը:

Վերադարձել է եւ փակվել Մանչեստրում: Կարծես թե նրա առջեւ պատնեշվում էին հույսի բոլոր ճամփաները: Որքան էլ Մանչեստրը հայությանը բազմամարդ էր, առետրի եւ մահալանդ արդյունագործության մեջ հմուտ, այնուամենայնիվ Փարիզն ավելի ձգող էր: Անդրկովկասից եկել ու Փարիզում հաստատվել էր նաեւ նրա քարտուղարի պարտականություններ կատարող Եղիշե Քաջունին: Անդրանիկը նրա հետ կապված էր որպես հանձնատուր ղեկավար: Դեռ վերադարձից առաջ Եղիշեն հեռվում, անակագրական կապի մեջ լինելով, շտկում եւ ի մի էր բերում Անդրանիկի գանգեզուրյան ամիսների օրագրությունը, որը ուղարկվեց հրատարակության հաստն եւ այնտեղ էլ լույս տեսավ 1921-ին: Նույն տարին Փարիզում լույս տեսավ «Զօր. Անդրանիկ կը խոսի» հեղինակային անցյալ հրատարակումների ու նոր գրվածքների ընդհանրացումը: Անելիք շատ կար: Նախատիպ նյութերի հավաքումը, նոր շարադրանքները շարունակվում էին: Եկել էր կյանքի մի փուլ, երբ Անդրանիկը դառնում էր, նորից ինչպես ժենում, հեղինակ ու հրատարակիչ, իսկ նրանով հետաքրքրվողները այնու ոչ թե զինվորներ, այլ՝ ընթերցողներ էին:

Նամակներում հանձնարարություններ էր տալիս, ուղարկում էր հին ու նոր վավերաթղթեր, նկարներ: Անշտապ ու ջանադիր, հին թղթերի հետ ասելիքն էր ի մի բերում եւ տպագրության հանձնում: Եկել էր ժամը, որ նա էլ իր ողիսականի էջերը անմնացորդ մատուցեր սերունդներին:

Բայց կարո՞ղ էր անցյալի գրավորացումն ու հրատարակ հանձնել միայն այդ լինել ու դրանով վերջակետ դրվել: Ի՞նչ կասեին կարիքի մեջ գտնվող որբերն ու անօթեան, անապահով գաղթականները, երբ արդեն առկա էր «Հայկական առանձին հարուստող զորամասը» որպես մանրակրկիտ օրագրական գիրք: Նա հաշիվ էր անում «Արրելի Եղիշեին» հղած նամակում. «Բացի նվիրատուներեն, որոնց պիտի դրկենք արդեն, մյուսներուն համար որոշ գին մը կրնանք դնել եւ գոյացած դրամը հանձնել բարեգործականին»: Սուրը պատյանն էր դրված եւ գրիչն էր ձեռքին:

Եվ նշված, եւ այլ պատճառներով Մանչեստրից հաճախ էր գալիս Փարիզ: Անդրանիկի մտքում, օր ծերություն, երկու գաղափար էր խմորվում: Մեկը՝ պատանության ու ջանքերության օրերի էր, մյուսը՝ վերջին հանգրվանի: Անընդհատ Մանչեստր-Փարիզ, Փարիզ-Մանչեստր ցամաքով ու ծովով գնալ-գալով չէր լինի: Անդրանիկի մտքում

1 «Պայքար», Բացառիկ. 1949 թ., էջ 123: Նաե՛ւ Ա. Զեյնալան, էջ 624: 2 Տե՛ս խՄԿ 44-ին աղբյուր ՄԼԻ-ի 44Ա, ֆ. 17, ց. 11, գ. 21: Նաե՛ւ Հ. Կ., Լեհիցը եւ Հայաստանը, գ. 2, Ե., 1989, էջ 258: 3 «Արեւ», 21.05. 1960 թ.: 4 Ն. տ., 7.01. 1921 թ.: 5 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 350, ց. 1, գ. 85, թ. 3:

մի հարց էր արթնանում, ընտանիք կազմելու հարցը, այդ էլ լուծել էի վերջո մեկնել ԱՄՆ ու հաստատվել այնտեղ, եթե լայնարձակ աշխարհում իր առջև չբացվեն իր ուխտյալ ճանապարհի դռները: 1922-ի ապրիլի 17-ի նամակում նա Եղիշեին գրում էր. «Վաշինգտոնից իրավունք եկած է Լոնդոն դեսպանին, որ անձնագիրս փոխ ընեն»: Բայց արդեն այդ ժամանակ նա գիտեր, որ մեկնելուց առաջ լինելու էր Փարիզում: Նշում է օրը՝ մայիսի 6-ը, ավելացնելով «այդտեղ շատ չեմ մնար»: Մեկնելու թույլտվությունը ստացվել էր:

1922-ի մարտի 24-ին եկել է Լոնդոն, մեկ-երկու օրից Փարիզ գնալու մտադրությամբ²: Մայիսին, գտնվելով Փարիզում, զբաղված լինելով հարսանյաց հանդեսի նախապատրաստման հարցով, դարձյալ մի կոչ է հղել հայ ժողովրդին: Այս անգամ վերնագրել է, «Արթնցիր»: Հակիրճ է, ձեռով՝ չափածո: Կարճատև նախադասություններ: Առաջին միտքը հարց է. «Հայ ժողովուրդ, ինչ կմտածես, այսօր քու արժանապատվությունը վերականգնելու առիթն է»: Երկրորդը՝ հարց է ու հարցադրում. մինչև երբ պիտի հայ դիվանագետները մուրացկանի դեր կատարեն: Ասել է, թե՛ երբ պետք է հայ ժողովուրդը իր ձեռքը վերցնի իր լիակատար ազատության գործը³:

Սա մայիս ամսի 8-ին էր, բողբոջուն գարնան այդ ամսին նա նորից իրեն այնպես ոգեշունչ ու լեցուն էր գգում, ինչպես լինում է հասուն պատանու հետ, աշխատասեր, անդադրում, եռանդուն, ստեղծարար ամուսն շեմին: Նա ժողովրդին արթնանալու կոչ էր հղում «Արթնցիր». ժողովրդին էր արթնացնում, նրա հետ՝ նաև իրեն: Եվ մի՞թե այդքան տարի նա քնած էր եղել, երբ միշտ ոտքի վրա էր ու արթուն:

Դեպքերը դանդաղ էին գնում: Կոիվների օրերը ցայտուն էին, բուռն, ընդգծված: Որովհետև հիմա ոչ թե դեպքերը, այլ օրերն էին իրար հաջորդում: Եվ այդպես կարող էին շուտափույթ տարիներ գումարվել, կյանքի համար ամենից սարսափելիս:

1922-ի փետրվարից հետո Անդրանիկը մտել էր իր կյանքի հիսունութերորդ տարին: Հետո վաթսուհին կլիներ եւ այլևս ի՞նչ երազների իրականացում: Միայնակ ինքն իր հետ եղել էր, ինքն իր մեջ ապրել, խեղդել էր անձնական հոգսերը, մնացել միշտ անխնայ, գուցե թե, եթե բացառվեին դեպքից դեպք եղած երջանիկ ճաշկերույթները, առանց ընտանեկան տաք ճաշի, լոգանքի ու հանգստի:

Քար ու ապստամբ էր Անդրանիկը: Զորավար էր, այն էլ ինչպիսի՛:

¹ Անդրանիկ, Նամակներ Եղիշե Բաջունուն, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 67, թթ. 18, 10: 2 Ն. տ., գ. 68, թթ. 1, 2, 10, 18 եւ այլն: 3 Անդրանիկ, «Արթնցիր», 8. 05. 1922 թ.: Ն. տ., գ. 69:

Վերամբարձ ասված բանավոր այս խոսքերի ճնշման տակ ոչնչանում էր մարդը, հողեղենը, իսկականն ու անմիջականը: Ամեն մեկի համար երկնում էր ու հառնում ուրիշ մի Անդրանիկ՝ ոչ-շոշափելի, ոչ-անմիջական ու որոշակի, այլ բարձր ու հեռու, եւ ոչ էլ մահկանացու: Որովհետև նրա ոչ քնելն էր հայտնի, ոչ արթունք, կովի ժամին թվում էր, թե միանգամից զինվորներից ամեն մեկի կողքին է, նրանցից առաջ կամ նրանց թիկունքում, քանի որ երբեք չէր եղել կովի թեժ ժամին, որ չհնչեր նրա մեկ սաստող ու մեկ էլ ոգեկոշող, մի ուրիշ անգամ անհաբեկող ու սպառնալից, բայց բոլոր դեպքերում դեպի հաղթական մարտի ու սվինամարտի գոչը: Եվ միշտ մահաբեր զնդակն իրենից հեռու: Այսպես է թերթը գրել. «Անդրանիկ իր վախճանը մոտեցած կտեսներ այլևս: Առանձին էր, զինք խնամող չուներ: Գոցվող հորիզոններու առջև զգաց բույնի մեջ իր թեւերը ամփոփելու, իր աչքերը հոգնած ձեռքերի մեջ փակելու կարտող»¹: Հարսանիքի էր պատրաստվում: Բայց սա գրվել է հարսանիքից ոչ թե առաջ, այլ տարիներ հետո, երբ ոչ միայն հարսանյաց հանդեսի օրն էր հուշ դարձել, այլև ինքը՝ Անդրանիկը: Հարսանիքի օրը բոլոր մասնակիցները տոնակալն ու շքեղ էին հագնված: Բայց առավել շքեղ, իր հանդերձանքի մեջ առավել փայլուն էր փեսացուն՝ գեներալական զգեստ, կրծքին բազմաթիվ շքանշաններ, վզից կախած Բշարե Խաչիլին սուլթանի նվիրած շքանշանը: Հարսնացուն բուրդաբարակ գեղուհի Նվարդ Քուրբջյանն էր: Իր ազնիվ իդեալին նա այնքան արժանի ու նվիրված գտնվեց, որ Անդրանիկից հետո ապրած տարիներին վայելեց տիկին Նվարդ-Անդրանիկ մեծապատիվ անունը:

Հոգատար էր ու ջանադիր Պողոս Նուրբարը: Հայոց դատի անխոնջ մշակը քավոր էր ուզում դառնալ իր փայփայած ծերունագարդ գորավարի մեջ պահպանված ջահելին, որ օր առաջ պաակեր նրան եւ փեսա Անդրանիկին էլ իրեն սանիկ դարձներ:

Հարսանյաց հանդեսը կայացավ մայիսի 15-ին, Փարիզի հայկական եկեղեցում: Կնքահայրն էր մեծարգո պաշտելին՝ Պողոս Նուրբարը: Եվ ո՞վ էր, ո՞ր խաչով էր հարսանիքը օրհնողը, ուրիշ էր այդ խաչը, թե՛ այն նույնն էր, որի վրա շուրջ չորս տասնյակ տարիներ առաջ հայրենի Ծապիկկարահիսարում պատանի հյուսնը կյանքի երդում էր տալիս: Ով գիտե, գուցե թե նույնն էր խաչը, որովհետև նույն Վոսմշապուհ Քիաբրյանն էր, որ այսօր որպես ֆրանսահայ գաղութի հոգեւոր հովիվ, կատարում էր պաակի արարողությունը:

¹ «Արեւ», 21.09. 1927 թ.:

Մար է արտասպանել պերճախոսության մեջ վարժ Արշակ Չոպանյանը: Անդրանիկը ամուսնության իր խոսքի մեջ դարձյալ ինքն իր հետ է մնացել: Գուցե վախեցել է, թե յուրայինները պիտի կարծեն ամուսնությունը պայքարի վերջակետ է, եւ հատուկ հենց պիտի մերժել: Հիշել է իր վաղնջական օրերին զոհված զինվորներին եւ փեսայական իր բարձունքից հանգուցյալների հիշատակին հարգանքի խոսք է հղել: Ուստի ուրախության այս ժամին վշտի զուգահեռն է անցկացրել: «Չեմ գիտեր թե՞ ապրողներն են երջանիկ, թե մեռողները: Անոնք զնացին, մեզի թողնելով կրակ մը: Մենք պիտի գլուխ հանենք սկսված գործը»: Ասել է, թե՛ հարսանիքը հարսանիք, բայց գործը գործ. «Հայ ժողովուրդը վերջին ճիգ մըն ալ պիտի ընէ»: Ամուսնությունը ընտանիք է, գործին լիակատար նվիրումով տրվելու փայնակի կրճատում: Եվ մի՞թե դա վերաբերելու է նաեւ Անդրանիկին: Նորասպակ Նվարդը կողքին էր, մարդիկ յորամարտությամբ ուրախ, սպասումներով լի: Իսկ նա կարծես հենց այդ պահին է գտել ամենից հարմարը իր ջահելության օրերի երդումը հիշելու, սկսածը նոր եղանակով շարունակելու մասին ասելու համար. հայ ժողովուրդը մի վերջին ճիգ էլ պետք է անի, հակառակ դեպքում ինչ արժե կյանքի ու ուրախությունը, եթե մարդը զուրկ է հայրենիքից եւ գլուխը քարին դնելու տեղ էլ չունի: Մինչդեռ նա հենց ինքը նոր օջախ էր ստեղծում: Ծիշտ է, ամուսնությամբ էլ է օջախ ստեղծվում: Անդրանիկի համար սուրբ քրքոց էր ընտանիքը, բայց օջախը նրա համար լայն ու ընդարձակ հասկացություն էր, սովորական ու անսովոր բոլոր սրբություններից վեր. «Առանց մեր օջախին, օտարության մեջ դատապարտված ենք հյուծվելու»: Ահա, վերջապես, այս էր նրա ասածը: «Մեր օջախը» մի ամբողջ լայն աշխարհ է, ծավալուն փիլիսոփայություն: Անդրանիկը ժամանակ չունեի հարսանիքաց հյանդեսի ժամին հատիկ-հատիկ բոլորն ասելու, մպտնացույց անելու եւ բացատրելու: Կար որպես խորհրդային Հայաստան, վերածնված ազգային պետականությունը՝ երկրի արեւելքի կրճատ մի հողակտորի վրա: Արեւմուտքը, մեծն ու բնօրրանի միջուկը, սեւով էր պատած, նրա բրդիները՝ ցրիվ աշխարհով մեկ, հազարներ ու տասնյակ հիզարներ, որոնց մեջ շատերը դեռ մերկ ու սոված, անտուն ու անօթեկան: Գործ շատ կար: Այդ փասին էր փեսայանալու ժամին նրա խոսքը. «Կին մը չի կրճար զիս կաշկանդել: Եթե վաղը զիս պարտավանության գլուխը կանչե, պարտաւատ եմ կարտաբերու զինվորիս պարտականությունը: Այսքան տարի չէր ամուսնացել, որպեսզի օջախը հայրենի հողի

վրա դներ: Այսօր օտար երկնքի տակ ամուսնանում էր ո՛չ այդ, ո՛չ էլ նման մի այլ ամուսնությունը կարգ հաստատելու համար: Ուրախության նվազն է ուղեկցել նրա խոսքին եւ ծախերն են բացառվել: Ուրախության արտասուքի ամեն մի բացահայտ կաթիլի դիմաց քանի-քանի թաքնված տխրության կաթիլներն են կուտարվել:

Հարսանիքի փարիզյան արարողությունների մի մասն էլ շարունակվել է Լոնդոնում եւ Մանչեստրում, ուր շուրտով այցելել են նրա պապանները՝

Անդրանիկը մտադիր էր առանց հետաձգելու գնալ Ամերիկա: Բայց այդ օրերին Թուրքիայի հունական ազատագրական շարժման ներկայացուցիչները դիմում են նրան մի բանակով իրենց գորավիզ լինելու խնդրանքով: Սկսվում են բանակցությունները, մինչեւ որոնց ավարտվելը թուրքերը ծանր հարվածով պարտության են մատնում թերակղզու հունական ուժերին եւ հարցը սպասվում է: Հունիսի 5-ից նախը Արապակներին ճանաչում էր օվկիանոսի անհավանաբար պիքսելի վրա:

13 ՄԱՀԸ

Ամերիկահայ թերթն ազդարարում է, որ հուլիսի 12-ին, առավոտյան ժամը 10-ին «Օլիմպիկ» շոգեճանավով Նյու Յորք են ժամանել «Անդրանիկը եւ իր շնորհալի տիկինը»: Դիմավորողների մեջ են Նյու Յորքի հայ գաղթօջախի հեղինակավոր մարդիկ: Զաղաքի հյուրանոցում կարճատև կանգառից հետո, հուլիսի 25-ին, Անդրանիկն այցելել է Բոստոն, որտեղ մի քանի օր մնալուց հետո փոխադրվել է երկրի մյուս ծայրամասը՝ Կալիֆոռնիա: Օգոստոսի 14-ին ժամանել է Ֆրեզնո քաղաքը, որը նախընտրել է որպես իր ընտանիքի մշտական հանգրվան:

Նախապես էլ հայտնի էր, որ տեսական էր լինելու իր այցը Ամերիկա: Բայց հրավերը տրվել էր միայն վեց ամսով, որը տեղում դարձնում է մեկ տարվա: Երկրի կարգով, մշտապես բնակվելու իրավունք ստանալու համար մի կարճ ժամանակով ապրել է Մեքսիկայում, որտեղից կրկին վերադարձել է Ֆրեզնո՝

Ռազմիկի եւ գորավարի օրերը առընդմիջտ մնում են ետեւում:

1 «Ապագա», Փարիզ, 1922 թ., նաեւ՝ «Լրագետ», Լուս ԱՇքեյեւ, 14.11. 1987 թ.: Նվարդի ամուսնախան ճամփը «Ռանցալիների կանգը» ժամանակ հեղինակ Թաշիկ Կանչեզյանի: 2 «Չափ», 11.11. 1927 թ.: Նաեւ՝ «Լրագետ», 14.11. 1987 թ.:

Նյու Յորք մտնելու պահից նա քաղաքացիական հագուստի մեջ էր՝ կոստյումով, փողկապով, լայնեզր գլխարկով: Ժիլետի գրպանն է դրել շրթայով ծամացույցը եւ մերթընդմերթ ձեռքն է վերցրել նախաքար գավազանը: Ծխածն էլ այսուհետ գլանակ էր, որին ծխամորճը աջակցում էր:

Ֆրեզնոն ընտրել էր ոտքերի ռեմաստիկ ցավը բուժելուն հարմար բնություն ունենալու համար: Նյու Յորք էր եկել ասես թե մի նոր Անդրանիկ: Գեներալական հագուստի մեջ երևում էր հազվադեպ, այն էլ հանդիսությունների ժամանակ եւ ի հիշատակ նկարահանվելիս:

Նոր զգեստով պատճենված կրծքի տակ բարախում էր դարձյալ իր վաղնջական ուխտի ցավով տառապող սիրտը, որի համար թե ոչ-հետավոր Սան Ֆրանցիսկոյի, թե Ֆրեզնոյի մեղմ օդն ու բնության զմայիչ տեսարանները, թե հանգիստն ու խաղաղությունը միթե ավելի նպաստավոր էին լինելու, քան Ծապինկարահիսարի բարձունքի վրա անցկացրած անքուն գիշերները, Սասունի բացօթյա քարայրերը, որոնք բոլորը հայրենի ջերմ հողի վրա էին, կամ թե օրերով սոված մնալուց հետո գյուղական տներից մեկում օջախի գորովագուր մոր մատուցած կաթն ու մածուցը:

Նյու Յորք մտնելու հաջորդ օրը տեղի հայերեն թերթը, գուցե անակնկալի եկած, որ «Զօր. Անդրանիկ քաղաքային հագուստ կը կրե», գրում է նաեւ՝ թե «ըստ երևույթին կորույի ու քաջատոջ է»: Անկախ ամեն ինչից, համոզմունքը նույնն էր՝ Անդրանիկը չի հեռանում «ազգային ծառայության ասպարեզից», նրա առաքելությունը ԱՄՆ անպայման «նոր ներշնչում մը եւ արթնություն է» պարգեւելու գաղթօջախին¹: Թերթը վստահ հայտարարում է, որ «ամբողջ աներկհասցայ գաղութը սրտագին բարի գալուստ կը մաղթե իրեն եւ պատրաստ է իրեն օժանդակելու ամեն բանի մեջ»²: Նույն բառերն են հռչակվել Ֆրեզնո ժամանելու առիթով. «Կալիֆոռնիայի հայ գաղութը... պիտի ներշնչվի» նրա բերած պատգամներով, եւ «երջանիկ ու հանգիստ» օրեր է մաղթում³: Ֆրեզնոյի հայությունը նրան բնակարան է տրամադրում եւ ապրուստի համար խանութներ⁴: Ահա իր բառերը քրոջ որդուն, Երվանդ Փափազյանին գրած նամակից. «Երվանդս, ես ալ շենք մը ունիմ մեկ հարկանի, չորս խանութներ, ուրկից կստանամ 200 տոլար»: Սրանից զանազան հարկերը

1 Ե. Զաքունի, Անդրանիկ եւ հայկական առաջին հարուստող կորամասի հետ, Նյու Ջերսի, 1976, էջ 200: Ա. Զեյնալեան, էջ 648: ԸԸ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 94: 2 ԸԸ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 94: 3 «Մշակ», 11.11. 1927 թ.: 4 Ա. Զեյնալեան, նշված գիրքը, էջ 649:

տալուց հետո «կնճա 100 տոլար, որուն 45 տոլար տունի վարձք կուտամ: Դժվար է նայրելը հոս, կյանքը սուղ է: Հրապարակի վրա շատ պարսպներ կան, գործերը լավ չեն: Եթե ուզեմ ծախել, սոված գումարս չեն տար, ես ալ վնասով չեմ ծախել, կսպասեմ ժամանակ մը ես»: Գրում է նաեւ, որ իր մեկ հարկանի շենքի վրա կարելի էր ընդ երկու հարկ էլ դեռ կառուցել, տեղն էլ շատ հարմար է, բայց, շարունակում է. «ի վիճակի չեմ լինելու», որովհետեւ պարտքը, որ 7000 դոլար է, 7 տոկոսով վերցրել է բանկից, չի կարողանում փակել:

Նվիրվում է հասարակական գործունեության: Հողվածներով, հուշերով ու հարցազրույցների ձեռով հանդես է գալիս մամուլի էջերում: Ծճարտում է գերազանցապես իր իսկ գործունեության լայն շրջանակի հետ կապված զանազան հարցեր եւ պարզաբանումներ է կատարում: Ազգօգուտ հանգանակություններ է նախաձեռնում եւ անցկացնում:

Առանձնապես շատ ջանքեր է գործադրում գաղթօջախի որք հայ մանուկների խնամքի, օգնության կարիք զգացող ուսումնասեր պատանիներին, որբանոցներին եւ հիվանդներին օգնելու համար: Սրտի թրթիռով հետևում է 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված հայ ազգային պետականության կործանումից հետո ձեռավորված խորհրդային Հայաստանի դեպքերին, իր սուրբ-սրբոց հայ ժողովրդին ցանկանալով լիակատար վերածնունդ, կյանք եւ հարստեան:

Հենց նույն 1922-ին այցելել է Կալիֆոռնիայի մայրաքաղաք հայաշատ Լոս Անջելես եւ հանգանակություն է ձեռնարկել Փարիզի հայկական պատվիրակության կարիքների համար: Ժողովրդի հուսահատական տրամադրությունն է ուզում հաղթահարել. «Անխախտ ռավատք ունիմ,— ասում է,— որ հայությունը պիտի տիրանա իր արդար իրավունքներուն», հավատք, որ «հոխորտացող թուրքը» նորից ընկնելու է: Եվ իր մուծած 50 դոլարով բացված հանգանակությանը հետևում են մյուսները, տեղնուտեղը գումարը հասցնելով 3500-ի²: Սա եղել է 1922—1923 թթ. Լոզանում կայացած Միջազգային կոնֆերանսից առաջ, որում սպասվում էր հայկական հարցի քննարկումը եւ ուր ժամանել էին հայոց ազգային պատվիրակության անդամները: Հենց նրանց ծախսերին ի նպաստ էր հռչակվում սույն հանգանակությունը:

Բազմաթիվ են եղել հյուրականչերը: Անդրանիկն իր տիկնոջ հետ է՛լ որպես հյուր, է՛լ ազգային գործերի բերումով լինում է մեծ տե-
1 ԸԸ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 81: 2 ԸԸ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 94:

րոյւթան գրեթէ բոլոր հայաբնակ վայրերում, ծանոթանալով նրանց կյանքին, իր խորհուրդներով, իր գործնական օժանդակությամբ աշխատելով օգտակար լինել առանձնապէս հայապահպանության գործին:

Մեկ անգամ, ավելի քան երեք ամիս տիկնոջ հետ հյուր է եղել Ճորոհոյայի Անհանգի Օրլանդոյ հայաշատ քաղաքում: Շոխ հյուսանիւրության ժամանակ խնդրել են, որ գեներալական տարազը հագնի: Ամեն առիթով Անդրանիկի սասին ժողովրդի սիրած «Իբրեւ արծիվ» երգն է հնչել: Ժամանակը արդյունավետ անցկացնելու համար գորավարի առաջարկով դարձյալ սկսվել է հանգանակություն: Արդյունքը պետք է ուղարկվեր ի նպաստ Հայաստանի թանգարանին: Թերթը հրատարակել է նվիրատվության այդ ժամի արդյունքը՝ 621 դոլար¹:

Օգնել է սերնդի կրթության գործին: «Մեծ փափագ ունեմ ուսանելու բժշկություն կամ դեղագործություն...», գրել է Մարիամ Հակոբյանը 1924-ի օգոստոսի 3-ին: Միջոցից գուրկ է, օգնություն է հայցում: Իսկ մինչ այդ էլ ամուսինն է, Պրազայի ուսանող Սարգիս Հակոբյանը, նրանից օժանդակություն ստացած եղել²:

1924 թվականը հիշատակեցինք: Նույն տարում հոստոնում նա հրատարակել է «Զորավար Անդրանիկի կովկասյան ճակատի պատմական օրագրությունը» գրքի իր լրացուցիչ հոշերն ու փաստաթղթերը, որպէս հավելված³: Եվ այդտեղ էլ նամակ է հասցեագրել «քանի մը խոսք պարոն Հովհաննէս Քաջազնունուն»: Անցյալն է վերհիշում, վերլուծում է գրում դարձյալ որպէս պատասխան:

Վերը պատմված ամերիկյան շրջագայության ժամանակ գաղթօջախի հայության առջեւ ասված իր խոսքերն է մեջբերում, գուցէ ավելի խստացված, քան այնտեղ ասել է երես առ երես. «Հայ ժողովուրդ, Արարտի գագաթին վրա արշալույսի նշույլ անգամ չկա, հոն սեւ ամպերը կուտակված են: Հայ ժողովուրդ, այդ սեւ ու մուսլ ամպերը քո գլխիդ վրա դիզված են, ի՞նչ պիտի ընես: Պետք է որ դուն մտածես»: Եվ սա ասել է հենց այն պահին, երբ գուգահեռ Քաջազնունու ոգեւորության խոսքերն են հնչել. «Հայրենակիցներ, Արարտի գագաթեն արշալույսը ծագել է... բարեբախտաբար... Երեսանեն կերթա դեպի Մուշ եւ Ազատությունը, եւ Վերաշինությունը»: Այսպիսով, եզրնակացնում է Անդրանիկը, հայրենիքից հեռու դահլիճներում, մենք իրար հակառակ տեսություններ եւ գաղափարներ էինք հայտնում: Իմանալով նույնը, վերհիշում է Անդրանիկը, Քաջազնունին

1 Ն. տ. 2 Ն. տ. 3 Տե՛ս նշված գիրքը, Բ., 1924 թ., էջ 188—196:

«իսպրուն եւ պայծառ նախադասություններով» էր ծածկում տգեղությունները եւ «օրորում հայրենակարոտ պանդոխտի սիրուն ու զգացումը... երբ բեմերեն կը խոսեր»: Մինչդեռ ինքը, Անդրանիկը, ճոխ բառեր չի օգտագործել եւ մատը հենց ցավի վրա է դրել եւ «ջանացել է սխալը մատնանշել, դարման մը ճարելու հույսով», որովհետեւ մտոկ օրերը ոչ թե վառ ջահերի լույսի, այլ խավարի մեջ է տեսել: Եվ իմացել է, որ «մահազանգի պէս» ծանր են այդ խոսքերը, բայց ասել է, որովհետեւ ճշմարիտն է միայն օգտակար եւ փրկիչ համարել: Եվ ի՞նչ անուշ, մտերմիկ ոճով է գրում. «Սիրելի Հովհաննէս, երբ ես այդ հայտարարությունները կընեի, որեւէ մեկիդ դեմ ոչ ասելություն, ոչ նախանձ եւ ոչ ալ չարակամություն ունեի: Մեծ ցավ կար սիրոս այրող, այդ ցավը Հայրենիքիս ցավն էր»: Եվ ուրիշ ոչինչ. Քաջազնունին վարդազույցն էր տեսնում, իսկ ինքը՝ խավարը, որոնք երկուսն էլ եղել են: Մեկի սրտում ահ ու կասկած է եղել, մյուսինում՝ լիակատար ապահովություն: Իսկ հիմա, նամակը հրատարակվելու պահին, վաղուց արդեն անցյալ էր 1918-ի մայիսի 28-ին հռչակվածը, որին կործանման գլխավոր հարվածը հասցնողը հունիսի 4-ի պայմանագիրը պարտավորեցնող տերության ժառանգներն էին: Պարզվում է, որ ժամանակին, հենց ամերիկյան շրջագայության նույն այդ օրերին, Անդրանիկը Հայաստան Հանրապետության համար կուսիցիոն կառավարության միտք է հղացել ու առաջարկ արել, որը նույնպէս սվիններով է ընդունվել, ինչպէս գրում է նա իր նամակում, թեւէ Հանրապետության կառավարությունը տվյալ ժամանակ բազմակուսակցական էր եւ միայն դաշնակցականներից չէր կազմված: Նշանակում է, պահանջն ավելին է եղել: Եվ հանդիմանում է. իսկ ի՞նչ եղան Ամերիկայում հանգանակած մտտ կես միլիոն դոլարները: Ինչո՞ւ դրանց մի մասը թողնվեցին Վաշինգտոնում, հոստոնում ու Փարիզում եւ իրենց նպատակին չծառայեցվեցին: Եվ այստեղ էլ «ինչո՞ւ» հարցն է օդում կախված մնում: Այդպէս հիշում է ժամանակին ասված եւ նույնությամբ հրատարակված իր մի քանի մտքերը այդ գումարը տեղ հնացնելու եւ իրացնելու ձեւերի մասին, որոնք դարձյալ հաշվի չեն առնվել: Եվ բերում է Քաջազնունու՝ օրվա համար այնքան կարեւոր հարցը, որին Անդրանիկի տված պատասխանը ավելի կարեւոր էր ոչ թե օրվա, այլ ժամանակի տեսանկյունից: Հարցը. «Զորավար, ներկա կառավարության վրա վստահություն չունի՞ք»: Պատասխանը. «Ես այս կառավարության վարիչներուն վստահություն չունիմ»: Այս դեպքում էլ բոլորովին ուրիշ է կառավարություն հասկացությունը, ուրիշ՝ նրա վարիչները: Ապա՛

կարելոյ մի միտք, հասցեագրված Քաջազնունուն, որ բառ առ բառ պետք է բերել. «Երբ անկարող էիք 1914-ի հողամասը պաշտպանել, ի՞նչ իրավունքով եւ ինչո՞ւ Թուրքահայաստանի շուրջ խոսքեր ըրիք, գրգռելով թուրքը եւ հեռացնելով ռուս բարեկամությունը»: Սա հունիսի 4-ի հետ Անդրանիկի գծողության մի հակասարքերակ է: Եվ այնուամենայնիվ չի կարողանում հանդիմանական մի խոսք եւս չասել:

Հովհ. Քաջազնունին գիրք է հրատարակել «Հայ հեղափոխական դաշնակցությունը անելիք չունի» խորագրով: Ամբողջը կուսակցության երթուղու քննական վերլուծությունն էր խորագրի տեսանկյունից: Ինչո՞ւ, հարցնում է Անդրանիկը, այդ հայտարարությունը չարիք այն ժամանակ, երբ կառավարության նախագահի աթոռին էիք նրստած: Ծարունակությունը փաստորեն իր անձնական օրինակի անանուն, անուղղակի վկայակոչումն է: Չէ՞ որ ինքն էլ հեռացել է դաշնակցությունից: Հեռացել է, բայց իրեն անգործության չի մատնել. քանի որ միշտ եղել է եւ լինելու է ծառայությունը ազգի իդեալների համար: Եթե «անելիք չունիք» ըսելով գործելն եւ ծառայելն դարարինք, այն ստեն ցեղին գերեզմանաքարը մենք մեր ձեռքերով պիտի դարբենենք եւ գետնեղենք մեր վրա»: Ասել է թե՛ ամենից վերը ազգի խնդիրներն են եւ ամենից սուրբը՝ դրանց իրականացմանը ծառայելը: Անկախ կուսակցականությունից եւ զբաղեցրած պաշտոնից:

Եռանդուն էր Խորհրդային Հայաստանին օժանդակելու գործերում: Այդ նպատակով Նյու Յորքում ստեղծված է եղել հասուկ մի հանձնաժողով: Վերջինս դիմել է Անդրանիկին: Նա էլ իր հերթին կոչ է հղել Ամերիկայի հայությանը. մեծ հույս ունիմ, որ գերապատիվ հայերը կարձագանքեն իրենց հայրենիքի վերաշինման գործին: Անդրանիկը ամսակ է հղել Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) ներկայացուցիչներ Գ. Վարդանյանին, Կ. Միքայելյանին եւ Ս. Կամարականին: Եկել, Ամերիկա էին հասել նրանք Հայաստանի վերաշինմանը օգնություն ստանալու ակնկալիքով: Ողջունել է Անդրանիկը նրանց այցն ու նրանց բարի նպատակը: Եվ որոշել է ցայտուն եւ մնալուն նվեր մատուցել հայրենիքին: Դա եղել է իրեն Եգիպտոսի հայերի նվիրած գեղաքանդակ սուրբ, որը հայոց ուժն ու հավիտենությունն էր խորհրդանշում: Ուղարկել է հայության ներկայացուցիչներին եւ պատվիրել՝ հանձնել Հայաստանի թանգարանին, որպես հիշատակ հայ ժողովրդին¹:

Հիմուս վարպետների խումբը կերտել էր այն որպես ուժի եւ հավերժության խորհրդանիշ, որպես իսկական, անդրանիկյան հուշակեր: Սա 1926-ին էր:

Հայաստանի ժողովուրդը ուրախությամբ է ընդունում Անդրանիկի նվերը: Հակասակ դիրք է բռնում Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը: Սուրբ բերելու փաստը քննարկվել է ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի նիստում: Հայաստանի օգնության կոմիտեի նախագահ Գրիգոր Վարդանյանը լուրջ հանդիմանության է արժանանում: Չկարողանալով անտեսել ժողովրդի անկեղծ ուրախությունը, Կենտկոմը փաստն այնպես է մեկնաբանում, թե իբր նվիրատվությունը ցուցադրում է Անդրանիկի սարսուռությունը խորհրդային իշխանության հանդեպ եւ եթե պատշաճ կերպով չմեկնաբանվի, կստեղծվի այն տապալորությունը, թե «որանով իսկ ժառանգական կապ է հաստատվում Հայաստանի խորհրդային իշխանության եւ հայոց ազգայնական կուսակցությունների ու նրանց առաջնորդների գործունեության միջեւ»: Ինչպիսի՞, մեղմ ասած, միամիտ մտայնություն: Ի՞նչ վատ բան էին արել մարդիկ...:

Նույն տարում Անդրանիկը Ֆրեզնոյում ներկա է եղել եւ ելույթ ունեցել 1926-ի հոյեմբերի 29-ին՝ Հայաստանում խորհրդային իշխանության հռչակման վեցերորդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում: Ուրախություն է հայտնել, որ այնտեղ սկսված շինարարական առաջին քայլերի մասին բարի լուրեր են հրատարակվել: Բայց եւ վշտացել է, որ քիչ չեն նաեւ նսեմացնող խոսքերը: Առաջինների հեղինակներին ժողովրդի բարեկամներ է հայտարարել, երկրորդները տարածողներին ոչ պակաս, ոչ ավել՝ թշնամիներ: Եվ չի թաքցրել իր միակ, վերջին, երազը՝ գնալ ազատ Հայաստան, տեսնել հարազատ ժողովրդին ու հանգիստ մեռնել²:

Սկսել է ներքուստ, լուռ ու անձայն, ապրել իր անբաժան հարատև վշտի վերջին փուլը: Չէ՞ որ, թեև ընկալ վերածնված ազգային պետականությունը, բայց որպես գաղափար եւ որպես էություն մարմնացալ արդեն վեց տարի ապրող Խորհրդային Հայաստանը: Գոնե այդ տեսներ: Մամուլի էջերում, թե հավաքությունների ժամանակ բախվում էին կարծիքները: «Մանրուքների» մեջ չէր մտնում, ոչ գովքի ասույթներով էր ղեկավարվում, ոչ չարախոսություններով: Պարզապես բարին էր ցանկանում, չնայելով, որ հեռվից հազվադեպ իրեն հասնող թերթերը գոց էին իր առջեւ, անունն անգամ չկար, չկար:

1 «Չորավար Անդրանիկի կովկասեան Հակառի պատմական օրագրութիւնը», Գ., 1924, էջ 188—196. 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 84, թթ. 1, 2:

1 ՀԿԿ ԿԿ-ի կուսարխիվ, ֆ. 1, ց. 7, գ. 27, թ. 4: 2 Ն. տ., ց. 2, գ. 19, թթ. 75—76:

յարակել եւս, պաշտոնակալն թէ անպաշտոն հրուսէր ու կանչ: Ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ պետք է այդպէս լինէր: Տեսնել էր ուզում, թո՞ւմ է այն հեճարանը, որի վրա նորից Հայաստան աշխարհը ի մի պնդք է գալո՞ւ ու վեր բարձրանար: Լինում է հայրենիք տաանց որդիների եւ որդիներ՝ առանց հայրենիքի, երբ մեկը բռնազավթւած է, մյուսները՝ տարագիր: Մայրամուտի իղձն էր խոսում նրա մեջ. «Ես միայն մի հայապալ ունեմ՝ գնալ ազատագրված Հայաստան, տեսնել իմ հայրազգայն ժողովրդին եւ ապա հանգիստ մտնել»:

1927-ին առողջությունը վատթարացել է: Ուղտերի գալիս պղծ պիրտն էլ դարձել է վատառողջ: Բժիշկների խորհրդով տեղափոխվել է Սան Ֆրանցիսկո: Փետրվարի 18-ին քրոջ որդուն գրել է. «Անդամներով բավականին հիվանդություններ ունեցա»: Եվ մի քննահանրացում. «Կյանքը այսպէս է, գալով եկանք, գալով ալ պիտ գնանք»: Եվ մտայլ պատկերներ. «Անուշիկ էրվանդս, կյանքս ալ է քեզ նախնական ձգել եւս մինչեւ հիմա. մեծ փոփոխություն ունեցած եմ: Մազերս բոլորովին ձերմակած, առողջությունս լավ չէ, օր փո լավ, օր մը վատ կերթանք»:

Տխուր համակներ էին: Տխրության ձայնը նրա համակներում սկսել է հնչել այն օրից, երբ հեռու հեռվից ստացել էր 1923-ի փետրվարին Հովհաննէս Թումանյանի մահվան լուրը: Երվանդին նույն տարվա մայիսի 10-ին այսպէս է արձագանքել. «Մեր ամենուն փրեյի Օհանէս Թումանյանը մեռավ Մոսկվա, որում օփերացեայ լինելուն համար հոս հավաքեցի 400 դոլար: Գումարը Փարիզ դրկեցի, այնտեղից Թիֆլիս իր ընտանիքին խրկեցին»:

Ուրիշ տողեր էլ կան այս նամակում. «Բենիս Ազնիվ Թաշչեան երեք զավակներով Աթենք...» օգնություն կը խնդրէ: Երկու օր վերջ 40 տողեր պիտ խրկես, չես գիտեր կը չանչնաս հայրը աներս Սողոմոն Թաշչեան, անոր աղջիկն է: Հորեղբայրները Սեաստոփոլ... ըսված տեղը կմնային՝ Նահապետ, Գալուստ, Տիգրան: Եթէ հնարավորություն ունիս անոնց տեսնելու կամ գրելու, որ օգնեն իրենց եղբոր աղջիկան՝ տիկին Ազնիվին: Մինչեւ հիմա մոտ 100 տղար խրկած եմ: Առաջ Մարգվան էր, այնտեղից Սամսոն քերին, հիմա ալ Աթենք կգտնվի երեք զավակներով: Ինձ գրած է. եթէ չօգնին սովամահ պիտի լինիմ զավակներովս:

Անշուշտ, երբեմն երբեմն գուղը կգնաս մամադ տեսնելու: Այս

* Բազմակետերը անընթեռնելի են:
1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 19, թթ. 75—76: 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 81, թթ. 10—11: 3 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 81, թ. 3:

անգամ որ տեսնես իմ կողմեն ձեռքը համբուրես եւ կարոտալիր բարեկներս հայտնես:

Հարգանքներս գոգալ մայրիդ, տիկին Հռիփսիմեան, պաշիկներս երկու ձագուկներուդ, համբուրյեներս քեզ: Ձեր Անդրանիկ: 10 մայիս, 1923»:

Քենու անունն է գրել: Չի՞ հիշել, արդո՞ք, վաղամեռիկ Վերոնիկա տիկնոջը: Չի՞ հիշել բարոտի մեջ կյանքից հեռացած որդիներին ու վշտից չի՞ այրվել արդո՞ք: Եվ այն, որ քենուն ու նրա որդիներին է շտապում օգնության հասնել, դա էլ սրբորեն փեսայական մի պարտականության կատարում չէ՞ արդո՞ք: Քանի՞ տարի պատվով ու անաղարտ պահեց-փայփայեց փեսայի իր անունը, այլեի քան երեք տասնյակ տարիներ, գրեթե ողջ գիտակցական կյանքը: Մարդք բոլոր ծալքերում է:

Սան Ֆրանցիսկո վերադարձից հետո հազիվ տասնհինգ օր է իրեն բարվոք զգացել, շտապ տեղափոխվել է մոտակայքում գտնվող Չիկո Սպրինգլի* հանքային ջրերի կուրորտը, որտեղ առողջական փնճակը շարունակել է վատթարանալ: Օգոստոսի 29-ին շտապ տեղ է հասել Նվարդը: Նրա խնամքը երկու օր է բարելավում զգացողությունը, բայց արդեն երրորդ օրը, 1927-ի օգոստոսի 31-ի ուշ երեկոյան, հանկարծահաս ծանր ճգնաժամից հետո զորավարն ավանդում է իր հոգին: «Իր մոտ,— գրել է Նվարդը,— երկու բժիշկներից ու ինձնից բացի ուրիշ ոչ ոք չկար: Նրա վերջին խոսքը եղավ՝ «Նվարդ, մի շվարիր», եւ փակեց աչքերը»:

Փափազել էր իր մարմնական մի բուռ հողով մայր հայրենիքին նպաստ քերել: Այդ էր նրա խնդրանքը Նվարդին ու իրեն այցի եկած Սմբատին: Բայց եթէ ինչ-ինչ պատճառներով դա հնարավոր չլինէր, ցանկացել էր, որ աճյունը տարվի Վառնա եւ հողին հանձնվի իրեն ինչպես էր, որ աճյունը տարվի Վառնա եւ հողին հանձնվի իրեն ինչպես էր, որ աճյունը Հայաստան քերելու մերժողական հանգամանքները բորբոքվեցին, այնպէս էլ խափանվեց աճյունը հայրենիք տեղափոխելու հարցը: Սեպտեմբերի 7-ին Կալիֆոռնիայի հայ գաղթօջախի հազարավոր ներկայացուցիչները նրա աճյունը ջքեղ հանդիսավորությամբ հողին հանձնեցին Ֆրեզնոյի «Արարատ» գերեզմանատանը: Հինգ ամիս հետո, 1928-ի հունվարին, հերոսի դագաղը ինքնաթիռով Հայաստան քերվելու կես ճանապարհին իջեցվեց Փարիզում, ուր ամսի 29-ին թաղվեց Պեր լա Շեզ գերեզմանատանը:

* Չիկո Ռիչարդսոն, տե՛ս «Մշակ», Ֆրեզնո, 2.09. 1927 թ.:
1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 81, թթ. 5—8: 2 «Լրաբեր», Լոս Անջելես, 14.11. 1987 թ.:

Պակաս բազմամարդ ու հանդիսավոր չեղան թաղման փարիզյան արարողությունները: Դրանցում նախաձեռնող ու առավել եռանդուն գտնվեց Դաշնակցության Փարիզի շրջանային կոմիտեն: Նախապես հրապարակած ազդարարը պատմության դասն էր մատնանշում. «Եկեք բազմությանը, դուք բոլորը, բերեք ձեզի հետ ձեր զավակները, որպեսզի տարագիր պատանությունը կարենա ըմբռնել մեր պատմությունն ու մեր ազատագրական դաժան պայքարը»¹:

Մի սովոր հատոր կարող են կազմել հուշարկավորությունների առթիվ արտասանված ճառերը, ցավակցական հեռագրերը, նամակները, լրագրային բազմաժանր հրապարակումները: Անդրանիկյան բնութագրի ու պատմության մի աշխարհ էլ դրանցում է բացվում քաջագործությունների գրի չառնված էջեր, ցավ ու կսկիծ, երախտագիտության ոգեշնչող խոսքեր, գործընկեր ու ժամանակակից լինելու հպարտության զգացում, երեսույթների քննական վերլուծություն, բոլորը միատեղ՝ պատգամը հավերժ պահելու և մինչև իրականացում հասցնելու պատրաստակամություն: Իսկ չէ՛ր կարող, արդյոք, նաեւ զղջում լինել, գուցե թե մեկն ու մյուսն էլ ինչ-որ բան վերանայում էին ու նորովի կշռադատում:

«Արտասովեցի, երբ հեռագիրները գուժեցին Անդրանիկի մահը... Այսօր, երբ զենքի ու ֆետայի ընկերոջս մահը կըլլես, կը մոռնամ ամեն ինչ և ծունկի կու գամ ու կը խոնարհիմ այդ անբիծ, մաքուր ու անարատ շիրմին առջև:

Ճետույի Անդրանիկ, նպատակակետդ էր թաղվել հոն, ուր ընկած էին քու զենքի ընկերները, սակայն բախտը չկամեցավ... Կուգա ժամը մեր վերջնական ազատության և այն ատեն քու գաղափարի ընկերները կը փոխադրեն քու աճյունները դեպի այն չքնաղ երկիրը, որուն համար տարիներ զենի ձեռքին պայքարեցար»²:

Սեպուհն էր այսպես ողբում, սերունդներին հանձնելով տասնամյակների ընթացքում մոտիկից տեսած ու ճանաչած ընկերոջ ամփոփ նկարագիրը:

Ողբում էին բոլորը, նաեւ Ավետիս Ահարոնյանը, Ալեքսանդր Խատիսյանն ու Հովհաննես Քաջազունին... Չկար միայն վաղամեռիկ Հովհաննես Թումանյանը, չկային Աղբյուր Սերոբն ու Գեորգ Չավուշը... Ծատերն էլ լուրջան վարագույրի ետևում կսկիծով թաքցնում էին իրենց աղի արցունքները, որպեսզի որդիների հարսանյաց հանդեսի օրվա ուրախության տոնին նրան նվիրված երգի հետ հպարտությամբ հնչեցնեին նրա սուրբ անունը՝ որպես խորխորդ ու պատգամ ապրողներին ու եկողներին:



ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հայաստան աշխարհը, որ հնադարում Հունաստանի և Հռոմի հետ քաղաքակրթության բնօրրան էր, երբ թագավոր էր ունենում, սովորականի պես ունենում էր նաեւ իր բանակն ու զորավարները: Վաղուց, շատ վաղուց էր հայությունը պետական այդ կարգուկանոնից զրկվել: Ուստի ի վերուստ հաստատված զորավար ու քաղաքագետներ չէ, որ հայերը շուրջորեն կարող էին տալ աշխարհին: Երկհազարամյա քաղաքակրթության տարիներին ո՛չ մեկի հողը զավթել են, ո՛չ էլ մյուսինը ազատություն տալու խաբկանքով բռնակցել: Վկա է աշխարհագրական քարտեզը: Ասպարեզ գալով, երբ դեռ հողագունդը նոր-նոր էր բնակեցվում, դարերի խորքում իրենց պետականությունը կորցնելուց հետո անգամ, հայերը գերադասել են աշխատանքն ու արարումը: Եվ հետև էլ, հարկադրյալ, ինքնապաշտպանության և գոյատևման զինվոր են տվել ու զոհ: Քաղաքական ասպարեզն ու ռազմի գործը մնացել են եկեղեցու պաշտոնյաներին ու մտավոր գբաղմունքի մարդկանց, ռազմարվեստի համար անպատրաստ շինականին, հողի աշխատավորին կամ արհեստավորին, բոլորն էլ դեպքերի բերումով, բայց միշտ վտանգի ենթարկված հայրենիքի կանչով...

Այդպես շարունակվում էր նաեւ Անդրանիկի օրոք, երբ երկնեղբված Հայաստանի Արևմուտքում Թուրքիայի գերիշխանությունն էր, իսկ Արևելքում՝ Ռուսաստանի:

Անդրանիկի կյանքի նպատակը օտարի լծից իր ժողովրդի ազատագրումն էր, որը նա համարում էր համայն հայության օրվա ու ժամանակի խնդիրը, որպեսզի Հայաստանն, ինչպես որ հնում էր, ամբողջական լիներ ու ոչ երկնեղբված, ազատ ու ինքնուրույն, այլ ոչ ուրիշի հարկի տակ և ծնկաչոք:

Նա ոչ ուսյալ քաղաքագետ էր, ոչ էլ ռազմարվեստի հատորները սերտած գորահրամանատար:

— Ո՛վ էր, որեմն, Անդրանիկը:

— Նա այն զավակն էր, որին առաջ քաշեց սուլթանի լծի տակ ֆիզիկական բնաջնջման վտանգին ենթակա ժողովրդի ապրելու կամքը:

¹ «Հառաջ», 29.01. 1928 թ., Փարիզ, ² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 96:

Քանի՞ ժողովուրդ է մահվան երախից մազապուրծ փրկվել: Միայն այդքան ժողովուրդ կարող էր ունենալ իր Անդրանիկը: Քանի՞ սուլթան ու բարբարոս է սուր բարձրացրել հպատակեցված ու անգեմ ժողովրդին իսպառ բնաջնջելու համար: Միայն այդ դեպքերում կարող էին լինել գոյատևման կոիվները եւ հերոսներ, որպիսին Անդրանիկն էր:

